# Հայտեր ներկայացնելու հրավեր (ՀՆՀ)
# Փոքր ծավալի աշխատանքների գնում
# (Մեկ ծրարով մրցութային գործընթաց)

| | |
|---|---|
| **Երկիր՝** | **Հայաստանի Հանրապետություն** |
| **Ծրագրի անվանումը՝** | **Հայաստանի դիմակայուն լանդշաֆտներ դրամաշնորհային ծրագիր** |
| **Պայմանագրի անվանումը՝** | **Լոռի մարզում անտառների վերականգնման աշխատանքներ** |
| **Ծրագիր No.:** | **P179988** |
| **ՀՆՀ No.՝** | **AM-EPIU-516212-CW-RFB** |

1. Հայաստանի Հանրապետությունը ֆինանսավորում է ստացել Համաշխարհային բանկից՝ «Resiland. Հայաստանի դիմակայուն լանդշաֆտներ» ծրագրի (P179988) իրականացման համար, և մտադիր է այդ միջոցների մի մասը օգտագործել Լոռի մարզում անտառների վերականգնման աշխատանքների պայմանագրի շրջանակում կատարվող վճարումների համար:

2. Սույնով «Բնապահպանական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկը հրավիրում է ընտրվելու իրավունք ունեցող/իրավասու (eligible) հայտատուներին ներկայացնելու կնքված հայտեր՝ Լոռի մարզում անտառների վերականգնման աշխատանքների իրականացման համար, մասնավորապես Լոռու մարզում անտառվերականգնման աշխատանքների իրականացումն է «Հայանտառ» ՊՈԱԿ-ի Վանաձորի (մոտ 82.25 հա), Ստեփանավանի (մոտ 21.49 հա) և Տաշիրի (մոտ 65.88 հա) անտառտնտեսություններում: Թիրախային տարածքները հանդիսանում են մասնատված խառն անտառներ, որոնց վերականգնման վերջնական սահմանները պետք է համաձայնեցվեն «Հայանտառ» ՊՈԱԿ-ի հետ: Վերականգնման աշխատանքներից ակնկալվող արդյունքներն են անտառների մասնատվածության նվազեցումը, անտառային տարածքների շարունակականության բարձրացումը, անտառային էկոհամակարգերի բազմազանեցումը, անտառային կենսաբազմազանության պայմանների բարելավումը և անտառային էկոհամակարգերի դիմակայունության բարձրացումը կլիմայական սթրեսների նկատմամբ:

3. Մրցույթը կանցկացվի ազգային մրցակցային գնման ընթացակարգով՝ օգտագործելով Հայտերի ներկայացման հրավերը (Request for Bids – RFB), որը սահմանվել է Համաշխարհային բանկի «Համաշխարհային Բանկի գնումների կանոնակարգեր ՆԾՖ փոխառուների համար/ «World Bank Procurement Regulations for IPF Borrowers» (սեպտեմբեր 2023 թ.): փաստաթղթով («Գնումների կանոնակարգեր»): Մրցույթը բաց է բոլոր Հայտատուների համար՝ Գնումների կանոնակարգերում սահմանված ձևով:

4. Հետաքրքրված ընտրվելու իրավունք ունեցող/իրավասու (eligible) հայտատուները կարող կարող են ամբողջական մրցութային փաթեթը/փաստաթղթերը հայերեն լեզվով ներբեռնել www.armeps.am; կամ www.gnumner.am կայքերից: Էլեկտրոնային գնումների համակարգում գրանցված Հայտատուներն ավտոմատ կերպով կստանան սույն հրավերը՝ կցված Մրցութային փաստաթղթերի հետ միասին: Ցանկացած կազմակերպություն կարող է

գրանցվել էլ.գնումների համակարգում: Հայտը պետք է ներկայացնի «ARMEPS» համակարգի միջոցով (www.armeps.am):

5. Հայտերը պետք է ներկայացվեն ARMEPS էլեկտրոնային համակարգի միջոցով ոչ ուշ, քան **2026 թվականի հուլիսի 29-ը՝ ժամը 17:00-ը**: Էլեկտրոնային գնումների համակարգը չի ընդունում վերջնաժամկետից հետո ներկայացված հայտերը:
6. Բոլոր հայտերը պետք է ուղեկցվեն Հայտի ապահովման հայտարարագրով (Bid-Securing Declaration) :
7. Ուշադրություն է հրավիրվում Գնումների կանոնակարգի այն պահանջին, համաձայն որի՝ Փոխառուն պարտավոր է պայմանագրի շնորհման ծանուցման շրջանակում հրապարակել հաղթող հայտատուի շահառու սեփականատիրության վերաբերյալ տեղեկատվությունը՝ օգտագործելով մրցութային փաստաթղթերում ներառված Շահառու սեփականատիրոջ բացահայտման ձև (Beneficial Ownership Disclosure Form):
8. Վերոնշյալ հարցերի համար դիմել հետևյալ հասցեով․

Արմեն Եսոյան, ԲԾԻԳ ՊՀ-ի տնօրենի պաշտոնակատար

«Բնապահպանական ծրագրերի իրականացման գրասենյակ»
պետական հիմնարկի (ԲԾԻԳ ՊՀ)
Հեռ.՝ +374 96 693 911
E-mail: resiland.epiu@gmail.com
Քաղաք՝ Երևան
ZIP Code: 0008
Երկիր՝ Հայաստանի Հանրապետություն

# Հայտեր ներկայացնելու հրավեր (ՀՆՀ)
# Փոքր ծավալի աշխատանքների գնում
# (Մեկ ծրարով մրցութային գործընթաց)

| | |
|---|---|
| **Երկիր՝** | **Հայաստանի Հանրապետություն** |
| **Ծրագրի անվանումը՝** | **□Հայաստանի դիմակայուն լանդշաֆտներ□ դրամաշնորհային ծրագիր** |
| **Պայմանագրի անվանումը՝** | **Լոռի մարզում անտառների վերականգնման աշխատանքներ** |
| **Ծրագիր No.:** | **P179988** |
| **ՀՆՀ No.՝** | **AM-EPIU-516212-CW-RFB** |
| **Ամսաթիվ՝** | **Հունիսի 29, 2026** |

**Մրցութային փաստաթղթեր**

**Բովանդակություն**

**ՄԱՍ 1............................................................................................................................................... 1**

**Մրցութային ընթացակարգեր...................................................................................................... 1**

**Բաժին I - Հրահանգներ Հայտատուներին 2**
**Բաժին II - Մրցութային տվյալների աղյուսակ (ՄՏԱ) 33**
**Բաժին III - Գնահատման և որակավորման չափանիշներ 39**
**Բաժին IV - Մրցութային առաջարկի ձևեր 55**
**Բաժին V - Իրավասու երկրներ 89**

**ՄԱՍ 2............................................................................................................................................. 93**

**Աշխատանքներին ներկայացվող պահանջներ.......................................................................... 93**

**Բաժին VII - Աշխատանքներին ներկայացվող պահանջներ 94**

**ՄԱՍ 3........................................................................................................................................... 118**

**Պայմանագրի պայմաններ և պայմանագրի ձևեր .................................................................. 118**

**Բաժին VIII. Պայմանագրի ընդհանուր պայմաններ (ՊԸՊ) 119**
**Բաժին IX. Պայմանագրի հատուկ պայմաններ (ՊՀՊ) 168**
**Բաժին X - Պայմանագրի ձևեր 171**

# ՄԱՍ 1

# Մրցութային ընթացակարգեր

## Բաժին I - Հրահանգներ Հայտատուներին

### Դրույթների ցանկ


**1.** 4
**2.** 5
**3.** 5
**4.** 5
**5.** 8
**6.** 8
**7.** 8
**8.** 9
**9.** 10
**10.** 10
**11.** 10
**12.** 11
**13.** 11
**14.** 11
**15.** 12
**16.** 12
**17.** 12
**18.** 13
**19.** 13
**20.** 15
**21.** 16
**22.** 16
**23.** 17
**24.** 17
**25.** 17
**26.** 19
**27.** 19
**28.** 19
**29.** 19
**30.** 20
**31.** 20
**32.** 21
**33.** 21
**34.** 21
**35.** 22
**36.** 23
**37.** 23
**38.** 23
**39.** 23
**40.** 24
**41.** 24
**42.** 24
**43.** 24
**44.** 25
**45.** 25
**46.** 25
**47.** 26
**48.** 26

**49.** 27
**50.** 27

# Բաժին 1 - Հրահանգներ Հայտատուներին

## Ա. Ընդհանուր դրույթներ

**1. Հայտի ոլորտը**

**1.1** Պատվիրատուն, որի սահմանումը տրված է «Մրցութային տվյալների ցանկ»-ում («ՄՏՑ»), հրապարակել է սույն մրցութային փաստաթղթերը ՄՏՑ-ում սահմանված Առանձնահատուկ Գնման Ծանուցագրի՝ «Հայտեր ներկայացնելու հրավերի» (ՀՆՀ) առնչությամբ, Բաժին VII-ում՝ «Աշխատանքներին ներկայացվող պահանջները», նշված Աշխատանքների իրականացման նպատակով: Սույն ՀՆՀ-ի անվանումը, սահմանումը, լոտերի (պայմանագրերի) քանակը տրված է ՄՏՑ-ում:

**1.2** Այս մրցութային փաստաթղթում ամենուր՝

(1) **«գրավոր»** տերմինը նշանակում է գրավոր հաղորդագրություն (օրինակ, փոստով, էլ. փոստով, ֆաքսով, այդ թվում Պատվիրատուի կողմից կիրառվող գնումների էլեկտրոնային համակարգով, եթե նշված է ՄՏՑ-ում)՝ ստացման հաստատմամբ,

(2) եթե ենթատեքստով պահանջվում է, եզակիով օգտագործված բառերն ունեն նույն իմաստը, ինչ որ հոգնակիով օգտագործածները, և հակառակը,

(3) **«Օր»** նշանակում է օրացուցային օր, եթե այլ բան նախատեսված չէ որպես **«Աշխատանքային օր»**: Աշխատանքային օրը Փոխառուի պաշտոնական աշխատանքային օրն է՝ հանած Փոխառուի պաշտոնական տոն օրերը,

(4) **«ԲՍ»** նշանակում է բնապահպանական և սոցիալական (ներառյալ՝ սեռական շահագործումը և չարաշահումը (ՍՇՉ), ինչպես նաև սեռական ոտնձգությունը (ՍՈ)),

(5) **«Սեռական շահագործումը և չարաշահումը» (ՍՇՉ)** նշանակում է հետևյալը.

(i) **«Սեռական շահագործումը»** սահմանվում է որպես խոցելի դրության, վերադաս դիրքի կամ վստահության ցանկացած փաստացի չարաշահում կամ չարաշահման փորձ սեռական նպատակներով, որը ներառում է, բայց չի սահմանափակվում մեկ ուրիշ անձի սեռական շահագործումից դրամական, սոցիալական կամ քաղաքական շահույթ ստանալով,

(ii) **«Սեռական չարաշահումը»** սահմանվում է որպես սեռական բնույթի փաստացի ֆիզիկական ոտնձգություն կամ դրա սպառնալիք՝ բռնի ուժի գործադրմամբ, կամ անհավասար կամ հարկադրանքի պայմաններում,

(6) **«Սեռական ոտնձգությունը» (ՍՈ)** սահմանվում է որպես անցանկալի սեռական բնույթի վարքագիծ, սեռական բնույթի պահանջներ և այլ սեռական բնույթի բանավոր կամ ֆիզիկական վարքագիծ կապալառուի անձնակազմի կողմից մեկ այլ կապալառուի կամ պատվիրատուի անձնակազմի նկատմամբ,

(7) **«Կապալառուի անձնակազմը»** սահմանված է Պայմանագրի Ընդհանուր Պայմանների Ենթակետ 1 (թ)-ում և

(8) **«Պատվիրատուի անձնակազմը»** սահմանված է Պայմանագրի Ընդհանուր Պայմանների Ենթակետ 1 (ծ)-ում:

ՍՇՉ բնորոշվող վարքագծերի և ՍՈ բնորոշվող վարքագծերի ոչ սպառիչ ցանկը կցվում է Բաժին IV-ում ներառված Վարքականոնների ձևաթերթում:

**2. Միջոցների աղբյուրը**

**2.1** Փոխառուն կամ Ստացողը (այսուհետ՝ «Փոխառու»), որի սահմանումը բերված է **ՄՏՅ-ում**, ստացել է, կամ դիմել է **Վերակառուցման և զարգացման միջազգային բանկ** կամ **Միջազգային զարգացման ընկերակցություն՝ ՄՏՅ-**ում նշված գումարով, **ՄՏՅ-ում** նշված ծրագրի համար ֆինանսավորում ստանալու համար (այսուհետ՝ «միջոցներ»): Փոխառուն մտադիր է տրամադրել միջոցների մի մասն այն պայմանագրի(-երի) շրջանակներում թույլատրելի վճարումներ անելու համար, որի համար թողարկվել են սույն մրցութային փաստաթղթերը:

**2.2** Վճարումները Բանկի կողմից կիրականցվեն միայն Փոխառուի խնդրանքով ու Բանկի հաստատմամբ, և բոլոր առումներով պետք է համապատասխանեն Վարկային (կամ այլ ֆինանսավորման) համաձայնագրի պայմաններին ու պահանջներին: Վարկային (կամ այլ ֆինանսավորման) համաձայնագրով արգելվում է մասհանումներ անել վարկից այնպիսի անձանց կամ կազմակերպություններին, կամ որևէ ապրանքների, սարքավորումների, արտադրամասերի կամ նյութերի ներկրման համար վճարումներ անելու նպատակով, եթե դա արգելված է ՄԱԿ-ի Անվտանգության Խորհրդի կողմից՝ ՄԱԿ-ի կանոնադրության VII գլխի համաձայն ընդունված որոշմամբ: Փոխառուից բացի ոչ մի այլ կողմ չի կարող ձեռք բերել որևէ իրավունք Վարկային (կամ այլ ֆինանսավորման) համաձայնգրով, կամ որևէ պահանջ ներկայացնել Վարկի (կամ այլ ֆինանսավորման) միջոցներին:

**3. Խարդախություն և կաշառակերություն**

**3.1** Բանկը պահանջում է պահպանել Բանկի հակակոռուպցիոն ուղեցույցները և իր՝ գերակայող պատժամիջոցների քաղաքականությունն ու ընթացակարգերը, որոնք սահմանված են «Համաշխարհային Բանկի Խմբի (ՀԲԽ) գերակայող պատժամիջոցների շրջանակում», ինչպես սահմանված է Բաժին VI-ում:

**3.2** Ի կատարումն այդ քաղաքականության, հայտատուները պետք է իրենք թույլ տան, ինչպես նաև պահանջեն իրենց գործակալներից (անկախ նրանից, հայտարարված են դրանք, թե ոչ), ենթակապալառուներից, ենթախորհրդատուներից, ծառայություններ մատուցողներից, մատակարարներից կամ դրանց աշխատողներից թույլ տալ Բանկին զննել սկզբնական ընտրության որևէ գործընթացի, նախաորակավորման գործընթացի, հայտերի ներկայացման, առաջարկների ներկայացման և պայմանագրի կատարման (շնորհման դեպքում) հետ առնչվող բոլոր հաշվետվությունները, գրանցումները և այլ փաստաթղթերը, ինչպես նաև իրականացնել դրանց աուդիտ՝ Բանկի կողմից նշանակված աուդիտորների կողմից:

**4. Իրավասու մասնակիցներ**

**4.1** Հայտատուն կարող է լինել մասնավոր ընկերություն կամ պետական սեփականություն հանդիսացող ձեռնարկություն կամ հաստատություն՝ ՀՀ-ի 4.6 ենթակետի պայմաններին համապատասխանելու դեպքում, կամ դրանց՝ որևէ ձևով միավորված համատեղ ձեռնարկություն (ՀՁ), որը ստեղծվել է գործող համաձայնագրով, կամ որի ստեղծումը հիմնավորվում է նման համաձայնագիր կազմելու Մտադրության նամակով: Համատեղ ձեռնարկության դեպքում բոլոր անդամները համապարտ պատասխանատվություն են կրում ողջ Պայմանագիրը՝ վերջինս պայմանների համաձայն կատարելու համար: ՀՁ-ն կնշանակի Ներկայացուցիչ, որը լիազորված կլինի ՀՁ-ի անդամներից որևէ մեկի և բոլոր անդամների անունից ցանկացած գործողություն կատարելու համար Մրցութային գործընթացի ժամանակ, իսկ եթե Պայմանագիրը շնորհվի ՀՁ-ին՝ ապա նաև Պայմանագիրն իրականացնելու ժամանակ: ՀՁ-ի անդամների թվի առումով սահմանափակում չկա, **եթե դրա մասին հատուկ չի նշվում ՄՏՅ-ում**:

**4.2** Հայտատուն չպետք է ունենա շահերի բախում: Շահերի բախում ունեցող բոլոր Հայտատուները կորակազրկվեն: Սույն Մրցութային գործընթացում կհամարվի, որ Հայտատուն ունի շահերի բախում, եթե նա՝

(ա) ուղղակի կամ անուղղակի կերպով վերահսկում է Մրցույթի մեկ այլ մասնակցին, վերահսկվում է նրա կողմից, կամ Մրցույթի մեկ այլ մասնակցի հետ գտնվում ընդհանուր վերահսկողության տակ, կամ

(բ) ստացել է ուղղակի կամ անուղղակի սուբսիդիա մեկ այլ Հայտատուից, կամ

(գ) ունի նույն իրավական ներկայացուցիչը, ինչ որ մեկ այլ Հայտատուն, կամ

(դ) գտնվում է այնպիսի հարաբերությունների մեջ մրցույթի մեկ այլ Հայտատուի հետ՝ ուղղակիորեն կամ ընդհանուր երրորդ անձանց միջոցով, որը հնարավորություն է տալիս նրան ազդել Պատվիրատուի որոշումների վրա՝ կապված մրցութային գործընթացի հետ, կամ

(ե) նրա դուստր կազմակերպություններից որևէ մեկը մասնակցել է որպես խորհրդատու այն աշխատանքների մանրամասն նախագծի կամ մասնագրերի պատրաստմանը, որոնք հանդիսանում են սույն մրցույթի առարկա, կամ

(զ) նրա դուստր կազմակերպություններից որևէ մեկը Պատվիրատուի կամ Փոխառուի կողմից վարձվել է (կամ նախատեսվում է վարձվել) որպես Ծրագրի ղեկավար Պայմանագրի իրականացման համար, կամ

(է) իրականացնելու է աշխատանքներ, տրամադրելու է ապրանքներ կամ ոչ-խորհրդատվական ծառայություններ, որոնք բխում կամ ուղղակիորեն առնչվում են **ՄՏՑ**-ի ՀՀ-ի 2.1 ենթակետում սահմանված ծրագրի խորհրդատվական ծառայությունների պատրաստումից կամ կատարումից, որն իրականացրել է ինքը կամ նրա կողմից ուղղակիորեն կամ անուղղակիորեն վերահսկվող որևէ դուստր ընկերություն, կամ այնպիսի ընկերություն, որի հետ գտնվում է համատեղ վերահսկողության տակ, կամ

(ը) ունի սերտ գործարար կամ ընտանեկան կապեր Փոխառուի մասնագիտական անձնակազմի (կամ ծրագրի իրականացման կազմակերպության, կամ փոխառության մի մասի ստացողի) հետ, որը՝(i) ուղղակի կան անուղղակի կերպով մասնակցել է պայմանագրի մրցութային փաստաթղթերի կամ մասնագրերի պատրաստմանը, և/կամ գնահատման գործընթացին կամ (ii) ներգրավված կլինի այդ պայմանագրի վերահսկմանը, քանի դեռ այդ հարաբերություններից բխող շահերի բախումը լուծված չլինի Բանկի կողմից ընդունելի ձևով՝ ողջ գնման ընթացակարգի և պայմանագրի իրականացման ընթացքում:

**4.3** Հայտատու հանդիսացող ընկերությունը (առանձին կամ ՀԶ-ի կազմում) չի կարող մասնակցել մեկից ավել Հայտում, բացառությամբ թույլատրված այլընտրանքային Հայտերի: Սա ներառում է նաև որպես Ենթակապալառու մասնակցությունն այլ Հայտերում: Մեկից ավել Հայտում ներգրավված լինելը կհանգեցնի բոլոր այն առաջարկների որակազրկմանը, որոնցում ներգրավված է եղել տվյալ ընկերությունը: Այն ընկերությունը, որը չի հանդիսանում Հայտատու կամ ՀԶ-ի անդամ, կարող է մասնակցել մեկից ավելի Հայտերում:

**4.4** Հայտատուն կարող է ունենալ ցանկացած երկրի ազգություն՝ ՀՀ-ի 4.8 ենթակետի սահմանափակումներով հանդերձ: Հայտատուն համարվում է տվյալ երկրի ազգություն ունեցող, եթե նա հանդիսանում է տվյալ երկրի քաղաքացի, գրանցված է կամ գործունեություն է ծավալում տվյալ երկրի օրենսդրության դրույթներին համապատասխան, ինչը հիմնավորվում է նրա հիմնադրման փաստաթղթերով (կամ հիմնադրման կամ միավորման համարժեք այլ փաստաթղթերով): Այս չափանիշը վերաբերում է նաև Պայմանագրի որևէ մասի, այդ թվում առնչվող Ծառայությունների, համար

առաջարկվող ենթակապալառուների կամ ենթախորհրդատուների ազգությունը որոշելիս:

**4.5** Այն Հայտատուն, որի նկատմամբ Բանկի կողմից կիրառվել են պատժամիջոցներ Բանկի հակակոռուպցիոն ուղեցույցներով՝ «ՀԲԽ գերակայող պատժամիջոցների շրջանակ»-ով սահմանված գերակայող պատժամիջոցների քաղաքականության և ընթացակարգերի համաձայն, որոնք նկարագրվում են Բաժին VI-ի 2.2 (դ) ենթակետում, իրավասու չէ նախաորակավորման կամ նախընտրական ընտրության փուլերին մասնակցելու, մասնակցելու սակարկություններին կամ շնորհվելու Բանկի կողմից ֆինանսավորվող պայմանագրերի համար, կամ՝ ֆինանսապես, կամ որևէ այլ կերպ, օգուտ ստանալ Բանկի կողմից ֆինանսավորվող պայմանագրերից՝ Բանկի կողմից որոշված ժամանակաշրջանի ընթացքում: Արգելված ընկերությունների և անհատների ցանկը մատչելի է **ՄՏՑ-ում նշված** էլեկտրոնային հասցեով:

**4.6** Այն Հայտատուները, որոնք Պատվիրատուի երկրի պետական սեփականություն հանդիսացող ձեռնարկություններ կամ հաստատություններ են, իրավասու են մրցելու և հաղթելու Պայմանագիրը միայն այն դեպքում, եթե Բանկի համար ընդունելի կերպով հիմնավորեն, որ նրանք՝ (i) իրավաբանորեն և ֆինանսապես ինքնուրույն են, (ii) գործում են առևտրային օրենքի շրջանակներում, և (iii) չեն գտնվում Պատվիրատուի վերահսկողության տակ:

**4.7** Հայտատուն չպետք է կասեցված լինի Պատվիրատուի կողմից մրցույթին մասնակցելուց **Հայտի երաշխիքի** կամ **Հայտի ապահովման հայտարարագրի** դրույթների կիրառման պատճառով:

**4.8** Ընկերությունները կամ անհատները կարող են լինել ոչ իրավասու, եթե դրա մասին նշված է Բաժին V-ում և՝ (ա) օրենքով կամ պաշտոնական ակտով, Փոխառուի երկիրն արգելում է առևտրային հարաբերություններ այդ երկրի հետ, պայմանով, որը Բանկի համոզվի, որ այդ արգելքը չի բացառի արդյունավետ մրցակցությունը պահանջվող ապրանքների մատակարարման կամ աշխատանքների ու ծառայությունների պայմանագրերի կնքման գործընթացում, կամ (բ) Միացյալ ազգերի կազմակերպության Անվտանգության խորհրդի VII խարտիայի որոշման համապատասխան, Փոխառուի երկիրն արգելել է որևէ ներմուծում այդ երկրից, կամ որևէ վճարում որևէ երկրին, կամ այդ երկրի անհատին կամ կազմակերպությանը: Եթե աշխատանքներն իրականացվում են տարբեր իրավասությունների սահմաններում (և Փոխառու է հանդիսանում ու գնումներում ներգրավված լինում մեկից ավել երկիր), ապա ընկերության կամ անհատի բացառումը այդ գնումից վերոնշյալ ՀՀ-ի 4.8(ա) ենթակետի համաձայն կարող է կիրառվել ցանկացած երկրի կողմից մյուս ներգրավված երկրների վրա, եթե Բանկի և գնումին մասնակցող Փոխառուները համաձայնվեն դրան:

**4.9** Հայտատուն պարտավոր է Պատվիրատուին ներկայացնել իրավասության այնպիսի փաստաթղթային ապացույցներ, որը վերջինս կպահանջի ողջամիտ կերպով:

**4.10** Այն ընկերությունը, որը պայմանագրի շնորհման մասով գտնվում է Փոխառուի ժամանակավոր կասեցման պատժամիջոցների տակ, իրավասու է մասնակցել սույն գնումների գործընթացում, քանի դեռ Բանկը, Փոխառուի խնդրանքով, չի համոզվել, որ կասեցումը

ա) կապված է խարդախության կամ կոռուպցիայի հետ, և

բ) իրականացվել է դատական և վարչական վարույթի համաձայն, որի ընթացքում կատարվել է ընկերության պատշաճ ուսումնասիրություն:

**5. Թույլատրելի նյութեր. սարքավորումներ և ծառայություններ**

**5.1** Բանկի կողմից ֆինանսավորվող Պայմանագրի շրջանակներում մատակարարվող նյութերը, սարքավորումները և ծառայությունները կարող են ունենալ ցանկացած երկրի ծագում` Բաժին V-ի ` «Իրավասու երկրներ», սահմանափակումներով հանդերձ, և Պայմանագրի շրջանակներում իրականացվող բոլոր ծախսերը չպետք է հակասեն այդ սահմանափակմանը: Պատվիրատուի պահանջով՝ Հայտատուները պետք է ապացույցներ տրամադրեն նյութերի, սարքավորումների և ծառայությունների ծագման մասին:

## Բ. Մրցութային փաստաթղթերի բովանդակությունը

**6. Մրցութային փաստաթղթերի բաժինները**

**6.1** Մրցութային փաստաթղթերը բաղկացած են 1, 2 և 3 մասերից, որոնք ներառում են բոլոր ներքոհիշյալ բաժինները, և պետք է կարդացվեն ՀՀ-ի 8-րդ կետի համաձայն թողարկած բոլոր հավելվածների հետ:

**<u>ՄԱՍ 1 Մրցութային ընթացակարգեր</u>**

**Բաժին I . Հրահանգներ Հայտատուներին (ՀՀ)**
**Բաժին II . Մրցութային տվյալների ցանկ (ՄՏՑ)**
**Բաժին III . Գնահատման և որակավորման չափանիշներ**
**Բաժին IV . Հայտի ձևեր**
**Բաժին V . Իրավասու երկրներ**
**Բաժին VI . Բանկի քաղաքականություն. Կաշառակերություն և խարդախություն**

**<u>ՄԱՍ 2 Աշխատանքներին ներկայացվող պահանջներ</u>**

**Բաժին VII . Աշխատանքներին ներկայացվող պահանջներ**

**<u>ՄԱՍ 3 Պայմանագրի պայմաններ և պայմանագրի ձևեր</u>**

**Բաժին VIII . Պայմանագրի ընդհանուր պայմաններ (ՊԸՊ)**
**Բաժին IX . Պայմանագրի հատուկ պայմաններ (ՊՀՊ)**
**Բաժին X . Պայմանագրի ձևեր**

**6.2** Պատվիրատուի կողմից թողարկած «Գնումների հատուկ ծանուցումը» չի հանդիսանում սույն մրցութային փաստաթղթերի մաս:

**6.3** Պատվիրատուն պատասխանատու չէ մրցութային փաստաթղթերի և դրանց Հավելվածի ամբողջականության համար, պարզաբանման հարցումներին արված պատասխանների, նախամրցութային կոնֆերանսի արձանագրությունների համար, եթե դրանք չեն ստացվել անմիջապես Պատվիրատուից ՀՀ-ի 8-րդ կետի համաձայն: Հակասությունների դեպքում գերակայությունը տրվում է անմիջապես Պատվիրատուի կողմից ստացված փաստաթղթերին:

**6.4** Ակնկալվում է, որ Հայտատուն կուսումնասիրի մրցութային փաստաթղթերի բոլոր հրահանգները, ձևերը, պայմանները և մասնագրերը իր առաջարկում կներկայացնի մրցութային փաստաթղթերով պահանջվող բոլոր տեղեկությունները և փաստաթղթերը:

**7. Մրցութային փաստաթղթերի պարզաբանումներ, այցելություն**

**7.1** Եթե Հայտատուին անհրաժեշտ է ստանալ Մրցութային փաստաթղթերի պարզաբանում, նա պետք է գրավոր կապվի Պատվիրատուի հետ **ՄՏՑ-ում նշված Պատվիրատուի հասցեով**, կամ ներկայացնի իր հարցը նախամրցութային հանդիպման ընթացքում, եթե այն նախատեսված է ՀՀ-ի 7.4 ենթակետով: Պատվիրատուն կպատասխանի բոլոր պարզաբանումների

**շինհրապարակ, նախամրցութային հանդիպում**

խնդրանքներին, եթե դրանք ներկայացվել են հայտերի բացման համար սահմանված ժամկետից շուտ՝ **ՄՑՑ-ում նշված ժամանակահատվածում**: Պատվիրատուի պատասխանի պատճենները պետք է ուղարկվեն ՀՀ 6.3 ենթակետի համաձայն մրցութային փաստաթղթեր ձեռք բերած բոլոր Հայտատուներին ՝ ներառելով հարցի նկարագրությունը, սակայն առանց նշելու ստացման աղբյուրը: Պատվիրատուն պետք է նաև անմիջապես հրապարակի իր պատասխանը ՄՑՑ-ում նշված կայքում, **եթե դա սահմանված է ՄՑՑ-ում**: Եթե պարզաբանման արդյունքում առաջանա մրցութային փաստաթղթերի փոփոխության անհրաժեշտություն, Պատվիրատուն պետք է փոփոխի դրանք հետևելով ՀՀ 8 և ՀՀ 22.2 կետերում նշված ընթացակարգին:

**7.2** Հայտատուին խորհուրդ է տրվում այցելել և ուսումնասիրել Աշխատանքների շինհրապարակն ու դրա շրջակայքը և ստանալ իր իսկ պատասխանատվությամբ ողջ տեղեկատվությունը, որ կարող է անհրաժեշտ լինել հայտը պատրաստելու և Աշխատանքների շինարարության պայմանագիրը կնքելու համար: Հայտատուն իր հաշվին է հոգում Շինհրապարակի այցելության ծախսերը:

**7.3** Պատվիրատուն թույլ կտա Հայտատուին և նրա անձնակազմից կամ գործակալներից որևէ մեկին այցելության նպատակով մուտք գործել իր սեփականությունը հանդիսացող շինություն կամ տարածք, պայմանով, որ Պատվիրատուն, նրա անձնակազմը և գործակալները պատասխանատվություն չեն կրի Պատվիրատուի, նրա անձնակազմի և գործակալների մահվան կամ վնասվածքի, սեփականության կորստի կամ վնասի, կամ որևէ այլ կորստի, վնասի և ծախսերի համար, որոնք պատճառվել են զննման արդյունքում:

**7.4** Հայտատուի կողմից նշանակված ներկայացուցիչը հրավիրվում է մասնակցել նախամրցութային հանդիպմանը, **եթե այդ մասին նշված է ՄՑՑ-ում**: Հանդիպման նպատակն է պարզաբանել բոլոր հարցերը և ստանալ պատասխաններ ցանկացած խնդրի շուրջ, որը կարող է առաջ գալ այդ փուլում:

**7.5** Հայտատուին խնդրվում է հնարավորինս արագ ներկայացնել իր հարցերը գրավոր ձևով, որպեսզի Պատվիրատուն կարողանա դրանք պարզաբանել հանդիպումից ոչ ուշ, քան **մեկ (1) շաբաթ առաջ**:

**7.6** Նախամրցութային հանդիպման արձանագրությունները (եթե այն եղել է), այդ թվում բարձրացված հարցերը՝ առանց աղբյուրը նշելու, պատասխանները, ժողովից հետո պատրաստված պատասխանները արագ փոխանցվում են ՀՀ 6.3 ենթակետի համաձայն մրցութային փաստաթղթեր գնած բոլոր Հայտատուներին: Նախամրցութային հանդիպման արդյունքում Մրցութային փաստաթղթերում կատարված ցանկացած փոփոխություն Պատվիրատուն պետք է ներկայացնի բացառապես ՀՀ-ի 8 կետի համաձայն հավելվածի, այլ ոչ նախամրցութային հանդիպման արձանագրությունների տեսքով: Նախամրցութային հանդիպմանը չմասնակցելը հիմք չէ Հայտատուին որակազրկելու համար:

**8. Մրցութային փաստաթղթերի փոփոխություն**

**8.1** Պատվիրատուն կարող է փոփոխել մրցութային փաստաթղթերը՝ նախքան հայտերի ներկայացման համար սահմանված վերջնաժամկետը հրատարակելով հավելված:

**8.2** Ցանկացած թողարկված հավելված կազմում է մրցութային փաստաթղթերի անբաժանելի մասը և պետք է գրավոր հաղորդվի ՀՀ-ի 6-րդ կետի համաձայն մրցութային փաստաթղթեր գնած բոլոր Հայտատուներին և անմիջապես

հրապարակվի Պատվիրատուի ինտերնետային կայքում` ՀՀ-ի 7.1 ենթակետի համաձայն:

**8.3** Հայտերը պատրաստելիս հավելվածները հաշվի առնելու նպատակով` հնարավոր Հայտատուներին ողջամիտ ժամկետ տրամադրելու համար Պատվիրատուն, իր հայեցողությամբ, կարող է երկարաձգել Հայտերի ներկայացման վերջնաժամկետը համաձայն ՀՀ-ի 22.2 ենթակետի:

## Գ. Հայտերի պատրաստում

| | | |
|---|---|---|
| **9. Մրցույթին մասնակցելու հետ առնչվող ծախսերը** | **9.1** | Հայտատուն պետք է հոգա Հայտի նախապատրաստման և ներկայացման հետ կապված բոլոր ծախսերը: Պատվիրատուն ոչ մի դեպքում պատասխանատվություն չի կրի այդ ծախսերի համար` անկախ մրցութային գործընթացի ընթացքից կամ արդյունքից: |
| **10. Հայտի լեզուն** | **10.1** | Հայտը, ինչպես նաև Հայտին վերաբերող Հայտատուի և Պատվիրատուի միջև փոխանակված ողջ նամակագրությունը և փաստաթղթերը պետք է գրվի/կազմվի ՄՏՑ-ում նշված լեզվով: Հայտի մաս հանդիսացող օժանդակ փաստաթղթերը և տպված գրականությունը կարող են ներկայացվել մեկ այլ լեզվով` միևնույն ժամանակ ապահովելով դրանց ճշգրիտ թարգմանությունը ՄՏՑ-ում նշված լեզվով: Տվյալ դեպքում Հայտերը մեկնաբանելիս ղեկավարող է հանդիսանում թարգմանությունը: |
| **11. Հայտի մաս կազմող փաստաթղթերը** | **11.1** | Հայտը պետք է պարունակի հետևյալ նյութերը/փաստաթղթերը.<br>ա) **Հայտի նամակ**` պատրաստված համաձայն ՀՀ 12 կետի,<br>բ) **Աշխատանքների ծավալների ցուցակ** կամ **գործողությունների ժամանակացույց** ` լրացված **ՀՀ-ի 12 և ՀՀ-ի 14 կետերի համաձայն**,<br>գ) **Հայտի երաշխիք կամ Հայտի ապահովման հայտարարագիր**` ՀՀ-ի 19.1 ենթակետի համաձայն,<br>դ) **Այլընտրանքային Հայտեր**, եթե թույլատրվում են ՀՀ-ի 13 կետով,<br>ե) **Լիազորում` գրավոր հաստատում**, որով լիազորվում է Հայտը ստորագրողին ներկայացնելու Հայտատուին ՀՀ-ի 20.3 ենթակետի համաձայն,<br>զ) **Հայտատուի իրավասությունը**` փաստաթղթային ապացույցներ ՀՀ-ի 17-րդ կետի համաձայն, որոնք սահմանում են Հայտատուի` մրցույթին մասնակցելու իրավասու լինելը,<br>է) **Որակավորում**` փաստաթղթային ապացույցներ ՀՀ-ի 17-րդ ենթակետի համաձայն, որոնք հաստատում են Հայտատուի որակավորումը պայմանագիրը կատարելու համար` Հայտն ընդունելու դեպքում,<br>ը) **Համապատասխանություն**` տեխնիկական առաջարկ համաձայն ՀՀ-ի 16-րդ կետի,<br>թ) **ՄՏՑ-ով պահանջվող** ցանկացած այլ փաստաթուղթ: |
| | **11.2** | Համատեղ ձեռնարկության (ՀՁ) կողմից ներկայացված Հայտը, ի լրումն ՀՀ 11.1 ենթակետի, պետք է ներառի Համատեղ ձեռնարկության համաձայնագիր, որը կնքվում է բոլորի կողմից: Որպես այլընտրանք, Հայտի հետ պետք է ներկայացվի Համատեղ ձեռնարկության համաձայնագիր կնքելու Մտադրության նամակ` ստորագրված բոլոր անդամների կողմից, այդ թվում առաջարկվող համաձայնագրի նախագիծը: |

**11.3** Հայտի նամակում Հայտատուն պետք է տեղեկատվություն ներկայացնի գործակալներին կամ այլ կողմերին սույն Հայտի առնչությամբ վճարված միջնորդավճարների կամ պարգևատրումների մասին:

**12. Հայտի նամակ և աղյուսակներ**

**12.1** Հայտի նամակը և աղյուսակները պետք է պատրաստվեն օգտագործելով Բաժին IV-ում (Հայտի ձևեր) ներկայացված համապատասխան ձևերը: Վերջիններս պետք է լրացվեն առանց տեքստի փոփոխության, որևէ փոխարինում չի թույլատրվում, բացառությամբ ՀՀ-ի 20.3 ենթակետով նախատեսված փոփոխությունների: Բոլոր դատարկ հատվածները պետք է լրացվեն պահանջվող տեղեկատվությամբ:

**13. Այլընտրանքային Հայտեր**

**13.1** Բացառությամբ այն դեպքերի, երբ ՄՏՑ-ում այլ բան է նշված, այլընտրանքային Հայտերը չեն դիտարկվում::

**13.2** Ավարտման այլընտրանքային ժամկետների թույլտվության դեպքում դրա մասին հստակ նշված կլինի **ՄՏՑ**-ում, իսկ ավարտման տարբեր այլընտրանքային ժամկետների գնահատման մեթոդը **ներառված կլինի** Բաժին III-ում՝ **«Գնահատման և որակավորման չափանիշներ»:**

**13.3** Բացառությամբ ՀՀ-ի 13.4 ենթակետով ստորև նախատեսված դեպքի, այն Հայտատուները, որոնք ցանկանում են ներկայացնել մրցութային փաստաթղթերի պահանջների այլընտրանքային տեխնիկական առաջարկներ, պետք է նախ գնանշեն Պատվիրատուի նախագիծը, ինչպես նկարագրված է մրցութային փաստաթղթում, իսկ հետո տրամադրեն այլընտրանքային առաջարկի ամբողջական գնահատման համար անհրաժեշտ տեղեկատվությունը՝ այդ թվում գծագրերը, նախագծային հաշվարկները, տեխնիկական բնութագրերը, գների բացվածքը, կառուցման առաջարկվող մեթոդները և այլ վերաբերող մանրամասներ, որպեսզի Պատվիրատուն կարողանա կատարել ամբողջական գնահատում: Պատվիրատուն կուսումնասիրի միայն **Ամենամեծ առավելություն ունեցող Հայտ** ներկայացրած Հայտատուի տեխնիկական այլընտրանքային հայտերը ՝ առկայության դեպքում, որոնք պետք է համապատասխանեն հիմնական տեխնիկական պահանջներին:

**13.4** **Եթե նշված է ՄՏՑ-ում**, Հայտատուներին թույլ է տրվում ներկայացնել այլընտրանքային տեխնիկական լուծումներ Աշխատանքների նշված մասերի համար: Այդ մասերը որոշված կլինեն **ՄՏՑ**-ում և նկարագրված կլինեն Բաժին VII-ում՝ «**Աշխատանքներին ներկայացվող պահանջները**»: Դրանց գնահատման մեթոդը կսահմանվի Բաժին III-ում՝ «**Գնահատման և որակավորման չափանիշներ**»:

**14. Հայտի գները և զեղչերը**

**14.1** Հայտի նամակում և Գործողությունների ժամանակացույցում կամ Աշխատանքների ծավալների ցուցայում Հայտատուի կողմից առաջարկված գներն ու զեղչերը պետք է համապատասխանեն ստորև բերված պահանջներին:

**14.2** Հայտատուն պետք է ներկայացնի Հայտ՝ ՀՀ-ի 1.1 ենթակետում նկարագրված ողջ Աշխատանքների համար՝ լրացնելով Աշխատանքների բոլոր կետերի գները, որոնք ներառված են Բաժին IV-ում՝ «Հայտի ձևերում»: Միավոր գներով պայմանագրերի դեպքում Հայտատուն պետք է լրացնի Աշխատանքների ծավալների ցուցակում նկարագրված բոլոր կետերն ու գները: Այն կետերը, որոնց համար Հայտատուն չի լրացրել ոչ մի դրույք կամ գին, կատարվելու դեպքում չեն վճարվի Պատվիրատուի կողմից և կհամարվի, որ դրանք ներառված են Աշխատանքների ծավալների ցուցակների այլ կետերի դրույքների և գների մեջ:

**14.3** ՀՀ-ի 12.1 ենթակետի համաձայն Հայտի նամակում առաջարկված գինը Հայտի ընդհանուր գումարն է` առանց որևէ առաջարկված զեղչերի:

**14.4** Հայտատուն` Հայտի նամակում պետք է նշի ցանկացած զեղչ և դրա կիրառման մեթոդը` համաձայն ՀՀ-ի 12.1 ենթակետի:

**14.5** Հայտատուի կողմից առաջարկված գները պետք է լինեն ֆիքսված, քանի դեռ **ՄՏՑ**-ում և Պայմանագրի պայմաններում այլ բան չի նախատեսված: Եթե գները ենթակա են ճշգրտման Պայմանագրի կատարման ընթացքում Պայմանագրի պայմանների համաձայն, Հայտատուն Բաժին IV-ի (Հայտի ձևեր) «**Տվյալների ճշգրտման աղյուսակում**» պետք է ներկայացնի գների ճշգրտման բանաձևի ինդեքսները և կշիռները` դրանում ներկայացված հրահանգների համաձայն, և Պատվիրատուն կարող է խնդրել Հայտատուից հիմնավորել իր կողմից առաջարկված ինդեքսները և կշիռները:

**14.6** ՀՀ-ի 1.1 ենթակետով նախատեսված լինելու դեպքում, Հայտեր են հրավիրվում են ինչպես առանձին լոտերի (պայմանագրեր), այնպես էլ լոտերի ցանկացած զուգակցման համար (փաթեթներ): Այն մասնակիցները, որոնք ցանկանում են առաջարկել զեղչեր մեկից ավել պայմանագիր ստանալու դեպքում, պետք է իրենց Հայտում նշեն յուրաքանչյուր փաթեթի, կամ` որպես այլընտրանք, փաթեթի ներսում առանձին պայմանագրերի նկատմամբ կիրառվող զեղչերը: Զեղչեն ընդունվում են ՀՀ-ի 14.4 ենթակետի համաձայն, պայմանով, որ բոլոր լոտերի (պայմանագրերի) Հայտերը բացվում են միաժամանակ:

**14.7** Բոլոր մաքսերը, տուրքերը և այլ գանձումները, որոնք պետք է վճարվեն Կապալառուի կողմից Պայմանագրի շրջանակներում կամ որևէ այլ պատճառներով պետք է ընդգրկվեն Հայտատուի կողմից ներկայացված դրույքների, գների և[1] Հայտի ընդհանուր գնի մեջ` Հայտերի ներկայացման վերջնաժամկետից **28 (քսանութ) օր առաջվա** հաշվարկով:

**15. Հայտի արժույթները և վճարում**

**15.1** Հայտի արժույթը(ները) և վճարման արժույթը(ները) պետք է լինեն նույնը և պետք է **սահմանվեն ՄՏՑ-ում**:

**15.2** Պատվիրատուն կարող է պահանջել Հայտատուներից` իրեն համար գոհացուցիչ կերպով հիմնավորել տեղական և արտարժութային պահանջները և հիմնավորել, որ «**Տվյալների ճշգրտման աղյուսակում**» ցույց տված միավոր դրույքներում ու գներում ներառված գումարները ողջամիտ են[2], ինչը ցույց տալու համար Հայտատուից կպահանջվի ներկայացնել արտարժույթի պահանջների մանրամասն բացվածք:

**16. Տեխնիկական առաջարկի մաս կազմող փաստաթղթերը**

**16.1** Հայտատուն պետք է տրամադրի տեխնիկական առաջարկ` ներառելով տեղեկատվություն աշխատանքային մեթոդների, սարքավորումների, անձնակազմի, ժամանակացույցերի և այլնի մասին, համաձայն Բաժին IV-ի («Հայտի ձևեր»)` բավարար մանրամասներով, որպեսզի ներկայացնի իր Հայտի համապատասխանությունն աշխատանքներին ներկայացվող պահանջներին և ավարտման ժամկետներին:

**17. Հայտատուի իրավասությունը և**

**17.1** ՀՀ-ի 4-րդ կետի համաձայն Հայտատուի իրավասությունը որոշելու համար Հայտատուները պետք է լրացնեն մրցութային փաստաթղթերի Բաժին IV-ի («Հայտի ձևեր») Հայտի նամակը:

---

[1] Միանվագ գումարով պայմանագրերի դեպքում ջնջել «դրույքները, գները և»:

[2] Միանվագ գումարով պայմանագրերի դեպքում ջնջել «, որ Տվյալների ճշգրտման աղյուսակում ցույց տված միավոր դրույքներում ու գներում ներառված գումարները ողջամիտ են» և փոխարինել «Միանվագ գումարի մեծությունը»:

**որակավորումն երը հաստատող փաստաթղթեր**

**17.2** Որպեսզի Բաժին III-ի («Գնահատման և որակավորման չափանիշներ») համաձայն հաստատվեն Հայտատուի որակավորումները Պայմանագրի կատարման համար, Հայտատուն պետք է տրամադրի Բաժին IV-ի («Հայտի ձևեր») համապատասխան տեղեկատվական աղյուսակներով պահանջված տեղեկատվությունը:

**17.3** Եթե ՀՀ-ի 33.1 ենթակետով սահմանված ձևով կիրառվում է նախապատվության զեղչ, այն տեղական Հայտատուները, որոնք՝ առանձին կամ համատեղ ձեռնարկության կազմում, դիմում են տեղական նախապատվություն ստանալու համար, պետք է ներկայացնեն ողջ տեղեկատվությունը, որը պահանջվում է ՀՀ 33.1 ենթակետի համաձայն արտոնության չափանիշները բավարարելու համար:

**18. Հայտերի վավերության ժամկետ**

**18.1** Հայտերը պետք է վավեր (ուժի մեջ) լինեն մինչև **ՄՏՑ-ում սահմանված ժամկետը,** կամ Պատվիրատուի կողմից ՀՀ 8 ենթակետի համաձայն փոփոխված լինելու դեպքում՝ մինչև ցանկացած երկարաձգված ժամկետը: Հայտը, որը վավեր չէ մինչև **ՄՏՑ-ում սահմանված ժամկետը,** կամ Պատվիրատուի կողմից ՀՀ 8 ենթակետի համաձայն փոփոխված լինելու դեպքում՝ մինչև ցանկացած երկարաձգված ժամկետը, մերժվում է Պատվիրատուի կողմից որպես չհամապատասխանող:

**18.2** Բացառիկ դեպքերում՝ մինչև Հայտերի վավերության լրանալու ամսաթիվը, Պատվիրատուն կարող է խնդրել Հայտատուներից երկարաձգել իրենց առաջարկների վավերության ժամկետը: Խնդրանքն ու Հայտատուների պատասխանները պետք է լինեն գրավոր: Եթե ՀՀ-ի 19 կետի համաձայն պահանջվում է Հայտի երաշխիք, այն նույնպես պետք է երկարաձգվի՝ Հայտի վավերության երկարաձգված ժամկետից **28 (քսանութ) օր** երկար ժամկետով: Հայտատուն կարող է մերժել երկարացնել վավերության ժամկետը, որի դեպքում Հայտի երաշխիքը չի կիրարկվում: Համաձայնության դեպքում Հայտատուն չի կարող խնդրել, կամ նրան չի թույլատրվում փոփոխություններ անել իր Հայտում՝ բացառությամբ ՀՀ-ի 18.3 ենթակետով նախատեսված դեպքերի:

**18.3** Եթե պայմանագրի շնորհումը հետաձգվում է ՀՀ-ի 18.1 ենթակետով նախատեսված Հայտի վավերականության ժամկետի ավարտից հետո **(56) հիսունվեց օրը** գերազանցող ժամկետով, ապա Պայմանագրի արժեքը պետք է որոշվի հետևյալ կերպ.

(ա) **ֆիքսված գնով պայմանագրերի** դեպքում Պայմանագրի գինը կլինի Հայտի գինը՝ ճշգրտված ՄՏՑ-ում սահմանված գործակցով:

(բ) **Ճշգրտվող գնով պայմանագրերի** դեպքում, ճշգրտում չի լինում:

(գ) Ամեն դեպքում, Հայտի գնահատումը պետք է հիմնվի Հայտի գնի հիման վրա, առանց հաշվի առնելու վերոնշյալ կիրառվող ուղղումները:

**19. Հայտի երաշխիք**

**19.1** Հայտատուն՝ որպես Հայտի մաս, պարտավոր է բնօրինակով ներկայացնել Հայտի երաշխիք կամ Հայտի ապահովման հայտարարագիր՝ **ՄՏՑ-ում սահմանված ձևով**: Հայտի երաշխիքի դեպքում գումարը և արժույթը պետք է լինեն **ՄՏՑ-ում սահմանված ձևով**:

**19.2** Հայտի ապահովման հայտարարագիրը կազմելիս հարկավոր է կիրառել Բաժին IV-ում («Հայտի ձևեր») ներառված ձևը:

**19.3** Եթե ՀՀ 19.1 ենթակետով սահմանված է Հայտի երաշխիք, այն պետք է՝ Հայտատուի հայեցողությամբ, լինի հետևյալ ցպահանջ երաշխիքներից որևէ մեկի ձևով.

(ա) որևէ բանկի կամ բանկ չհանդիսացող ֆինանսական հաստատության (ինչպես օրինակ՝ ապահովագրական ընկերության, երաշխավորող ընկերության) կողմից թողարկված անվերապահ երաշխիք,

(բ) անհետկանչելի ակրեդիտիվի նամակ,

(գ) դրամարկղային չեկ կամ վկայագրված չեկ, կամ

(դ) **ՄՏՑ-ով սահմանված** այլ երաշխիք՝

իրավասու երկրի հուսալի աղբյուրից: Եթե անվերապահ երաշխիքը թողարկվում է ոչ Պատվիրատուի երկրում գտնվող բանկ չհանդիսացող ֆինանսական հաստատության կողմից, թողարկող՝ բանկ չհանդիսացող ֆինանսական հաստատությունը պետք է թղթակից ֆինանսական հաստատություն ունենա Պատվիրատուի երկրում՝ երաշխիքը կիրարկելի դարձնելու համար, եթե միայն Պատվիրատուն գրավոր, մինչև Հայտերի ներակայացնելը չի համաձայնվել, որ թղթակից ֆինանսական հաստատություն պետք չէ: Բանկային երաշխիքի դեպքում Հայտի երաշխիքը պետք է ներկայացվի կամ օգտագործելով Բաժին IV-ում բերված հայտի երաշխիքի ձևով, կամ դրան էապես համանման մեկ այլ ձևաչափով, որը հաստատված կլինի Պատվիրատուի կողմից մինչև Հայտերի ներկայացնելը: Հայտի երաշխիքը պետք է վավեր լինի հայտի սկզբնական վավերության ժամկետի ավարտից, կամ ՀՀ-ի 18.2 ենթակետի համաձայն խնդրված վավերության երկարաձգված ժամկետից սկսած **28 (քսանութ) օրվա ընթացքում**:

**19.4** Եթե ՀՀ 19.1 ենթակետի համաձայն սահմանված է Հայտի երաշխիք կամ Հայտի ապավովման հայտարարագիր, ապա ցանկացած Հայտ, որը չի ուղեկցվում էապես համապատասխանող Հայտի երաշխիքով կամ Հայտի ապահովման հայտարարագրով, մերժվում է Պատվիրատուի կողմից՝ որպես պահանջներին չհամապատասխանող:

**19.5** Եթե ՀՀ 19.1 ենթակետի համաձայն ներկայացվում է Հայտի երաշխիք, այն պետք է վերադարձվի չընտրված Հայտատուներին՝ ընտրված Հայտատուի հետ Պայմանագիրը կնքելուց և վերջինիս կողմից՝ Կատարման երաշխիքը, իսկ **ՄՏՑ**-ով պահանջվելու դեպքում՝ Բնապահպանական և սոցիալական (ԲՍ) Կատարման երաշխիքը ՀՀ-ի 48-րդ կետի համաձայն ներկայացնելուց հետո հնարավորինս արագ:

**19.6** Ընտրված Հայտատուի Հայտի երաշխիքը պետք է վերադարձվի նրա հետ Պայմանագիրը կնքելուց և վերջինիս կողմից պահանջվող կատարման երաշխիքը, իսկ **ՄՏՑ**-ով պահանջվելու դեպքում՝ Բնապահպանական և սոցիալական (ԲՍ) Կատարման երաշխիքը ներկայացնելուց հետո հնարավորինս արագ:

**19.7** Հայտի երաշխիքը կարող է գանձվել,

(ա) եթե Հայտատուն հետ է վերցնում իր Հայտը՝ նախքան Հայտի նամակում վերջինիս կողմից նշված Հայտի վավերության ժամանակահատվածի կամ դրա երկարաձգման ավարտը, կամ

(բ) եթե ընտրված Հայտատուն սահմանված ժամանակահատվածում.

(i) չի ստորագրում Պայմանագիրը՝ համաձայն ՀՀ-ի 47 կետի, կամ

(ii) չի ներկայացնում կատարման երաշխիքը, իսկ **ՄՏՑ**-ով պահանջվելու դեպքում՝ Բնապահպանական և սոցիալական (ԲՍ) կատարման երաշխիքը՝ համաձայն ՀՀ-ի 48 կետի:

**19.8** Համատեղ ձեռնարկության Հայտի երաշխիքը կամ Հայտի ապահովման հայտարարագիրը պետք է լինեն այդ Հայտը ներկայացնող համատեղ ձեռնարկության անունից: Եթե համատեղ ձեռնարկությունն իրավաբանորեն դեռ չի ձևավորվել մրցույթի ժամանակ, ապա Հայտի երաշխիքը կամ Հայտի ապահովման հայտարարագիրը պետք է լինեն բոլոր ապագա անդամների անունից, ինչպես նշված է ՀՀ 4.1 և ՀՀ 11.2 ենթակետերում նշված Մտադրության նամակում:

**19.9** **Եթե ՄՏՑ 19.1 ենթակետով** Հայտի երաշխիք չի պահանջվում, և՝

(ա) եթե Հայտատուն հետ է վերցնում իր Հայտը՝ նախքան Հայտի նամակում վերջինիս կողմից նշված Հայտի վավերության ժամանակահատվածի կամ դրա երկարաձգման ավարտը, կամ

(բ) եթե ընտրված Հայտատուն սահմանված ժամանակահատվածում.

(i) չի ստորագրում Պայմանագիրը՝ համաձայն ՀՀ-ի 47 կետի, կամ

(ii) չի ներկայացնում կատարման երաշխիքը, իսկ **ՄՏՑ**-ով պահանջվելու դեպքում՝ Բնապահպանական և սոցիալական (ԲՍ) կատարման երաշխիքը՝ համաձայն ՀՀ-ի 48 կետի:

ապա Փոխառուն՝ **եթե դա նախատեսված է ՄՏՑ-ով**, կարող է Հայտատուին հայտարարել ոչ իրավասու՝ **ՄՏՑ-ում սահմանված ժամկետով** Պատվիրատուի կողմից պայմանագիր շնորհվելու համար:

**20. Հայտի ձևաչափը և ստորագրելը**

**20.1** Հայտատուն պետք է պատրաստի ՀՀ-ի 11-րդ կետում նկարագրված Հայտի մաս կազմող փաստաթղթերի մեկ բնօրինակ, որը պետք հստակ նշված լինի որպես **«ԲՆՕՐԻՆԱԿ»**: Այլընտրանքային հայտերը, եթե թույլատրվում են ՀՀ-ի 13-րդ կետով, պետք է հստակ նշվեն որպես **«ԱՅԼԸՆՏՐԱՆՔ»**: Ի լրումն դրա, Հայտատուն պետք է ներկայացնի Հայտի պատճեններ՝ **ՄՏՑ-ում նշված քանակով**, որոնք բոլորը պետք է հստակ նշված լինեն որպես **«ՊԱՏՃԵՆ»**: Բնօրինակի և պատճենների միջև հակասությունների դեպքում առաջնահերթությունը տրվում է **բնօրինակին**:

**20.2** Հայտատուներն իրենց Հայտի այն մասերը, որոնք գաղտնի են նրանց բիզնեսի համար, պետք է նշեն **«ԳԱՂՏՆԻ»**: Դա կարող է լինել տեղեկություն սեփականատերերի մասին, առևտրային կամ ֆինանսապես զգայուն տեղեկատվություն:

**20.3** Հայտի բնօրինակը և պատճենները պետք է գրվեն կամ տպվեն չջնջվող թանաքով և ստորագրված լինեն այն անձի կողմից, որը պատշաճ լիազորված է ստորագրել դրանք Հայտատուի անունից: Նման լիազորությունը պետք է գրավոր ամրագրվի, ինչպես նշված է **ՄՏՑ**-ում, և կցվի Հայտին: Լիազորագիրը ստորագրող ցանկացած անձի անունը և զբաղեցրած պաշտոնը տպվում են ստորագրության տակ: Հայտի բոլոր այն էջերը, որոնց վրա կան ավելացված

մասեր կամ ուղղումներ, պետք է ստորագրված լինեն Հայտը ստորագրող անձի կողմից:

**20.4** Եթե Հայտատուն ՀՁ է, Հայտը պետք է ստորագրվի ՀՁ-ի լիազորված ներկայացուցչի կողմից՝ ՀՁ-ի անունից, և լինի իրավաբանորեն պարտադիր բոլոր անդամների համար, ինչի կհաստատվի անդամների լիազորված ներկայացուցիչների կողմից ստորագրված լիազորագրով:

**20.5** Ցանկացած ավելացում տողերի արանքում, ջնջում կամ ջնջածի վրա գրված նոր մաս վավեր կլինեն միայն այն դեպքում, եթե դրանք ստորագրված լինեն առաջարկը ստորագրող անձի կողմից:

## Դ. Հայտեր ներկայացնելը և բացելը

**21. Հայտեր կնքելը և նշելը**

**21.1** Հայտատուն Հայտը պետք է առաքի առանձին կնքված ծրարով (մեկ ծրարով մրցութային ընթացակարգ): Հայտատուն մեկ առանձին ծրարում պետք է տեղադրի հետևյալ առանձին կնքված ծրարները՝

(ա) որպես **«ԲՆՕՐԻՆԱԿ»** նշված ծրարում՝ Հայտի կազմի մեջ մտնող բոլոր փաստաթղթերը, ինչպես նկարագրված է ՀՀ-ի 11-րդ կետում,

(բ) որպես **«ՊԱՏՃԵՆ»** նշված ծրարում՝ Հայտի բոլոր պահանջվող պատճենները, և՝

(գ) եթե ՀՀ-ի 13-րդ կետով թույլատրվում են այլընտրանքային Հայտեր և եթե այդպիսիք կան, ապա՝

(i) որպես **«ԲՆՕՐԻՆԱԿ – ԱՅԼԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ ՀԱՅՏ»** նշված ծրարում՝ այլընտրանքային Հայտը և,

(ii) որպես **«ՊԱՏՃԵՆ – ԱՅԼԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ ՀԱՅՏ»** նշված ծրարում՝ այլընտրանքային Հայտի բոլոր պահանջվող պատճենները:

**21.2** Ներքին և արտաքին ծրարների վրա պետք է.

(ա) նշված լինի Հայտատուի անունը և հասցեն,

(բ) հասցեագրված լինեն Պատվիրատուին՝ **ՄՏՑ-ում նշված** հասցեով՝ համաձայն ՀՀ-ի 22.1-րդ ենթակետի,

(գ) նշված լինի տվյալ մրցութային գործընթացի հատուկ նույնականացման համարները՝ համաձայն ՀՀ-ի 1.1 ենթակետի,

(դ) նշված լինի նախազգուշացում, որ չբացվի մինչև Հայտերի բացման ժամից և օրից շուտ:

**21.3** Եթե բոլոր ծրարները պատշաճ կերպով կնքված/նշագրված չլինեն, ապա Պատվիրատուն որևէ պատասխանատվություն չի կրի Հայտի կորստի, սխալ և վաղաժամ բացման համար:

**22. Հայտերի ներկայացման վերջնաժամկետ**

**22.1** Հայտերը պետք է առաքվեն Պատվիրատուի նշված հասցեով, ոչ ուշ, քան **ՄՏՑ-ում սահմանված** օրն ու ժամը: Եթե **սահմանված է ՄՏՑ-ում**, ապա Հայտատուները պետք է հնարավորություն ունենան ներկայացնել իրենց Հայտերն էլեկտրոնային եղանակով: Էլեկտրոնային եղանակով հայտեր

ներկայացնող Հայտատուները պետք է հետևեն **ՄՏՑ-ում սահմանված** էլեկտրոնային եղանակով Հայտի ներկայացման ընթացակարգերին:

**22.2** Պատվիրատուն կարող է՝ իր հայեցողությամբ, երկարացնել Հայտերի ներկայացման վերջնաժամկետը՝ փոփոխելով մրցութային փաստաթղթերը ՀՀ-ի 8-րդ կետի համաձայն: Նման պարագայում Պատվիրատուի և Հայտատուների բոլոր իրավունքներն ու պարտականությունները, որոնք նախկինում կիրառվում էին սկզբնական վերջնաժամկետի նկատմամբ, այնուհետ պետք է կիրառվեն նոր վերջնաժամկետի նկատմամբ:

**23. Ուշացված Հայտեր**

**23.1** Պատվիրատուն չի ուսումնասիրի որևէ Հայտ, որը ստացվում է ՀՀ-ի 22-րդ կետով սահմանված՝ հայտերի ներկայացման վերջնաժամկետից հետո: Այդ Հայտերը կհամարվեն ուշացած, մերժված, և առանց բացվելու կվերադարձվեն Հայտատուին:

**24. Հայտերի հետ վերցնել, փոխարինելը և փոփոխելը**

**24.1** Հայտատուն կարող է փոխարինել, փոփոխել կամ հետ վերցնել իր առաջարկը՝ գրավոր ծանուցմամբ և լիազորված ներկայացուցչի ստորագրությամբ, և ներառել լիազորագրի պատճենը համաձայն ՀՀ-ի 20.3 ենթակետի (բացառությամբ այն դեպքերի, երբ հետ վերցնելու ծանուցումների պատճենները չեն պահանջվում): Հայտում կատարված համապատասխան փոխարինումը կամ փոփոխությունը պետք է ուղեկցվի գրավոր ծանուցմամբ: Բոլոր ծանուցումները պետք է.

(ա) պատրաստվեն և ներկայացվեն ՀՀ-ի 20-րդ և ՀՀ-ի 21-րդ կետերի համաձայն (բացառությամբ այն դեպքերի, հետ վերցնելու ծանուցումների պատճենները չեն պահանջվում), բացի այդ, համապատասխան ծրարների վրա պետք է հստակ նշվի **«ՀԵՏ ՎԵՐՑՆԵԼ», «ՓՈԽԱՐԻՆՈՒՄ», «ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ»**, և

(բ) Պատվիրատուն պետք է ստանա դրանք Հայտերի ներկայացման համար սահմանված վերջնաժամկետից առաջ՝ համաձայն ՀՀ-ի 22-րդ կետի:

**24.2** Հետ վերցնելու համար պահանջված Հայտերը Հայտատուներին վերադարձվում են առանց բացվելու՝ համաձայն ՀՀ 24.1 ենթակետի:

**24.3** Հայտերի ներկայացման վերջնաժամկետի և Հայտատուի կողմից Մրցույթին մասնակցելու նամակում նշված վավերության ժամկետի կամ դրա երկարաձգման ավարտի ամսաթվի միջև ընկած ժամանակահատվածում արգելվում է հետ վերցնել, փոխարինել կամ փոփոխել որևէ Հայտ:

**25. Հայտերի բացում**

**25.1** Բացառությամբ ՀՀ-ի 23-րդ և 24-րդ կետերում նշված դեպքերի, Պատվիրատուն պետք է ՀՀ 25.3 ենթակետի համաձայն հրապարակայնորեն բացի և բարձրաձայն կարդա Հայտերը Հայտատուների լիազորված ներկայացուցիչների կամ ցանկացած այլ անձի ներկայությամբ, ով որոշել է մասնակցել **ՄՏՑ-ում նշված** ժամին և վայրում: Բոլոր Հայտատուները և նրանց ներկայացուցիչները, ցանկացած շահագրգռված կողմ կարող է ներկա լինել հրապարակային բացմանը: Եթե ՀՀ-ի 22.1 ենթակետով թույլատրվում է էլեկտրոնային մրցույթ, էլեկտրոնային բացման ցանկացած հատուկ ընթացակարգ պետք է իրականացվի **ՄՏՑ-ով սահմանված ձևով**:

**25.2** Սկզբում պետք է բացվեն և կարդացվեն **«ՀԵՏ ՎԵՐՑՆԵԼ»** նշումով ծրարները: Համապատասխան Հայտով ծրարը պետք է առանց բացվելու վերադարձվի Հայտատուին: Հայտը չի կարող հետ վերցվել, մինչև հրաժարվելու վերաբերյալ ծանուցման մեջ չլինի հետ վերցնելու խնդրանքի վավեր լիազորում և մինչև այն չկարդացվի առաջարկների բացման ժամանակ:

**25.3** Այնուհետև բացվում և կարդացվում են **«ՓՈԽԱՐԻՆՈՒՄ»** նշումով ծրարները և փոխարինվում համապատասխան ուղղված Հայտով: Փոխարինվող առաջարկը պետք է առանց բացվելու վերադարձվի Հայտատուին: Հայտը չի կարող փոխարինվել, մինչև փոխարինման ծանուցման մեջ չլինի փոխարինման խնդրանքի վավեր լիազորում և այն չկարդացվի առաջարկի բացման ժամանակ:

**25.4** Այնուհետև պետք է բացվեն և բարձրաձայն կարդացվեն **«ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ»** նշագրմամբ ծրարները՝ համապատասխան Հայտի հետ միասին: Հայտը չի կարող փոփոխվել, մինչև փոխարինման ծանուցման մեջ չլինի փոփոխման խնդրանքի վավեր լիազորում և այն չկարդացվի առաջարկի բացման ժամանակ:

**25.5** Այնուհետև բացվում և կարդացվում են հետևյալը. Հայտատուի անունը, արդյոք կա՞ փոփոխություն, թէ ոչ, Հայտի ընդհանուր գինը, գինն ըստ լոտերի (պայմանագրերի)՝ եթե կիրառվում է, ներառյալ ցանկացած զեղչը և այլընտրանքային առաջարկը, Հայտի երաշխիքի կամ Հայտի ապահովման հայտարարագրի առկայությունը կամ բացակայությունը՝ եթե պահանջվում է, ինչպես նաև այլ մանրամասներ, որոնք Պատվիրատուն կհամարի անհրաժեշտ:

**25.6** Կուսումնասիրվեն և կգնահատվեն միայն Հայտերի բացման ժամանակ բացված և բարձրաձայն կարդացված Հայտերը, այլընտրանքային Հայտերը և զեղչերը: Հայտի նամակը և գնանշված Աղյուսակները պետք է ստորագրվեն առաջարկների բացմանը մասնակցող Պատվիրատուի ներկայացուցչի կողմից՝ **ՄՏՑ**-ում սահմանված ձևով:

**25.7** Հայտերի բացման ընթացքում Պատվիրատուում ոչ պետք է քննարկի որևէ Հայտի առավելությունը, ոչ էլ մերժի որևէ Հայտ (բացառությամբ ուշացված Հայտերի՝ համաձայն ՀՀ 23.1 ենթակետի):

**25.8** Պատվիրատուն պետք է կազմի Հայտերի բացման արձանագրություն, ներառելով առնվազն՝

(ա) Հայտատուի անունը, արդյոք կա՞ն Հայտի փոփոխություն, փոխարինում կամ հետ վերցնելու խնդրանք,

(բ) Հայտի գինը, գինն ըստ լոտերի (պայմանագրերի) եթե կիրառելի է, այդ թվում ցանկացած զեղչերը և այլընտրանքները,

(գ) Հայտի երաշխիքի կամ Հայտի ապահովման հայտարարագրի առկայությունը կամ բացակայությունը՝ վերջինիս անհրաժեշտության դեպքում,

(դ) որևէ այլընտրանքային Հայտ:

**25.9** Հայտին ներկա գտնվող Հայտատուի ներկայացուցիչները պետք է ստորագրեն արձանագրությունը: Արձանագրությունում Հայտատուի ստորագրության բացակայությունը չեղյալ չի դարձնում արձանագրության բովանդակությունը: Արձանագրության պատճեն պետք է ուղարկվի բոլոր Հայտատուներին:

### Ե. Հայտերի գնահատումը և համեմատումը

| | | | |
|---|---|---|---|
| **26.** | **Գաղտնիություն** | **26.1** | Հայտերի գնահատման և պայմանագրի շնորհման առաջարկությունը չպետք է բացահայտվի Հայտատուներին կամ որևէ այլ անձի, որը պաշտոնապես չի առնչվում գնահատման գործընթացի հետ՝ մինչև Պայմանագիրը շնորհելու մտադրության մասին տեղեկատվությունը չփոխանցվի բոլոր Հայտատուներին՝ ՀՀ-ի 43-րդ կետի համաձայն: |
| | | **26.2** | Հայտատուի կողմից ցանկացած փորձ՝ ազդելու Հայտերի գնահատման կամ Պայմանագրի շնորհման վերաբերյալ Պատվիրատուի որոշումների վրա, կարող է հանգեցնել տվյալ Հայտի մերժմանը: |
| | | **26.3** | Անկախ ՀՀ-ի 26.2 ենթակետի դրույթներից, մրցույթի բացման պահից մինչ Պայմանագրի շնորհումը, եթե Հայտատուն ցանկանում է կապվել Պատվիրատուի հետ մրցույթի գործընթացի հետ առնչվող որևէ հարցի առնչությամբ, նա պետք է դա անի գրավոր: |
| **27.** | **Հայտերի պարզաբանում** | **27.1** | Հայտերի քննարկմանը, գնահատմանն ու համեմատմանն օժանդակելու համար, ինչպես նաև Հայտատուի որակավորման հետ կապված Պատվիրատուն՝ իր հայեցողությամբ, կարող է խնդրել ցանկացած Հայտատուից պարզաբանել իր Հայտը՝ սահմանելով դրա համար ողջամիտ ժամկետներ: Հայտատուի կողմից ներկայացված ցանկացած պարզաբանում, որը չի համապատասխանում Պատվիրատուի պահանջին, չպետք է ուսումնասիրվի: Պարզաբանման խնդրանքը և պատասխանը պետք է լինեն գրավոր: Հայտի գնի կամավոր բարձրացում կամ իջեցում կամ բովանդակության որևէ փոփոխություն չի թույլատրվում, բացի այն դեպքերից, երբ պահանջվում է թվաբանական սխալների ուղղման հաստատում, որը հայտնաբերվել և ուղղվել է Հայտերի գնահատման ընթացքում Պատվիրատուի կողմից՝ համաձայն ՀՀ 31 կետի: |
| | | **27.2** | Եթե Հայտատուն չի տրամադրում իր Հայտին վերաբերող պարզաբանումներ մինչև Պատվիրատուի կողմից պարզաբանման պահանջի օրը և ժամը, նրա Հայտը կարող է մերժվել: |
| **28.** | **Շեղումներ, վերապահումներ և բացթողումներ** | **28.1** | Հայտերի գնահատման ընթացքում կիրառվում են հետևյալ սահմանումները,<br><br>(ա) **«շեղում»** նշանակում է՝ շեղում մրցութային փաստաթղթում նշված պահանջներից,<br><br>(բ) **«վերապահում»** նշանակում է՝ մրցութային փաստաթղում նշված պահանջների նկատմամբ սահմանափակումներ կիրառելը կամ դրանք ամբողջությամբ ընդունելուց հրաժարվելը, և<br><br>գ) **«բացթողում»** նշանակում է՝ մրցութային փաստաթղթերում պահանջվող տեղեկատվության մասամբ կամ ամբողջությամբ չներկայացնելը: |
| **29.** | **Համապատասխանության որոշում** | **29.1** | Հայտի համապատասխանության որոշումը Պատվիրատուի կողմից պետք է հիմնված լինի հենց Հայտի բովանդակության վրա, ինչպես ամրագրված է ՀՀ-ի 11-րդ կետում: |
| | | **29.2** | Էապես համապատասխանող է այն Հայտը, որը բավարարում է Մրցութային փաստաթղթերի պահանջներին առանց նշանակալի շեղումների, վերապահումների կամ բացթողումների: Նշանակալի շեղումը, վերապահումը կամ բացթողումը նշանակալի են այն դեպքում, եթե՝ |

(ա) ընդունվելու դեպքում՝

i. նշանակալիորեն կազդեն Պայմանագրում նշված Աշխատանքների ծավալի, որակի կամ կատարման վրա, կամ

ii. նշանակալիորեն, մրցութային փաստաթղթերին չհամապատասխանող կերպով կսահմանափակեն Պայմանագրի շրջանակներում Պատվիրատուի իրավունքները կամ Հայտատուի պարտավորությունները, կամ

(բ) ընդունվելու դեպքում, անարդարացիորեն կազդեն էապես համապատասխանող Հայտեր ներկայացրած այլ հայտատուների մրցակցային դիրքի վրա:

**29.3** Պատվիրատուն պետք է ուսումնասիրի ՀՀ-ի 16-րդ կետի համաձայն ներկայացված Հայտի տեխնիկական կողմերը, մասնավորապես, հաստատելու, որ Բաժին VI-ում **(«Աշխատանքներին ներկայացվող պահանջներ»)** ներկայացված բոլոր պահանջները բավարարված են առանց նշանակալի շեղումների, վերապահումների կամ բացթողումների:

**29.4** Եթե Հայտն էապես չի համապատասխանում մրցութային փաստաթղթում ներկայացված պահանջներին, այն պետք է մերժվի Պատվիրատուի կողմից և հետագայում չի կարող դարձվել համապատասխանող՝ նշանակալի շեղումները, վերապահումները կամ բացթողումներն ուղղելու միջոցով:

**30. Ոչ նշանակալի անհամապատասխանություններ**

**30.1** Եթե Հայտն էապես համապատասխանող է, Պատվիրատուն կարող է անուշադրության մատնել Հայտում առկա որևէ ոչ նշանակալի անհամապատասխանություն:

**30.2** Եթե Հայտն էապես համապատասխանող է, Պատվիրատուն կարող է պահանջել Հայտատուից սահմանված ողջամիտ ժամանակահատվածում տրամադրել անհրաժեշտ տեղեկատվություն կամ փաստաթղթեր՝ Հայտում ոչ նշանակալի անհամապատասխանություններն ուղղելու նպատակով: Նման անհամապատասխանությունների վերաբերյալ պահանջվող տեղեկատվությունը կամ փաստաթղթերը չպետք է որևէ կերպով վերաբերվեն Հայտի գնին: Հայտատուի կողմից տվյալ պահանջը չբավարարելու դեպքում նրա Հայտը կարող է մերժվել:

**30.3** Եթե Հայտն էապես համապատասխանող է, Պատվիրատուն ուղղում է Հայտի գնի ոչ նշանակալի անհամապատասխանությունները: Այդ իմաստով Հայտի գինը կարող է ճշգրտվել միայն համեմատության նպատակներով՝ բացակայող կամ անհամապատասխան բաղադրիչի արժեքն արտացոլելու համար՝ էապես համապատասխանող հայտատուների կողմից նշված միավորի կամ բաղադրիչի միջին գինն ավելացնելու եղանակով: Եթե միավորի կամ բաղադրիչի գինը չի կարող առանձնացվել մյուս էապես համապատասխանող հայտերի գնից, ապա պատվիրատուն կկիրառի իր լավագույն նախահաշվային արժեքը:

**31. Թվաբանական սխալների ուղղում**

**31.1** Եթե Հայտն էապես համապատասխանող է, Պատվիրատուն ուղղում է թվաբանական սխալները հետևյալ կերպ.

(ա) միայն միավոր գնով պայմանագրերի համար. Եթե առկա է անհամապատասխանություն միավոր գնի և այդ միավոր գնի ու քանակի բազմապատկումից ստացված ընդհանուր գումարի միջև, ապա

գերակայում է միավոր գինը և ուղղվում ընդհանուր գումարը՝ եթե միայն, Պատվիրատուի կարծիքով, տեղի չի ունեցել ակնհայտ սխալ միավոր գնում բաժանարար կետը կամ ստորակետը սխալ տեղ դնելուց, որի դեպքում գերակայում է ընդհանուր գումարը և համապատասխանաբար ուղղվում է միավոր գինը,

(բ) եթե ընդհանուր գումարում առկա է որևէ սխալ, որը առաջացել է միջանկյալ գումարների սխալ հանումից կամ գումարումից, ապա գերակայում են միջանկյալ գումարները և ուղղվում է ընդհանուր գումարը,

(գ) եթե առկա է անհամապատասխանություն բառերի և թվերի միջև, ապա գերակայում է բառերով արտահայտված գումարը, եթե միայն բառերով արտահայտված գումարը չի վերաբերում թվաբանական սխալին, որի դեպքում գերակայում է թվերով արտահայտված գումարը՝ վերոհիշյալ (ա) և (բ) կետերին համապատասխան:

**31.2** Հայտատուներին կառաջարկվի ընդունել թվաբանական սխալների ուղղումը: ՀՀ 31.1 ենթակետի համաձայն արված ուղումների չընդունելու դեպքում Հայտը մերժվում է:

| | | |
|---|---|---|
| **32. Փոխարկումը մեկ արժեքի** | **32.1** | Գնահատման և համեմատման նպատակով Հայտի առաջարկի արժույթը (ները) պետք է փոխարինվեն մեկ արժույթի՝ **ՄՏՑ-ում նշված ձևով**: |
| **33. Նախապատվու-թյան զեղչ** | **33.1** | Տեղացի Հայտատուներին[3] նախապատվություն չի տրվում, քանի դեռ **ՄՏՑ**-ում այլ կերպ սահմանված չէ: |
| **34. Ենթակապալառուներ** | **34.1** | Քանի դեռ **ՄՏՑ**-ով այլ բան չի նշվում, Պատվիրատուն մտադիր չէ Աշխատանքների որևէ հատուկ մաս իրականացնել նախապես իր կողմից ընտրված ենթակապալառուների միջոցով: |
| | **34.2** | Ենթակապալառուների որակավորումները հաշվի չպետք է առնվեն Աշխատանքների կատարման համար Հայտատուի որակավորումները որոշելու ժամանակ, եթե Աշխատանքների մասնագիտացված մասը նախապես Պատվիրատուի կողմից չի նախատեսվել **ՄՏՑ**-ում ենթախորհրդատուների կողմից իրականացվելու համար, որոնք ստորև նշված են որպես «**Մասնագիտացված Ենթակապալառուներ**»: Այդ դեպքում, Հայտատուի կողմից առաջարկված Մասնագիտացված Ենթակապալառուների որակավորումները կարող են ավելացվել Հայտատուի որակավորումներին: |
| | **34.3** | Հայտատուները ենթակապալով կարող են առաջարկել իրականացնել պայմանագրերի ընդհանուր արժեքի այն մասը, կամ աշխատանքների այն ծավալը, որը սահմանված է **ՄՏՑ** -ում: Հայտատուի կողմից առաջարկվող ենթակապալառուները պետք է համապատասխան որակավորված լինեն աշխատանքների իրենց բաժնի իրականացման համար: |

[3] Առանձին ընկերությունը համարվում է տեղացի Հայտատու՝ նախապատվության նպատակներով, եթե գրանցված է Պատվիրատուի երկրում, սեփականության 50 տոկոսից ավելին պատկանում է Պատվիրատուի երկրի քաղաքացիներին, և օտարերկրյա ենթակապալառուներին ենթակապալով չի հանձնում պայմանագրի գնի 10 տոկոսից ավելին՝ հանած պայմանական գումարները: ՀԶ-ները համարվում են տեղացի Հայտատու և իրավասու են նախապատվություն ստանալ միայն այն դեպքում, եթե ընկերությունները գրանցված են Պատվիրատուի երկրում, կամ սեփականության 50 տոկոսից ավելին պատկանում է Պատվիրատուի երկրի քաղաքացիներին, ՀԶ-ն գրանցված է Պատվիրատուի երկրում: ՀԶ-ն պետք է օտարերկրյա ենթակապալառուներին ենթակապալով հանձնի պայմանագրի գնի 10 տոկոսից ավելին՝ հանած պայմանական գումարները: Տեղական և օտարերկրյա ընկերությունների միջև ՀԶ-ն իրավասու չէ տեղեկան նախապատվություն ստանալու համար:

**35. Հայտերի գնահատում**

**35.1** Պատվիրատուն պետք է օգտագործի սույն ՀՀ-ում և Բաժին III-ում՝ «**Գնահատման և որակավորման չափանիշները**», թվարկված չափանիշները և մեթոդաբանությունները: Գնահատման ոչ մի այլ չափանիշ կամ մեթոդաբանություն չի թույլատրվում: Կիրառելով չափանիշները և մեթոդաբանությունը, Պատվիրատուն պետք է որոշի **«Ամենամեծ առավելություն ունեցող Հայտը»:** Դա այն Հայտատուի Հայտն է, որը համապատասխանում է որակավորման չափանիշներին և որի Հայտը որոշվել է՝

(ա) էապես համապատասխանող մրցութային փաստաթղթերին, և

(բ) ամենացածր գնահատված գին ունեցող:

**35.2** Հայտը գնահատելու համար Պատվիրատուն հաշվի է առնում հետևյալը՝

(ա) Հայտի գինը, հանած պայմանական գումարները և պահուստներն Աշխատանքների ծավալների ցուցակի[4] չնախատեսված ծախսերի գծով՝ միավոր գներով պայմանագրերի դեպքում, սակայն ներառելով Օրավարձով աշխատանքը[5], եթե այն գնանշված է մրցակցային կարգով,

(բ) գնի ճշգրտումը՝ թվաբանական սխալները ՀՀ-ի 31.1 ենթակետի համաձայն հաշվի առնելու համար,

(գ) գնի ճշգրտումը՝ ՀՀ-ի 14.4 ենթակետի համաձայն առաջարկված զեղչերը հաշվի առնելու համար,

(դ) վերոնշյալ (ա)-ից (գ) կետերի կիրառման արդյունքում ստացված գումարի փոխարկումը մեկ արժույթի՝ ՀՀ-ի 32 կետի համաձայն, եթե կիրառելի է,

(ե) գնի ճշգրտումը՝ ոչ նշանակալի անհամապատասխանությունները ՀՀ-ի 30.3 ենթակետի համաձայն հաշվի առնելու համար, և

(զ) Բաժին III-ում («Գնահատման և որակավորման չափանիշներ») նշված գնահատման բոլոր լրացուցիչ գործոնները:

**35.3** Պայմանագրի պայմանների գնի ճշգրտման դրույթների գնահատված ազդեցությունը, որը պետք է կիրառվի Պայմանագրի իրականացման ժամկետի ընթացքում, հաշվի չի առնվում Հայտի գնահատման ժամանակ:

**35.4** Եթե սույն մրցութային փաստաթղթերով Հայտատուներին թույլատրվում է տարբեր լոտերի (պայմանագրերի) համար առաջարկել առանձին գներ, մի քանի պայմանագրերի համատեղման ամենացածր գնահատված գնի որոշման մեթոդաբանությունը, ներառյալ Հայտի նամակում առաջարկված զեղչերը, սահմանվում են Բաժին III-ում («Գնահատման և որակավորման չափանիշները»):

---

[4] Միանվագ գումարով պայմանագրերի դեպքում ջնջել «Աշխատանքների ծավալների ցուցակը» և փոխարինել «Աշխատանքային գրաֆիկ»-ով:

[5] Օրավարձով աշխատանքն իրականացվում է Ծրագրի ղեկավարի հրահանգով և վճարվում բանվորների կողմից ծախսված ժամանակի, ինչպես նաև նյութերի ու Կապալառուի սարքավորումների օգտագործման հիման վրա՝ Հայտում նշված դրույքներով: Որպեսզի հնարավոր լինի որոշել օրավարձով աշխատանքի մրցակցային գինը՝ Հայտը գնահատելու նպատակով, Պատվիրատուն պետք է մոտավորապես թվարկի այն առանձին հոդվածները, որոնց արժեքը պետք է որոշվի օրավարձով (օրինակ, տրակտորների վարորդների մարդ-օրերի քանակը, պորտլանդ-ցեմենտը քանի տոննա է), որոնք պետք է բազմապատկվեն Հայտատուի գնանշված դրույքաչափերով և գումարվեն Հայտի ընդհանուր գնին:

**36. Հայտերի համեմատում**

**36.1** Պատվիրատուն պետք է համեմատի ՀՀ-ի 35.2 ենթակետի համաձայն էապես համապատասխանող բոլոր Հայտերը՝ ամենացածր գնահատված առաջարկը որոշելու համար:

**37. Արտասովոր ցածր գին ունեցող Հայտեր**

**37.1** Արտասովոր ցածր գին ունեցող է այն Հայտը, որի գինը՝ Հայտի մաս կազմող այլ տարրերի հետ, համարվում է անհիմն ցածր այնքանով, որքանով Հայտի գինը էական կասկածներ է հարուցում, որ Հայտատուն կկարողանա իրականացնել Պայմանագիրը Հայտի գնով:

**37.2** Եթե Պատվիրատում որոշում է, որ Հայտն ունի Արտասովոր ցածր գին, նա պետք է գրավոր պարզաբանում պահանջի Հայտատուից, այդ թվում Հայտի գնի մանրամասն գնային վերլուծություն՝ տվյալ պայմանագրի առարկայի ոլորտի, առաջակվող մեթոդաբանության, ժամանակացույցի, ռիսկերի և պատասխանատվությունների բաշխման, ինչպես նաև մրցութային փաստաթղթերի այլ պահանջների մասով:

**37.3** Եթե գնային վերլուծությունից հետո Պատվիրատուն որոշի, որ Հայտատուն չի կարողացել ցույց տալ, որ ունի կարողություններ Պայմանագիրը իրականացնելու համար, Պատվիրատուն պետք է մերժի Հայտը:

**38. Անհավասարակշռված կամ սկզբնական ժամանակահատվածում մեծ ծախսեր ունեցող Հայտեր**

**38.1** Եթե միավոր գնով պայմանագրի համար ներկայացվող ամենացածր գնահատված գին ունեցող Հայտը Պատվիրատուի կարծիքով շատ անհավասարակշռված է, կամ նախատեսում է մեծ ծախսեր սկզբնական ժամանակահատվածում, Պատվիրատուն կարող է Հայտատուից պահանջել տրամադրել գրավոր պարզաբանում: Պարզաբանումը կարող է ներառել մանրամասն գնային վերլուծություն՝ Հայտի գների համապատասխանությունը աշխատանքների ոլորտին, առաջարկված մեթոդաբանությանը, ժամանակացույցերին, ինչպես նաև մրցութային փաստաթղթերի այլ պահանջներին ցույց տալու համար:

**38.2** Տեղեկատվության գնահատումից, ինչպես նաև Հայտատուի կողմից ներկայացված մանրամասն գնային վերլուծությունից հետո, կախված հանգամանքներից, Պատվիրատուն կարող է՝

(ա) ընդունել Հայտը,

(բ) պահանջել Հայտատուից ավելացնել Կատարման երաշխիքի գումարը՝ **Պայմանագրի գնի 20% տոկոսը չգերազանցող չափով**,

(գ) մերժել Հայտը:

**39. Հայտատուի որակավորումը**

**39.1** Պատվիրատուն պետք է՝ իր համար գոհացուցիչ կերպով որոշի, թե արդյոք իրավասու Հայտատուն, որն ընտրվել է որպես ամենացածր գնահատված գին ունեցող և էապես համապատասխանող Հայտ ներկայացնող, բավարարում է Բաժին III-ում («Գնահատման և որակավորման չափանիշները») նշված որակավորման չափանիշներին:

**39.2** Այդ որոշումը պետք է հիմնված լինի Հայտատուի կողմից ներկայացված՝ Հայտատուի որակավորումների փաստաթղթային ապացույցների ուսումնասիրության վրա՝ համաձայն ՀՀ-ի 17 կետի: Որոշման ժամանակ հաշվի չեն առնվում այլ ընկերությունների որակավորումները, ինչպես օրինակ՝ Հայտատուի դուստր ընկերությունների, մայր ընկերությունների, ասոցացված ընկերությունների, ենթակապալառուների (բացառությամբ

Մասնագիտացված ենթակապալառուների, որոնք թույլ են տրվել մրցութային փաստաթղթերով), ինչպես նաև ոչ Հայտատու ընկերության (ների) որակավորումները:

**39.3** Հայտատուի որակավորման մասին դրական որոշումը նախապայման է Պայմանագրի շնորհման համար: Բացասական որոշումը հանգեցնում է Հայտի որակազրկմանը: Այդ դեպքում Պատվիրատուն անցնում է էապես համապատասխանող և հաջորդ ամենացածր գնահատված գին ունեցող Հայտին՝ նույն ձևով որոշելու այդ մասնակցի որակավորումները Պայմանագիրը գոհացուցիչ կերպով կատարելու համար:

**40. Ամենամեծ առավելություն ունեցող Հայտը**

**40.1** Համեմատելով Հայտերի գնահատված արժեքը, Պատվիրատուն կորոշի Ամենամեծ առավելություն ունեցող Հայտը: Դա այն Հայտատուի Հայտն է, որը բավարարում է որակավորման չափանիշներին և որի Հայտը՝

(ա) էապես համապատասխանում է մրցութային փաստաթղթերին և

(բ) ունի ամենացածր գնահատված գինը:

**41. Պատվիրատուի իրավունքը՝ ընդունել որևէ Հայտ կամ մերժել որևէ կամ բոլոր Հայտերը**

**41.1** Պատվիրատուն իրեն իրավունք է վերապահում ցանկացած պահի ընդունել կամ մերժել որևէ Հայտ և չեղյալ համարել մրցութային գործընթացը, ինչպես նաև մերժել բոլոր Հայտերը՝ նախքան պայմանագրի շնորհումը, առանց որևէ պարտավորությունների առաջացման Հայտատուների առջև: Մրցույթը չեղարկելու դեպքում բոլոր ներկայացված Հայտերը և, հատկապես Հայտի երաշիքները, պետք է անմիջապես վերադարձվեն Հայտատուներին:

**42. Դադարի ժամանակահատված**

**42.1** Պայմանագիրը չպետք է շնորհվի Դադարի ժամանակահատվածի ավարտի ամսաթվից շուտ: Դադարի ժամանահատվածը սահմանվում է տասը (10) աշխատանքային օր՝ ՀՀ 46 կետի համաձայն չերկարաձգվելու պարագայում: Դադարի ժամանակահատվածը մեկնարկում է պատվիրատուի կողմից յուրաքանչյուր հայտատուին պայմանագրի շնորհման մտադրության մասին ծանուցում ուղարկելու ամսաթվին հաջորդող օրվանից: Միայն մեկ հայտի ներկայացման դեպքում, կամ եթե տվյալ պայմանագիրը կնքվում է Բանկի կողմից ճանաչված արտակարգ իրավիճակին ի պատասխան, Դադարի ժամանակահատված չի կիրառվում:

**43. Պայմանագրի շնորհման Մտադրության ծանուցում**

**43.1** Պատվիրատուն յուրաքանչյուր Հայտատուին ուղարկում է «Հաղթող հայտատուին պայմանագրի շնորհման մտադրության ծանուցումը»: Պայմանագրի շնորհման մտադրության ծանուցումը պետք է պարունակի առնվազն հետևյալ տեղեկատվությունը՝

(ա) հաղթող Հայտ ներկայացրած Հայտատուի անունը և հասցեն,

(բ) հաղթող Հայտի պայմանագրի գինը,

(գ) Հայտեր ներկայացրած բոլոր Հայտատուների անունները, ինչպես նաև նրանց Հայտերի գները՝ ինչպես կարդացվել և գնահատվել են,

(դ) բացատրություն, թե ինչու չի հաղթել այն Հայտատուի հայտը, ում հասցեագրված է ծանուցումը, եթե վերոնշյալ (գ) կետում հիշատակված գնային տեղեկատվությունից չի բացահայտվում այդ պատճառը,

(ե) Դադարի ժամանակաշրջանի ավարտման ամսաթիվը, և

(գ) ցուցումներ, թե ինչպես պահանջել պարզաբանում և/կամ բողոք ներկայացնել Դադարի ժամանակաշրջանում:

## Զ. Պայմանագրի շնորհում

**44. Շնորհման չափանիշները**

**44.1** ՀՀ 41 կետի համաձայն Պատվիրատուն կշնորհի Պայմանագիրն այն Հայտատուին, որի Հայտը որոշվել է որպես Ամենամեծ առավելություն ունեցող՝ ըստ ՀՀ-ի 40 կետի:

**45. Շնորհման չափանիշները**

**45.1** Նախքան Հայտի վավերության ժամկետի ավարտը, ՀՀ 42.1 ենթակետում սահմանված Դադարի ժամանակահատվածի կամ դրա ցանկացած երկարաձգման ավարտին և Դադարի ժամանակահատվածում ներկայացված ցանկացած բողոքին հաջող պատասխանելուց հետո, Պատվիրատուն գրավոր կծանուցի հաղթող Հայտատուին առ այն, որ վերջինիս հայտն ընդունված է: Շնորհման մասին ծանուցման (այսուհետ և Պայմանագրի Պայմաններում ու Պայմանագրի ձևերում՝ Ընդունման Նամակ) մեջ կնշվի այն գումարը, որը Պատվիրատուն կվճարի Կապալառուին՝ որպես վարձատրություն Պայմանագրի կատարման համար (այսուհետ, Պայմանագրի պայմաններում և Պայմանագրի ձևերում՝ «Պայմանագրի գին»):

**45.2** Ընդունման Նամակի ուղարկման ամսաթվից հետո տասը (10) աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուն կհրապարակի «Պայմանագրի շնորհման ծանուցում», որը կպարունակի առնվազն հետևյալ նվազագույն տեղեկատվությունը՝

(ա) Պատվիրատուի անունը և հասցեն,

(բ) շնորհվող պայմանագրի անունը և օգտագործված ընտրության մեթոդը,

(գ) Հայտեր ներկայացրած բոլոր Հայտատուների անունները, Հայտերի բացման ժամանակ կարդացված Հայտի գները և գնահատված գները,

(դ) բոլոր այն Հայտատուների անունները, ում Հայտերը մերժվել են որպես չհամապատասխանող, գնահատման չափանիշներին չբավարարող, կամ չեն գնահատվել՝ նշելով դրա պատճառը,

(ե) հաղթած Հայտատուի անունը, պայմանագրի վերջնական ընդհանուր գինը, պայմանագրի տևողությունը և ոլորտի ամփոփագիրը և

(զ) Հաղթող հայտատուի՝ Շահառու Սեփականատիրոջ Հայտարարագրման Ձևը, եթե այդպիսին նախատեսված է ՄՏՑ ՀՀ 47.1 ենթակետով:

**45.3** Պայմանագրի շնորհման ծանուցումը կհրապարակվի Պատվիրատուի՝ ազատ մուտքով ինտերնետային կայքում, եթե առկա է, կամ Պատվիրատուի երկրում ազգային շրջանառություն ունեցող առնվազն մեկ թերթում կամ պաշտոնական թերթում:

**45.4** Մինչ պաշտոնական պայմանագրի պատրաստումը և կնքումը, Ընդունման Նամակը հանդիսանում է Պարտադիր պայմանագիր:

**46. Արդյունքների պարզաբանում Պատվիրատուի կողմից**

**46.1** Պատվիրատուից՝ ՀՀ-ի 43.1 ենթակետում հիշատակված «Շնորհման մտադրության ծանուցումը» ստանալուց հետո, չհաղթած Հայտատուն **երեք (3) աշխատանքային օրվա** ընթացքում կարող է գրավոր արդյունքների պարզաբանման խնդրանք ուղղել Պատվիրատուին: Պատվիրատուն պարտավոր է արդյունքների պարզաբանումը տրամադրել բոլոր չհաղթած

Հայտատուներին, որոնցից արդյունքների պարզաբանման խնդրանքը ստացվել է այդ վերջնաժամկետի ընթացքում:

**46.2** Եթե արդյունքների պարզաբանման խնդրանքը ներկայացվում է վերջնաժամկետի ընթացքում, Պատվիրատուն պետք է արդյունքների պարզաբանումը ներկայացնի **հինգ (5) աշխատանքային օրվա** ընթացքում, եթե միայն ողջամիտ պատճառներով՝ Պատվիրատուն չի որոշում արդյունքների պարզաբանումը սույն ժամկետից ուշ: Այդ դեպքում դադարի ժամանակաշրջանը պետք է ավտոմատ կերպով երկարաձգվի մինչև **հինգ (5) աշխատանքային օր**՝ արդյունքների պարզաբանումը ներկայացնելուց հետո: Եթե նման ձևով ուշացվում է մեկից ավել արդյունքների պարզաբանում, դադարի ժամանակաշրջանը չպետք է ավարտվի արդյունքների վերջին պարզաբանումից հետո **հինգ (5) աշխատանքային օրից ավելի վաղ**: Պատվիրատուն պետք է բոլոր Հայտատուներին առկա ամենաարագ միջոցներով անհապաղ տեղեկացնի երկարաձգված դադարի ժամանակաշրջանի մասին:

**46.3** Եթե Պատվիրատուն արդյունքների պարզաբանման խնդրանք է ստանում **երեք (3) աշխատանքային օրվա վերջնաժամկետից ուշ**, Պատվիրատուն պետք է արդյունքների պարզաբանումը ներկայացնի հնարավորինս շուտ, սովորաբար **տասնհինգ (15) աշխատանքային օրից ոչ ուշ**՝ Պայմանագրի շնորհման ծանուցման հրապարակման ամսաթվից: **Երեք (3) օրվա** վերջնաժամկետից հետո ստացված արդյունքների պարզաբանման խնդրանքները չպետք է հանգեցնեն դադարի ժամանակաշրջանի երկարաձգման:

**46.4** Չհաղթած Հայտատուների համար արդյունքների պարզաբանումը կարող է իրականացվել գրավոր կամ բանավոր: Հայտատուները պետք է կրեն այդ արդյունքների պարզաբանման հանդիպումներին մասնակցելու իրենց ծախսերը:

**47. Պայմանագրի ստորագրումը**

**47.1** Պատվիրատուն պարտավոր է հաղթող հայտատուին ուղարկել Ընդունման Նամակը, ներառյալ՝ Պայմանագրի Համաձայնագիրը, և եթե նախատեսված է **ՄՏՑ**-ով՝ Շահառու Սեփականատիրոջ Հայտարարագրման Ձև ներկայացնելու հայտ, ըստ որի կտրամադրվի հայտատուի շահառու սեփականատիրության մասին լրացուցիչ տեղեկատվություն: Շահառու Սեփականատիրոջ Հայտարարագրման Ձևը, պահանջվելու դեպքում, այն պետք է ներկայացվի հայտը ստանալուց հետո ութ (8) աշխատանքային օրվա ընթացքում

**47.2** Պայմանագրի համաձայնագիրը ստանալուց հետո քսանութ (28) օրվա ընթացքում հաղթող Հայտատուն պետք է այն ստորագրի, նշի ամսաթիվը և վերադարձնի Պատվիրատուին:

**48. Կատարման երաշխիք**

**48.1** Պատվիրատուի կողմից պայմանագրի շնորհման ծանուցումը ստանալուց հետո **քսանութ (28) օրվա ընթացքում** շահած Հայտատուն պետք է Պատվիրատուին ներկայացնի Կատարման երաշխիք, իսկ եթե պահանջվում է, ապա նաև Բնապահպանական և սոցիալական (ԲՍ) Կատարման երաշխիք ՀՀ-ի 38.2 (բ) ենթակետի համաձայն, այդ նպատակի համար օգտագործելով Բաժին X-ում՝ «Պայմանագրի ձևեր», ներառված Կատարման երաշխիքի ձևը և ԲՍ երաշխիքի ձևը՝ կամ Պատվիրատուի կողմից ընդունելի մեկ այլ ձև: Եթե հաղթող Հայտատուի կողմից ներկայացվող երաշխիքը պարտատոմսի ձևով է, ապա դա պետք է լինի Պատվիրատուի համար ընդունելի ապահովագրական կամ երաշխավորող ընկերություն՝ որոշված հաղթող Հայտատուի կողմից: Պարտատոմս տրամադրող օտարերկրյա ֆինանսական հաստատությունը պետք է ունենա թղթակից ֆինանսական հաստատություն Պատվիրատուի

երկրում, եթե միայն Պատվիրատուն գրավոր չի համաձայնվել, որ թղթակից ֆինանսական հաստատություն չի պահանջվում:

**48.2** Շահած Հայտատուի կողմից վերոնշյալ Կատարման երաշխիք չներկայացնելը, իսկ եթե պահանջվում է **ՄՏՑ**-ով, ապա նաև Բնապահպանական և սոցիալական (ԲՍ) Կատարման երաշխիք չներկայացնելը կամ Պայմանագիր չստորագրելը, բավարար հիմք են շնորհումը չեղյալ հայտարարելու և Հայտի երաշխիքը բռնագանձելու համար: Այդ դեպքում Պատվիրատուն կարող է Պայմանագիրը շնորհել հաջորդ՝ Ամենամեծ առավելություն ունեցող Հայտ առաջարկած Հայտատուին:

**49. Վեճի դատավոր**

**49.1** Պատվիրատուն առաջարկում է **ՄՏՑ-ում նշված անձին** նշանակել որպես Պայմանագրի Վեճի դատավոր՝ **ՄՏՑ-ում սահմանված ժամավճարով՝** գումարած փոխհատուցելի ծախսերը: Եթե Հայտատուն համաձայն չէ այդ առաջարկի հետ, ապա նա դրա մասին պետք է նշի իր Հայտում: Եթե Ընդունման նամակում Պատվիրատուն չի համաձայնվել Վեճի դատավորի նշանակման հետ, ապա վերջինս պետք է խնդրի Պայմանագրի հատուկ պայմաններում (ՊՀՊ) նշանակված մարմնին՝ նշանակել Վեճի դատավոր՝ Պայմանագրի ընդհանուր պայմանների (ՊԸՊ) 23.1 ենթակետի համաձայն:

**50. Գնումների հետ առնչվող բողոք**

**50.1** Գնումների հետ առնչվող բողոքի ընթացակարգերը սահմանված են ՄՏՑ-ում:

# Բաժին II - Մրցութային տվյալների ցանկ (ՄՏՑ)

**Ձեռք բերվող աշխատանքներին վերաբերող հետևյալ հատուկ տվյալները համալրում, լրացնում կամ փոփոխում են «Հրահանգներ հայտատուներին (ՀՀ)» բաժնի դրույթները: Հակասությունների դեպքում սույն բաժնի դրույթները գերակայում են ՀՀ-ի դրույթներին:**

**Ա.Ընդհանուր դրույթներ**

| | |
|---|---|
| **ՀՀ 1.1** | Պատվիրատու՝ «Բնապահպանական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկ<br><br>Մրցութային գործընթացի նույնականացման համարը՝<br>AM-EPIU-516212-CW-RFB<br><br>Մրցութային գործընթացի անուն՝ Լոռի մարզում անտառների վերականգնման աշխատանքներ<br><br>Սույն Մրցութային գործընթացի լոտերի թիվը և համարները՝ 1: |
| **ՀՀ 2.1** | Փոխառու՝ Հայաստանի Հանրապետություն<br>Դրամաշնորհի գումարը՝ 9.1 մլն ԱՄՆ դոլար<br>Ծրագրի անուն՝ Resiland. Հայաստանի դիմակայուն լանդշաֆտներ դրամաշնորհ,<br>Ծրագրի No.: P179988 |
| **ՀՀ 4.1** | ՀՁ-ում առավելագույն անդամների թիվը՝ 3 |
| **ՀՀ 4.5** | Արգելված ընկերությունների և անձանց ցանկի հետ կարելի է ծանոթանալ Բանկի հետևյալ արտաքին կայքէջում՝ **www.worldbank.org/debarr** |

**Բ. Մրցութային փաստաթղթերի բովանդակությունը**

| | |
|---|---|
| **ՀՀ 7.1** | Միայն պարզաբանումների համար Պատվիրատուի հասցեն՝ էլեկտրոնային գնումների համակարգ www.armeps.am |
| **ՀՀ 7.1** | Պարզաբանումների խնդրանքով հարցումները պետք է ստացվեն Պատվիրատուի կողմից ոչ ուշ, քան հայտերի ներկայացման ժամկետից **14 օրացուցային օր առաջ**: |
| **ՀՀ 7.1** | Ինտերնետային էջ՝ www.gnumner.am, www.armeps.am |
| **ՀՀ 7.4** | **Նախամրցութային հանդիպում տեղի է ունենալու:**<br>**Պատվիրատուի կողմից կկազմակերպվի շինհրապարակի այցելությունը:**<br><br>Հանդիպման և այցելության նպատակն է պարզաբանել առաջացած հարցերը և պատասխանել այս փուլում ծագող ցանկացած խնդրի վերաբերյալ հարցերին:<br><br>**Նախամրցութային հանդիպմանը և շինհրապարակի այցելությանը մասնակցությունը կամավոր է:**<br>Այն հայտատուները, որոնք ցանկանում են մասնակցել նախամրցութային հանդիպմանը և շինհրապարակի այցելությանը, պետք է գրանցվեն՝ նախապես Պատվիրատուին ներկայացնելով իրենց ներկայացուցիչների անունները, պաշտոնները և կապի տվյալները մինչև 2026 թ. հուլիսի 7-ը, ժամը 18:00 (տեղական ժամանակով): Տեղեկատվությունը պետք է ուղարկվի հետևյալ էլ. հասցեյով՝ resiland.epiu@gmail.com<br><br>Գրանցված մասնակիցներին կտրամադրվեն լրացուցիչ հրահանգներ հանդիպման կազմակերպման և շինհրապարակի այցելության |

| | |
|---|---|
| | հետագա կազմակերպչական հարցերի վերաբերյալ:<br><br>Հանդիպումը և այցելությունը կկայանան հետևյալ ամսաթվին, ժամին և վայրում՝<br>**Ամսաթիվ՝** 2026 թ. հուլիսի 9<br>***Ժամ՝*** 10:00 (տեղական ժամանակով)<br>**Նախամրցութային հանդիպման վայր՝**<br>ՀՀ, 0005, ք. Երևան, Տիգրան Մեծի պող., 65ա շենք, 3րդ հարկ «Բնապահպանական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի գրասենյակում: Այնուհետև մասնակիցները կմեկնեն այցելության վայր(եր):<br><br>**Նախամրցութային հանդիպմանը և շինհրապարակի այցելությանը մասնակցելու հետ կապված բոլոր ծախսերը կրում է յուրաքանչյուր Հայտատուն:** |

**Գ. Հայտերի պատրաստում**

| | |
|---|---|
| **ՀՀ 10.1** | Մրցույթի լեզուն՝ Հայերեն<br>Ողջ թղթակցությունը պետք է լինի Հայերեն լեզվով:<br>Օժանդակ փաստաթղթերի և տպված գրականության թարգմանության լեզուն՝ նշված է վերևում: |
| **ՀՀ 11.1 (ք)** | Մրցութային առաջարկի հետ պետք է ներկայացվեն հետևյալ աղյուսակները **ՀՀ 12 և 14 կետերի համաձայն:**<br>**-Աշխատանքների ծավալների ցուցակի բնօրինակի սկանավորված և էլեկտրոնային Excel տարբերակները:**<br>**Սկանավորված և էլեկտրոնային տարբերակների միջև տարբերությունների դեպքում սկանավորված տարբերակը կգերակայի:**<br>**Բոլոր փաստաթղթերը պետք է լինեն ստորագրված ներկայացվեն ARMEPS էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով:**<br>**Հայտը պետք է ստորագրված լինի կազմակերպության ղեկավարի կողմից՝ համաձայն պետական ռեգիստրում գրանցված տվյալների, կամ ներկայացվի համապատասխան հիմնավորող փաստաթուղթ, որը վկայում է, որ Հայտը ստորագրող անձն ունի համապատասխան լիազորություններ:** |
| **ՀՀ 11.1 (ը)** | Մրցութային առաջարկի հետ պետք է ներկայացվեն հետևյալ լրացուցիչ փաստաթղթերը՝<br>**1) Պետական բյուջեի նկատմամբ պարտավորությունների կատարման վերաբերյալ տեղեկանք, որը պետք է լինի թողարկված ոչ ուշ քան 7 օր՝ մինչ հայտերի ներկայացման վերջնաժամկետը:**<br>**2) Իրավաբանական անձի գրանցման փաստաթղթերը՝ համաձայն ՀՀ 4.3 ենթակետի:**<br>**3) ՀՁ–ով հանդես գալու դեպքում՝ ՀՁ կազմելու մտադրության նամակը կամ ՀՁ համաձայնագիրը՝ համաձայն ՀՀ 4.1 ենթակետի:**<br>**4) Եթե տվյալ աշխատանքների իրականացման համար ՀՀ օրենսդրությամբ նախատեսված է լիցենզավորում, ապա պայմանագրի ստորագրման նախապայման է հանդիսանում, որ հաղթող ճանաչված հայտատուն ներկայացնի համապատասխան լիցենզիաները:**<br>**Լիցենզիայի բացակայությունը հայտի ներկայացման պահին չի հանդիսանում հայտի մերժման հիմք: Սակայն, եթե լիցենզավորումը ՀՀ օրենսդրությամբ պարտադիր է, ապա հաղթող ճանաչված հայտատուն պարտավոր է Պայմանագրի շնորհման Մտադրության ծանուցումը ստանալու օրվանից 28 (քսանութ) օրացուցային օրվա ընթացքում ներկայացնել համապատասխան լիցենզիան:** |

| | |
|---|---|
| | **Սահմանված ժամկետում լիցենզիան չներկայացնելու դեպքում Պատվիրատուն իրավունք ունի մերժել առաջարկը և կիրառել մրցութային փաստաթղթերով նախատեսված միջոցները:**<br><br>**Հայտատուն պետք է նաև ներկայացնի Աշխատանքների իրականացման ժամանակացույց:**<br><br>5) **«Վարքագծի կանոնագիրք» Կապալառուի անձնակազմի համար (ԲԱ)**<br>Հայտատուն պետք է ներկայացնի իր «**Վարքագծի կանոնագիրքը**», որը կկիրառվի Կապալառուի անձնակազմի նկատմամբ (ինչպես նշված է Պայմանագրի ընդհանուր պայմանների 1 (ii) ենթակետում), որպեսզի ապահովվի Կապալառուի բնապահպանական և սոցիալական (**ԲԱ**) պարտավորությունների կատարումը Պայմանագրի համաձայն: Այդ նպատակի համար Հայտատունպետք է օգտագործի IV բաժնում բերված «**Վարքագծի կանոնագրքի**» ձևը: Այս ձևում ոչ մի էական փոփոխություն չի կարող արվել, բացառությամբ նրա, որ Հայտատուն կարող է ըստ անհրաժեշտության ավելացնել լրացուցիչ պահանջներ՝ հաշվի առնելու Պայմանագրին խնդիրները/ ռիսկերը:<br>6) **Կառավարման ռազմավարություններ և իրականացման պլաններ (ԿՌԻՊ) ԲԱ ռիսկերը կառավարելու համար:**<br>Հայտատուն պետք է ներկայացնի Կառավարման ռազմավարություններ և իրականացման պլաններ (ԿՌԻՊ) հետևյալ հիմնական ԲԱ ռիսկերը կառավարելու համար:<br><br>**Բոլոր փաստաթղթերը պետք է ներկայացվեն ARMEPS էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով:** |
| **ՀՀ 13.1** | Այլընտրանքային առաջարկներ **չեն թույլատրվում:** |
| **ՀՀ 13.2** | Այլընտրանքային ավարտման ժամկետներ **չեն թույլատրվում:** |
| **ՀՀ 13.4** | Այլընտարնքային տեխնիկական լուծումներ թույլատրվում են Աշխատանքների հետևյալ մասերի համար՝ **Կիրառելի չէ** |
| **ՀՀ 14.5** | Մրցույթի մասնակցի կողմից առաջարկված գները **չեն ճշգրտվում** Պայմանագրի կատարման ժամանակ: |
| **ՀՀ 15.1** | Հայտատուն պետք է առաջարկի գները **հայկական դրամով:** |
| **ՀՀ 15.2** | Կիրառելի չէ |
| **ՀՀ 17.3** | Կիրառելի չէ |
| **ՀՀ 18.1** | Մրցութային առաջարկի վավերության ժամկետը 90 օր՝ հայտերի ներկայացման վերջնաժամկետից հետո: |
| **ՀՀ 18.3 (ա)** | Պայմանագրի գինը պետք է ճշգրտվի **1.02 գործակցով:** |
| **ՀՀ 19.1** | Հայտի ապահովման հայտարարագիր **պահանջվում է:**<br><br>Մրցութային երաշխիք **չի պահանջվում:** |
| **ՀՀ 19.3 (դ)** | Ընդունելի երաշխիքների այլ տեսակներ՝ **Ոչ մի** |
| **ՀՀ 19.9** | Եթե Հայտատուն կատարել է սույն դրույթի (ա) կամ (բ) ենթակետերում նկարագրված գործողություններից որևէ մեկը, Փոխառուն կհայտարարի Մրցույթի մասնակցին ոչ իրավասու Պատվիրատուի կողմից շնորհվող պայմանագրերի համար **2 (երկու) տարով:** |
| **ՀՀ 20.1** | Ի լրումն Մրցութային առաջարկի բնօրինակի. Կիրառելի չէ |
| **ՀՀ 20.3** | Մրցույթի մասնակցի անունից ստորագրելու իրավունքը պետք է պարունակի.<br>**1. Լիազորագիր հաստատված հայտատուի կողմից կնիքով:** |

| | |
|---|---|
| | **2. Եթե Հայտը ներկայացվել է գոյություն ունեցող կամ նախատեսվող Համատեղ ձեռնարկության (ՀՁ) (Joint Venture – JV) կողմից, բոլոր կողմերը պետք է՝ (i) ստորագրեն պարտավորություն, որ համատեղ և յուրաքանչյուրն իր հերթին կրում են պատասխանատվություն Պայմանագրով նախատեսված պարտավորությունների ամբողջական և պատշաճ կատարման համար, (ii) Համատեղ ձեռնարկության (ՀՁ) (Joint Venture – JV) անդամները պետք է նշանակեն Ներկայացուցիչ (Lead Member/Authorized Representative), որը լիազորված կլինի գործել ՀՁ-ի և նրա բոլոր անդամների անունից մրցութային գործընթացում, իսկ Պայմանագիրը շնորհելու դեպքում՝ նաև Պայմանագրի կատարման ընթացքում:**<br><br>**Հայտի հետ պետք է ներկայացվի ՀՁ-ի բոլոր անդամների կողմից ստորագրված՝ գլխավոր (Lead) Հայտատուին լիազորող նամակի կամ համապատասխան համաձայնագրի (ՀՁ պայմանագիր կամ այն կազմելու մտադրության նամակ) սկանավորված պատճենը:** |
| **ՀՀ 21** | Կիրառելի չէ |

**Դ.Հայտերի ներկայացնելը և բացումը**

| | |
|---|---|
| **ՀՀ 22.1** | **Հայտերը պետք է ներկայացվեն բացառապես էլեկտրոնային եղանակով՝ ARMEPS (www.armeps.am) էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով: Այլ եղանակով ներկայացված հայտերը չեն ընդունվում:**<br><br>Հայտերի ներկայացման վերջնաժամկետն է՝<br>Ամսաթիվ՝ **2026թ-ի հուլիսի 29, ժամը 17:00-ին (տեղական ժամանակով):** |
| **ՀՀ 23.1** | Ուշացված Հայտերը չեն ընդունվի էլեկտրոնային գնումների համակարգի կողմից: |
| **ՀՀ 24.2** | Կիրառելի չէ |
| **ՀՀ 25.1** | Առաջարկների բացումը տեղի կունենա **2026թ-ի հուլսիս 28-ին, ժամը 17:00-ին (տեղական ժամանակով) Armeps (www.armeps.am կայքի)** համակարգի միջոցով: |
| **ՀՀ 25.2 – 25.7** | **Կիրառելի չէ** |

**Ե. Հայտերի գնահատումը և համեմատումը**

| | |
|---|---|
| **ՀՀ 32.1** | **Կիրառելի չէ** |
| **ՀՀ 33.1** | **Կիրառելի չէ** |
| **ՀՀ 34.1** | Այս փուլում Պատվիրատուն մտադիր է իրականացնել Աշխատանքների կոնկրետ մասեր նախապես ընտրված ենթակապալառուներով: **Կիրառելի չէ** |
| **ՀՀ 34.3** | Կապալառուի կողմից ենթակապալի առաջարկվող աշխատանքներ.<br>Ենթակապալով թույլատրվում է առավելագույնը պայմանագրի գումարի **40%:**<br>(գ) Ենթակապալառուների որակավորումները և փորձը հաշվի չեն առնվում Մրցույթի մասնակցի գնահատման ժամանակ: Մրցույթի մասնակիցն ինքը (առանց հաշվի առնելու ենթակապալառուի որակավորումները և փորձը) պետք է համապատասխանի որակավորման չափանիշներին: |

## Ձ. Պայմանագրի շնորհումը

| | |
|---|---|
| **ՀՀ 45** | **ՀՀ 45 համալրվել է լրացուցիչ ենթակետով ՀՀ 45.5:**<br><br>Եթե տվյալ աշխատանքների իրականացման համար ՀՀ օրենսդրությամբ նախատեսված է լիցենզավորում, ապա պայմանագրի ստորագրման նախապայման է հանդիսանում, որ հաղթող ճանաչված հայտատուն ներկայացնի համապատասխան լիցենզիաները:<br><br>Լիցենզիայի բացակայությունը հայտի ներկայացման պահին չի հանդիսանում հայտի մերժման հիմք: Սակայն, եթե լիցենզավորումը ՀՀ օրենսդրությամբ պարտադիր է, ապա հաղթող ճանաչված հայտատուն պարտավոր է Պայմանագրի շնորհման Մտադրության ծանուցումը ստանալու օրվանից 28 (քսանութ) օրացուցային օրվա ընթացքում ներկայացնել համապատասխան լիցենզիան:<br><br>Սահմանված ժամկետում լիցենզիան չներկայացնելու դեպքում Պատվիրատուն իրավունք ունի մերժել առաջարկը և կիրառել մրցութային փաստաթղթերով նախատեսված միջոցները: |
| **ՀՀ 47.1** | Հաղթող Հայտատուն պետք է ներկայացնել Շահառու Սեփականատիրոջ Հայտարարագրման Ձևը: |
| **ՀՀ 48.1 և 48.2** | Հաղթող Հայտատուից չի պահանջվում ներկայացնել Բնապահպանական և սոցիալական (ԲՍ) կատարման երաշխիք: |
| **ՀՀ 49** | Պատվիրատուի կողմից որպես Վեճի դատավոր նշանակվում է «Առևտրաարդյունաբերական պալատի Արբիտրաժային դատարանը»՝ Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, 0010, Խանջյան 11:<br>Վեճի դատավորի ժամավճարն է՝ այն հասանելի է հետևյալ կայքէջում http://www.arbitrage.am/?page=arbitration_costs |
| **ՀՀ 50.1** | Գնումների հետ առնչվող բողոքների ներկայացման ընթացակարգերը մանրամասն բերվում են «Համաշխարհային Բանկի գնումների կանոնակարգեր ՆԾՖ փոխառուների համար/ «World Bank Procurement Regulations for IPF Borrowers» (Հավելված III)»: Եթե Հայտատուն ցանկանում է ներկայացել գնումների հետ առնչվող բողոք, նա պետք է գրավոր ներկայացնի իր բողոքը (ամենից արագ մատչելի միջոցներով՝ էլ. փոստով կամ փաքսով), հետևյալ հասցեով՝<br>Ում՝ Արմեն Եսոյան<br>Պաշտոն՝ Տնօրեն<br>Պատվիրատու՝ «Բնապահպանական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկ<br>Էլ. հասցեն՝ resiland.epiu@gmail.com<br>Բողոքի պատճենը կարող է, տեղեկացման և վերահսկման նպատակով, ուղարկվել նաև Բանկին հետևյալ էլեկտրոնային հասցեով՝ pprocurementcomplaints@worldbank.org :<br>Գնումների հետ առնչվող վեճի ժամանակ կարելի է բողոքարկել հետևյալը՝<br>1. Մրցութային փաստաթղթերի պայմանները; և<br>2. Պատվիրատուի որոշումը պայմանագրի շնորհման մասին: |

# Բաժին III - Գնահատման և որակավորման չափանիշներ

Այս բաժնում ներկայացված են բոլոր այն չափանիշները, որոնք Պատվիրատուն պետք է կիրառի Հայտերը գնահատելիս և Հայտատուներին որակավորելիս: Սույն մրցութային փաստաթղթում նշվածներից բացի այլ մեթոդներ և չափանիշներ չեն օգտագործվելու: Հայտատուն պարտավոր է տրամադրել Բաժին IV-ում՝ «Հայտի ձևեր», պահանջված տվյալները:

Ամենուր, ուր Մրցույթի մասնակցից պահանջվում է նշել գումարը, Հայտատուն պետք է ցույց տա այն ազգային արժույթով (ՀՀԴ): Եթե որևէ գումար արտարժույթով է, ապա ազգային արժույթի համարժեքով գումարը կորոշվի մրցույթի մասնակցի կողմից սահմանված փոխանակման կուրսով հետևյալ կերպ.

- Յուրաքանչյուր տարվա շինարարության գծով շրջանառության կամ ֆինանսական տվյալների համար օգտագործվում է համապատասխան օրացույցային տարվա (որի գումարը պետք է փոխարկվի) վերջին օրվա դրությամբ ՀՀ ԿԲ-ի կողմից սահմանված փոխարժեքը:
- Առանձին պայմանագրի արժեքի համար՝ պայմանագրի կնքման ամսաթվի դրությամբ ՀՀ ԿԲ-ի կողմից սահմանված փոխանակման փոխարժեքը:

Փոխանակման կուրսերը պետք է վերցվեն **ՀՀ կենտրոնական բանկի** պաշտոնական վեբկայքից (www.cba.am): Հայտում փոխանակման կուրսի որոշման որևէ սխալ կարող է ուղղվել Պատվիրատուի կողմից:

**1. Նախապատվություն տեղական մասնակիցներին՝ ԿԻՐԱՌԵԼԻ ՉԷ**

**2. Գնահատում**

Ի լրումն ՀՀ 35.2(ա)–(ե) կետերում թվարկված չափանիշների, կիրառվում են հետևյալ չափանիշները.

**2.1 Տեխնիկական առաջարկի համապատասխանություն**

Հայտատուի Տեխնիկական առաջարկի գնահատումը ներառում է Հայտատուի՝ հիմնական սարքավորումները և անձնակազմը մոբիլիզացնելու կարողությունները պայմանագրի համար՝ Հայտատուի աշխատանքային մեթոդներին, ժամանակացույցին և նյութերի մատակարարման աղբյուրներին համապատասխան, որոնք ներկայացված կլինեն բավարար մանրամասներով և ամբողջությամբ Բաժին VII-ով (Աշխատանքներին ներկայացվող պահանջներ) սահմանված պահանջների համաձայն:

Տեխնիկական առաջարկի համապատասխանությունը կգնահատվի նրա հիման վրա, թե որքանով ամբողջական են արտացոլվում շինարարական աշխատանքների տեխնիկական, բնապահպանական և սոցիալական (ԲՍ) հարցերը, այսինքն՝ որքանով ամբողջական է առաջարկվող սարքավորումների ցանկը և անձնակազմը, արդյո՞ք շին.հրապարակի կազմակերպումը, շինարարության մեթոդներն, մոբիլիզացման և շինարարության ժամանակացույցերը բավարար են ծրագիրը ճիշտ ժամանակին ավարտելու համար: Էական շեղումների դեպքում հայտը կմերժվի:

**2.2 Բազմակի պայմանագրերի շնորհում** ԿԻՐԱՌԵԼԻ ՉԷ

**2.3 Ավարտման այլընտրանքային ժամկետներ** ԿԻՐԱՌԵԼԻ ՉԷ

**2.4 Կայուն գնումներ** ԿԻՐԱՌԵԼԻ ՉԷ

**2.5 Աշխատանքների որոշակի մասերի համար այլընտրանքային տեխնիկական լուծումներ** ԿԻՐԱՌԵԼԻ ՉԷ

**2.6 Մասնագիտացված ենթակապալառուներ** ԿԻՐԱՌԵԼԻ ՉԷ

**2.7 Անհամապատասխանություններ, սխալներ և բացթողումներ**: ՀՀ 30.3 ենթակետի համաձայն, ճշգրտումներն իրականացվում են հետևյալ մեթոդաբանության համաձայն. ՀՀ 14.2 դրույթին համապատասխանելու դեպքում, եթե՝ i) կետը նշված չէ Աշխատանքների ծավալների ցուցակում/ծավալաթերթում, այսինքն՝ կետը բաց է թողնված, կամ թվարկված է և գնանշված, սակայն չի համապատասխանում Մրցութային փաստաթղթերի պահանջներին, կամ ii) աշխատանքի ոլորտի բաղադրիչը կամ Մրցութային առաջարկում որևէ պայման չի համապատասխանում Մրցութային փաստաթղթերի պահանջին, և պայմանով, որ Մրցութային առաջարկը որոշվել է որպես էապես համապատասխանող՝ անկախ վերոնշյալ i) և ii) կետերի անհամապատասխանությունների, ապա Մրցութային առաջարկի գնին կավելացվի էապես համապատասխանող մրցույթի մասնակիցների կետի կամ բաղադրիչի միջին գինը, և գների համեմատության համար կօգտագործվի այդ ձևով որոշված Մրցութային առաջարկի արժեքի համարժեքը: Եթե չհամապատասխանող բաղադրիչի կամ պայմանի արժեքը հնարավոր չէ որոշել այլ էապես համապատասխանող առաջարկներից, Պատվիրատուն՝ իր սեփական գիտելիքների, կամ այլ աղբյուրներից ստացված տեղեկությունների հիման վրա, կորոշի, թե ինչ գին պետք է ավելացնել դրանց արժեքը որոշելու և հայտերը համեմատելու համար:

### 3. Որակավորում

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| [redacted] | | | | | | | |
| **N o.** | **Անվանում** | **Պահանջ** | **Մեկ կազմակեր-պություն** | **Համատեղ ձեռնարկություն (գոյություն ունեցող կամ մտադրվող)** | | | **Ներկայաց-ման պահանջներ** |
| | | | | **Բոլոր կողմերը միասին** | **Յուրաքանչյուր անդամ** | **Մեկ անդամ** | |
| | **1. Իրավասություն (eligibility)** | | | | | | |
| 1.1 | **Ազգություն** | Ազգություն ՀՀ 4.4 ենթակետի համաձայն | Պետք է բավարարի պահանջը | Պետք է բավարարի պահանջը | Պետք է բավարարի պահանջը | ԿԻՐԱՌԵԼԻ ՉԷ | Ձև ELI – 1.1 և 1.2, հավելածներով |
| 1.2 | **Շահերի բախում** | Շահերի բախում չկա՝ ՀՀ 4.2 ենթակետի համաձայն | Պետք է բավարարի պահանջը | Պետք է բավարարի պահանջը | Պետք է բավարարի պահանջը | ԿԻՐԱՌԵԼԻ ՉԷ | Հայտի նամակ |
| 1.3 | **Բանկի կողմից ոչ իրավասու հայտարարելը** | Բանկի կողմից չի հայտարարվել ոչ իրավասու՝ ՀՀ-ի 4.5 ենթակետի համաձայն | Պետք է բավարարի պահանջը | Պետք է բավարարի պահանջը | Պետք է բավարարի պահանջը | ԿԻՐԱՌԵԼԻ ՉԷ | Հայտի նամակ |
| 1.4 | **Փոխառուի երկրի պետական սեփականություն հանդիսացող կազմակերպություն** | Համապատասխանում է ՀՀ 4.6 ենթակետի պայմաններին | Պետք է բավարարի պահանջը | Պետք է բավարարի պահանջը | Պետք է բավարարի պահանջը | ԿԻՐԱՌԵԼԻ ՉԷ | Ձև ELI – 1.1 և 1.2, հավելվածներով |
| 1.5 | **Միավորված Ազգերի որոշմամբ կամ Փոխառուի երկրի օրենքով** | Չի համարվել ոչ իրավասու՝ Փոխառուի երկրի օրենքներով կամ պաշտոնական ակտերով Մրցույթի մասնակցի երկրի հետ առևտրային հարաբերությունների արգելքի պատճառով, կամ ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի | Պետք է բավարարի պահանջը | Պետք է բավարարի պահանջը | Պետք է բավարարի պահանջը | ԿԻՐԱՌԵԼԻ ՉԷ | Ձև ELI – 1.1 և 1.2, հավելվածներով |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| [redacted] | | | | | | | |
| **No.** | **Անվանում** | **Պահանջ** | **Մեկ կազմակեր-պություն** | **Համատեղ ձեռնարկություն (գոյություն ունեցող կամ մտադրվող)** | | | **Ներկայաց-ման պահանջներ** |
| | | | | **Բոլոր կողմերը միասին** | **Յուրաքանչյուր անդամ** | **Մեկ անդամ** | |
| | | որոշմամբ, երկուսն էլ՝ ՀՀ 4.8 ենթակետի և V բաժնի համաձայն: | | | | | |
| | **2. Չկատարված պայմանագրերի պատմություն** | | | | | | |
| 2.1 | **Չկատարված պայմանագրերի պատմություն** | Կապալառուի մեղքով պայմանագրի չկատարման դեպք չի եղել **2021թ-ի հունվարի 1-ից:** | Պետք է բավարարի պահանջը[6 և 7] | Պետք է բավարարի պահանջը | Պետք է բավարարի պահանջը[6] | ԿԻՐԱՌԵԼԻ ՉԷ | Ձև CON-2 |
| 2.2 | **Կասեցում Մրցութային երաշխիքի հայտարարագրի կիրարկման պատճառով, կամ մրցույթի վավերության ժամկետում Մրցութային առաջարկի հետ վերցնում** | Չի կասեցվել Մրցութային երաշխիքի հայտարարագրի կիրարկման պատճառով համաձայն ՀՀ 4.7 ենթակետի կամ մրցույթի վավերության ժամկետում Մրցութային առաջարկը հետ վերցնելու պատճառով համաձայն ՀՀ 19.9 ենթակետի: | Պետք է բավարարի պահանջը | Պետք է բավարարի պահանջը | Պետք է բավարարի պահանջը | ԿԻՐԱՌԵԼԻ ՉԷ | Հայտի նամակ |
| 2.3 | **Ընթացքի մեջ գտնվող դատական վեճ** | Մրցույթի մասնակցի ֆինանսական վիճակը և ակնկալվող երկարաժամկետ շահութաբերությունը հիմնավոր են՝ | Պետք է բավարարի պահանջը | ԿԻՐԱՌԵԼԻ ՉԷ | Պետք է բավարարի պահանջը | ԿԻՐԱՌԵԼԻ ՉԷ | Ձև CON-2 |

---

6 Չկատարումը՝ Պատվիրատուի որոշմամբ, պետք է ներառի բոլոր այն պայմանագրերը, որտեղ՝ (ա) չկատարումը չէր վիճարկվել կապալառուի կողմից՝ այդ թվում համապատասխան պայմանագրով վեճերի լուծման մեխանիզմի միջոցով, և (բ) պայմանագրեր, որոնց չկատարումը վիճարկվում էր, սակայն որոշումն ամբողջությամբ ընդունվել էր ի վնաս կապալառուի: Չկատարումը չպետք է ներառի պայմանագրեր, որտեղ պատվիրատուների որոշումները չեղյալ էին համարվել վեճերի լուծման մեխանիզմներով: Չկատարումը պետք է հիմնվի ամբողջությամբ կարգավորված վեճի կամ դատավեճի ողջ տեղեկատվության վրա: Այսինքն, վեճ կամ դատավեճ, որը լուծվել էր համապատասխան պայմանագրի վեճերի լուծման մեխանիզմով և սպառվել էին Հայտատուի համար մատչելի բողոքարկման բոլոր ատյանները:

7 Սույն պահանջը վերաբերում է նաև այն պայմանագրերին, որոնք Հայտատուն իրականացրել է որպես ՀՁ անդամ:

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| **No.** | **Անվանում** | **Պահանջ** | **Մեկ կազմակեր-պություն** | **Համատեղ ձեռնարկություն (գոյություն ունեցող կամ մտադրվող)** | | | **Ներկայաց-ման պահանջներ** |
| | | | | **Բոլոր կողմերը միասին** | **Յուրաքանչյուր անդամ** | **Մեկ անդամ** | |
| | | ստորև 3.1 ենթակետով սահմանված չափանիշների համաձայն, ենթադրությամբ, որ բոլոր ընթացքի մեջ գտնվող վեճերը կլուծվեն ի վնաս Մրցույթի մասնակցի: | | | | | |
| 2.4 | **Դատական վեճերի պատմություն** | Կապալառուի դեմ դատական/արբիտրաժային վճիռների հետևողական պատմություն չի եղել **2021 թ-ի հունվարի 1-ից**[8]**:** | Պետք է բավարարի պահանջը | Պետք է բավարարի պահանջը | Պետք է բավարարի պահանջը | ԿԻՐԱՌԵԼԻ ՉԷ | Ձև CON-2 |
| 2.5 | **Հայտարարագիր. Բնապահպանական, Սոցիալական, Առողջապահական և Անվտանգության (ԲՍԱԱ) կատարողականի պատմություն:** | Նշել **2021 թ. հունվարի 1-ից** մինչև առաջարկների ներկայացման վերջնաժամկետն ընկած ժամանակաշրջանում շինարարական աշխատանքների պայմանագիր, որը կասեցվել կամ դադարեցվել է, կամ որի կատարողական երաշխիքը բռնագանձվել է Պատվիրատուի կողմից պայմանագրի բնապահպանական կամ սոցիալական (այդ թվում սեռական շահագործման և բռնությունների մասով) պարտավորությունները խախտելու համար:[9] | Պետք է ներկայացնի հայտարարագիր: | ԿԻՐԱՌԵԼԻ ՉԷ | Յուրաքանչյուրը պետք է ներկայացնի հայտարարագիր: | ԿԻՐԱՌԵԼԻ ՉԷ | Ձև CON-3 ESHS Կատարողականի հայտարարագիր |
| **3. Ֆինանսական իրավիճակ և կատարողական** | | | | | | | |

[8] Մրցույթին մասնակցելու նամակում Հայտատուն պետք է ներկայացնի ճշգրիտ տեղեկատվություն **2021թ. հունվարի 1-ից մինչև առաջարկների ներկայացման վերջնաժամկետն ընկած ժամանակաշրջանը** իր կողմից իրականացված կամ ընթացիկ պայմանագրերի շրջանակներում վեճերի կամ դատավեճերի մասին: Մրցույթի մասնակցի համ ՀՁ-ի ցանկացած անդամի նկատմամբ դատական/արբիտրաժային վճիռների հետևողական պատմությունը կարող է բերել Մրցույթի մասնակցի որակազրկմանը:

[9] Պատվիրատուն կարող է օգտագործել այս տվյալները լրացուցիչ տեղեկություններ կամ պարզաբանումներ ստանալու համար՝ պատշաճ ուղումնասիրության ընթացքում:

| N o. | Անվանում | Պահանջ | Մեկ կազմակեր-պություն | Համատեղ ձեռնարկություն (գոյություն ունեցող կամ մտադրվող) | | | Ներկայաց-ման պահանջներ |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | **Բոլոր կողմերը միասին** | **Յուրաքանչյուր անդամ** | **Մեկ անդամ** | |
| 3. 1 | **Ֆինանսական կարողություններ** | (i) Հայտատուն պետք է ցույց տա, որ ունի կամ իր համար մատչելի են իրացվելի ակտիվներ, չգրավադրված անշարժ գույք, վարկային գծեր և այլ ֆինանսական միջոցներ (անկախ պայմանագրային կանխավճարից), որոնք բավարար են շինա-րարության ժամանակ դրամական միջոցների հոսքի կարիքները բավարարելու համար, որոնք տվյալ պայմանագրի համար կազմում են **60 000 000 ՀՀ դրամ** առանց մրցույթի մասնակցի այլ պարտավորությունների: | Պետք է բավարարի պահանջը | **Պետք է բավարարի պահանջի առնվազն 100%-ը 60,000,000 ՀՀ դրամ** | **Պետք է բավարարի պահանջի առնվազն 40%-ը<br><br>24 000 000 ՀՀ դրամ** | **Պետք է բավարարի պահանջի առնվազն 60%-ը<br><br>36 000 000 ՀՀ դրամ** | Ձև FIN – 3.1, հավելվածներով<br><br>Ֆինանսական աղբյուրների փաստաթղթային հիմնա-վորումներ՝ բանկային հաշվի/հաշիվների քաղվածք, հավաստում բանկից պայմանագիր կնքելու դեպքում վարկային գիծ տրամադրելու վերա-բերյալ, տեղեկանք հայտատուից, ստորագրված ընկերության ղեկավարի և գլխավոր հաշվապահի կող-մից՝ պահանջվող գումարի իրացվելի ակտիվների առկայության վերաբերյալ, որոնք ազատ են այլ պայմանագրային պարտավորություններից, արգելանքի տակ չեն կամ առկա չեն դրանց նկատմամբ ցանկա-ցած տեսակի իրավական բնույթի սահմանափա-կումներ և այլն:<br>Փաստաթղթային հիմնավորումները պետք է թվագրված լինեն, սկսած մրցույթի հայտարարման օրվանից մինչև մրցույթի բացման օրը ներառյալ: |
| | | (ii) Մրցույթի մասնակիցները պետք է | Պետք է | Պետք է | ԿԻՐԱՌԵԼԻ | ԿԻՐԱՌԵԼԻ | Ձև FIN – 3.1, հավելվածներով |

| No. | Անվանում | Պահանջ | Մեկ կազմակեր-պություն | Համատեղ ձեռնարկություն (գոյություն ունեցող կամ մտադրվող) | | | Ներկայաց-ման պահանջներ |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | Բոլոր կողմերը միասին | Յուրաքանչյուր անդամ | Մեկ անդամ | |
| | | նաև Պատվիրատուի համար գոհացուցիչ կերպով ցույց տան, որ ունեն բավարար ֆինանսական աղբյուրներ ներկայումս ընթացքի մեջ գտնվող աշխատանքների և ապագա պայմանագրային պարտավորությունների դրամական հոսքերի համար: | բավարարի պահանջը | բավարարի պահանջը | ՉԷ | ՉԷ | |

| N o. | Անվանում | Պահանջ | Մեկ կազմակեր-պություն | Համատեղ ձեռնարկություն (գոյություն ունեցող կամ մտադրվող) | | | Ներկայաց-ման պահանջներ |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | **Բոլոր կողմերը միասին** | **Յուրաքանչյուր անդամ** | **Մեկ անդամ** | |
| | | (iii) Պետք է ներկայացվեն աուդիտ անցած ֆինանսական վիճակի մասին հաշվետվություններ վերջին **3 (երեք) (2023թ-2025թ) տարիների համար,** կամ՝ եթե չեն պահանջվում Մրցույթի մասնակցի երկրի օրենքներով, Պատվիրատուի համար ընդունելի այլ ֆինանսական հաշվետվություններ, որոնք պետք է ցույց տան Մրցույթի մասնակցի ֆինանսական վիճակի հուսալիությունը և նրա ակնկալվող երկարաժամկետ շահութաբերությունը: Այսինքն՝ վերջին երեք տարիների համար /2023թ.-2025թ./ ֆինանսական վիճակի վերաբերյալ հաշվետվություններ, ինչպիսիք են շահութահարկի կամ ԱԱՀ-ի հաշվարկի հաշվետվությունները, և այլն: Տեղեկանք ապառքների վերաբերյալ ՀՀ ՊԵԿ-ից տրված Հայտի ներկայացման օրվանից **7** օր առաջ: | Պետք է բավարարի պահանջը | ԿԻՐԱՌԵԼԻ ՉԷ | Պետք է բավարարի պահանջը | ԿԻՐԱՌԵԼԻ ՉԷ | Ձև FIN – 3.1, հավելվածներով ՀՀ օրենսդրության պահանջի դեպքում, Անկախ Աուդիտի հաշվետվություն-ները (ամբողջական՝ կից ծանոթագրություններով) և եզրակացությունները, իսկ պահանջ չլինելու դեպքում վերջին 3 տարիների (2023-2025թթ) համար ֆինանսական կարգավիճակի վերաբերյալ պետական մարմնի կողմից ընդունված ֆինանսական հաշվետվությունների պատճենները/ հաշվապահական հաշվեկշիռ, շահութահարկի մասին հաշվետվություն և այլն) |
| 3.2 | **Աշխատանքների տարեկան շրջանառություն** | Շինարարական աշխատանքների նվազագույն տարեկան շրջանառությունը պետք է կազմի **400,000,000 ՀՀ դրամ** հաշվարկած որպես վերջին երեք տարիներից (2023-2025) որևէ մեկում ընթացիկ | Պետք է բավարարի պահանջը | Պետք է բավարարի պահանջը | Պետք է բավարարի պահանջի **40 %**<br><br>**160,000,000** | Պետք է բավարարի պահանջի **60 %**<br><br>**240,000,000** | Ձև FIN – 3.2 |

| N o. | Անվանում | Պահանջ | Մեկ կազմակեր-պություն | Համատեղ ձեռնարկություն (գոյություն ունեցող կամ մտադրվող) | | | Ներկայաց-ման պահանջներ |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | **Բոլոր կողմերը միասին** | **Յուրաքանչյուր անդամ** | **Մեկ անդամ** | |
| | | և/կամ ավարտված պայմանագրերով ստացված վճարումների վկայագրերի ընդհանուր գումար: | | | **ՀՀ դրամ** | **ՀՀ դրամ** | |
| **4. Փորձառություն** | | | | | | | |
| 4. 1 (ա ) | **Ընդհանուր շինարարական/վերականգնման փորձը** | Հայտատուն պետք է ունենա փորձ վերջին հինգ (5) տարվա ընթացքում սկսած 2021թ. հունվարի 1-ից՝ որպես գլխավոր կապալառու, ՀՁ անդամ կամ ենթակապալառու, հետևյալ աշխատանքներից առնվազն մեկի իրականացման ոլորտում.<br>✓ անտառվերականգնման, կամ<br>✓ անտառապատման, կամ<br>✓ լայնածավալ ծառատնկման, կամ<br>✓ լանդշաֆտային կամ<br>✓ էկոհամակարգերի վերականգնման, կամ | Պետք է բավարարի պահանջը | ԿԻՐԱՌԵԼԻ ՉԷ | Պետք է բավարարի պահանջը | ԿԻՐԱՌԵԼԻ ՉԷ | Ձև EXP – 4.1 |

| N o. | Անվանում | Պահանջ | Մեկ կազմակեր-պություն | Համատեղ ձեռնարկություն (գոյություն ունեցող կամ մտադրվող) | | | Ներկայաց-ման պահանջներ |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | Բոլոր կողմերը միասին | Յուրաքանչյուր անդամ | Մեկ անդամ | |
| | | ✓ հողերի կամ լանջերի կենսաբանական կայունացման աշխատանքներ՝ ծառատնկմամբ: | | | | | |
| 4.2 (ա) | **Հատուկ շինարարական և պայմանագրի կառավարման փորձ** | Հայտատուն վերջին հինգ (5) տարվա ընթացքում (2021–2025 թթ.) պետք է հաջողությամբ կամ էապես ավարտած լինի՝ որպես գլխավոր կապալառու, ՀՁ անդամ, կառավարման կապալառու կամ ենթակապալառու, առնվազն մեկ (1) համանման պայմանագիր կամ ծրագրային նախագիծ, որի իրականացումը հիմնված է եղել իրավական կամ պայմանագրային հարաբերության վրա:<br><br>Համանման է համարվում այն պայմանագիրը կամ նախագիծը, որը իր բնույթով համադրելի է առաջարկվող աշխատանքների հետ՝ բարդության, կիրառված մեթոդների և տեխնոլոգիաների տեսանկյունից:<br><br>Սույն պահանջի շրջանակում «էապես ավարտված» նշանակում է, որ նախատեսված ծառայությունների կամ աշխատանքների առնվազն 80%- | Պետք է բավարարի պահանջը | Պետք է բավարարի պահանջը: | ԿԻՐԱՌԵԼԻ ՉԷ | Պետք է բավարարի պահանջը: | ՁԼ EXP 4.2(ա) |

| N o. | Անվանում | Պահանջ | Մեկ կազմակեր-պություն | Համատեղ ձեռնարկություն (գոյություն ունեցող կամ մտադրվող) | | | Ներկայաց-ման պահանջներ |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | Բոլոր կողմերը միասին | Յուրաքանչյուր անդամ | Մեկ անդամ | |
| | | ը իրականացված է և պայմանագրով նախատեսված հիմնական նպատակները ձեռք են բերված: | | | | | |

**5. Անձնակազմ***

Հայտատուն պետք է ցույց տա, որ ունի առնվազ հետևյալ անձնակազմ հիմնական պաշտոնների համար, որոնք բավարարում են հետևյալ նվազագույն չափանիշներին.

| No. | Պաշտոն | Որակավորման փորձ |
|---|---|---|
| 1 | **Խմբի ղեկավար / անտառագետ** | ✓ բարձրագույն կրթություն անտառագիտության, էկոլոգիայի, ագրոնոմիայի կամ հարակից ոլորտում,<br>✓ առնվազն 5 տարվա փորձ ծրագրերի կառավարման ոլորտում: |
| 2 | **Անտառային կառավարման մասնագետ** | ✓ կարող է լինել խմբի ղեկավարը, եթե ունի համապատասխան որակավորում, կամ կարող է ներգրավվել որպես առանձին փորձագետ |
| 3 | **Բնապահպանության/ կենսաբազմազանության մասնագետ** | ✓ փորձ բնապահպանական գնահատումների կամ կայուն հողօգտագործման կառավարման ոլորտում |
| 4 | **GIS/հեռահար զոնդավորման մասնագետ** | ✓ քարտեզագրման, մոնիթորինգի և հաշվետվությունների պատրաստման փորձ |

Մրցույթի մասնակիցը/Հայտատուն պետք է ներկայացնի հիմնական անձնակազմի, ինչպես նաև այն այլ հիմնական անձնակազմի վերաբերյալ մանրամասներ, որոնց Հայտատուն նպատակահարմար է համարում ներգրավել Պայմանագրի կատարման համար, ներառյալ նրանց կրթական որակավորումները և աշխատանքային փորձը: Հայտատուն պետք է մանրամասներ տրամադրի իր կողմից առաջարկվող անձնակազմի և նրա փորձի մասին **IV բաժնի (Մրցութային առաջարկի ձևեր)** համապատասխան ձևերի վրա:

**6. Սարքավորումներ**

Հայտատուն պետք է ցույց տա, որ նրա համար մատչելի են/հասանելի են Կապալառուի հիմնական սարքավորումները և անհրաժեշտ տեխնիկական միջոցները , ըստ ստորև թվարկածի.

| Հ/Հ | Սարքավորում / Տեխնիկական կարողություն | Նկարագրություն | Նվազագույն պահանջվող քանակ |
|---|---|---|---|
| 1 | Անիվավոր տրակտոր | **Շարժիչի հզորություն**<br>• Նվազագույնը՝ 80 ձիաուժ (HP)<br>**Քարշակման համակարգ**<br>• 4×4 (առաջատար և հետևի անիվներով քարշակ)<br>• Բարձր անցանելիություն՝ անտառային և անհարթ տեղանքի պայմաններում | 2 |
| 2 | Ձեռքի գործիքներ | Բենզինով աշխատող ձեռքի փոսափորներ | 4 |
| 3 | Տրանսպորտային միջոց | Հարմարեցված արտաճանապարհային կամ դաշտային պայմաններում օգտագործման համար | 1 |
| 4 | Սարքավորումներ | Անօդաչու թռչող սարքեր (դրոններ)՝ մոնիթորինգի և տեղանքի | 1 |

| | | | |
|---|---|---|---|
| | | պատկերահանման համար, ինչպես նաև սարքավորումներ՝ տեղանքի նախապատրաստման, խրամատ փորման, ցանկապատման, տնկման և խնամքի աշխատանքների համար | |
| 5 | Տնկարաններ | տնկարանների հասանելիության ապահովման վերաբերյալ պայմանավորվածություններ, որոնք կարող են ապահովել համապատասխան որակի սածիլներ, ներառյալ բաց արմատային և կոնտեյներային արմատային համակարգերով սածիլներ | 1 |
| 6 | Պահեստավորման հզորություններ | Սածիլների պատշաճ տեղափոխման և ժամանակավոր պահպանման համար անհրաժեշտ պահեստային տարածքներ և լոգիստիկ կազմակերպում | 1 |
| 7 | Հանգստի և կեցության հարմարություններ | Դաշտային անձնակազմի համար համապատասխան հանգստի և կացության պայմաններ՝ աշխատանքների իրականացման վայրերում կամ դրանց հարակից տարածքներում | 1 |

Հայտատուն պետք է ներկայացնի սեփականության իրավունքը, վարձակալության պայմանագիրը կամ այլ իրավական ուժ ունեցող փաստաթուղթ, որը կհաստատի պահանջվող սարքավորումների և հզորությունների հասանելիությունը Պայմանագրի ամբողջ ժամկետի ընթացքում:

Հայտատուն պարտավոր է առաջարկվող սարքավորումների վերաբերյալ լրացուցիչ տեղեկությունները ներկայացնել Բաժին IV-ում նախատեսված համապատասխան ձևաթղթով:

# Բաժին IV - Մրցութային առաջարկի ձևեր

## ՀԱՅՏԻ ՆԱՄԱԿ

| |
|---|
| *Հայտատուն պետք է պատրաստի Հայտի նամակը իր բլանկի վրա՝ հստակ նշելով Հայտատուի անվանումը և հասցեն:*<br>***Ծանոթություն. Շեղ տառերով գրված մասերը բերված են Հայտատուներին այս ձևերը պատրաստելու համար և պետք է ջնջվեն վերջնական նյութից:*** |

Ամսաթիվ՝ ***[ավելացրեք Հայտը ներկայացնելու ամսաթիվը (օր, ամիս և տարի)]***

ՀՆՀ No.: **AM-EPIU-516212-CW-RFB**

Ում՝ **Բնապահպանական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկ**

(ա) **Վերապահումների բացակայություն**: Մենք ուսումնասիրեցինք մրցութային փաստաթղթերը, այդ թվում «Հրահանգներ Հայտատուներին» (ՀՀ) բաժնի 8-րդ կետի համաձայն թողարկված հավելվածները և չունենք որևէ վերապահում դրանց նկատմամբ:

(բ) **Իրավասություն**: Մենք համապատասխանում ենք իրավասության պահանջներին և չունենք շահերի բախում ՀՀ-ի 4-րդ կետի համաձայն:

(գ) **Հայտի ապահովման հայտարարագիր**: Մենք չենք կասեցվել Պատվիրատու կողմից կամ ունեցել ոչ իրավասու կարգավիճակ Պատվիրատուի երկրում՝ ՀՀ-ի 4.7 ենթակետի համաձայն Հայտի ապահովման հայտարարագրի կիրարկման պատճառով:

(դ) **Համապատասխանություն**: Մենք առաջարկում ենք կատարել հետևյալ Աշխատանքները մրցութային փաստաթղթերին համապատասխան՝

**Լոռի մարզում անտառների վերականգնման աշխատանքներ**

(ե) **Հայտի գին**: Մեր Հայտի ընդհանուր գինը՝ առանց հաշվի առնելու ստորև (զ) կետով առաջարկված բոլոր զեղչերը, հետևյալն է____________ ***[նշել առաջարկի ընդհանուր գինը տառերով և բառերով]*** **ՀՀ դրամ:**

(զ) **Զեղչեր**: Առաջարկվում են հետևյալ զեղչերը և դրանց կիրառման մեթոդաբանությունը.

(i) Առաջարկվող զեղչ՝ _______ ***[մանրամասն նկարագրեք յուրաքանչյուր առաջարկված զեղչ] կամ նշել*** **"Չկա":**

(ii) Ստորև բերվում է զեղչը կիրառելուց հետո ստացված ճշգրիտ գնի հաշվարկի մեթոդաբանությունը______ ***[մանրամասն նկարագրեք այն մեթոդը, որն օգտագործվելու է զեղչը կիրառելիս] կամ նշել*** **"Չկա":**

(է) **Հայտի վավերության ժամկետ**: Մեր հայտը վավեր է մինչև_________ ***[նշել օրը, ամիսը, տարին ՀՀ-ի 18.1 ենթակետի համաձայն]*** և այն պարտադիր է մեզ համար և կարող է ընդունվել ցանկացած պահի՝ այդ ժամկետը լրանալու օրվա դրությամբ կամ առաջ:

(զ) **Կատարման երաշխիք:** Մեր Հայտն ընդունելու դեպքում պարտավորվում ենք ստանալ կատարման երաշխիք Մրցութային փաստաթղթերի համաձայն:

(է) **Յուրաքանչյուր Հայտատուից մեկ Հայտ**: Սույն մրցութային գործընթացում մենք չենք հանդիսանում մեկ կամ մի քանի այլ Հայտերի մասնակից կամ ենթակապալառու, ինչպես նաև չենք մասնակցում այլ Հայտերում որպես ՀՁ-ի անդամ ըստ ՀՀ-ի 4.3 ենթակետի, բացառությամբ այլընտրանքային Հայտերի, որոնք ներկայացված են ՀՀ-ի 13-րդ կետի համաձայն:

(ը) **Կասեցում և արգելանք**: Մենք, այդ թվում պայմանագրի որևէ մասի մեր ենթակապալառուները, մատակարարները, խորհրդատուները, արտադրողները կամ ծառայություններ մատուցողները ենթակա չեն, կամ չեն վերահսկվում այն կազմակերպության կամ անհատի կողմից, որը ենթակա է ժամանակավոր կասեցման կամ արգելանքի Համաշխարհային բանկի խմբի կողմից, կամ «Արգելանքի մասին

որոշումների համատեղ կիրարկման համաձայնության» հիման վրա Համաշխարհային բանկի խմբի կողմից կիրառվող արգելանքի: Բացի այդ, մենք չենք հայտարարվել ոչ իրավասու Պատվիրատուի երկրի օրենքներով կամ պաշտոնական նորմատիվային ակտերով, կամ ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի որոշմամբ:

(թ) **Պետական կազմակերպություն կամ հիմնարկ**: ***[Ընտրել ճիշտ տարբերակը և ջնջել մյուսը:*** Մենք պետական կազմակերպություն չենք / Մենք պետական կազմակերպություն ենք, սակայն համապատասխանում ենք ՀՀ-ի 4.6 ենթակետի պահանջներին*]*:

(ժ) **Միջնորդավճարներ, պարգևատրումներ կամ վարձատրություններ:** Մենք վճարել ենք, կամ կվճարենք հետևյալ միջնորդավճարները, պարգևատրումները կամ վարձատրությունները մրցութային գործընթացի կամ պայմանագրի կատարման առնչությամբ ***[նշեք յուրաքանչյուր ստացողի լրիվ անունը, լրիվ հասցեն, յուրաքանչյուր միջնորդավճարի, պարգևատրման կամ վարձատրության հիմքերը, գումարը և արժույթը]:***

| Ստացողի անունը | Հասցեն | Հիմքերը | Գումարը |
|---|---|---|---|
| | | | |
| | | | |
| | | | |
| | | | |

***(Եթե չեն վճարվել և չեն վճարվելու, նշեք*** **«Ոչ մի»**):

(ժա) **Պարտադիր պայմանագիր:** Մենք հասկանում ենք, որ սույն Հայտը՝ Ձեր գրավոր շնորհումը ներառված Ձեր կողմից տրամադրվող Ընդունման Նամամակի հետ, կկազմեն պարտադիր պայմանագիր՝ մինչև պաշտոնական պայմանագրի կազմումը և կնքումը:

(ժբ) **Պարտավոր չեք ընդունել**: Մենք հասկանում ենք, որ Դուք պարտավոր չեք ընդունել ամենացածր գնահատված առաջարկը, Ամենամեծ առավելություն ունեցող Հայտը կամ Ձեր կողմից ստացված որևէ այլ առաջարկ:

(ժգ) **Խարդախություն և կաշառակերություն**: Սույնով հավաստում ենք, որ ձեռնարկել ենք քայլեր ապահովելու, որ մեզ համար կամ մեր անունից գործող որևէ անձ ներգրավված չլինի որևէ ձևի խարդախության և կաշառակերության մեջ:

(ժդ) **Վեճի դատավոր**: ***[Ընտրել տարբերակը և ջնջել մյուսը:*** Մենք ընդունում ենք «ՀՀ առևտրաարդյունաբերական պալատին կից մշտապես գործող արբիտրաժային դատարան»» նշանակումը որպես Վեճի դատավոր:

***[կամ]***

Մենք չենք ընդունում «ՀՀ առևտրաարդյունաբերական պալատին կից մշտապես գործող արբիտրաժային դատարան» նշանակումը որպես Վեճի դատավոր և առաջարկում ենք ***[նշել անունը]*** նշանակել որպես Վեճի դատավոր, որի օրավարձը և կենսագրական տվյալները կցվում են:

Հայտատուի անվանումը* ------------***[ընկերության անվանումը]:***

Հայտատուի անունից Հայտը ստորագրելու համար պատշաճ կերպով լիազորված անձ** -----------***[Հայտը ստորագրելու համար պատշաճ կերպով լիազորված անձի լրիվ անուն ազգանունը]:***

Հայտը ստորագրող անձի պաշտոնը --------------*[<u>Հայտը ստորագրող անձի լրիվ պաշտոնը</u>]:*

Վերոնշյալ անձի ստորագրություն -------------------*[ ….. ]* ----------*կազմակերպության կնիքը*

Ստորագրման ամսաթիվը -------------------*[…]:*

* ***<u>Եթե Հայտը ներկայացվում է համատեղ ձեռնարկության (ՀՁ) կողմից, նշել համատեղ ձեռնարկության անունը՝ որպես Հայտատու: ՀՁ-ի դեպքում Հայտը պետք է ստորագրվի և կնքվի ՀՁ-ի բոլոր անդամների կողմից:</u>***
***<u>** Հայտը ստորագրող անձը պետք է ունենա Հայտատուի կողմից տրված լիազորագիր, որը պետք է կցված լինի հայտին:</u>***

**Հայտի ապահովման հայտարարագիր**

Ամսաթիվ՝ _______________________
Մրցութային առաջարկի No.՝ **AM-EPIU-516212-CW-RFB**
Ում՝ **Բնապահպանական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկ**

Մենք, ներքոստորագրյալներս հայտնում ենք, որ.
Մենք հասկանում ենք, որ ըստ Ձեր պայմանների, Մրցութային առաջարկը պետք է ուղեկցվի Հայտի ապահովման ապահովման հայտարարագրով:
Մենք ընդունում ենք, որ մենք ավտոմատ կերպով **2 (երկու) տարով** կզրկվենք **Պատվիրատուի կողմից** հայտարարված որևէ մրցույթի մասնակցելու իրավունքից սկսած Պատվիրատուի կողմից համապատասխան ծանուցման ամսաթվից**,** եթե մենք չկատարենք հայտի պայմաններով սահմանված մեր պարտականությունները, եթե
(ա) Մրցույթային Հայտում նշված՝ հայտի վավերականության ժամկետի ընթացքում մենք հրաժարվում ենք մեր Հայտից, կամ
(բ) Հայտի վավերականության ժամկետի ընթացքում կամ ցանկացած երկարաձգված ժամկետի ընթացքում Պատվիրատուի կողմից Հայտի ընդունման ծանուցում ստանալուց հետո՝
1. ձախողում կամ հրաժարվում ենք Պայմանագրի կատարումից, եթե պահանջվում է, կամ
2. ձախողում կամ հրաժարվում ենք ներկայացնել Աշխատանքների Կատարման Երաշխիքը համաձայն ՀՀ-ի:

Մենք գիտակցում են, որ այս Հայտի ապահովման հայտարարագիրը կկորցնի իր ուժը, եթե մենք չճանաչվենք հաղթող, երբ. (ա) մենք ստանանք գրավոր ծանուցում հաղթող հայտատուի անունով, կամ (բ) մեր հայտի վավերացման ժամկետից 28 օր հետո:
Մրցույթի մասնակցի անունը ***** ***<u>[Մրցութային առաջարկը ներկայացնող ընկերության անվանումը]:</u>***
Մրցույթի մասնակցի անունից Մրցութային առաջարկը ստորագրելու համար պատշաճ կերպով լիազորված անձ*****<u>[Մրցութային առաջարկը ստորագրելու համար պատշաճ կերպով լիազորված անձի լրիվ անունը]:</u>***
Մրցութային առաջարկը ստորագրող անձի պաշտոնը ***<u>[Մրցութային առաջարկը ստորագրող անձի լրիվ պաշտոնը]:</u>***
Վերոնշյալ անձի ստորագրություն [ ….. ]
Ստորագրման ամսաթիվը […]
Կազմակերպության կնիքը
** Եթե Մրցութային առաջարկը ներկայացվում է Համատեղ ձեռնարկության կողմից, նշել Համատեղ ձեռնարկության անունը՝ որպես Մրցույթի մասնակից:*
*** Մրցութային առաջարկը ստորագրող անձը պետք է ունենա Մրցույթի մասնակցի կողմից տրված լիազորագիր, որը պետք է կցված լինի Մրցութային աղյուսակներին:*
*(Նշում. Համատեղ ձեռնարկության դեպքում, Հայտի ապահովման հայտարարագիրը պետք է լինի Համատեղ ձեռնարկության բոլոր անդամների անունից՝ որոնք ներկայացրել են Մրցութային առաջարկ):*

**Տեխնիկական առաջարկ**

**Տեխնիկական առաջարկի ձևեր**

- **Անձնակազմ**
- **Սարքավորումներ**
- **Շինհրապարակի կազմակերպումը**
- **Մեթոդների հայտարարագիր**
- **Մոբիլիզացիայի ժամանակացույց**
- **Շինարարության ժամանակացույց**
- **ԲՍԱԱ կառավարման ռազմավարություններ և իրականացման պլաններ**
- **Կապալառուի անձնակազմի վարքագծի կանոնագիրք(ԲՍԱԱ)**
- **Այլ**

**Ձև PER -1 Առաջարկվող աշխատակազմ**

**Լոտ#...: [նշել լոտի համարը]**

Մրցույթի մասնակիցները պետք է ներկայացնեն համապատասխան որակավորում ունեցող հիմնական աշխատակազմի թեկնածուներ Պայմանագիրը կատարելու համար: Նրանց փորձի մասին տվյալները պետք է ներկայացվեն օգտագործելով ստորև PER-2 Ձևը յուրաքանչյուր թեկնածուի համար:

| | | |
|---|---|---|
| **1.** | **Պաշտոնի անունը:** | |
| | **Թեկնածուի անունը:** | |
| | **Նշանակման տևողությունը:** | [*նշեք այն ամբողջ ժամանակահատվածը (սկզբի և ավարտի ամսաթվերը), որի համար այդ պաշտոնը կնշանակվի*] |
| | **Ժամանակի պարտավորություն այս պաշտոնի համար:** | *[նշեք այս պաշտոնի համար նախատեսված օրերի/շաբաթների/ ամիսների/ քանակը]* |
| | **Այս պաշտոնի համար նախատեսված ժամանակացույցը:** | *[նշեք այս պաշտոնի համար նախատեսված ժամանակացույցը, օրինակ կցել գծապատկեր]* |
| **2.** | **Պաշտոնի անունը:** | |
| | **Թեկնածուի անունը:** | |
| | **Նշանակման տևողությունը:** | [*նշեք այն ամբողջ ժամանակահատվածը (սկզբի և ավարտի ամսաթվերը), որի համար այդ պաշտոնը կնշանակվի*] |
| | **Ժամանակի պարտավորություն այս պաշտոնի համար:** | *[նշեք այս պաշտոնի համար նախատեսված օրերի/շաբաթների/ ամիսների/ քանակը]* |
| | **Այս պաշտոնի համար նախատեսված ժամանակացույցը:** | *[նշեք այս պաշտոնի համար նախատեսված ժամանակացույցը, օրինակ կցել գծապատկեր]* |

# Ձև PER-2 Առաջարկվող աշխատակազմի կենսագրական տվյալներ

| |
|---|
| Մրցույթի մասնակցի անունը |

| | | |
|---|---|---|
| Պաշտոն [#1]: [Պաշտոնի անունը ըստ Ձև PER-1-ի] | | |
| Անձնական տվյալներ | Անուն: | Ծննդյան ամսաթիվ: |
| | Հասցեն: | Էլ. փոստ: |
| | | |
| | Մասնագիտական որակավորումներ: | |
| | Կրթություն: | |
| | Լեզվի իմացություն:[խոսելու, կարդալու և գրելու մակարդակներ] | |
| Մանրամասներ | | |
| | Գործատուի հասցեն: | |
| | Հեռախոս: | Կոնտակտային տվյալներ (ղեկավար / կադրերի բաժնի աշխատակից): |
| | Ֆաքս: | |
| | Աշխատանքի անվանումը: | Ներկայիս գործատուի հետ աշխատանքային ստաժը: |

Ամփոփեք մասնագիտական փորձը սկսելով ամենավերջինից: Նշեք պայմանագրին համապատասխան հատուկ տեխնիկական և կազմակերպչական փորձը:

| Պայմանագիր | Պաշտոն | Ներգրավածություն | Համապատասխան փորձ |
|---|---|---|---|

| | | | |
|---|---|---|---|
| [պայմանագրի հիմնական մանրամասներ] | [պարտականություններ] | [ժամկետ] | [նկարագրեք այս պաշտոնին համապատասխան փորձը] |
| | | | |
| | | | |
| | | | |

**Հայտարարագիր**

Ես` ներքոստորագրյալս, հանդիսանալով Հիմնական անձնակազմի անդամ, հավաստիացնում եմ, որ որքանով ինձ հայտնի է, սույն **PER-2 ձևում** պարունակող տվյալները ճիշտ են բնութագրում ինձ, իմ որակավորումները և իմ փորձը:

Ես հաստատում եմ, որ հասանելի կլինեմ հետևյալ աղյուսակում նշված ձևով` այդ պաշտոնի համար Հայտում ներկայացված ակնկալվող ժամանակացույցի ողջ տևողության ընթացքում:

| **Պարտավորվածություն** | **Մանրամասներ** |
|---|---|
| **Պարտավորվածություն պայմանագրի տևողության համար** | *[Նշել այն ժամանակաշրջանը, որի ընթացքում ներգրավված է լինելու այս պաշտոնի աշխատողը (սկզբի և վերջի ամսաթիվը)]* |
| **Պարտավորվածություն ժամկետի համար** | *[Նշել այս պաշտոնի համար նախատեսված օրերի/ շաբաթների/ ամիսների թիվը]* |

Ես հասկանում եմ, որ սույն ձևում ցանկացած թյուր ներկայացում կամ բացթողում կարող է`

(ա) հաշվի առնվել Մրցութային առաջարկի գնահատման ժամանակ,

(բ) բերել իմ որակազրկմանը մրցույթին մասնակցելուց,

(գ) բերել իմ հեռացման Պայմանագրից:

**Հիմնական անձնակազմի անուն:** ***[նշել անուն, ազգանունը]***
Ստորագրություն: ____________________________________________
Ամսաթիվ: _______________________________________________
**Վավերագրում հայտատուի լիազոր ներկայացուցչի:**
Ստորագրություն: ____________________________________________
Ամսաթիվ: _______________________________________________

# Ձև սարքավորումների համար

Հայտատուն պետք է տրամադրի համապատասխան տեղեկատվություն՝ հստակ ցույց տալու, որ նա ունի Բաժին III-ում (Գնահատման և որակավորման չափանիշներ) թվարկված հիմնական սարքավորումների մասով ներկայացված պահանջները բավարարելու կարողություններ: Թվարկված սարքավորումների կամ Մրցույթի մասնակցի կողմից առաջադրվող այլընտրանքային սարքավորման յուրաքանչյուր միավորի համար հարկավոր է պատրաստել առանձին ձև: Հայտատուն պետք է հնարավորին չափով տրամադրի ստորև պահանջվող ողջ տեղեկատվությունը: Աստղանիշով (*) նշված դաշտերը օգտագործվելու են գնահատման համար:

| **Սարքավորման տեսակը*** | | |
|---|---|---|
| **Տեղեկատվություն սարքավորման մասին** | **Արտադրողի անվանում,** | **Մոդել և հզորություն** |
| | **Արտադրողականություն*** | **Արտադրման տարեթիվ*** |
| **Ներկայիս վիճակը** | **Ներկայիս գտնվելու վայրը** | |
| | **Ներկայիս պարտականությունների մանրամասները** | |
| **Աղբյուրը** | **Նշել սարքավորման աղբյուրը**<br>**o Սեփական o Վարձակալված o Լիզինգ o Հատուկ արտադրված** | |

Հետևյալ տեղեկատվությունը հարկավոր է տրամադրել միայն Մրցույթի մասնակցին չպատկանող սարքավորման համար:

| **Սեփականատեր** | **Սեփականատիրոջ անուն** | |
|---|---|---|
| | **Սեփականատիրոջ հասցե** | |
| | Հեռախոս: | **Կոնտակտային անձի անունը և պաշտոնը** |
| | Ֆաքս: | **Տելեքս** |
| **Պայմանագրեր** | **Ծրագրին վերաբերող վարձակալության / արտադրության պայմանագրերի մանրամասներ** | |
| | | |
| | | |

**Շինհրապարակի կազմակերպումը**

***(Պետք է ներկայացվի Հայտատուի կողմից)***

**Մեթոդների հայտարարագիր**

***(Պետք է ներկայացվի Հայտատուի կողմից)***

**Մոբիլիզացիայի ժամանակացույց**

***(Պետք է ներկայացվի Հայտատուի կողմից)***

**Շինարարության ժամանակացույց**

***(Պետք է ներկայացվի Հայտատուի կողմից)***

# ԲՍ կառավարման ռազմավարություններ և իրականացման պլաններ

# (ԲՍ-ԿՌԻՊ)

Հայտատուն պետք է ներկայացնի համապարփակ և հակիրճ **«ԲՍ կառավարման ռազմավարություններ և իրականացման պլաններ» (ԲՍ-ԿՌԻՊ)**՝ ինչպես պահանջվում է **Մրցույթի տվյալների աղյուսակի ՀՀ 11.1 (ը)** կետով: Այդ ռազմավարությունները և պլանները պետք է մանրամասն նկարագրեն Կապալառուի և նրա ենթակապալառուների նյութերը, սարքավորումները, ինչպես նաև նրանց կողմից իրականացվելիք կառավարման գործընթացները և այլն:

Այդ ռազմավարությունները և իրականացման պլանները մշակելիս Հայտատուն պետք է հետևի պայմանագրի **ԲՍ** դրույթներին, այդ թվում դրանց, որոնք կարող են ավելի ամբողջական նկարագրված լինել **VII բաժնում՝ «Աշխատանքներին ներկայացվող պահանջներում»:**

# Կապալառուի անձնակազմի վարքագծի կանոնագրքի (ԲՍ) Ձև

**Ծանոթություն Մրցույթի մասնակցին.**

**Պատվիրատուի կողմից կազմած «Վարքագծի կանոնագրքի» նվազագույն բովանդակությունը չպետք է էապես ձևափոխվի**: Սակայն, Հայտատուն կարող է ավելացնել պահանջներ՝ ըստ անհրաժեշտության, այդ թվում Պայմանագրի համար բնորոշ խնդիրները/ ռիսկերը հաշվի առնելու համար:

Հայտատուն պետք է ստորագրի և ներկայացնի «Վարքագծի կանոնագիրքը»՝ որպես իր մրցութային առաջարկի մաս:

**ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ՎԱՐՔԱԳԾԻ ԿԱՆՈՆԱԳԻՐՔ**

Մենք [***ավելացնել Կապալառուի անունը***]՝ հանդիսանում ենք Կապալառու: Մենք պայմանագիր ենք ստորագրել **Բնապահպանական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի հետ Լոռի մարզում անտառների վերականգնման աշխատանքների իրականացում, AM-EPIU-516212-CW-RFB պայմանագիրը** իրականացնելու համար: Այդ աշխատանքներն իրականացվելու են [***նշել շինհրապարակը և այլ տեղամասեր, որտեղ իրականացվելու են Աշխատանքները***]: Մեր պայմանագրի պահանջներով մենք պետք է ձեռնարկենք միջոցառումներ Աշխատանքների հետ առնչվող ռիսկերին՝ այդ թվում սեռական շահագործման, սեռական բռնությունների և սեռական ոտնձգությունների ռիսկերին անդրադառնալու համար:

Սույն «**Վարքագծի կանոնագիրքը**» հանդիսանում է Աշխատանքների հետ առնչվող բնապահպանական և սոցիալական ռիսկերի մեղմացմանն ուղղված մեր միջոցառումների մի մասը: Այն վերաբերում է Աշխատանքների շինհրապարակում, ինչպես նաև Աշխատանքների իրականացման այլ վայրերում մեր ողջ աշխատակազմին, բանվորներին և այլ անձնակազմին: Այն վերաբերում է նաև յուրաքանչյուր ենթակապալառուի անձնակազմին, ինչպես նաև ցանկացած այլ անձնակազմին, որն օգնում է մեզ Աշխատանքների իրականացման ժամանակ: Բոլոր այդ անձինք վկայակոչվում են որպես «**Կապալառուի անձնակազմ**» և պետք է հետևեն սույն «**Վարքագծի կանոնագրքին**»:

Սույն «**Վարքագծի կանոնագրքում**» նկարագրվում է այն վարքագիծը, որը պահանջվում է Կապալառուի ողջ անձնակազմի կողմից:

Մեր աշխատանքային վայրը հանդիսանում է մի միջավայր, ուր չեն հանդուրժվի ոչ անվտանգ, ագրեսիվ, վիրավորական կամ հանցավոր վարքագիծը, և որտեղ անձնակազմի բոլոր անդամները հանգիստ կարող են խնդիրներ բարձրացնել առանց վախենալու վրեժխնդրությունից:

**ՊԱՀԱՆՋՎՈՂ ՎԱՐՔԱԳԻԾԸ**

Կապալառուի անձնակազմը պարտավոր է՝

1. բանիմաց կերպով և ջանասիրաբար իրականացնել իր պարտականությունները.
2. պահպանել սույն Վարքագծի օրենսգիրքը և բոլոր այլ կիրառվող օրենքները, կանոնակարգերը և այլ պահանջները, ներառյալ Կապալառուների այլ աշխատակիցների և ցանկացած այլ անձի առողջության, անվտանգության ու բարեկեցության պաշտպանելու պահանջները:
3. պահպանել անվտանգ աշխատանքային միջավայրը, այդ թվում՝

ա. ապահովել յուրաքանչյուր անձի վերահսկողության տակ գտնվող աշխատատեղերի, մեքենա-մեխանիզմների, սարքավորումների և գործընթացների անվտանգությունը, բացառել ռիսկը առողջությանը.

բ. հագնել անհատական պաշտպանության միջոցները.

գ. կիրառել համապատասխան միջոցներ քիմիական, ֆիզիկական և կենսաբանական նյութերի ու ռեագենտների հետ աշխատելիս.

դ. հետևել արտակարգ իրավիճակներում գործող ընթացակարգերին:

4. հաղորդել այնպիսի աշխատանքային իրավիճակների մասին, որոնք, ըստ նրա, ապահով չեն և վտանգ են ներկայացնում առողջությանը, ինչպես նաև խուսափել այնպիսի իրավիճակներից, որոնք՝ նրա ողջամիտ կարծիքով, անմիջական և լուրջ վտանգ են ներկայացնում իր կյանքին կամ առողջությանը:
5. հարգանքով վերաբերվել այլ մարդկանց, խտրականություն չցուցաբերել մարդկանց հատուկ խմբերի, ինչպես օրինակ կանանց, հաշմանդամների, արտագնա աշխատողների և երեխաների նկատմամբ:
6. չներգրավվել սեռական ոտնձգությունների մեջ, ինչը նշանակում է անցանկալի սեռական առավելություններ, սեռական բարեհաճության առաջարկներ, սեռական բնույթի այլ ֆիզիկական վարք Կապալառուի կամ Պատվիրատուի մեկ այլ անձնակազմի նկատմամբ:
7. չներգրավվել սեռական շահագործման մեջ, ինչը նշանակում է՝ խոցելի վիճակի, ավելի մեծ լիազորությունների կամ վստահության օգտագործում կամ դրանց օգտագործման փորձ՝ մեկ այլ անձի սեռական շահագործումից դրամային, սոցիալական կամ քաղաքական, կամ որևէ այլ օգուտ ստանալու նպատակով:
8. չներգրավվել սեռական շահագործման մեջ, ինչը նշանակում է՝ սեռական բնույթի փաստացի բռնություն կամ բռնության սպառնալիք՝ լինի դա ուժի կիրառմամբ կամ անհավասար ստիպողական պայմաններում:
9. չներգրավվել սեռական բնույթի որևէ գործողության մեջ 18 տարեկանից փոքր անձանց հետ, եթե արդեն ամուսնացած չեք այդ անձի հետ:
10. ավարտել համապատասխան ուսուցման դասընթացներ, որոնք կառնչվեն պայմանագրի բնապահպանական և սոցիալական հարցերին, այդ թվում առողջապահության և անվտանգության հարցեր, սեռական շահագործում և բռնություն (**ՍՇԲ**), սեռական ոտնձգություն (**ՍՈ**):
11. հաղորդել սույն **Վարքագծի կանոնագրքի** խախտումների մասին, և
12. վրեժխնդիր չլինել ցանկացած անձի նկատմամբ, ով հաղորդել է Վարքագծի կանոնակարգի խախտման մասին մեզ կամ Պատվիրատուին, կամ այն անձի նկատմամբ, որը դիմել է Կապալառուի անձնակազմի կամ ծրագրի հետ առնչվող բողոքների լուծման մեխանիզմին:

## ՄՏԱՀՈԳՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԲԱՐՁՐԱՑՆԵԼԸ

Եթե որևէ մեկը ականատես է լինում մի վարքագծի, որը՝ ըստ իրեն, ներկայացնում է սույն **Վարքագծի կանոնակարգի** խախտում, կամ որն այլ կերպ է մտահոգում իրեն, նա պետք է անմիջապես բարձրացնի այդ հարցը: Դա կարող է արվել հետևյալ ձևերից որևէ մեկով.

1. Կապվել [***գենդերային խախտումների հետ վարվելու համապատասխան փորձ ունեցող՝ Կապալառուի սոցիալական մասնագետի հետ, կամ՝ եթե նման անձ Պայմանագրով չի նախատեսվում, ապա՝ Կապալառուի կողմից նման խնդիրների լուծման համար նշանակված անձ***] հետ [***հասցեով***] կամ զանգել **[---]** հեռախոսով կամ անձամբ հանդիպել [***վայրում***], կամ
2. զանգել **[----]** Կապալառուի թեժ գծին *(առկայության դեպքում)* և թողնել հաղորդագրություն:

Անձի նույնականացման տվյալները կմնան գաղտնի, եթե դրանց մասին հաղորդելը չի պահանջվում երկրի օրենքով: Կարող են ներկայացվել նաև անանուն բողոքներ և պնդումներ, և դրանք կարժանանան համապատասխան ուշադրության: Մենք լուրջ կվերաբերվենք հնարավոր վատ վարքագծի մասին բոլոր հաղորդումներին, կհետազոտենք դրանք ու կձեռնարկենք

համապատասխան միջոցներ: Անհրաժեշտության դեպքում մենք բարի խոսքերով կհիշատակենք այն ծառայություններ մատուցողներին, ովքեր կնպաստեն օգնելու ենթադրյալ միջադեպը վերապրած անձին:
Ոչ մի վրեժխնդրություն չի լինի որևէ անձի հանդեպ, որը ազնիվ մտահոգություն է հայտնում սույն Վարքագծի կանոնագրքով արգելված ցանկացած վարքի համար: Նման վրեժխնդրությունը կլինի սույն Վարքագծի կանոնագրքի խախտում:

**ՎԱՐՔԱԳԾԻ ԿԱՆՈՆԱԳՐՔԻ ԽԱԽՏՄԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ**

Կապալառուի անձնակազմի կողմից սույն Վարքագծի օրենսգրքի ցանկացած խախտում կարող է բերել լուրջ հետևանքների, ընդհուպ դադարեցումը և հնարավոր դիմումը օրինապահ մարմիններին:

**ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ՀԱՄԱՐ**

Ես ստացել եմ սույն Վարքագծի օրենսգրքի մի օրինակ ինձ համար հասկանալի լեզվով: Ես հասկանում եմ, որ սույն Վարքագծի օրենսգրքի որևէ հարցի առնչությամբ կարող եմ դիմել [***Կապալառուի՝ համապատասխան փորձ ունեցող կանտակտային անձի անունը***] բացատրություններ ստանալու համար:

Կապալառուի անձնակազմի անունը՝ [***ավելացնել անունը***]
Ստորագրություն. _______________________________________________________________
Ամսաթիվ. (օր/ամիս/տարի). ___________________________________________________

Կապալառուի լիազորված ներկայացուցչի անունը
Ստորագրություն. _______________________________________________________________
Ամսաթիվ. (օր/ամիս/տարի). ___________________________________________________

**ՀԱՎԵԼՎԱԾ 1: Սեռական շահագործում և բռնություն (ՍՇԲ) և սեռական ոտնձգություն (ՍՈ) հանդիսացող վարքագծեր**

## ՎԱՐՔԱԳԾԻ ԿԱՆՈՆԱԳՐՔԻ ՁԵՎԱԹՂԹԻ ՀԱՎԵԼՎԱԾ 1

## ՍԵՌԱԿԱՆ ՇԱՀԱԳՈՐԾՈՒՄ ԵՒ ԲՌՆՈՒԹՅՈՒՆ (ՍՇԲ) ԵՒ ՍԵՌԱԿԱՆ ՈՏՆՁԳՈՒԹՅՈՒՆ (ՍՈ) ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՎԱՐՔԱԳԾԵՐ

Ստորև բերվող ոչ սպառիչ ցանկի նպատակն է ցույց տալ արգելված վարքագծի տեսակները.

(1) **Սեռական շահագործման և բռնության օրինակները ներառում են հետևյալ դեպքերի** ոչ սպառիչ ցանկը՝

- Կապալառուի անձնակազմի անդամը ասում է համայնքի անդամին, որ կարող է աշխատանք գտնել նրա համար (օրինակ, խոհարարի և մաքրուհու) աշխատանքների տեղամասում սեռական հարաբերության դիմաց:
- Կապալառուի անձնակազմի անդամը, որը պատասխանատու է տնային տնտեսությունները հոսանքին միացնելու համար, ասում է տնային տնտեսություն ղեկավարող կնոջը, որ կմիացնի նրա տունը էլեկտրացանցին սեռական հարաբերության դիմաց:
- Կապալառուի անձնակազմի անդամը բռնաբարում կամ այլ բնույթի սեռական բռնություն է իրականացնում համայնքի անդամի նկատմամբ:
- Կապալառուի անձնակազմի անդամը թույլ չի տալիս անդամի մուտքը շինհրապարակ, մինչև վերջինս չցուցաբերի սեռական բարեհաճություն:
- Կապալառուի անձնակազմի անդամը ասում է Պայմանագրի շրջանակներում աշխատանքի դիմող անձին, որ ինքը կվարձի նրան միայն սեռական հարաբերության դիմաց:

(2) **Սեռական ոտնձգության օրինակներ աշխատանքային ենթատեքստում**

- Կապալառուի անձնակազմի անդամը մեկնաբանում է (բացասական կամ դրական կերպով) Կապալառուի անձնակազմի մեկ այլ անդամի տեսքը և սեռական գրավչությունը:
- Երբ Կապալառուի անձնակազմի մի անդամ բողոքում է իր արտաքինի մասին Կապալառուի անձնակազմի մեկ այլ անդամի կողմից արած դիտողության համար, այլ անդամը ասում է, որ նրան «խնդրում են անել դա» այլ անդամի հագուստի պատճառով:
- Կապալառուի անձնակազմի մի անդամ անցանկալի կերպով դիպչում է Կապալառուի կամ Պատվիրատուի անձնակազմի մեկ այլ անդամին:
- Կապալառուի անձնակազմի մի անդամ ասում է Կապալառուի անձնակազմի մեկ այլ անդամին, որ կբարձրացնի վերջինիս աշխատավարձը կամ կխրախուսի նրան, եթե ուղարկի իր մերկ լուսանկարները:

**Մրցույթի մասնակցի որակավորումը**

**III բաժնի (Գնահատման և որակավորման չափանիշներ)** համաձայն պայմանագրի կատարման իր որակավորումները հաստատելու համար Հայտատուն պետք է տրամադրի ստորև ներառված համապատասխան տեղեկատվական ձևերով պահանջվող տեղեկատվությունը:

**Ձև ELI -1.1. Տեղեկատվական ձև Հայտատուի մասին**

Ամսաթիվ՝______________________

Մրցույթի No.՝ _________________

_______էջ_______ էջերից

| |
|---|
| Մրցույթի մասնակցի անվանումը՝ |
| Համատեղ ձեռնարկության (ՀՁ) դեպքում՝ յուրաքանչյուրի անդամի անվանումը՝ |
| Մրցույթի մասնակցի փաստացի կամ մտադրված գրանցման երկիրը՝<br>*[նշեք հիմնադրման երկիրը]* |
| Մրցույթի մասնակցի փաստացի գրանցման տարի՝ |
| Մրցույթի մասնակցի իրավաբանական հասցեն գրանցման երկրում՝ |
| Տեղեկատվություն Մրցույթի մասնակցի լիազորված Ներկայացուցչի մասին՝<br>Անուն՝ ______________________________________<br>Հասցե՝ _____________________________________<br>Հեռախոս/Ֆաքս՝ _________________________<br>Էլ. Փոստի հասցեն՝ ________________________________ |
| 1. Կից ներկայացված են հետևյալ բնօրինակ փաստաթղթերի պատճենները՝<br>☐ Կազմակերպության կանոնադրությունը (կամ հիմնադրման կամ միավորման մասին համարժեք փաստաթուղթ) և/կամ վերոնշյալ իրավաբանական կազմակերպության գրանցման փաստաթղթերը՝ ՀՀ 4.4 ենթակետի համաձայն:<br>☐ ՀՁ-ի դեպքում՝ ՀՁ կազմելու մասին համաձայնագիր կամ նամակ-մտադրություն՝ ՀՀ 4.1 ենթակետի համաձայն:<br>☐ Պետական կազմակերպության կամ հիմնարկի դեպքում՝ փաստաթղթեր ՀՀ 4.6 ենթակետի համաձայն, որոնք հաստատում են.<br>• իրավաբանական և ֆինանսական ինքնուրույնությունը,<br>• գործելը առևտրային օրենքների հիման վրա,<br>• որ Հայտատուն Պատվիրատուից կախյալ կազմակերպություն չէ:<br>2. Ներառվում են կազմակերպության կանոնադրությունը, տնօրենների խորհրդի և շահառու սեփականատերերի ցանկը: |

**Ձև ELI -1.2: Տեղեկատվական ձև ՀՁ մասնակիցների համար**

(պետք է լրացվի Համատեղ ձեռնարկության յուրաքանչյուր անդամի համար)

Ամսաթիվ՝_____________________

Մրցույթի No.՝ ________________

_______էջ_______ էջերից

| |
|---|
| Համատեղ ձեռնարկության անվանումը՝ |
| ՀՁ անդամի անվանումը՝ |
| ՀՁ գրանցման երկիրը՝ |
| ՀՁ հիմնադրման տարին՝ |
| ՀՁ իրավաբանական հասցեն գրանցման երկրում՝ |
| Տեղեկատվություն ՀՁ լիազորված Ներկայացուցչի մասին՝<br>Անուն՝ ______________________________________<br>Հասցե՝ ____________________________________<br>Հեռախոս/Ֆաքս՝ ________________________<br>Էլ. Փոստի հասցեն՝ ______________________________ |
| 1. Կից ներկայացված են հետևյալ բնօրինակ փաստաթղթերի պատճենները՝<br>☐ Կազմակերպության կանոնադրությունը (կամ հիմնադրման կամ միավորման մասին համարժեք փաստաթուղթ) և/կամ վերոնշյալ իրավաբանական կազմակերպության գրանցման փաստաթղթերը՝ ՀՀ 4.4 ենթակետի համաձայն:<br>☐ ՀՁ-ի դեպքում՝ ՀՁ կազմելու մասին համաձայնագիր կամ նամակ-մտադրություն՝ ՀՀ 4.1 ենթակետի համաձայն:<br>☐ Պետական կազմակերպության կամ հիմնարկի դեպքում՝ փաստաթղթեր ՀՀ 4.6 ենթակետի համաձայն, որոնք հաստատում են.<br>● իրավաբանական և ֆինանսական ինքնուրույնությունը,<br>● գործելը առևտրային օրենքների հիման վրա,<br>● որ Հայտատուն Պատվիրատուից կախյալ կազմակերպություն չէ:<br>2. Ներառվում են կազմակերպության կանոնադրությունը, տնօրենների խորհրդի և շահառու սեփականատերերի ցանկը: [Եթե պահանջվում է ՄՏՖ 47.1-ի ներքո, հաջողակ Հայտատուն պետք է տրամադրի լրացուցիչ տեղեկություններ շահառու սեփականատիրոջ մասին՝ օգտագործելով Շահառու Սեփականատիրոջ Հայտարարագրման Ձև] |

**Ձև CON – 2. Չկատարված պայմանագրերի պատմություն, ընթացող դատական վեճ, դատական վեճերի պատմություն**

Հայտատուի անվանումը՝ _________________________

Ամսաթիվ՝ _________________________

Համատեղ ձեռնարկության անդամի անվանումը՝_________________________

ՀՆՀ No. և վերնագիրը՝

_______էջ_______ էջերից

| | | | |
|---|---|---|---|
| Չկատարված պայմանագրեր՝ **համաձայն III բաժնի (Գնահատման և որակավորման չափանիշներ)** | | | |
| ☐ Պայմանագիր չկատարելու դեպք տեղի չի ունեցել **2021 թ-ի հունվարի 1-ից**՝ համաձայն III բաժնի (Գնահատման և որակավորման չափանիշներ) 2.1 ենթաչափանիշի<br>☐ Չկատարված պայմանագիր(-րեր) **2021 թ-ի հունվարի 1-ից**՝ համաձայն III բաժնի (Գնահատման և որակավորման չափանիշներ) 2.1 պահանջի | | | |
| **Տարի** | **Պայմանագրի չկատարված մասը** | **Պայմանագրի նույնականացում** | **Պայմանագրի ընդհանուր գումարը (ընթացիկ արժեք, արժույթ, նշել փոխանակման կուրսը, եթե չկատարված պայմանագիրն արտարժույթով էր)** |
| *[նշել տարին]* | *[նշել գումարը և տոկոսը]* | Պայմանագրի նույնականացում: *[նշել Պայմանագրի անվանումը, համարը և այլ տեղեկություններ]*<br>Պատվիրատուի անվանում: *[նշել լրիվ անվանումը]*<br>Պատվիրատուի հասցեն: *[նշել փողոց, քաղաք, երկիր]*<br>Չկատարման պատճառը (-ները): *[նշել հիմնական պատճառը (-ները)]* | *[insert amount]* |
| Ընթացող դատական վեճ՝ համաձայն **III բաժնի (Գնահատման և որակավորման չափանիշներ)** | | | |
| ☐ Ընթացող դատական վեճ III բաժնի (Գնահատման և որակավորման չափանիշներ) 2.3 ենթաչափանիշի համաձայն չկա:<br>☐ Հետևյալ ընթացող դատական վեճ՝ III բաժնի (Գնահատման և որակավորման չափանիշներ) 2.3 ենթաչափանիշի համաձայն. | | | |

| **Վեճի տարեթիվը** | **Վեճի գումար (արժույթ)** | **Պայմանագրի նույնականացում** | **Պայմանագրի ընդհանուր գումարը (ընթացիկ արժեք, արժույթ, նշել փոխանակման** |
|---|---|---|---|

| | | | |
|---|---|---|---|
| | | | **կուրսը, եթե չկատարված պայմանագիրն արտարժույթով էր)** |
| | | Պայմանագրի նույնականացում՝<br>Պատվիրատուի անվանում՝<br>Պատվիրատուի հասցե՝<br>Վեճի առարկա: _______________<br>Կողմը ով նախաձեռնել է վեճը: _____<br>Վեճի կարգավիճակ: ____________ | |
| | | Պայմանագրի նույնականացում՝<br>Պատվիրատուի անվանում՝<br>Պատվիրատուի հասցե՝<br>Վեճի առարկա: _______________<br>Կողմը ով նախաձեռնել է վեճը: _____<br>Վեճի կարգավիճակ: ____________ | |

Դատական վեճերի պատմություն՝ համաձայն **III բաժնի (Գնահատման և որակավորման չափանիշներ)**

☐ Դատական վեճերի պատմություն **III բաժնի (Գնահատման և որակավորման չափանիշներ)** 2.4 ենթաչափանիշի համաձայն չկա:
☐ Հետևյալ դատական վեճերի պատմություն՝ **III բաժնի (Գնահատման և որակավորման չափանիշներ)** 2.4 ենթաչափանիշի համաձայն.

| **Վեճի տարեթիվը** | **Արդյունքը որպես ընդհանուր արժեքի տոկոս** | **Պայմանագրի նույնականացում** | **Պայմանագրի ընդհանուր գումարը (ընթացիկ արժեք, արժույթ, նշել փոխանակման կուրսը, եթե չկատարված պայմանագիրն արտարժույթով էր)** |
|---|---|---|---|

| | | | |
|---|---|---|---|
| *[նշել տարի]* | *[նշել ամիսը]* | Պայմանագրի նույնականացում: *[նշել Պայմանագրի անվանումը, համարը և այլ տեղեկություններ]*<br>Պատվիրատուի անվանում: *[նշել լրիվ անվանումը]*<br>Պատվիրատուի հասցեն: *[նշել փողոց, քաղաք, երկիր]*<br>Վեճի առարկա: *[նշել վեճի հիմնական* խնդիրները*]*<br>Կողմ, ով նախաձեռնել է վեճը: *[նշել "Պատվիրատու" or "Կապալառու"]*<br>Վեճի պատճառը (-ները) և դատարանի որոշումը: *[նշել հիմնական* պատճառը (-ները)*]* | *[insert amount]* |

**Ձև CON – 3: Բնապահպանական և սոցիալական կատարողականի հայտարարագիր**

*Հետևյալ աղյուսակը պետք է լրացվի Մրցույթ մասնակցի, ՀՁ յուրաքանչյուր անդամի և բոլոր մասնագիտացված ենթակապալառուների կողմից]*

Հայտատուի անվանումը՝ ________________________

Ամսաթիվ՝ ________________________

Համատեղ ձեռնարկության անդամի անվանումը՝________________________

ՀՆՀ No. և վերնագիրը՝

_______էջ_______ էջերից

<table>
<tr><td colspan="4">Բնապահպանական և սոցիալական կատարողականի հայտարարագիր<br>III բաժնի՝ «Որակավորման չափանիշներ և պահանջներ» համաձայն</td></tr>
<tr><td colspan="4">☐ Պայմանագրի կասեցում կամ դադարեցում չի եղել: Պատվիրատուին չի կասեցրել կամ դադարեցրել պայմանագիրը և/կամ բռնագանձել պայմանագրի կատարողական երաշխիքը բնապահպանական և սոցիալական (ԲՍ) կատարողականի պատճառով III բաժնի (Գնահատման չափանիշներ և պահանջներ) 2.5 կետում նշված ժամանակահատվածում:<br><br>☐ Հայտարարագիր պայմանագրի կասեցման կամ դադարեցման մասին: Հետևյալ պայմանագրերը կասեցվել կամ դադարեցվել են պատվիրատուի (ների) կողմից, և/կամ վերջինս բռնագանձվել է պայմանագրի կատարողական երաշխիքը բնապահպանական և սոցիալական (ԲՍ) կատարողականի պատճառով III բաժնի (Գնահատման չափանիշներ և պահանջներ) 2.5 կետում նշված ժամանակահատվածում:</td></tr>
<tr><th>Տարի</th><th>Պայմանագրի կասեցված կամ դադարեցված մասը</th><th>Պայմանագրի տվյալները</th><th>Պայմանագրի ընդհանուր գումարը (ընթացիկ արժեք, արժույթ, փոխանակման կուրս և US$ համարժեք)</th></tr>
<tr><td>[տարի]</td><td>[գումար և տոկոս]</td><td>Պայմանագրի նույնականացում: [նշել Պայմանագրի անվանումը, համարը և այլ տեղեկություններ]<br>Պատվիրատուի անվանում: [նշել լրիվ անվանումը]<br>Պատվիրատուի հասցեն: [նշել փողոց, քաղաք, երկիր]<br>Կասեցման/ դադարեցման պատճառը (ները) [նշել հիմնական պատճառը (ները), օրինակ՝ գենդերային բռնություններ, սեռական շահագործում կամ սեռական ոտնձգություն]</td><td>[գումար]</td></tr>
<tr><td>[տարի]</td><td>[գումար և տոկոս]</td><td>Պայմանագրի նույնականացում: [նշել Պայմանագրի անվանումը, համարը և այլ տեղեկություններ]<br>Պատվիրատուի անվանում: [նշել լրիվ անվանումը]<br>Պատվիրատուի հասցեն: [նշել փողոց, քաղաք, երկիր]<br>Կասեցման/ դադարեցման պատճառը (ները) [նշել հիմնական պատճառը (ները)]</td><td>[գումար]</td></tr>
</table>

<table>
<tr><td>...</td><td>...</td><td>[նշել բոլոր կիրառելի պայմանագրերը]</td><td>...</td></tr>
<tr><td colspan="4">Կատարողական երաշխիքը բռնագանձվել է պատվիրատուի (ների) կողմից ԲՍԱԱ կատարողական պատճառով</td></tr>
<tr><td>Տարի</td><td colspan="2">Պայմանագրի տվյալները</td><td>Պայմանագրի ընդհանուր գումարը (ընթացիկ արժեք, արժույթ, փոխանակման կուրս և US$ համարժեք)</td></tr>
<tr><td>[տարի]</td><td colspan="2">Պայմանագրի նույնականացում: [նշել Պայմանագրի անվանումը, համարը և այլ տեղեկություններ]<br>Պատվիրատուի անվանում: [նշել լրիվ անվանումը]<br>Պատվիրատուի հասցեն: [նշել փողոց, քաղաք, երկիր]<br>Կատարողական երաշխիքը բռնագանձման պատճառը (ները) [նշել հիմնական պատճառը (ները), օրինակ՝ գենդերային բռնություններ, սեռական շահագործում կամ սեռական ոտնձգություն]</td><td>[գումար]</td></tr>
<tr><td></td><td colspan="2"></td><td></td></tr>
</table>

**Ձև CCC. Պարտավորություններ ընթացիկ պայմանագրերի գծով / ընթացքի մեջ գտնվող պայմանագրեր**

Հայտատուի անվանումը՝ _________________________

Ամսաթիվ՝ _________________________

Համատեղ ձեռնարկության անդամի անվանումը՝________________________

ՀՆՀ No. և վերնագիրը՝

_______էջ_______ էջերից

Հայտատուն և ՀՁ-ի յուրաքանչյուր անդամ պետք է տեղեկատվություն տրամադրեն ընթացիկ պարտավորությունների մասին բոլոր շնորհված պայմանագրերի գծով, այն պայմանագրերի գծով, որոնց համար ստացել են ընդունման նամակ, ինչպես նաև ավարտին մոտեցող այն պայմանագրերի գծով, որոնց համար առանց վերապահումների վերջնական ավարտի վկայական դեռ չի թողարկվել:

| Պայմանագրի անվանում | Պատվիրատու, հասցե/հեռ./ ֆաքս | Չավարտված աշխատանքի արժեքը /ՀՀ դրամով/ | Ավարտի ակնկալվող ամսաթիվ | Միջին ամսական կատարողականը վերջին վեց ամիսների ընթացքում (ՀՀ դրամ/ամիս) |
|---|---|---|---|---|
| 1. | | | | |
| 2. | | | | |
| 3. | | | | |
| 4. | | | | |
| 5. | | | | |
| և այլն | | | | |

**Ձև FIN – 3.1. Ֆինանսական վիճակ և կատարողական**

Հայտատուի անվանումը՝ ________________________

Ամսաթիվ՝ ________________________

Համատեղ ձեռնարկության անդամի անվանումը՝________________________

ՀՆՀ No. և վերնագիրը՝

_______էջ_______ էջերից

**1. Ֆինանսական տվյալներ**

| **Ֆինանսական տեղեկատվության տեսակը (ՀՀ դրամով)** | **Տեղեկատվություն նախորդ 3 (երեք) տարիների համար (ՀՀ դրամով)** | | | | |
|---|---|---|---|---|---|
| | Տարի 1 | Տարի 2 | Տարի 3 | | |
| Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն (տեղեկություններ հաշվապահական հաշվեկշռից) | | | | | |
| Ընդամենը ակտիվներ (TA) | | | | | |
| Ընդամենը պարտավորություններ (TL) | | | | | |
| Ընդամենը սեփական կապիտալ (NW) | | | | | |
| Ընթացիկ ակտիվներ (CA) | | | | | |
| Ընթացիկ պարտավորություններ (CL) | | | | | |
| Շրջանառու միջոցներ (WC) /WC= (CA)-(CL)/ | | | | | |
| Տեղեկություններ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունից | | | | | |
| Ընդամենը եկամուտ (TR) | | | | | |
| Շահույթ մինչև հարկումը (PBT) | | | | | |
| Տեղեկություններ դրամական հոսքերի մասին | | | | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| Դրամական հոսքեր գործառնական գործունեությունից | | | | | |

**2. Միջոցների աղբյուրները**

Նշեք ներկայումս ընթացքի մեջ գտնվող, ինչպես նաև ապագա պայմանագրային պարտավորությունների գծով դրամական հոսքերի պահանջները բավարարելու աղբյուրները:

| No. | Միջոցների աղբյուր | Գումար և արժույթ |
|---|---|---|
| 1 | | |
| 2 | | |
| 3 | | |
| | | |

**2. Ֆինանսական փաստաթղթեր**

Հայտատուն և նրա կողմերը պետք է ներկայացնեն վերջին **3 (երեք) տարիների (2023-2025 թթ.)** ֆինանսական հաշվետվությունները՝ III բաժնի (Գնահատման և որակավորման չափանիշներ) 3.2 ենթաչափանիշի համաձայն: ֆինանսական հաշվետվությունները պետք է՝

(ա) արտացոլեն Մրցույթի մասնակցի կամ ՀՁ անդամի, այլ ոչ դուստր կամ մայր ընկերության ֆինանսական վիճակը,

(բ) պետք է անցած լինեն աուդիտ կամ լինեն վկայագրված տեղական օրենսդրության համաձայն,

(գ) լինեն ամբողջական՝ այդ թվում ներառեն ֆինանսական հաշվետվությունների բոլոր ծանոթագրությունները,

(դ) վերաբերեն արդեն ավարտված և աուդիտ անցած հաշվապահական ժամանակաշրջաններին:

- Կից ներկայացվում են վերջին **3 (երեք) տարիների** [10] պահանջված ***(ֆինանսական կարգավիճակի մասին հաշվետվություն/հաշվապահական հաշվեկշիռ, շահույթահարկի մասին հաշվետվություն և այլն)*** և վերոնշյալ պայմաններին բավարարող ֆինանսական հաշվետվությունները:

[10] *Եթե ամենավերջին ֆինանսական հաշվետվությունների ժամանակաշրջանը 12 ամսից պակաս է՝ սկսած մրցույթի ամսաթվից, անհրաժեշտ է բերել դրա հիմնավորումը:*

**Ձև FIN - 3.2. Շինարարական աշխատանքների տարեկան շրջանառությունը**

Մրցույթի մասնակցի անվանումը ՝ ________________________

Ամսաթիվ՝ ________________________

Համատեղ ձեռնարկության անդամի անվանումը՝________________________

Մրցույթի No________________________

**Լոտ#...: [նշել լոտի համարը]**

_______էջ_______ էջերից

| | Տվյալներ տարեկան շրջանառության մասին (միայն շինարարության գծով) | | |
|---|---|---|---|
| **Տարի** | **Գումար**<br>**Արժույթ** | **Փոխանակման կուրս՝ եթե արտարժույթով է** | **Համարժեքը Պատվիրատուի երկրի արժույթով** |
| *[նշել տարի]* | *[նշել գումար և արժույթ]* | | |
| | | | |
| | | | |
| | | | |
| | | | |
| *Շինարարական աշխատանքների տարեկան շրջանառությունը* * | | | |

* Տես **III բաժին (Գնահատման և որակավորման չափանիշներ)** 3.2 ենթաչափանիշ:

**Ձև FIN - 3.3. Ֆինանսական ռեսուրսներ**

**Լոտ#...: [նշել լոտի համարը]**

Նշեք ֆինանսավորման առաջարկվող աղբյուրները, ինչպես օրինակ՝ իրացվելի ակտիվներ, չգրավադրված գույք, վարկային գիծ, այլ ֆինանսական միջոցներ՝ հանած ընթացիկ պարտավորությունները, որոնք մատչելի կլինեն խնդրո առարկա հանդիսացող պայմանագրի կամ պայմանագրերի դրամային հոսքի պահանջները բավարարելու համար, ինչպես նշված է **III բաժնում (Գնահատման և որակավորման չափանիշներ)**:

| Ֆինանսավորման աղբյուր | Գումար (ՀՀ դրամ) |
|---|---|
| 1. | |
| 2. | |
| 3. | |
| 4. | |

**Ձև EXP - 4.1. Ընդհանուր շինարարական փորձ**

Մրցույթի մասնակցի անվանումը ` ___________________________
Ամսաթիվ՝ ___________________________
Համատեղ ձեռնարկության անդամի անվանումը՝___________________________
Մրցույթի No___________________________
**Լոտ#...: [նշել լոտի համարը]**
________էջ________ էջերից

| Սկիզբ տարի | Ավարտ Տարի | Պայմանագրի նույնականացում | Մրցույթի մասնակցի դերը |
|---|---|---|---|
| | | Պայմանագրի անվանումը՝ _____________________<br>Մրցույթի մասնակցի կողմից իրականացվող Աշխատանքների համառոտ նկարագրություն՝<br>_________________________________<br>Պայմանագրի գումար՝ _________________________<br>Պատվիրատուի անվանումը՝ ___________________<br>Հասցե՝ _________________________________ | |
| | | Պայմանագրի անվանումը՝ _____________________<br>Մրցույթի մասնակցի կողմից իրականացվող Աշխատանքների համառոտ նկարագրություն՝<br>_________________________________<br>Պայմանագրի գումար՝ _________________________<br>Պատվիրատուի անվանումը՝ ___________________<br>Հասցե՝ _________________________________ | |
| | | Պայմանագրի անվանումը՝ _____________________<br>Մրցույթի մասնակցի կողմից իրականացվող Աշխատանքների համառոտ նկարագրություն՝<br>_________________________________<br>Պայմանագրի գումար՝ _________________________<br>Պատվիրատուի անվանումը՝ ___________________<br>Հասցե՝ _________________________________ | |

**Ձև EXP - 4.2(ա). Հատուկ շինարարական և պայմանագրի կառավարման փորձ**

Մրցույթի մասնակցի անվանումը ` ________________________
Ամսաթիվ՝ ________________________
Համատեղ ձեռնարկության անդամի անվանումը՝________________________
Մրցույթի No________________________
**Լոտ#...: [նշել լոտի համարը]**

_______էջ_______ էջերից

<table>
<tr><th>Համանման պայմանագիր No.</th><th colspan="4">Տեղեկություններ</th></tr>
<tr><td>Պայմանագրի նույնականացում</td><td colspan="4"></td></tr>
<tr><td>Շնորհման ամսաթիվ</td><td colspan="4"></td></tr>
<tr><td>Ավարտման ամսաթիվ</td><td colspan="4"></td></tr>
<tr><td>Դերը պայմանագրում</td><td>Գլխավոր կապալառու<br>☐</td><td>ՀՁ անդամ<br>☐</td><td>Կառավարման կապալառու<br>☐</td><td>Ենթակա պալառու<br>☐</td></tr>
<tr><td>Պայմանագրի ընդհանուր գումար և արժույթ</td><td colspan="2"></td><td colspan="2">Պատվիրատուի երկրի արժույթ</td></tr>
<tr><td>Եթե ՀՁ-ի անդամ է կամ ենթակապալառու, նշել պայմանագրի ընդհանուր գումարի մասնակցության մասը</td><td></td><td></td><td colspan="2"></td></tr>
<tr><td>Պատվիրատուի անունը՝</td><td colspan="4"></td></tr>
<tr><td>Հասցե՝<br>Հեռախոս/ֆաքս՝<br>Էլ. փոստ՝</td><td colspan="4"></td></tr>
</table>

**Ձև EXP - 4.2(ա) Հատուկ շինարարական և պայմանագրի կառավարման փորձ (շարունակություն)**
**Լոտ#...: [նշել լոտի համարը]**

| **Համանման պայմանագիր No.** | **Տեղեկատվություն** |
|---|---|
| Նմանության նկարագրություն՝ համաձայն **Բաժին III-ի (Գնահատման և որակավորման չափանիշներ)** 4.2 (ա) ենթաչափանիշի | |
| 1. Գումար | |
| 2. Պահանջվող աշխատանքի տեսակի ծավալը | |
| 3. Բարդությունը | |
| 4. Մեթոդներ/Տեխնոլոգիա | |
| 5. Հիմնական աշխատանքների չափանիշը | |
| 6. այլ տեղեկատվություն | |

***Անհրաժեշտ է կցել նախկինում իրականացված պայմանագրի(երի) պատճենները (այդ թվում աշխատանքի ծավալների ցուցակները և վերջնական ավարտման վկայագրերը)՝ ցույց տալու հատուկ որակավորման պահանջներն ըստ Բաժին III՝ «Գնահատման և որակավորման չափանիշներ, 4. Փորձառություն»:***

# Բաժին V - Իրավասու երկրներ

### Բանկի կողմից ֆինանսավորվող գնումներում ապրանքներ, աշխատանքներ և ծառայություններ տրամադրելու իրավասությունը

1. Որպես ՀՀ 4.7 և 5.1 կետերի վկայակոչում, ինչպես նաև ի գիտություն մրցույթի մասնակիցներին, ներկայումս Մրցութային ընթացակարգից հանվել են հետևյալ երկրների ընկերությունները և այդտեղից ստացվող ապրանքներն ու ծառայությունները:

ՀՀ 4.7 (ա) և 5.1 կետերով` **չկան**
ՀՀ 4.7 (բ) և 5.1 կետերով` **չկան**

# Բաժին VI - Բանկի քաղաքականություն. Կաշառակերություն և խարդախություն

(VI բաժինը չի փոփոխվում)

**1. Նպատակ**

1.1. Բանկի Հակակոռուպցիոն Ուղեցույցներն ու սույն հավելվածը կիրառվում են Համաշխարհային Բանկի Ներդրումային Ծրագրերի Ֆինանսավորման (ՎԶՄԲ) շրջանակներում իրականացվող գնումների նկատմամբ:

**2. Պահանջներ**

2.1. Բանկը պահանջում է, որ Փոխառուները (ներառյալ Բանկի ֆինանսավորման շահառուները), հայտատուները (դիմորդներ/առաջարկատուներ), խորհրդատուները, կապալառուները և մատակարարները, ինչպես նաև նրանց ենթակապալառուները, ենթախորհրդատուները, ծառայություն մատուցողները կամ մատակարարները և նրանց գործակալները (հայտարարված կամ չհայտարարված), ինչպես նաև նրանց անձնակազմը՝ ղեկավարվեն էթիկայի բարձր չափանիշներով՝ Բանկի ֆինանսավորմամբ պայմանագրերի գնման գործընթացում, ընտրության և կատարման ընթացքում; զերծ մնան խարդախությունից և կոռուպցիայից:

**2.2. Այդ նպատակով Բանկը.**

ա. Սահմանում է ստորև բերված հասկացությունները՝ այս դրույթի շրջանակներում.

i. «Կոռուպցիոն գործելակերպ»՝ արժեք ունեցող ցանկացած իրի Հայտում, ստացում կամ պահանջում, ուղղակի կամ անուղղակի ճանապարհով՝ այլ կողմի գործունեության վրա անօրինական ազդեցություն ունենալու նպատակով.

ii. «Խարդախ գործելակերպ»՝ ցանկացած գործողություն կամ բացթողում, ներառյալ փաստերի միտումնավոր սխալ ներկայացումը, որն ուղղված է մոլորություն առաջացնելուն կամ փորձում է մոլորեցնել կողմի մոտ՝ ֆինանսական կամ այլ օգուտ ստանալու կամ պարտավորություններից խուսափելու համար.

iii. «Գաղտնի համաձայնություն»՝ երկու կամ ավելի կողմերի միջև համաձայնություն՝ անօրինական նպատակների հասնելու համար, ներառյալ այլ կողմի գործունեության վրա անօրինական ազդեցություն ունենալը.

iv. «Հարկադրանք»՝ ուղղակի կամ անուղղակի կերպով վնաս հասցնելը կամ սպառնալը վնաս հասցնել որևէ կողմի կամ կողմի սեփականությանը՝ այլ կողմի գործունեության վրա անօրինական ազդեցություն ունենալու նպատակով.

v. «Խոչընդոտում»՝ ա) հետաքննության նյութերը միտումնավոր վերացնելը, փոփոխելը, կեղծելը կամ թաքցնելը կամ սուտ ցուցմունքներ տալը՝ ըստ էության խոչընդոտելու Բանկի հետաքննությունը՝ կապված կոռուպցիայի, խարդախության, հարկադրանքի կամ գաղտնի համաձայնության վերաբերյալ հայտարարությունների հետ; և/կամ սպառնալը, հետապնդելը կամ ահաբեկելը՝ խոչընդոտելու ցանկացած կողմի տեղեկությունների տարածումը կամ հետաքննությունը պահանջելը. բ) գործողություններ, որոնք ըստ էության խոչընդոտում են Բանկի ստուգման և աուդիտի իրավունքների իրագործմանը՝ նախատեսված 2.2-ե կետով.

բ. Մերժում է պայմանագրի շնորհման Հայտը, եթե Բանկը պարզում է, որ առաջարկվող ընկերությունը կամ անհատը, նրա որևէ աշխատակից, գործակալ, ենթախորհրդատու, ենթակապալառու, ծառայություն մատուցող, մատակարար և/կամ նրանց աշխատակիցները, ուղղակի կամ անուղղակի ներգրավված են եղել կոռուպցիոն, խարդախության, գաղտնի համաձայնության, հարկադրանքի կամ խոչընդոտման գործելակերպերում՝ տվյալ պայմանագրի համար մրցակցության ընթացքում:

գ. Բացի համապատասխան իրավական համաձայնագրում նախատեսված իրավական միջոցներից, Բանկը կարող է ձեռնարկել այլ համապատասխան քայլեր, ներառյալ մրցույթի

արդյունքների չեղարկումը, եթե ցանկացած պահին պարզվի, որ Փոխառուի կամ վարկի միջոցներից որևէ մասի շահառուի ներկայացուցիչները գնումների գործընթացում, ընտրության կամ/և պայմանագրի կատարման ընթացքում ներգրավված են եղել կոռուպցիոն, խարդախության, գաղտնի համաձայնության, հարկադրանքի կամ խոչընդոտման գործելակերպերում, իսկ Փոխառուն ժամանակին չի ձեռնարկել Բանկի կողմից բավարար համարվող և պատշաճ քայլեր՝ այդ գործելակերպերը վերացնելու համար, ներառյալ՝ այդ դեպքերի մասին Բանկին ժամանակին տեղեկացնելու անհաջողությունը:

դ. Համաձայն Բանկի Հակակոռուպցիոն Ուղեցույցների և Բանկի գործող պատժամիջոցների քաղաքականության և ընթացակարգերի, Բանկը կարող է պատժամիջոցներ կիրառել ընկերության կամ անհատի նկատմամբ՝ կամ անժամկետ, կամ որոշակի ժամանակով, ներառյալ նրանց հրապարակային անվավեր ճանաչելը հետևյալ դեպքերում.

(i) Բանկի ֆինանսավորմամբ պայմանագրի ստացման կամ այլ կերպ դրանից օգտվելու իրավունքի զրկումը՝ ֆինանսապես կամ այլ ձևով[11];

(ii) Բանկի ֆինանսավորմամբ պայմանագրի արժանացած որևէ կազմակերպության կողմից առաջադրված[12] ենթակապալառու, խորհրդատու, արտադրող կամ մատակարար, կամ ծառայություն մատուցող նշանակվելու արգելքը;

(iii) Բանկի կողմից տրամադրված վարկի միջոցներից օգտվելու, կամ Բանկի կողմից ֆինանսավորվող որևէ ծրագրի նախապատրաստման կամ իրագործման մեջ հետագայում մասնակցելու հնարավորության բացառումը:

ե. Պահանջում է, որ Բանկի վարկով ֆինանսավորվող պայմանագրերում և հայտադիմումների/առաջարկների հրավերների փաստաթղթերում ներառվի դրույթ, որը պահանջում է, որ հայտատուները (դիմորդներ/առաջարկատուներ), խորհրդատուները, կապալառուները, մատակարարները և նրանց ենթակապալառուները, ենթախորհրդատուները, ծառայություն մատուցողները, մատակարարները, գործակալները և անձնակազմը թույլ տան Բանկին ուսումնասիրել[13] բոլոր հաշիվները, հաշվետվությունները և այլ փաստաթղթեր, որոնք վերաբերում են գնումների գործընթացին, ընտրության կամ/և պայմանագրի կատարմանը, ինչպես նաև դրանց աուդիտ իրականացնել Բանկի նշանակած աուդիտորների կողմից:

---

[11] Հասկանալու պարզեցման համար՝ պատժամիջոցների ենթարկված կողմի՝ պայմանագրի ստացման անիրավազորությունը ներառում է, բայց չի սահմանափակվում՝ (i) նախաորակավորման հայտի ներկայացմամբ, խորհրդատվական ծառայությունների նկատմամբ հետաքրքրություն հայտնելով կամ հայտ ներկայացնելով՝ ուղղակի կամ որպես առաջադրված ենթակապալառու, խորհրդատու, արտադրող կամ մատակարար, կամ ծառայությունների մատուցող; (ii) գործող պայմանագրի որևէ հավելվածի կամ փոփոխության կնքումով, որն առաջացնում է էական փոփոխություն:

[12] Առաջադրված ենթակապալառուն, խորհրդատուն, արտադրողը կամ մատակարարը, կամ ծառայությունների մատուցողը (տարբեր տերմիններ են օգտագործվում՝ կախված հայտադիմումի փաստաթղթից) այն անձ կամ կազմակերպությունն է, որը՝ (i) հայտատուն ներառել է իր նախաորակավորման հայտում կամ մրցութային առաջարկում, քանի որ այն ապահովում է հատուկ և կարևոր փորձառություն ու հմտություններ, որոնք թույլ են տալիս հայտատուին բավարարել տվյալ մրցույթի որակավորման պահանջները; կամ (ii) նշանակվել է Փոխառուի կողմից:

[13] Ստուգումները այս համատեքստում սովորաբար լինում են հետաքննական (այսինքն՝ փորսենզիկ) բնույթի: Դրանք ներառում են փաստահավաք գործողություններ, որոնք իրականացվում են Բանկի կամ Բանկի նշանակած անձանց կողմից՝ կապված հետաքննությունների/աուդիտների հատուկ հարցերի ուսումնասիրության հետ, օրինակ՝ հնարավոր խարդախության և կոռուպցիայի վերաբերյալ հայտարարության իսկությունը գնահատելու նպատակով՝ համապատասխան մեխանիզմների միջոցով: Նման գործողությունները ներառում են, բայց չեն սահմանափակվում՝ ընկերության կամ անհատի ֆինանսական հաշվետվությունների և տվյալների հասանելիություն, դրանց ուսումնասիրություն և պատճենահանում, ինչպես անհրաժեշտ է; ցանկացած այլ փաստաթղթի, տվյալների և տեղեկությունների (անկախ ձևաչափից՝ թղթային կամ էլեկտրոնային) հասանելիություն և ուսումնասիրություն, որոնք համարվում են համապատասխան հետաքննության/աուդիտի համար, և դրանց պատճենահանում, ինչպես անհրաժեշտ է; աշխատակիցների և այլ համապատասխան անձանց հարցազրույցներ; ֆիզիկական ստուգումներ և վայրեր այցելություններ; երրորդ կողմի կողմից տրամադրված տվյալների ճշտման գործընթաց:

# ՄԱՍ 2

# Աշխատանքներին ներկայացվող պահանջներ

# Բաժին VII - Աշխատանքներին ներկայացվող պահանջներ

# ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՇՐՋԱՆԱԿԸ և ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՄԱՍՆԱԳՐԵՐ

## «RESILAND․ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴԻՄԱԿԱՅՈՒՆ ԼԱՆԴՇԱՖՏՆԵՐ» ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ
## Լոռի մարզում անտառների վերականգնման աշխատանքներ

**Ներածություն և նախապատմություն**

«RESILAND: Հայաստանի դիմակայուն լանդշաֆտներ» դրամաշնորհային ծրագրի ռազմավարական առաջնահերթություններից մեկը դեգրադացված անտառային էկոհամակարգերի վերականգնումն ու անտառածածկույթի խտության բարձրացումն է ծրագրի թիրախային շրջաններում: Բաղադրիչ 2․ լանդշաֆտի ինտեգրված վերականգնման շրջանակներում Ծրագիրը նախատեսում է անտառապատման և/կամ անտառվերականգնման համակարգված միջոցառումների իրականացում, ինչպես նաև անհրաժեշտության դեպքում օժանդակ բնական վերականգնման միջոցառումների խթանում:

Սույն միջամտությունները նպատակ ունեն վերականգնել էկոլոգիական գործառնականությունը, բարելավել էկոհամակարգի դիմակայունությունը, մեծացնել ածխածնային կլանման ներուժը, նվազեցնել հողերի քայքայման ռիսկերը և ամրապնդել կենսաբազմազանության պահպանումը: Գործողությունները պետք է իրականացվեն հաստատված տեղանքի վերականգնման պլանների, բնապահպանական և սոցիալական պահպանության պահանջների, ինչպես նաև կիրառելի անտառտնտեսությունների ազգային և շրջակա միջավայրի չափորոշիչների համաձայն:

**Ծրագրի իրականացման կազմակերպում**

ՇՄՆ «Բնապահպանական ծրագրերի իրականացման գրասենյակ» (ԲԾԻԳ) ՊՀ-ն հանդիսանում է «RESILAND․ Հայաստանի դիմակայուն լանդշաֆտներ» ծրագրի իրականացնող մարմինը և սույն առաջադրանքի շրջանակում հանդես է գալիս որպես Պատվիրատու: ԲԾԻԳ-ը, որպես Պատվիրատու, նախատեսում է ներգրավել աշխատանքներ իրականացնող կազմակերպություն (այսուհետ՝ Կապալառու)՝ սույն առաջադրանքի շրջանակում նախատեսված անտառվերականգնման աշխատանքների իրականացման համար:

**Առաջադրանքի նպատակներ**

Սույն առաջադրանքի հիմնական նպատակը Լոռու մարզում անտառվերականգնման աշխատանքների իրականացումն է «Հայանտառ» ՊՈԱԿ-ի Վանաձորի (մոտ 82.25 հա), Ստեփանավանի (մոտ 21.49 հա) և Տաշիրի (մոտ 65.88 հա) անտառտնտեսություններում:

Թիրախային տարածքները հանդիսանում են մասնատված խառն անտառներ, որոնց վերականգնման վերջնական սահմանները պետք է համաձայնեցվեն «Հայանտառ» ՊՈԱԿ-ի հետ:

Վերականգնման աշխատանքներից ակնկալվող արդյունքներն են անտառների մասնատվածության նվազեցումը, անտառային տարածքների շարունակականության բարձրացումը, անտառային էկոհամակարգերի բազմազանեցումը, անտառային կենսաբազմազանության պայմանների բարելավումը և անտառային էկոհամակարգերի դիմակայունության բարձրացումը կլիմայական սթրեսների նկատմամբ:

**Աշխատանքների շրջանակ**

Կապալառուն պարտավոր է.

(i) իրականացնել նախնական ուսումնասիրություն՝ տարածքների վերականգնման հնարավորությունը գնահատելու համար, ներառյալ վերականգնման մոտեցումը, (ii) յուրաքանչյուր երեք (3) ենթատարածքների համար իրականացնել բնապահպանական և սոցիալական սկրինինգ և մշակել Բնապահպանական և սոցիալական կառավարման պլան (ԲՍԿՊ), (iii) մշակել տնկման պլան՝ վերականգնման աշխատանքների իրականացման համար, որը պետք է ներառի նաև աշխատանքների ծավալների ցուցակը (ԾԾՑ/BOQ) և վերականգնման միջոցառումների իրականացման համար անհրաժեշտ ծախսերի հաշվարկը, (iv) իրականացնել վերականգնման աշխատանքները՝ համաձայն հաստատված տնկման պլանի:

**Տարածքների հստակեցում**

- Հիմնվելով անտառկառավարման պլանների վրա հավաքագրել տվյալե ր և հստակեցնել տարածքները քարտեզագրելով այն: Հողերի քարտեզների նախնական տարբերակը կտրամադրվի պատվիրատուի կողմից: Աշխատանքների ամբողջ ընթացքը համաձայնեցնել «Հայանտառ» ՊՈԱԿ-ի, ինչպես նաև ԲԾԻԳ-ի հետ:
- «Հայանտառ» ՊՈԱԿ-ի և Պատվիրատուի հետ համագործակցությամբ հստակեցնել յուրաքանչյուր հողամասի սահմանները:

Կապալառուն պարտավոր է քարտեզների ճշգրտման և հստակեցման փուլում, Պատվիրատուի և «Հայանտառ» ՊՈԱԿ-ի հետ համագործակցությամբ, ապահովել, որ անտառատնկման համար նախատեսված բոլոր հողամասերը հանդիսանան բացառապես «Հայանտառ» ՊՈԱԿ-ի սեփականությունը կամ նրա տնօրինման ներքո գտնվող տարածքներ:

Կապալառուն պարտավոր է ուսումնասիրել հողամասերի իրավական կարգավիճակը՝ Պատվիրատուի կողմից տրամադրված փաստաթղթերի հիման վրա, և բացառել այնպիսի տարածքների ներառումը, որոնք՝

ա) պատկանում են այլ ֆիզիկական կամ իրավաբանական անձանց, բ) գտնվում են համայնքային կամ մասնավոր սեփականության ներքո,

գ) ծանրաբեռնված են երրորդ անձանց իրավունքներով (վարձակալություն, սերվիտուտ, օգտագործման այլ իրավունքներ և այլն), եթե այդ իրավունքները կարող են խոչընդոտել վերականգնման աշխատանքների իրականացումը:

Անտառտնկման համար կարող են ընտրվել միայն այն հողամասերը, որոնք ամբողջությամբ պատկանում են կամ օրենքով սահմանված կարգով տրամադրված են «Հայանտառ» ՊՈԱԿ-ին:

Կապալառուն պատասխանատվություն է կրում ներկայացված քարտեզների տեխնիկական ճշգրտության և սահմանների քարտեզագրական համապատասխանության համար:

**Բնապահպանական և սոցիալական հետազոտություն (սկրինինգ)**

Կատարել ուսումնասիրություն՝ պարզելու համար, թե ինչպես են համայնքները (ֆորմալ և ոչ ֆորմալ ձևերով) օգտագործում հողերն ու այլ բնական ռեսուրսները՝ երեք ընտրված տարածքներում:

Ստուգել հողի սեփականության և օգտագործման իրավունքները նպատակային տարածքներում և դրանց շուրջ՝ վեճերը կամ ակամա բացառումները կանխելու համար:

Նույնականացնել այն տնային տնտեսություններին կամ խմբերին, որոնց կենսապահովման միջոցները (վառելափայտի հավաքում, կենդանիների արածեցում, ոչ բնափայտային անտառանյութ և այլն) կարող են ենթարկվել ազդեցության վերականգնողական գործողություններից, ցանկապատմամբ, ինչպես նաև տարածքի պաշտպանական միջոցառումներով պայմանավորված մուտքի սահմանափակումներից:

Գնահատել թիրախային տարածքներում անտառապատման/ անտառվերականգնման միջոցառումներ իրականացվելու համար անհրաժեշտ ներկայիս ռեսուրսօգտագործման սահմանափակումների հավանականությունն ու ծավալը: Գնահատել նաև կանանց, ինչպես նաև խոցելի և մարգինալացված խմբերի վրա հնարավոր տարբերակված ազդեցությունները:

Տեղական համայնքների հետ իրականացնել խորհրդակցություններ (ներառյալ ֆոկուս խմբային քննարկումներ)՝ գնահատելու նրանց վերաբերմունքը նախատեսվող միջամտությունների և դրանց վերաբերվող սահմանափակումների նկատմամբ, ինչպես նաև պարզելու օգուտների բաշխման վերաբերյալ համայնքային ակնկալիքները:

Ուսումնասիրել համայնքի անդամների, տնտեսվարողների և տեղական իշխանությունների միջև հնարավոր սոցիալական լարվածությունները (օրինակ՝ անօրինական անտառահատումների դեմ վերահսկողության կամ ռեսուրսների անհավասար հասանելիության շուրջ):

Համագործակցել Լոռու անտառտնտեսությունների հետ՝ հասկանալու անտառների պահպանության և կառավարման ոլորտում առկա խնդիրները, ներառյալ նրանց ունեցած տեղեկատվությունը անօրինական

անտառօգտագործման դեպքերի մասին, էկոպարեկի ներգրավվածության դեպքերը, ինչպես նաև պատմական/կրկնվող հակամարտությունները՝ կապված անտառի կոմերցիոն և համայնքային օգտագործողների միջև:

Ուսումնասիրել թիրախային տարածքների սահմաններից դուրս անտառի էկոհամակարգային ծառայությունները և գնահատել դրանց վրա սպասվող ազդեցությունները նախատեսված միջամտությունից հետո:

Բացահայտել անտառի վերականգնման աշխատանքների հետևանքով բնական և/կամ սոցիալական միջավայրի վրա հնարավոր ցանկացած բացասական ժամանակավոր ազդեցություն (ծառայողական մեքենաների տեղաշարժ և կայանում, ցանկապատերի և/կամ այլ պաշտպանիչ կառուցվածքների տեղադրում, աշխատուժի ներկայության պատճառով վայրի բնության խաթարման և հրդեհների ռիսկ և այլն):

Ստուգել համայնքի անդամների համար բողոքների լուծման ուղիների առկայությունը և մատչելիությունը և անհրաժեշտության դեպքում առաջարկել դրանց ամրապնդման:

## 4.3 ԲՍԿՊ կազմում

Կազմել տեղանքի ուսումնասիրության և շրջակա միջավայրի ու սոցիալական սկրինինգի արդյունքները, վերլուծել տվյալները և ստեղծել բնապահպանական և սոցիալական կառավարման մատրիցա, որը ներառում է ազդեցության մեղմացման և մշտադիտարկման պլաններ: Մշակել Վանաձորի, Ստեփանավանի և Տաշիրի թիրախային տարածքներում անտառների վերականգնման համար նախատեսված երեք տեղանքներին բնորոշ ԲՍԿՊ-ներ: Կառուցել ԲՍԿՊ-ները՝ ստորև առաջարկվող կետերին համաձայն՝

Ծրագրի նկարագրություն. անտառների կառավարման պլանի համառոտ նկարագրություն, վերականգնման ենթակա տեղամասերի կարգավիճակը և անտառվերականգնման շրջանակում նախատեսված գործողությունների տեսակները:

Կարգավորիչ պահանջներ՝ նախատեսված գործողություններն իրականացնելու համար ՀՀ ազգային օրենսդրությամբ պահանջվող արտոնագրերի, թույլտվությունների, համաձայնագրերի և այլնի տեսակները:

Ելակետային տեղեկություններ՝ (i) տեղանքի լանդշաֆտի, կլիմայական պայմանների, հողերի և ջրաբանության վերաբերյալ, (ii) հողի սեփականության և օգտագործողների իրավունքների վերաբերյալ, (iii) տեղամասերում բնական ռեսուրսների ներկայիս օգտագործման օրինաչափությունների վերաբերյալ (հող, ջուր, փայտանյութ, վառելափայտ, ոչ բնափայտային անտառանյութ, գյուղատնտեսական կենդանիների արածեցում, ռեկրեացիոն նպատակներով օգտագործում և այլն)՝ այդ թվում թե՛ ֆորմալ և թե՛ ոչ ֆորմալ ձևաչափերով, (iv) թիրախային տարածքում անտառի կողմից մատուցվող էկոհամակարգային ծառայությունների վերաբերյալ, (v) անտառօգտագործման մրցակցային շահերի, սոցիալական լարվածությունների, ինչպես նաև անտառօգտագործման կանոնակարգերի խախտումների հաճախականության և առավել տարածված տեսակների վերաբերյալ:

Վերականգնողական աշխատանքների, մատղաշ տնկարկների ակտիվ պահպանման և դրանից հետո նախատեսված միջամտությունների ռիսկերը և հնարավոր ազդեցությունները (դրական և բացասական), ինչպես նաև հնարավոր բացասական ազդեցությունները վերացնելու միջոցառումները:

Անտառների վերականգնման տարբեր փուլերում շրջակա միջավայրի և սոցիալական կատարողականի մշտադիտարկման պլան (վերականգնողական աշխատանքներ, մատղաշ տնկարկների ակտիվ պահպանում, վերականգնված անտառային տարածքների կանոնավոր կառավարում):

Ներկայացնել մեղմացման և մշտադիտարկման պլանները երկու աղյուսակների տեսքով՝ հակիրճ և կոնկրետ գրառումներով, որոնք մասնագետների համար պարզ և հարմար են օգտագործման համար: Աղյուսակները կազմելու համար օգտագործել կից ձևանմուշները (Հավելված 1):

## 4.4 Համապատասխան տնկանյութի ընտրություն

- Յուրաքանչյուր տարածքի համար մշակել վերականգնման պլան՝ հաշվի առնելով տեխնիկական առաջադրանքում ներկայացված ծառատեսակների կազմն ու դրանց հարաբերակցությունը: Ծառատեսակների ընտրությունն ու հարաբերակցությունը հիմնված են անտառկառավարման պլանների վրա՝ հաշվի առնելով հողի, հիդրոլոգիայի և այլ կենսաֆիզիկական չափանիշների գնահատումը: Վերականգնման պլանը պետք է ապահովի տարածքի էկոլոգիական հավասարակշռության վերականգնումը, կենսաբազմազանության պահպանումը և երկարաժամկետ կայունությունը:

- Սահմանել հողի նախապատրաստման մեթոդները (խրամատների կամ փոսերի փորում), ինչպես նաև բնական վերականգնման կիրառումը՝ ելնելով տարածքի պայմաններից:

- Յուրաքանչյուր տարածքի համար պետք է մշակել Տնկման պլան՝ ելնելով տեղային պայմաններից: Պլանը պետք է ներառի սերմնաբուսակների ընտրությունը, տեսակների հարաբերակցությունը, տեխնիկական առաջադրանքում սահմանված տեսակային կազմը, տնկման մեթոդները, տնկման խտությունը, ծառատեսակների տոկոսային բաշխվածությունը, ինչպես նաև ցանկապատման անհրաժեշտությունը: Հնարավոր փոփոխությունները պետք է լինեն հիմնավորված և համապատասխանեն անտառային մասնատվածության վերացման ու էկոհամակարգի վերականգնման նպատակներին: Տնկման պլանը պետք է նաև գնահատի այն տարածքը, որը կստանա դրական ազդեցություն՝ շնորհիվ էկոլոգիական կապակցվածության բարելավման և մասնատվածության նվազեցման՝ վերականգնման միջամտության արդյունքում 169.2 հա տարածքում: Տնկման պլանում պետք է ներառվեն բնական վերականգնման միջոցառումներ և ԲԾԻԳ-ի կողմից տրամադրվող այլ լավագույն փորձեր՝ ապահովելու տարածքի համապարփակ, էկոլոգիապես նպատակահարմար և տնտեսապես արդյունավետ վերականգնում:

- Սահմանել աշխատանքների ժամանակացույցը (տնկում, խնամք և մոնիթորինգ):

## 4.4 Տնկման և վերականգնման պլանի մշակում

**Հողի նախապատրաստում.** Սերմնաբուսակների տնկման համար հողի նախապատրաստումը պետք է իրականացվի **խրամատների** ,**փոսերի** կամ անտառկառավարման պլանով նախատեսված այլ միջոցառումների պատրաստման միջոցով՝ կախված թեքությունից և էկոլոգիական պայմաններից:

**Խրամատներում տնկման դեպքում՝**

միջխրամատային հեռավորությունը կազմում է 3 մետր, իսկ միջբույսայինը՝ 1 մետր:

**Փոսային տնկման դեպքում՝**

Փոսերում տնկման դեպքում միջշարային հեռավորությունը պետք է կազմի 3մ, իսկ սերմնաբուսակների հեռավորությունը՝ 1մ:

Բաց արմատային համակարգ ունեցող սերմնաբուսակների համար փոսի չափերը պետք է լինեն 0.3 × 0.3 × 0.3 մ, իսկ փակ արմատային համակարգով սերմնաբուսակների համար՝ 0.4 × 0.4 × 0.4 մ:

Տնկիների տնկման խտությունը բոլոր տարածքներում նախատեսված է 1հա-ում **3000 սերմնաբուսակ:**

**Տեխնիկական պահանջներ ցանկապատի կառուցման համար**

- Տնկման աշխատանքներից առաջ անհրաժեշտության դեպքում նախատեսվում է անտառվերականգնման տարածքների շուրջ կառուցել ցանկապատ, որը պետք է բաղկացած լինի 4 հորիզոնական և 2 անկյունագծային փշալարերից, ինչպես նաև դարպասից: Ցանկապատի կառուցման անհրաժեշտությունը որոշվում է տարածքի ռիսկերի գնահատման հիման վրա՝ հաշվի առնելով կենդանիների մուտքի, մարդկանց միջամտության հավանականությունը և տարածքի վերահսկելիության պահանջները:



Պատկեր SEQ Figure *

Ցանկապատի տեխնիկական բնութագիրը.

- 1 կմ ցանկապատի հիմնման համար պահանջվում է հետևյալը;
- 333 փայտե սյուներ՝ 1.8 մ բարձրությամբ;
- Սյուները տեղադրվում են 3 մ միջակայքով;
- Սյուները ամրացվում են հողի մեջ՝ 0.5 մ խորությամբ, իսկ հողի հետ շփման հատվածը մշակվում է հականեխիչ նյութով;

- Ցանկապատի փշալարերը պետք լինեն համաձայն լուսանկարի (Պատկեր 1);
- 1 կմ ցանկապատի համար անհրաժեշտ է 6,400 մ փշալար:

Փշալարերը պետք է լինեն մետաղական, մեկ լարանի, ակոսավոր, ցինկապատ-ԿՑ1, նորմալ ճշտության, ԳՕՍՏ 285-69-ին համապատասխան: Փշալարի փշերի տրամագիծը 2մմ±0.12մմ, իսկ հիմնալարի տրամագիծը 2.8մմ±0.1մմ: Փշալարի հիմնալարը պետք է լինի թերմոմշակված ամրալարից: 1 կգ-ը կազմում է ոչ պակաս, քան 11 գծամետր և ոչ ավել, քան 12 գծամետր: 1 գծամետրի վրա փշերի քանակը՝ 10-ից ոչ պակաս, մեկ փաթույթի կշիռը՝ 30-40 կգ:

**Դարպասների տեխնիկական պահանջներ**

- Անտառվերականգնման տարածքներում կառուցվող ցանկապատը պարտադիր պետք է ներառի դարպասներ՝ ապահովելու վերահսկվող մուտք և ելք:
- Դարպասը բաղկացած է լինելու երկու փեղկերից, որոնք բացվում են ներս կամ դուրս՝ ապահովելով լայն անցուղի:
- Բարձրությունը պետք է համապատասխանի ցանկապատի բարձրությանը (մոտ 1.8 մ), իսկ լայնությունը՝ 2.5–3 մ:
- Դարպասները պետք է ապահովեն մարդկանց, ինչպես նաև գյուղատնտեսական և տեխնիկական սարքավորումների համար ազատ մուտք:
- Դարպասների շրջանակը ձևավորվում է փշալարով, որը ձգվում է փեղկերի վերևում և ներքևում՝ հորիզոնական շարքերով:
- Լրացուցիչ անկյունագծային փշալարերը ապահովում են ամրություն և անվտանգություն:
- Փեղկերը ամրացվում են փայտե սյուներին մետաղական կեռիկներով կամ միացնող տարրերով:
- Դարպասը փակվում է մետաղական փականով կամ կողպեքով:
- Ցանկապատի կառուցման ավարտից հետո յուրաքանչյուր անտառտնտեսության համար պետք է ներկայացվի մանրամասն հաշվետվություն:

**Տնկման աշխատանքներ և տեսակային կազմ**

Անտառվերականգնման տարածքներում անհրաժեշտ է տնկել ստորև նշված ծառատեսակների կազմը․

Սոճի (*Pinus spp.*)

Հացենի (*Fraxinus spp.*)

Թխկի (*Acer spp.*)

Կեչի (*Betula spp.*)

Խնձորենի (*Malus sylvestris*)

Տանձենի (*Pyrus communis*)

**Լոռու անտառտնտեսություններում նախատեսված ծառատեսակների կազմը**

- **Վանաձոր:** 30% սոճի, 20% կաղնի, 15% խնձորենի, 15% տանձենի, 10% հացենի, 10% թխկի
- **Տաշիր:** 50% սոճի, 20% կեչի, 10% հացենի, 10%թխկի, 10% խնձորենի
- **Ստեփանավան:** 40% սոճի, 20% հացենի, 20% թխկի, 10% խնձորենի, 10% կաղնի

**Աղյուսակ 1**

**Վանաձորի անտառտնտեսությունում 1հա-ի համար պահանջվող սերմնաբուսակների քանակությունը**

| **Տեսակ** | **1հա-ում տնկիների հարաբերակցությունը, %** | **1հա-ում պահանջվող տնկիների քանակը** | **Վերականգնման ենթակա տարածքը** | **Ընդհանուր տնկիների քանակը** |
|---|---|---|---|---|
| *Սոճի (*Pinus spp.) | 30 | 900 | 82.25 | 74,025 |
| *Կաղնի (*Quercus spp.) | 20 | 600 | | 49,350 |
| *Խնձորենի (*Malus sylvestris) | 15 | 450 | | 37,013 |
| *Տանձենի (*Pyrus communis) | 15 | 450 | | 37,013 |
| *Հացենի (*Fraxinus spp.) | 10 | 300 | | 24,675 |
| *Թխկի (*Acer spp.) | 10 | 300 | | 24,675 |
| Ընդհանուր | 100 | 3000 | | **246,750** |

Աղյուսակ 2

**Ստեփանավանի անտառտնտեսությունում 1հա-ի համար պահանջվող սերմնաբուսակների քանակությունը**

| **Տեսակ** | **1հա-ում տնկիների հարաբերակցությունը, %** | **1հա-ում պահանջվող տնկիների քանակը** | **Վերականգնման ենթակա տարածքը** | **Ընդհանուր տնկիների քանակը** |
|---|---|---|---|---|
| *Սոճի (*Pinus spp.) | 40 | 1200 | 21.49 | 25,788 |
| *Կաղնի (*Quercus spp.) | 10 | 300 | | 6,447 |
| *Խնձորենի (*Malus sylvestris) | 10 | 300 | | 6,447 |
| *Հացենի (*Fraxinus spp.) | 20 | 750 | | 12,894 |
| *Թխկի (*Acer spp.) | 20 | 750 | | 12,894 |
| Ընդհանուր | 100 | 3000 | | **64,470** |

Աղյուսակ 3

**Տաշիրի անտառտնտեսությունում 1հա-ի համար պահանջվող սերմնաբուսակների քանակությունը**

| **Տեսակ** | **1հա-ում տնկիների հարաբերակցությունը, %** | **1հա-ում պահանջվող** | **Վերականգնման ենթակա տարածքը** | **Ընդհանուր տնկիների քանակը** |
|---|---|---|---|---|

| | | տնկիների քանակը | | |
|---|---|---|---|---|
| *Սոճի (*Pinus spp.) | 50 | 1500 | | 98,820 |
| Կեչի (Betula spp.) | 20 | 600 | | 39,528 |
| *Խնձորենի (*Malus sylvestris) | 10 | 300 | 65.88 | 19,764 |
| *Հացենի (*Fraxinus spp.) | 10 | 300 | | 19,764 |
| Թխկի *(*Acer spp.) | 10 | 300 | | 19,764 |
| Ընդհանուր | 100 | 3000 | | **197,640** |

## Այլ դրույթներ

Եթե անտառվերականգնման միջոցառումների իրականացման ընթացքում պարզվի, որ որևէ կոնկրետ ծառատեսակի տնկված սերմնաբուսակների քանակը պակաս է, քան նախապես նախատեսված էր, ապա պայմանագրային արժեքներն ենթակա են համաչափ նվազեցման՝ հիմնվելով փաստացի տնկված սերմնաբուսակների քանակի վրա:

### Տնկանյութի որակական չափանիշներ

Անտառվերականգնման համար օգտագործվող բոլոր սերմնաբուսակները պետք է համապատասխանեն հետևյալ նվազագույն պահանջներին․

- Սերմնաբուսակները պետք է աճեցված լինեն տեղական ծառատեսակների (նույն էկոզոնայի/անտառային շրջանի) սերմերից՝ տարածքի պայմաններին հարմարվելու համար:
- Տնկման պահին բոլոր սերմնաբուսակները պետք է լինեն մինչև երկու տարեկան;
- Սերմնաբուսակները պետք է լինեն սերտիֆիկացված;
- Արմատային համակարգը պետք է լավ զարգացած լինի՝ առանց վնասվածքների, վնասատուների, հիվանդությունների կամ ձևախախտումների;
- Տնկվելու են ինչպես փակ, այնպես էլ բաց արմատային համակարգով սերմնաբուսակներ
- Փակ արմատային համակարգով ծառատեսակներն են՝ սոճի (Pinus spp.), կաղնի (Quercus spp.):
- Բաց արմատային համակարգով ծառատեսակներն են՝ հացենի (Fraxinus spp.), թխկի (Acer spp.), վայրի խնձորենի (Malus sylvestris), տանձենի (Pyrus communis), կեչի (Betula spp.):

- Դաշտ տեղափոխելուց առաջ ստուգել յուրաքանչյուր սերմնաբուսակի ամբողջականությունը: Տեղափոխման և պահեստավորման ընթացքում

արմատները պետք է ծածկված լինեն խոնավ կտորով՝ արևից և քամուց պաշտպանված: Բաց արմատային համակարգով սերմնաբուսակները արկղերում դասավորել հորիզոնական՝ արմատների վնասումը կանխելու նպատակով:

**Տնկման աշխատանքներ**

Սերմնաբուսակների տնկումը նախատեսվում է իրականացնել աշնանը: Եթե նախատեսված սեզոնին տնկման աշխատանքների իրականացումը դառնում է անհնարին փորս-մաժորային հանգամանքների պատճառով, ներառյալ՝ անբարենպաստ եղանակային պայմանները կամ այլ օբյեկտիվ հանգամանքներ, որոնք խոչընդոտում են աշխատանքների իրականացումը սահմանված ժամկետում, ապա տնկման աշխատանքները պետք է իրականացվեն հաջորդ համապատասխան սեզոնին (աշնանը):

Բոլոր 3 տարածքներում նախատեսված է տնկել յուրաքանչյուր շարքում մի տեսակ:

**Հաշվետվություն և մոնիթորինգ**
Տնկումն իրականացնելուց հետո ներկայացնել հաշվետվություն՝ նշելով մեկ հեկտարի վրա փաստացի տնկված սերմնաբուսակներիի խտությունը, արձանագրել ցանկացած շեղում հեռավորությունների կամ սխեմաների մեջ և ներկայացնել հիմնավորումներ (տարածքի թեքություն, հիդրոլոգիա, հողի տեսակ, էռոզիայի ռիսկեր):

## 4.6. Սերմնաբուսակների խնամք

- **Առաջին տարի**. խնամքի միջոցառումները իրականացնել երեք անգամ՝ ապրիլից մինչև օգոստոս՝ կախված եղանակային պայմաններից և մոլախոտերի աճի աստիճանից: Անհրաժեշտ է հեռացնել մոլախոտերը և կատարել հողի փխրեցում սերմնաբաժակիշուրջ:

- **Երկրորդ տարի**. նույն միջոցառումները (մոլախոտերի հեռացում և հողի փխրեցում) իրականացնել երկու անգամ՝ համաձայն հաստատված ժամանակացույցի:

- **Հնձում**. Հնձման անհրաժեշտությունը գնահատվում է՝ ելնելով եղանակային պայմաններից և հողածածկի զարգացման աստիճանից: Չնայած բուսածածկը կարող է նպաստել խոնավության պահպանմանը, սակայն անտառվերականգնման սկզբնական փուլերում այն պետք է վերահսկել, որպեսզի չխոչընդոտի արմատային համակարգի զարգացմանը և սերմնաբուսակների աճին: Եթե կա հնձնման անհրաժեշտություն, այն իրականացնել խնամքի վերջին փուլից առաջ:

- **Հաշվետվություն**. յուրաքանչյուր խնամքի փուլի ավարտից հետո պայմանագրով նախատեսված Կատարողը պետք է ներկայացնի հաշվետվություն՝ նշելով կատարված գործողությունները և փաստացի ընդգրկված տարածքները:

**Կենսունակության և պահպանման գնահատում**

**Գարնանային գնահատում**․ աշնանային տնկումից հետո հաջորդ գարնանը կատարողը պետք է գնահատի սերմնաբուսակների կենսունակությունը՝ պարզելու, թե քանի սերմնաբուսակ է հաջողությամբ արմատակալել:

**Աշնանային գնահատում**․ նույն տարվա աշնանը գնահատել սերմնաբուսակների կենսունակությունը: `
Գնահատման արդյունքում հայտնաբերված չորացած կամ ոչ կենսունակ սերմնաբուսակները կատարողը պարտավոր է փոխարինել համապատասխան տեսակներով՝ պահպանելու համար նախատեսված խտությունը (3,000 սերմնաբուսակ/հա) և տեսակային կազմը:

**Հաշվետվություն**․ գնահատումների և փոխարինումների արդյունքները պետք է ներկայացվեն Պատվիրատուին՝ լուսանկարներով և GPS ապացույցներով:

**Տեխնիկական և լոգիստիկ կարողություններ**

Կատարողը պետք է բավարարի հետևյալ պահանջները․

● Տարածքների նախապատրաստման, խրամատների փորման, ցանկապատման, տնկման և խնամքի համար համապատասխան տեխնիկայի և սարքավորումների սեփականություն կամ հասանելիություն:

● Բարձրորակ սերմնաբուսակներ արտադրող տնկարանների հասանելիություն՝ բաց և փակ արմատային համակարգերով:

● Սերմնաբուսակների տեղափոխման և պահպանման կարողություն՝ պատշաճ պայմաններում:

● Դաշտային աշխատողների համար հանգստի պայմանների ապահովում այն տարածքներում, որտեղ իրականացվելու են անտառվերականգնման աշխատանքները:

**Բնապահպանական և սոցիալական պարտավորություններ**

Կապալառուն պարտավոր է իրականացնել Աշխատանքները՝ համապատասխանելով բնապահպանականորեն անվտանգ անտառային գործելակերպին և կիրառելի բնապահպանական և սոցիալական (ԲՍ) պահանջներին: Մրցույթի մասնակիցը պետք է իր Աշխատանքների կատարման մեթոդաբանության մեջ ներառի՝

- տեղանքի նախապատրաստման, տնկման, խնամքի և հարակից գործունեությունների ընթացքում բնապահպանականորեն անվտանգ գործելակերպի ապահովմանն ուղղված միջոցառումների նկարագրությունը,
- տնկման և խնամքի աշխատանքներում տեղական համայնքների ներգրավման մոտեցման նկարագրություն,
- աշխատանքի անվտանգության և առողջության ստանդարտների պահպանմանն ուղղված ընթացակարգերը, ներառյալ աշխատողների պաշտպանության և անվտանգության պահմանման միջոցառումները ծրագրի ողջ ընթացքում:

## 6. Հաշվետվություններ և արդյունքներ

**Աղյուսակ 4 Մատուցվող արդյունքների (Deliverables) ժամանակացույց**

| Փուլ | Հաշվետվություն | Ժամկետ |
|---|---|---|
| 1 | Նախնական հաշվետվություն – մանրամասն աշխատանքային պլան, մեթոդաբանություն, ընտրված հաստատված տարածքներ, ԲՍԿՊ ենթատարածքների համար. | Պայմանագրի ստորագրումից հետո 1 ամսվա ընթացքում |
| 2 | ԲՍԿՊ և մոնիթորինգ յուրաքանչյուր տարածքում | Պայմնագրի ստորագրումից հետո 4ամսվա ընթացքում |
| 3 | Իրականացման հաշվետվություն (աշնանային տնկում) – կատարված աշխատանքների նկարագրություն, տնկված սերմնաբուսակների քանակ, տեսակային համապատասխանություն. | Աշնանային տնկման ավարտից ոչ ուշ քան 2 շաբաթ անց |
| 4 | Գարնանային խնամքի հաշվետվություններ (3 անգամ) – մոլախոտերի հեռացում, հողի փխրեցում. | Յուրաքանչյուր միջոցառումից հետո 10 օրվա ընթացքում |
| 5 | Աշնանային կենսունակության գնահատում և վերատնկում – կենսունակության մակարդակ, փոխարինումների փաստաթղթավորում. | Աշնանային միջոցառումների ավարտից ոչ ուշ քան 2 շաբաթ անց |
| 6 | Երկրորդ տարվա խնամքի հաշվետվություններ (2 անգամ) – խնամքի միջոցառումների նկարագրություն. | Յուրաքանչյուր միջոցառումից հետո 10 օրվա ընթացքում |
| Վերջնական | Ավարտական հաշվետվություն – համախմբված արդյունքներ, մոնիթորինգի տվյալներ, դասեր և կայուն կառավարման առաջարկություններ. | Պայմանագրային շրջանի ավարտից հետո 1 ամսվա ընթացքում |

**Հիմնական սկզբունքներ**

Յուրաքանչյուր հաշվետվություն պետք է ներկայացվի գրավոր և ուղեկցվի լուսանկարներով/քարտեզներով:

## 7. Հաշվետվողականություն և համակարգում

Կատարողը պարտավոր է․

- Հաշվետվություն ներկայացնել ԲԾԻԳ ՊՀ-ին:
- Համագործակցել վերականգնման աշխատանքների գործընթացում Լոռու անտառտնտեսությունների (Վանաձոր, Ստեփանավան, Տաշիր) հետ:
- Ապահովել, որ բոլոր միջոցառումները խստորեն համապատասխանեն տնկման պլանին, որը մշակվում է կատարողի կողմից տեխնիկական առաջադրանքի հիման վրա:

- Ներկայացնել ընթացիկ թարմացումներ համաձայնեցված ժամկետներում և անհրաժեշտության դեպքում մասնակցել համատեղ մոնիթորինգային առաքելություններին:

- Պահպանել թափանցիկ հաղորդակցություն շահագրգիռ կողմերի հետ, ներառյալ տեղական համայնքները, համայնքապետարանները և գործընկեր կազմակերպությունները:

## 8. Աշխատանքների ժամանակացույց

● Պայմանագրի ընդհանուր տևողությունը՝ մոտ 2 տարի 3 ամիս[14] (ներառյալ 1 տարի 3 ամիս պատասխանատվության շրջան՝ տնկումից հետո մոնիթորինգի և խնամքի համար):
● Յուրաքանչյուր հաշվետվություն պետք է ներկայացվի գրավոր և ուղեկցվի լուսանկարներով/քարտեզներով:

## 9. Վերջնական փուլի պարտավորություններ

**Վերջնական հաշվետվություն**

Վերջնական հաշվետվությունը բաղկացած է լինելու համախմբված փաստաթղթից, որը ներկայացնում է բոլոր փուլերի արդյունքները, ներառյալ տնկված ծառերի ընդհանուր քանակը, տեսակային կազմը, կենսունակության մակարդակը, իրականացված խնամքի միջոցառումները (մոլախոտերի հեռացում, հողի փխրեցում, խոտհունձ): Նշում է փոխարինված տնկիների քանակը (չորացած կամ ոչ կենսունակ բույսերի դեպքում):

**Ապացույցներ**

Լուսանկարներ յուրաքանչյուր տարածքից (նախքան և հետո)

GPS կոորդինատներ՝ տնկված տարածքների և ենթակառուցվածքների (ցանկապատեր, դարպասներ) ճշգրիտ նույնականացման համար

GIS քարտեզներ՝ ցույց տալու տեսակների բաշխվածությունը և ընդգրկված տարածքը:

3. **Կենսունակության և պահպանման ամփոփում**

- Գարնանային և աշնանային գնահատումների արդյունքները:

- Կենսունակության մակարդակ ՝ սահմանված շեմից (≥ 75%) ոչ պակաս:

- Փոխարինված սերմնաբուսակների փաստաթղթավորում:

4. **Պաշտպանիչ ենթակառուցվածքներ**

- Ցանկապատերի և դարպասների կառուցման վերաբերյալ հաշվետվություն:

[14] Աշխատանքները պետք է ավարտվեն ոչ ուշ, քան 2028 թվականի նոյեմբերի 15-ը:

- Կառուցված ցանկապատի ընդհանուր երկարությունը, հենասյուների քանակը և օգտագործված փշալարի ծավալը:

**Բնապահպանական և սոցիալական արդյունքներ**

Համայնքների ներգրավման մասին տեղեկություն:

Կիրառված բողոքների ընդունման և լուծման մեխանիզմների վերաբերյալ փաստաթղթավորում:

Սոցիալական և բնապահպանական ազդեցությունների համախմբված ակնարկ:

**Ֆինանսական ամփոփում**

Փաստացի ծախսերի հաշվարկներ՝ համեմատած բյուջեի հետ:

Շեղումների հիմնավորում:

**Հավելված**

**Բնապահպանական և սոցիալական կառավարման ծրագրի (ԲՍԿԾ) կառուցվածք**

**1. Ծրագրի նկարագիր**

Տրամադրել վերականգնվող տարածքի համառոտ նկարագրություն՝ հիմնվելով անտառային կառավարման պլանի ելակետային տվյալների վրա:

Ամփոփ ներկայացնել նախատեսվող վերականգնման աշխատանքները և դրանց հիմնական բաղադրիչները:

**2. Իրավակարգավորող պահանջներ**

Ներկայացնել ազգային օրենսդրությամբ նախատեսված լիցենզիաների, թույլտվությունների, համաձայնագրերի և այլ իրավական փաստաթղթերի ցանկը, որոնք անհրաժեշտ են առաջարկվող գործունեության իրականացման համար:

**3. Ելակետային (բազային) տեղեկատվություն**

**(i) Տարածքի բնութագրեր**

Նկարագրել վերականգնվող տարածքի լանդշաֆտային առանձնահատկությունները, կլիմայական պայմանները, հողերի տեսակները և հիդրոլոգիական առանձնահատկությունները:

Նշել լանջերի թեքությունները և ուղղվածությունը, հողի բերրիությունը և ջրային ռեժիմը:

**(ii) Հողի սեփականության և օգտագործման իրավունքներ**

Վերլուծել հողերի իրավական կարգավիճակը:

Նշել պետական, համայնքային և մասնավոր հողերի բաշխվածությունը:

Նկարագրել հողօգտագործման գործող իրավունքները և դրանց իրավական հիմքերը:

**(iii) Բնական ռեսուրսների ներկայիս օգտագործում**

Նկարագրել հողի, ջրի, փայտանյութի, վառելափայտի, ոչ փայտային անտառային արտադրանքի (օրինակ՝ սունկ, հատապտուղներ, խեժ), արոտավայրերի և ռեկրեացիոն օգտագործման ձևերը:

Նշել ինչպես օրինական (թույլատրված), այնպես էլ ոչ ֆորմալ (սովորութային կամ չգրանցված) օգտագործման ձևերը:

**(iv) Էկոհամակարգային ծառայություններ**

Նկարագրել թիրախային տարածքում անտառների կողմից մատուցվող էկոհամակարգային ծառայությունները, ներառյալ՝

Հողի պաշտպանություն և էրոզիայի կանխարգելում

Ջրի պահպանում և մաքրում

Կլիմայի կարգավորում և ածխածնի կլանում

Կենսաբազմազանության պահպանում

Ռեկրեացիոն և սոցիալական արժեքներ

**(v) Մրցակցող շահեր և սոցիալական լարվածություն**

Նույնականացնել անտառային ռեսուրսների օգտագործման մրցակցող շահերը (օրինակ՝ վառելափայտի հավաքում, արոտ, առևտրային շահագործում):

Նկարագրել համայնքների, տնտեսավարող սուբյեկտների և պետական կառույցների միջև առկա կամ հնարավոր սոցիալական լարվածությունները:

Նշել անտառօգտագործման կանոնների խախտման դեպքերը և դրանց հիմնական տեսակները (օրինակ՝ ապօրինի ծառահատում, չարտոնված արոտ, ռեսուրսների անհավասար հասանելիություն):

**4. Ռիսկեր և հնարավոր ազդեցություններ**

Նկարագրել առաջարկվող միջամտությունների դրական և բացասական ազդեցությունները՝

վերականգնման աշխատանքների ընթացքում,

երիտասարդ տնկարկների ակտիվ խնամքի փուլում,

վերականգնված անտառների հետագա կառավարման ընթացքում:

Ներկայացնել բացասական ազդեցությունների կանխարգելման և մեղմման միջոցառումները:

**5. Մոնիթորինգի պլան**

Ներկայացնել բնապահպանական և սոցիալական մոնիթորինգի պլանը՝ ըստ իրականացման փուլերի․

Վերականգնման աշխատանքների ընթացքում

Երիտասարդ տնկարկների ակտիվ խնամքի ընթացքում

Վերականգնված անտառային տարածքի կանոնավոր կառավարման ընթացքում

Մեղմման և մոնիթորինգի պլանները պետք է ներկայացվեն երկու հակիրճ և օգտագործողի համար հասկանալի աղյուսակներով՝ ստորև ներկայացված ձևանմուշների հիման վրա:

**Հավելված 1. Մեղմացման և մշտադիտարկամ աղյուսակներ՝ ԲՍԿՊ-ում ներառելու համար**

**Բնապահպանական և սոցիալական ազդեցության մեղմացման ծրագիր**

| N | Գործողություն | Ռիսկ | Մեղմացման միջոցառում | գործողության ցուցանիշ | Պատասխանատու կողմ |
|---|---|---|---|---|---|
| **Վերականգնման աշխատանքներ** | | | | | |
| 1 | | | | | |
| 2 | | | | | |
| n | | | | | |
| **Ակտիվ խնամք** | | | | | |
| 1 | | | | | |
| 2 | | | | | |
| n | | | | | |
| **Երկարաժամկետ կառավարում** | | | | | |
| 1 | | | | | |
| 2 | | | | | |
| n | | | | | |

Բնապահպանական և սոցիալական մոնիթորինգի պլան

| N | Ի՞նչ է ենթակա մշտադիտարկման | Ինչո՞ւ է անհրաժեշտ մշտադիտարկել | Ինչպե՞ս է իրականացվելու մշտադիտարկումը | Ե՞րբ է իրականացվելու մշտադիտարկումը | Որտե՞ղ է իրականացվելու մշտադիտարկումը | Պատասխանատու կողմ |
|---|---|---|---|---|---|---|
| **Վերականգնման աշխատանքներ** | | | | | | |
| 1 | | | | | | |
| 2 | | | | | | |
| n | | | | | | |
| **Ակտիվ խնամք** | | | | | | |
| 1 | | | | | | |
| 2 | | | | | | |
| n | | | | | | |
| **Երկարաժամկետ կառավարում** | | | | | | |
| 1 | | | | | | |
| 2 | | | | | | |
| n | | | | | | |

# Բնապահպանական և սոցիալական կառավարման պլան

**(ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՓԱԹԵԹԻՆ ԿԻՑ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՒՄ Է)**

# ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԾԱՎԱԼՆԵՐԻ ՑՈՒՑԱԿ

**ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՓԱԹԵԹԻՆ ԿԻՑ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՒՄ Է Աշխատանքների ծավալների ցուցակում () ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ EXCEL ՏԱՐԲԵՐԱԿԸ:**

**Ա. Նախաբան**

1. Աշխատանքների ծավալների ցուցակը պետք է դիտարկվի «Հրահանգներ հայտատուներին», «Պայմանագրի ընդհանուր դրույթների», «Պայմանագրի հատուկ դրույթների», «Տեխնիկական մասնագրերի» հետ փոխկապակցված:
2. Աշխատանքների ծավալների ցուցակում նշված ծավալները մոտավոր ու պայմանական են և բերված են մրցույթի ընդհանուր հիմքն ապահովելու համար: Վճարման հիմքը կարգադրված և կատարված փաստացի աշխատանքի ծավալներն են՝ չափված Կապալառուի կողմից և հաստատված Ճարտարագետի կողմից: Դրանց արժեքը, կանխված հանգամանքներից, կորոշվի գնանշված Աշխատանքների ծավալների ցուցակով առաջարկված դրույքներով և գներով, կամ այն դրույքներով և գներով, որոնք Ծրագրի ղեկավարը կարող է ամրագրել Պայմանագրի պայմանների շրջանակներում:
3. Գնանշված Աշխատանքների ծավալների ցուցակով առաջարկված դրույքները և գները՝ բացառությամբ Պայմանագրով այլ կերպ նախատեսված դեպքերի, ընդգրկում են շինարարական արտադրամասերը, աշխատուժը, վերահսկողությունը, նյութերը, մոնտաժը, պահպանումը, ապահովագրությունը, շահույթը, հարկերը, բոլոր տուրքերը՝ բոլոր այլ ռիսկերի, պարտավորությունների և պարտականությունների հետ միասին, որոնք սահմանվում կամ ենթադրվում են Պայմանագրով:
4. Գնանշված Աշխատանքների ծավալների ցուցակի յուրաքանչյուր կետի դիմաց պետք է նշվի դրույքը կամ գինը՝ անկախ նրանից, նշված է քանակությունը, թե ոչ: Կհամարվի, որ այն կետի արժեքը, որի դիմաց Կապալառուն չի մտցրել դրույք կամ գին, ներառված են Աշխատանքների ծավալների ցուցակում մուտքագրված այլ դրույքների և գների մեջ:
5. Պայմանագրի դրույթներին համապատասխանող ողջ արժեքը պետք է ներառված լինի Գնանշված Աշխատանքների ծավալների ցուցակում բերված կետերի մեջ:
6. Պատվիրատուն կուղղի հաշվարկներում և գումարումների տեղ գտած բոլոր թվաբանական սխալները հետևյալ կերպ.

   (ա) եթե առկա է անհամապատասխանություն բառերի և թվերի միջև, ապա գերակայում է բառերով արտահայտված գումարը, և

   (բ) եթե առկա է անհամապատասխանություն միավոր գնի և այդ միավոր գնի ու քանակի բազմապատկումից ստացված ընդհանուր գումարի միջև, ապա գերակայում է միավոր գինը և ուղղվում ընդհանուր գումարը, եթե միայն՝ Պատվիրատուի կարծիքով, տեղի չի ունեցել ակնհայտ սխալ միավոր գնում տասնորդական կետը կամ ստորակետը սխալ տեղ դնելուց, որի դեպքում գերակայում է ընդհանուր գումարը և համապատասխանաբար ուղղվում է միավոր գինը:

Գները Աշխատանքների ծավալների ցուցակում Մրցույթի մասնակիցների կողմից պետք է նշվեն **միայն ՀՀ դրամով**:

# ՄԱՍ 3

# Պայմանագրի պայմաններ և պայմանագրի ձևեր

# Բաժին VIII. Պայմանագրի ընդհանուր պայմաններ (ՊԸՊ)

Պայմանագրի ընդհանուր պայմանները (ՊԸՊ)՝ Պայմանագրի հատուկ պայմանների (ՊՀՊ) և դրանցում թվարկված այլ փաստաթղթերի հետ միասին, կազմում են մեկ ամբողջական փաստաթուղթ, որը հստակ արտացոլում է երկու կողմերի իրավունքներն ու պարտականությունները:

ՊԸՊ-ները կարող են օգտագործվել ինչպես փոքր միավոր գներով պայմանագրերի, այնպես էլ միանվագ գումարով պայմանագրերի համար:

## Պայմանագրի ընդհանուր պայմաններ

### Ա. Ընդհանուր հարցեր

**1. Սահմանումներ**

**1.1** Սահմանվող տերմինները տարբերելու համար դրանք գրվում են թավ տառերով:

(1) **Պայմանագրի ընդունված գումար**՝ նշանակում է Աշխատանքների կատարման, ավարտման և բոլոր թերությունների վերացման համար Ընդունման նամակում ընդունված գումար:

(2) **Գործողությունների ժամանակացույց**՝ նշանակում է այնպիսի գործողությունների ժամանակացույց, որը միանվագ գումարով պայմանագրում պարունակում է Աշխատանքների կառուցումը, տեղադրումը, փորձարկումը և շահագործումը: Այն ներառում է յուրաքանչյուր գործողության միանվագ գին, որն օգտագործվում է Փոփոխության և Փոխհատուցման դեպքերի արժեքները և ազդեցությունները գնահատելու համար:

(3) **Դատավոր**՝ անձ, որը նշանակվել է Պատվիրատուի և Կապալառուի կողմից երկուստեք՝վեճերն առաջին ատյանով լուծելու համար, ինչպես սահմանված է **ՊԸՊ**-ի 23-րդ կետում:

(4) **Բանկ**՝ նշանակում է **ՊՀՊ-ում նշված** ֆինանսավորող հաստատություն:

(5) **Աշխատանքների ծավալների ցուցակ**՝ նշանակում է Հայտի մաս կազմող գնանշված և լրացված Աշխատանքների ծավալների ցուցակ:

(6) **Փոխհատուցման դեպք**՝ նշանակում է **ՊԸՊ-ում** սույն պայմանագրի 42 կետով սահմանված դեպք:

(7) **Ավարտման ամսաթիվ**՝ Աշխատանքների ավարտման վերջնաժամկետ, որը վավերացված է Ծրագրի ղեկավարի կողմից՝ **ՊԸՊ** 57.1 ենթակետի համաձայն:

(8) **Պայմանագիր**՝ Պայմանագիր Պատվիրատուի և Կապալառուի միջև՝ Աշխատանքները կատարելու, ավարտելու և պահպանելու համար: Այն կազմված է ստորև **ՊԸՊ**-ի 2.3 ենթակետում թվարկված փաստաթղթերից:

(9) **Կապալառու**՝ կողմ, որի Աշխատանքների կատարման Հայտն ընդունվել է Պատվիրատուի կողմից:

(10) **Կապալառուի Հայտն** իրենից ներկայացնում է լրացված մրցութային փաստաթուղթ, որը ներկայացվել է Պատվիրատուին Կապալառուի կողմից:

(11) **Պայմանագրի գին**՝ Ընդունման նամակում սահմանված Պայմանագրի ընդունված գումար, որը հետագայում ճշգրտվում սույն Պայմանագրի համաձայն:

(12) **Օրեր**՝ օրացուցային օրեր, **ամիսներ**՝ օրացուցային ամիսներ:

(13) **Օրավարձով աշխատանքներ**՝ Կապալառուի աշխատակիցների և սարքավորումների դիմաց ժամավճարով վարձատրվող տարբեր աշխատանքներ, ի լրումն Նյութերի և Արտադրամասերի հետ առնչվող վճարումների:

(14) **Թերություն**՝ Աշխատանքների ցանկացած մաս, որն իրականացվել է ոչ Պայմանագրին համապատասխան:

(15) **Թերությունների վերացման վկայական**՝ վկայական, որը թողարկվում է Ծրագրի ղեկավարի կողմից Կապալառուի կողմից թերությունները վերացնելուց հետո:

(16) **Թերությունների վերացման ժամանակաշրջան՝ ՊԸՊ-ի 38.1 ենթակետով** սահմանված ժամանակաշրջան, որը հաշվարկվում է Աշխատանքների ավարտման ամսաթվից:

(17) **Գծագրեր՝** նշանակում է Պայմանագրում ներառված Աշխատանքների գծագրեր և ցանկացած լրացուցիչ կամ փոփոխված գծագիր, որը թողարկվում է Պատվիրատուի կողմից (Պատվիրատուի անունից) համաձայն Պայմանագրի, և ներառում է հաշվարկներ և այլ տեղեկատվություն՝ տրամադրված կամ հաստատված Ծրագրի ղեկավարի կողմից՝ Պայմանագրի իրականացման համար:

(18) **Պատվիրատու**՝ կողմ, որը վարձում է Կապալառուին **ՊՀՊ**-ում սահմանված Աշխատանքներն իրականացնելու համար:

(19) **Սարքավորումներ**՝ Կապալառուի մեքենաներն ու փոխադրման միջոցները, որոնք ժամանակավորապես բերվում են Շինհրապարակ՝ Աշխատանքները կառուցելու համար:

(20) **Գրավոր**՝ նշանակում է ձեռագիր, տպագիր կամ էլեկտրոնային տարբերակով պատրաստված գրություն, որի արդյունքում ստացվում է մշտական գրանցում:

(21) **Պայմանագրի սկզբնական գին**՝ Պայմանագրի գին, որը նշված է Պատվիրատուի Ընդունման նամակում:

(22) **Նախատեսված ավարտման ժամկետ**՝ ամսաթիվ, երբ նախատեսվում է Կապալառուի կողմից Աշխատանքների ավարտը: Նախատեսված ավարտման ժամկետը **սահմանված է ՊՀՊ-ում**: Նախատեսված ավարտման ժամկետը կարող է վերանայվել միայն Ծրագրի ղեկավարի կողմից՝ սահմանելով ժամանակի երկարաձգման կամ արագացման հրահանգ:

(23) **Նյութեր**՝ այն բոլոր մատակարարվող նյութերը, ներառյալ ծախսվող նյութերը, որոնք օգտագործվում են Կապալառուի կողմից Աշխատանքների մեջ ներառելու համար:

(24) **Արտադրամաս**՝ Աշխատանքների բաղկացուցիչ մաս, որը կատարում է մեխանիկական, էլեկտրական, քիմիական կամ կենսաբանական ֆունկցիա:

(25) **Ծրագրի ղեկավար**՝ **ՊՀՊ-ում սահմանված** անձ է (կամ այլ իրավասու անձ, որը նշանակված է Պատվիրատուի կողմից և ում մասին ծանուցվել է Կապալառուն, և գործելու Ծրագրի ղեկավարին փոխարինելու դեպքում), որը պատասխանատու է Աշխատանքների հսկման և Պայմանագրի վարչարարության համար:

(26) **ՊՀՊ**՝ նշանակում է Պայմանագրի հատուկ պայմաններ:

(ա) **Շինհրապարակ**՝ **ՊՀՊ-ում սահմանված** տարածք:

(բ) **Շինհրապարակի հետազոտության հաշվետվություններ**՝ Մրցութային փաստաթղթերի հաշվետվություններ, որոնք հանդիսանում են փաստացի և մեկնաբանող հաշվետվություններ Շինհրապարակի վերգետնյա և ստորգետնյա պայմանների մասին:

(գ) **Մասնագրեր**՝ Պայմանագրում ընդգրկված Աշխատանքների Մասնագրեր, կամ Ծրագրի ղեկավարի կողմից դրանցում արված կամ հաստատված ցանկացած փոփոխություն կամ լրացում:

(դ) **Մեկնարկի օրը՝ նշված է ՊՀՊ-ում**: Կապալառուին պետք է սկսի Աշխատանքների կատարումը ամենաուշը այդ օրը: Այն չպետք է պարտադիր կերպով համընկնի Շինհրապարակի տնօրինման ամսաթվերից որևէ մեկի հետ:

(ե) **Ենթակապալառու**՝ այն անձը կամ կորպորատիվ մարմինը, որը Կապալառուի հետ ունի Պայմանագիր՝ Պայմանագրում նշված աշխատանքի մի մասը կատարելու համար և ներառում է աշխատանքները Շինհրապարակում:

(զ) **Ժամանակավոր աշխատանքներ**՝ Կապալառուի կողմից նախագծված, կառուցված, տեղադրված և հեռացված աշխատանքներ, որոնք հարկավոր են Աշխատանքների կառուցման կամ տեղադրման համար:

(է) **Փոփոխություն**՝ Ծրագրի ղեկավարի կողմից՝ Աշխատանքները փոփոխելու ցուցում:

(ը) **Աշխատանքներ՝** նշանակում է այն, ինչը Պայմանագրով պահանջվում է Կապալառուից կառուցել, տեղադրել և հանձնել Պատվիրատուին՝ **ՊՀՊ-ում սահմանված ձևով**:

(թ) **«Կապալառուի անձնակազմը»** Կապալառուի կողմից գործի դրված ամբողջ անձնակազմն է շինհրապարակում կամ այլ վայրերում, որտեղ իրականացվում են աշխատանքներ, ներառյալ՝ յուրաքանչյուր Ենթակապալառուի անձնակազմը, բանվորական ուժը և մյուս աշխատակիցները:

(ժ) **«Հիմնական անձնակազմ»** նշանակում է Կապալառուի անձնակազմի այն հաստիքները (եթե այդպիսիք առկա են), որոնք նշված են մասնագրերում:

(ի) **«ԲՍ»** նշանակում է բնապահպանական և սոցիալական (ներառյալ՝ սեռական շահագործումը և չարաշահումը (ՍՇՉ), ինչպես նաև սեռական ոտնձգությունը (ՍՈ)),

(լ) **«Սեռական շահագործումը և չարաշահումը» (ՍՇՉ)** նշանակում է հետևյալը.

**«Սեռական շահագործումը»** սահմանվում է որպես խոցելի դրության, վերադաս դիրքի կամ վստահության ցանկացած փաստացի չարաշահում կամ չարաշահման փորձ սեռական նպատակներով, որը ներառում է, բայց չի սահմանափակվում մեկ ուրիշ անձի սեռական շահագործումից դրամական, սոցիալական կամ քաղաքական շահույթ ստանալով: Բանկի կողմից ֆինանսավորվող գործառնություններում/նախագծերում սեռական շահագործումն ի հայտ է գալիս, երբ Բանկի ֆինանսավորմամբ ձեռքբերված ապրանքների, աշխատանքների, ոչ-խորհրդատվական կամ խորհրդատվական ծառայությունների հասանելիությունը կամ դրանցից ստացվող շահույթը օգտագործվում է սեռական բնույթի օգուտ քաղելու համար,

**«Սեռական չարաշահումը»** սահմանվում է որպես սեռական բնույթի փաստացի ֆիզիկական ոտնձգություն կամ դրա սպառնալիք՝ բռնի ուժի գործադրմամբ, կամ անհավասար կամ հարկադրանքի պայմաններում,

(խ) **«Սեռական ոտնձգությունը» (ՍՈ)** սահմանվում է որպես անողջունելի սեռական բնույթի արարքներ, սեռական բնույթի խնդրանքներ և այլ սեռական բնույթի բանավոր կամ ֆիզիկական վարքագիծ կապալառուի անձնակազմի կողմից մեկ այլ կապալառուի կամ պատվիրատուի անձնակազմի նկատմամբ,

(ծ) **«Պատվիրատուի անձնակազմ»** -ը վերաբերում է ծրագրի ղեկավարին և ծրագրի ղեկավարի ու Պատվիրատուի ողջ անձնակազմին, բանվորական ուժին և այլ աշխատակիցներին (առկայության դեպքում), որոնք զբաղվում են Պատվիրատուի՝ Պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարմամբ, ինչպես նաև որևէ այլ անձնակազմ, որը ճանաչվում է որպես Պատվիրատուի անձնակազմ՝ Պատվիրատուից կամ ծրագրի ղեկավարից Կապալառուին ուղղված ծանուցման միջոցով:

**2. Մեկնաբանություն**

2.1 Սույն **ՊԸՊ**-ն մեկնաբանելիս, սեռ նշող բառերը ներառում են բոլոր սեռերը: Եզակի թիվ ցույց տվող բառերը ներառում են նաև հոգնակի թիվը, իսկ հոգնակի թիվ ցույց տվող բառերը՝ ներառում են նաև եզակի թիվը: Վերնագրերը իմաստ չեն պարունակում: Բառերն ունեն իրենց սովորական նշանակությունը Պայմանագրի լեզվին համապատասխան, եթե չեն սահմանվել հատուկ ձևով: Ծրագրի ղեկավարը պետք է ներկայացնի պարզաբանող հարցումների ցուցումներն այս **ՊԸՊ**-ի վերաբերյալ:

2.2 Եթե **ՊՀՊ-ում սահմանված է** Աշխատանքների ավարտ ըստ բաժինների, ՊԸՊ-ի հղումները Աշխատանքներին, Ավարտման ամսաթվին և Նախատեսված ավարտման ամսաթվին վերաբերում են Աշխատանքների ցանկացած բաժնին (բացառությամբ ամբողջ Աշխատանքների Ավարտման ամսաթվին և Նախատեսված ավարտման ամսաթվին արվող հղումների):

•

2.3 Պայմանագիրը մաս կազմող փաստաթղթերը պետք է մեկնաբանվեն հետևյալ առաջնահերթությամբ՝

**(ա) Համաձայնագիր**
**(բ) Ընդունման նամակ**
**(գ) Կապալառուի Հայտ**
**(դ) Պայմանագրի հատուկ պայմաններ**
**(ե) Պայմանագրի ընդհանուր պայմաններ**
**(զ) Մասնագրեր**
**(է) Գծագրեր**
**(ը) Աշխատանքների ծավալների ցուցակ**
(թ) ցանկացած այլ փաստաթուղթ՝ որը **թվարկած է ՊՀՊ–ում**, որպես Պայմանագրի մաս կազմող:

**3. Լեզուն և օրենքը**

**3.1** Պայմանագրի լեզուն և Պայմանագիրը կառավարող օրենքը **նշված են ՊՀՊ-ում:**

**3.2** Պայմանագրի կատարման ողջ ընթացքում Կապալառուն պարտավոր է հետևել ապրանքների և ծառայությունների ներկրման մասով Պատվիրատուի երկրի արգելքներին, եթե.

•

(ա) Փոխառուի երկիրը՝ օրենքով կամ պաշտոնական կանոնակարգերով արգելում է առևտրային հարաբերություններն այդ երկրի հետ,

(բ) ի կատարումն ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի կողմից՝ Միավորված Ազգերի կազմակերպության կանոնադրության VIII գլխի համաձայն ընդունված որոշման, Փոխառուի երկիրն արգելում է որևէ ներկրում այդ երկրից կամ որևէ վճարում այդ երկրի որևէ անձին կամ կազմակերպությանը:

**4. Ծրագրի ղեկավարի որոշումները**

**4.1** Եթե այլ կերպ սահմանված չէ, Ծրագրի ղեկավարը որոշում է Պատվիրատուի և Կապալառուի միջև պայմանագրային հարցերը՝ ներկայացնելով Պատվիրատուին:

**5. Լիազորությունների փոխանցում**

**5.1** Եթե այլ կերպ **սահմանված չէ ՊՀՊ-ում**, Ծրագրի ղեկավարը՝ Կապալառուին ծանուցելուց հետո, կարող է իր ցանկացած պարտականություն կամ պատասխանատվություն փոխանցել այլ

մարդկանց, բացառությամբ Դատավորի, ինչպես նաև կարող է չեղյալ համարել լիազորության ցանկացած փոխանցում՝ Կապալառուին ծանուցելուց հետո:

**6. Հաղորդակցություն** **6.1** Պայմաններում նշված կողմերի միջև հաղորդակցությունը ուժի մեջ է միայն եթե եղել է գրավոր: Ծանուցումն ուժի մեջ է մտնում միայն հասցեատիրոջն առաքվելուց:

**7. Ենթակապալ** **7.1** Կապալառուն կարող է կնքել ենթակապալ Ծրագրի ղեկավարի համաձայնությամբ, բայց չի կարող հանձնարարել Պայմանագիրն առանց Պատվիրատուի գրավոր հաստատման: Ենթակապալի կնքումը չի ազդում Կապալառուի պարտավորությունների վրա: Կապալառուն պետք է պահանջի, որպեսզի իր ենթակապալառուները կատարեն աշխատանքները Պայմանագրին և ԲՍ պահանջներին և 28.1 ենթակետով սահմանված պարտավորություններին համապատասխան:

**8. Այլ կապալառուներ** **8.1** Կապալառուն պետք է համագործակցի և կիսի Շինհրապարակն այլ կապալառուների, պետական մարմինների, ծառայությունների, ինչպես նաև Պատվիրատուի հետ այն ժամկետներում, որոնք նշված են այլ կապալառուների ժամանակացույցում՝ **ՊՀՊ-ում նշված ձևով**: Կապալառուն պարտավոր է նաև տրամադրել նրանց հարմարություններ և ծառայություններ՝ Ժամանակացույցում նշված ձևով: Պատվիրատուն կարող է փոփոխել այլ կապալառուների ժամանակացույցը՝ ծանուցելով Կապալառուին ցանկացած նման փոփոխության մասին:

**8.2** Կապալառուն նաև պարտավոր է, համաձայն Մասնագրերի կամ Ծրագրի Ղեկավարի հրահանգի, համագործակցել Պատվիրատուի կամ Կապալառուին Պատվիրատուի կամ Ծրագրի Ղեկավարի կողմից ծանուցումով ցուցված որևէ այլ անձնակազմի հետ և պատշաճ հնարավորություն ընձեռել վերջիններիս՝ իրականացնելու բնապահպանական ու սոցիալական գնահատում:

**9. Անձնակազմ և սարքավորումներ** **9.1** Աշխատանքների իրականացման համար Կապալառուն պարտավոր է վարձել իր Հայտում նշված հիմնական աշխատակազմը և օգտագործել առաջարկում նշված սարքավորումները, կամ Ծրագրի ղեկավարի կողմից հաստատված այլ անձնակազմ և Սարքավորումներ: Ծրագրի ղեկավարը կհաստատի Հիմնական Աշխատակազմի և Սարքավորման որևէ փոխարինման առաջարկություն միայն այն դեպքում, եթե դրանց համապատասխան որակավորումները կամ բնութագրերն էապես հավասար կամ ավելին են Հայտում առաջադրվածներից:

**9.2** Ծրագրի ղեկավարը կարող է պահանջել Կապալառուից հեռացնել (կամ նպաստի հեռացմանը) շինհրապարակում կամ աշխատանքներում ներգրավված ցանկացած անձի, ներառյալ՝ Հիմնական Անձնակազմից (առկայության դեպքում), ով.

- 

(ա) շարունակաբար դրսևորում է անթույլատրելի վարքագիծ և անբավարար հետևողականություն,

(բ) առաջադրանքները կատարում է ոչ կոմպետենտ և անփութորեն,

(գ) խախտում է պայմանագրի որևէ դրույթ,

(դ) շարունակաբար դրսևորում է անվտանգությանը, առողջությանը կամ շրջակա միջավայրին սպառնացող վարքագիծ,

(ե) ողջամիտ ապացույցների հիման վրա սահմանվում է, որ աշխատանքների իրականացման ընթացքում ներգրավված է եղել խարդախության և կաշառակերության մեջ,

(զ) ներգրավվել է պատվիրատուի անձնակազմից,

(է) դրսևորում է վարքագիծմ որով խախտում է Կապալառուի Անձնակազմի համար նաաատեսված Վարքկանոնները (ԲՍ):
Եթե անհրաժեշտ է, Կապալառուն այնուհետև շուտափույթ նշանակում է (կամ նպաստում է նշանակմանը) հարմար փոխարինող՝ հավասարազոր հմտություններով ու փորձառությամբ:

Անկախ Ծրագրի Ղեկավարի պահանջից՝ որևէ աշխատակցի հեռացնելու կամ հեռացմանը նպաստելու, Կապալառուն պետք է ըստ անհրաժեշտության դեպքում անհապաղ միջոցներ ձեռնարկի ի պատասխան վերոնշյալ (ա)-ից (զ) կետերում նկարագրված ցանկացած խախտման: Նշյալ անհապաղ միջոցները պետք է ներառեն ցանկացած Կապալառուի աշխատակցի հեռացումը (կամ հեռացմանը նպաստելը) շինհրապարակից կամ այլ վայրերից, որտեղ իրականացվում են աշխատանքները, եթե Կապալառուի աշխատակցը ներգրավված է վերոնշյալ (ա), (բ), (գ), (դ), (ե) կամ (զ) կետերում նկարագրված որևէ խախտում կատարելու կամ վերոնշյալ (է) կետի համաձայն գործի ընդունվելու մեջ:

●

**9.3** Կապալառուն պետք է ձեռնարկի բոլոր անհրաժեշտ անվտանգության միջոցառումները՝հանրային նշանակության ճանապարհների վրա կամ այլ ենթակառուցվածքներում Սարքավորումների կիրառման հետ կապված երրորդ կողմի պատահարներից ու վնասվածքներից խուսափելու համար: Կապալառուն պետք է մշտադիտարկի ճանապարհային անվտանգության հետ կապված միջադեպերն ու պատահարները՝ առկա անվտանգային խնդիրներն արձանագրելու և դրանց լուծման համար անհրաժեշտ միջոցառումներ մշակելու և իրականացնելու նպատակով:

**9.4** Աշխատուժ

9.4.1 *Անձնակազմի և աշխատուժի ներգրավում.* Կապալառուն աշխատանքների կատարման համար պետք է շինհրապարակում ապահովի և ներգրավի այնպիսի հմուտ, կիսահմուտ և ոչ հմուտ աշխատուժ, որն անհրաժեշտ է Պայմանագրի պատշաճ և ժամանակին իրականացման համար: Կապալառուին խրախուսվում է ողջամտության և իրագործելիության սահմաններում ներգրավելու համապատասխան որակավորումներով և փորձով անձնակազմ և աշխատուժ երկրի ներսում գտնվող աղբյուրներից:

●

●

թե այլ բան նախատեսված չէ Պայմանագրով, Կապալառուն ըստ ՊԸՊ 9.4.6 ենթակետի պատասխանատու է Կապալառուի Անձնակազմի՝ աշխատանքի ընդունման, տեղափոխման, կեցավայրի

և հարմարությունների ապահովման, ինչպես նաև բոլոր համապատասխան վճարումների համար:

●

●

ապալառուն պետք է Կապալառուի Անձնակազմին տրամադրի վերջինիս աշխատանքի պայմանների և ժամկետների վերաբերյալ պարզ և հասկանալի տեղեկատվություն ու փաստաթղթեր: Տրամադրվող տեղեկատվությամբ և փաստաթղթերով պետք է ամրագրվեն Կապալառուի Անձնակազմի իրավունքները՝ համաձայն կիրառելի աշխատանքային օրենսդրության (ներառյալ բոլոր կիրառելի հավաքական համաձայնագրերը), ներառյալ՝ աշխատաժամերի, վարձատրության, արտաժամյա աշխատանքի, հատուցումների և նպաստների, ինչպես նաև Մասնագրերով նախատեսված պահանջներից բխող իրավունքները: Կապալառուի Անձնակազմը պետք է տեղեկացված լինի իր աշխատանքային պայմաններում և ժամկետներում կատարվող ցանկացած առարկայական փոփոխության մասին:

●

9.4.2 *Աշխատանքի պայմանները*. Կապալառուն պետք է Կապալառուի Անձնակազմին տեղեկացնի հետևյալի մասին.

●

●

ա) անձնակազմի վճարումներից ցանկացած պահում և այդպիսի պահումների պայմանները՝ կիրառելի օրենսդրության կամ Մասնագրերի համաձայն,

●

●

բ) Երկրի գործող օրենսդրությամբ նախատեսված կարգով և ժամկետում հարկման ենթակա աշխատավարձից, վարձատրությունից, նպաստներից և այլ հավելավճարներից աշխատակիցների՝ անձնական եկամտահարկ վճարելու պարտավորությունը:

●

●

ապալառուն կկատարի վերոնշյալ պահումների հետ կապված պարտավորությունները՝ գործող օրենքներով նման պարտավորության սահմանված լինելու դեպքում:

●

իրառելի օրենսդրությամբ կամ Մասնագրերով սահմանված դեպքերում Կապալառուն պարտավոր է ժամանակին գրավոր ծանուցել Կապալառուի Անձնակազմին աշխատանքի ավարտի և վերջնահաշվարկի վերաբերյալ մանրամասների մասին: Կապալառուն պետք է վճարի Կապալառուի Անձնակազմին (ուղակիորեն կամ ըստ անձնակազմի համար նպատակահարմարության) բոլոր հասանելիք վճարները, ներառյալ, եթե կիրառելի է, սոցիալական ապահովության և կենսաթոշակային վճարները նախքան աշխատակիցների աշխատանքի ավարտը կամ ավարտի պահին:

●

9.4.3 Կապալառուն կարող է Պատվիրատուի երկիր բերել ցանկացած օտարերկրյա անձնակազմի, որը անհրաժեշտ է Աշխատանքները կատարելու համար՝ որքանով դա թույլատրված է կիրառվող օրենքներով: Կապալառուն պետք է ապահովի, որ այդ անձնակազմին տրամադրվեն ռեզիդենտության վիզաներ և աշխատանքի թույլտվություններ: Կապալառուի խնդրանքի դեպքում, Պատվիրատուն ժամանակին կգործադրի իր բոլոր ջանքերը Կապալառուի անձնակազմին երկիր բերելու համար և կօժանդակի Կապալառուին տեղական կամ պետական ցանկացած պահանջվող թույլտվություն ստանալու հարցում:

●

9.4.4 Կապալառուն պարտավոր է իր հաշվին տրամադրել Պայմանագրով Շինհրապարակում վարձած Կապալառուի անձնակազմի իրենց տարբեր երկրներ վերադառնալու միջոցները: Նա նաև ապահովում է այդ անձանց համապատասխան ժամանակավոր մնալու ծախսերը՝ Պայմանագրով իրենց աշխատանքի դադարեցումից մինչև նրանց ծրագրված վերադարձի օրը: Եթե Կապալառուն չի տրամադրում տրանսպորտի և ժամանակավոր մնալու միջոցները, Պատվիրատուն կարող է ինքը տրամադրել այդ միջոցները և փոխհատուցել այդ ծախսերը Կապալառուից:

●

9.4.5 *Անկարգ պահվածք:* Կապալառուն պարտավոր է Պայմանագրի ողջ ընթացքում գործադրել բոլոր ջանքերը կանխելու ցանկացած անօրինական, անկարգ կամ վայրագ պահվածք իր անձնակազմի կողմից:

●

9.4.6 *Հարմարություններ աշխատակազմի և բանվորների համար:* Բացառությամբ Տեխնիկական մասնագրերում նշված այլ դեպքերի, Կապալառուն պարտավոր է իր անձնակազմի համար ապահովել և պահպանել բոլոր կացարաններն ու հարմարությունները: Եթե նշված է Տեխնիկական մասնագրերում, Կապալառուն պետք է հնարավորություն տա կամ տրամադրի ծառայություններ, որոնք կապահովեն Կապալառուի անձնակազմի ֆիզիկական, սոցիալական և մշակութային կարիքները: Կապալառուն պարտավոր է նաև ապահովել Պատվիրատուի անձնակազմի համար Տեխնիկական մասնագրերում նշված հարմարությունները:

●

9.4.7 Կապալառուն իր անձնակազմի համար պետք է հաշվի առնի բոլոր ընդունված փառատոները, պաշտոնական տոները, կրոնական կամ այլ սովորույթները, ինչպես նաև աշխատանքի ընդունմանը վերաբերող բոլոր տեղական օրենքներն ու կանոնակարգերը: Կապալառուն իր անձնակազմին տրամադրում է անձնակազմի ամենամյա արձակուրդ, հիվանդության և մայրության արձակուրդ, ընտանեկան արձակուրդ, ինչպես պահանջվում է կիրառելի օրենքներով, կամ ինչպես նշված է Տեխնիկական մասնագրերում:

●

9.4.8 *Սննդի ապահովում:* Կապալառուն պարտավոր է ապահովել համապատասխան սննդամթերքի բավարար մատակարարում, եթե նշված է Տեխնիկական մասնագրերում՝ ողջամիտ գներով, Պայմանագրի նպատակով և Պայմանագրի առնչությամբ:

9.4.9 *Ջրամատակարարում:* Կապալառուն պարտավոր է՝ հաշվի առնելով տեղական պայմանները, ապահովել Շինհրապարակում խմելու և այլ

ջրի պատշաճ մատակարարում՝ Կապալառուի անձնակազմի կողմից օգտագործելու համար:

●

9.4.10 *Միջոցառումներ միջատների և վնասատուների դեմ:* Կապալառուն պարտավոր է մշտապես ձեռնարկել բոլոր անհրաժեշտ միջոցները Շինհրապարակում վարձած Կապալառուի անձնակազմին միջատներից և վնասատուներից պաշտպանելու և նրանց առողջությանը սպառնացող վտանգը նվազեցնելու համար: Կապալառուն պարտավոր է պահպանել առողջապահության տեղական իշխանությունների բոլոր կանոնները, այդ թվում օգտագործել թունաքիմիկատներ:

●

9.4.11 *Ոգելից խմիչքներ և դեղեր:* Կապալառուին չի թույլատրվում՝ բացի Պատվիրատուի երկրի օրենքներով նախատեսված դեպքերի, ներմուծել, վաճառել, տալ, փոխանակել կամ այլ կերպ օտարել որևէ ոգելից խմիչք կամ դեղ, կամ թույլ տալ Կապալառուի անձնակազմին վաճառել, նվիրել, փոխանակել կամ օտարել որևէ ոգելից խմիչք կամ դեղ:

●

9.4.12 *Զենք և զինամթերք:* Կապալառուին չի թույլատրվում տալ, փոխանակել կամ օտարել որևէ անձի որևէ տեսակի զենք ու զինամթերք, և չի թույլատրվում դա անել նաև իր անձնակազմին:

●

9.4.13 *Թաղման արարողություններ:* Կապալառուն պարտավոր է՝ որքանով դա պահանջվում է տեղական կանոններով, կատարել որևէ թաղման արարողություն իր տեղական որևէ աշխատողի համար, որը կարող է մահանալ Աշխատանքների իրականացման ժամանակ:

●

9.4.14 *Հարկադիր աշխատանք:* Կապալառուն, ներառյալ իր ենթակապալառուները, չպետք է ներգրավի հարկադիր աշխատանք: Հարկադիր աշխատանքը՝ դա ցանկացած աշխատանքը կամ ծառայությունն է, որն իրականացվում է ոչ կամովի կերպով և իրականացվում է ուժի կամ պատժի սպառնալիքի տակ գտնվող անհատի կողմից և ներառում է ցանկացած ոչ կամավոր կամ պարտադիր աշխատանք, ինչպիսիք են՝ ուսուցման պայմանագրի հիման վրա կատարվող աշխատանք, պարտատոմսերով իրականացվող աշխատանք, կամ նմանատիպ աշխատանքային պայմանագրային պայմանավորվածություններով իրականացվող աշխատանք:

●

●

րաֆիքինգի ենթարկված ոչ մի անձ չի կարող վարձվել կամ ներգրավվել աշխատանքի մեջ: Մարդկանց թրաֆիքինգը սահմանվում է որպես մարդկանց հավաքագրում, տեղափոխում, ընդունում, ապաստանի տրամադրում՝ սպառնալիքով կամ ուժի գործադրմամբ կամ հարկադրանքի, բռնագանձման, խարդախության, խաբեության, լիազորությունների չարաշահման կամ խոցելի վիճակի օգտագործման միջոցով: Թրաֆիկինգ է նաև որևէ անձի շահագործման նպատակներով այդ անձի նկատմամբ հսկողություն ունեցող անձից համաձայնություն ստանալու համար վճարումներ կամ օգուտներ տալը կամ ստանալը:

●

9.4.15 *Մանկական աշխատանք:* Կապալառուն, այդ թվում նրա ենթակապալառուները, չպետք է վարձեն կամ ներգրավեն 14 տարեկանից ցածր երեխաների, կամ եթե տեղական օրենքով սահմանված է ավելի բարձր տարիքային շեմից (նվազագույն տարիք):

Կապալառուն, ներառյալ նրա ենթակապալառուները, չպետք է վարձեն կամ ներգրավեն նվազագույն տարիքից մինչև 18 տարեկան երեխաներին այնպիսի եղանակով, որը կարող է վտանգավոր լինել, կամ խանգարել երեխայի կրթությանը կամ վնասել երեխայի առողջությանը, կամ ֆիզիկական, մտավոր, հոգևոր, բարոյական կամ սոցիալական զարգացումը:

Կապալառուն, ներառյալ նրա ենթապահառուները, նվազագույն տարիքից մինչև 18 տարեկան երեխաներին պետք է աշխատանքի ընդունեն կամ ներգրավեն միայն այն բանից հետո, երբ Կապալառուն իրականացրել է համապատասխան ռիսկերի գնահատում, որը հաստատվել է Ծրագրի ղեկավարի կողմից: Ծրագրի ղեկավարը կիրականացնի Կապալառուի մշտադիտարկման, այդ թվում առողջության, աշխատանքային պայմանների և աշխատանքային ժամերի մոնիթորինգ:

Երեխաների համար վտանգավոր համարվող աշխատանք է հանդիսանում այն աշխատանքը, որն իր բնույթով կամ իրականացման պայմաններով կարող է վտանգել երեխաների առողջությունը, անվտանգությունը կամ բարոյական վիճակը: Երեխաների համար արգելված նման աշխատանքներն են՝

ա) աշխատանք, որի դեպքում նրանք կարող են ենթարկվել ֆիզիկական, հոգեբանական կամ սեռական չարաշահումների.

բ) ստորգետնյա, ստորջրյա աշխատանք, աշխատանք մեծ բարձրությունների վրա կամ սահմանափակ տարածքներում.

գ) աշխատանք վտանգավոր մեքենաների, սարքավորումների կամ գործիքների հետ, կամ բեռնաթափման աշխատանքներ կամ

դ) ծանր բեռների տեղափոխում.

ե) աշխատանք անառողջ միջավայրում, երբ երեխաները ենթարկվում են վտանգավոր նյութերի, ռեագենտների կամ գործընթացների, կամ առողջությանը վնաս պատճառող ջերմաստիճանի, աղմուկի կամ վիբրացիայի ազդեցությանը.

զ) աշխատանքը ծանր պայմաններում, ինչպիսիք են երկարաժամյա աշխատանքը, գիշերային աշխատանքը կամ աշխատանքը Պատվիրատուի տարածքում ստիպողաբար պահվելու պայմաններում:

9.4.16 *Աշխատողների աշխատանքային մատյանները:* Կապալառուն պարտավոր է վարել Շինհրապարակում բանվորների զբաղվածության ամբողջական և ճշգրիտ մատյաններ: Մատյանները պետք է ներառեն բոլոր վճարված աշխատողների անունները, տարիքը, սեռը, աշխատած ժամերը և աշխատավարձերը: Այս

մատյաններն ամփոփվում են ամսական կտրվածքով և ներկայացվում Ծրագրի ղեկավարին:

9.4.17 *Աշխատավորական կազմակերպություններ:* Այն երկրներում, որտեղ համապատասխան աշխատանքային օրենսդրությունը ճանաչում է աշխատողների իրավունքները՝ ձևավորելու և միանալու իրենց ընտրությամբ աշխատավորական կազմակերպություններին, ինչպես նաև ճանաչում է աշխատողների իրավունքները կոլեկտիվ գործելու՝ առանց միջամտության, Կապալառուն պարտավոր է հետևել այդպիսի օրենքներին: Նման հանգամանքներում պետք է հարգվեն օրինականորեն հաստատված աշխատավորական կազմակերպությունների օրինական ներկայացուցիչների դերը, և նրանց կտրամադրվի տեղեկատվություն, որը անհրաժեշտ է ժամանակին ողջամիտ բանակցություններ վարելու համար: Եթե համապատասխան աշխատանքային օրենքներն էապես սահմանափակում են աշխատավորական կազմակերպությունները, Կապալառուն կարող է իր անձնակազմին տրամադրել այլընտրանքային միջոցներ՝ արտահայտելու իրենց բողոքները և պաշտպանելու իրենց իրավունքները աշխատանքային պայմանների և վարձակալության պայմանների վերաբերյալ: Կապալառուն չի կարող ազդել այդ այլընտրանքային միջոցների վրա կամ վերահսկել դրանք: Կապալառուն չպետք է խտրականորեն վերաբերի կամ վրեժխնդիր լինի Կապալառուի այն անձնակազմի նկատմամբ, որը մասնակցում կամ ձգտում է մասնակցել այդպիսի կազմակերպություններում և կոլեկտիվ գործարքներում կամ այլընտրանքային մեխանիզմներում: Ակնկալվում է, որ աշխատավորական կազմակերպությունները արդար ձևով կներկայացնեն աշխատողներին:

9.4.18 *Խտրականության բացակայություն և հավասար հնարավորություններ:* Կապալառուն չպետք է խտրական որոշումներ կայացնի Կապալառուի անձնակազմի զբաղվածության կամ բուժման առնչությամբ՝ հիմնվելով աշխատանքային բնույթի պահանջների հետ կապ չունեցող անձնական բնութագրերի վրա: Կապալառուի անձնակազմի զբաղվածությունը պետք է հիմնվի հավասար հնարավորությունների և արդար վերաբերմունքի սկզբունքի վրա և խտրականություն չդնի աշխատանքային հարաբերությունների որևէ հարցում, ներառյալ հավաքագրումը և վարձումը, փոխհատուցումը (այդ թվում աշխատավարձները և նպաստները), աշխատանքային պայմանները և աշխատանքի ընդունման պայմանները, ուսուցման դասընթացների մատչելիությունը, աշխատանքային հանձնարարությունները, առաջխաղացումները, աշխատանքի դադարեցումը կամ թոշակի անցնելը, կարգապահական միջոցները:

Անցած ժամանակաշրջանում ցուցաբերած խտրականության հետևանքները վերացնելու համար արվող միջոցառումները, կամ աշխատանքի բնորոշ պահանջներից ելնելով որոշակի աշխատանքի ընտրության համար պահանջվող հատուկ միջոցները չեն համարվում խտրականություն: Կապալառուն անհրաժեշտության դեպքում օգնում և աջակցություն է ցուցաբերում խտրականությունը բացառելու և հավասար հնարավորություններ ապահովելու համար, այնպիսի հատուկ խմբերի, ինչպիսիք են կանայք, հաշմանդամություն ունեցող անձինք, արտագնա աշխատողները և երեխաները (աշխատանքային տարիքի համաձայն՝ ՊԸՊ 9.4.15 ենթակետին):

9.4.19 *Կապալառուի անձնակազմի բողոքարկման մեխանիզմ:* Կապալառուն պարտավոր է ունենալ բողոքների մեխանիզմ Կապալառուի անձնակազմի համար, իսկ անհրաժեշտության դեպքում՝ ՊԸՊ 9.4.17 ենթակետում նշված աշխատավորական կազմակերպությունների համար, որպեսզի բարձրացվեն աշխատատեղի հետ առնչվող մտահոգություններ: Բողոքարկման մեխանիզմը պետք է համաչափ լինի Պայմանագրի բնույթին, մասշտաբին, ռիսկերին և ազդեցություններին: Մեխանիզմը պետք է անհապաղ անդրադառնա մտահոգություններին՝ օգտագործելով հասկանալի և թափանցիկ գործընթաց, որը ժամանակին հետադարձ կապ կհաղորդի շահագրգիռ անձանց իրենց հասկանալի լեզվով: Մեխանիզմը պետք է չբերի որևէ պատժի և աշխատի անկախ ու անաչառ ձևով:

Աշխատանքի ընդունման պահին Կապալառուի անձնակազմը պետք է տեղեկացվի բողոքարկման մեխանիզմի մասին, ինչպես նաև դրա կիրառման միջոցների մասին: Կապալառուն կապահովի միջոցառումներ՝ բողոքների մեխանիզմը Կապալառուի ողջ անձնակազմին հասանելի դարձնելու համար:
Բողոքների մեխանիզմը չի խոչընդոտում այլ հասանելի դատական կամ վարչական միջոցների օգտագործմանը, կամ էլ փոխարինում կոլեկտիվ պայմանագրերով նախատեսված բողոքների մեխանիզմներին:
Բողոքների մեխանիզմը կարող է օգտագործել բողոքի առկա մեխանիզմները՝ պայմանով, որ դրանք մշակվել և կիրառվել են պատշաճ կերպով, անհապաղ արձագանքում են մտահոգությունները և մատչելի են Կապալառուի անձնակազմի համար: Բողոքի գոյություն ունեցող մեխանիզմները կարող են անհրաժեշտության դեպքում լրացվել Պայմանագրին հատուկ դրույթներով:

9.4.20 *Կապալառուի անձնակազմի ուսուցում:* Կապալառուն պարտավոր է ապահովել իր համապատասխան անձնակազմի ուսուցումը Պայմանագրի ԲՍ թեմաներով, այդ թվում համապատասխան զգայունության ուսուցում **ՍՇՉ և ՍՈ**, առողջապահության և անվտանգության թեմաներով համաձայն՝ ՊԸՊ 18.2 ենթակետի:

Տեխնիկական մասնագրերում նշված ձևով, կամ Ծրագրի ղեկավարի հրահանգով, Կապալառուն պետք է նաև համապատասխան հնարավորություններ ստեղծի իր անձնակազմի համար, որպեսզի վերջինս վերապատրաստվի Պայմանագրի ԲՍ թեմաներով Պատվիրատուի անձնակազմի կողմից:
Կապալառուն պետք է ուսուցում անցկացնի **ՍՇՉ և ՍՈ և** դրանց կանխարգելման թեմաներով իր բոլոր այն աշխատողների համար, ովքեր որևէ դեր ունեն իր անձնակազմին վերահսկելու հարցում:

| | | |
|---|---|---|
| **10. Պատվիրատուի և Կապալառուի ռիսկերը** | **10.1** | Պատվիրատուն կրում է այն ռիսկերը, որոնք՝ համաձայն սույն Պայմանագրի, հանդիսանում են Պատվիրատուի ռիսկերը, իսկ Կապալառուն կրում է այն ռիսկերը, որոնք՝ համաձայն սույն Պայմանագրի, հանդիսանում են Կապալառուի ռիսկերը: |
| **11. Պատվիրատուի ռիսկերը** | **11.1** | Մեկնարկի օրվանից սկսած՝ մինչև Թերությունների վերացման վկայականի թողարկումը, հետևյալ ռիսկերը հանդիսանում են Պատվիրատուի ռիսկերը՝ |

(ա) Անձնական վնասվածքի կամ մահվան ռիսկը, գույքի կորստի կամ վնասի ռիսկը (բացառությամբ Աշխատանքների, Արտադրամասերի, Նյութերի և Սարքավորումների), որոնք՝

i. հանդիսանում են Աշխատանքների նպատակով Շինհրապարակի օգտագործման կամ զբաղեցման հետևանք, կամ որոնք հանդիսանում են Աշխատանքների անխուսափելի արդյունք, կամ

ii. հանդիսանում են անփույթության, օրենսդրական պարտականությունները չկատարելու, կամ Պատվիրատուի, նրա կողմից վարձած կամ պայմանագրով աշխատանքի վերցված (բացի Կապալառուից) ցանկացած անձի կողմից օրինական իրավունքը խախտելու արդյունք,

(բ) Աշխատանքների, Արտադրամասերի, Նյութերի և Սարքավորումների վնասի ռիսկերն այնքանով, որքանով դրանք հանդիսանում են Պատվիրատուի սխալի կամ Պատվիրատուի նախագծի սխալի հետևանք, կամ ուղղակիորեն Աշխատանքների իրականացման երկրի վրա ազդող պատերազմի ու ռադիոակտիվ աղտոտման հետևանք:

**11.2** Աշխատանքների ավարտման օրվանից մինչև Թերությունների վերացման վկայագրի թողարկումը, Աշխատանքների, Արտադրամասերի և Նյութերի կորստի կամ վնասի ռիսկը համարվում է Պատվիրատուի ռիսկը, բացառությամբ այն վնասի կամ կորստի, որը հետևանք է

(a) Ավարտման օրվա դրությամբ գոյություն ունեցող թերությունների,
(b) մինչև Ավարտման օրը տեղի ունեցած դեպքի, որն ինքը Պատվիրատուի ռիսկը չէր, կամ
(c) Ավարտման օրվանից հետո Կապալառուի կողմից Շինհրապարակում իրականացված գործողությունների:

**12. Կապալառուի ռիսկերը**

**12.1** Մեկնարկի օրվանից սկսած մինչև Թերությունների վերացման վկայագրի տրման պահը, անձնական վնասվածքի, մահվան, ինչպես նաև գույքի կորստի կամ վնասի ռիսկերը (ներառյալ, Աշխատանքները, Նյութերը, Արտադրամասերն ու Սարքավորումներն առանց սահմանափակման), որոնք Պատվիրատուի ռիսկերը չեն, հանդիսանում են Կապալառուի ռիսկերը:

●

**13. Ապահովագրություն**

**13.1** Կապալառուն՝ իր և Պատվիրատուի համատեղ անուններից, Մեկնարկի օրվանից մինչև Թերությունների վերացման ժամանակաշրջանի ավարտը, պարտավոր է ապահովել հետևյալ դեպքերի ապահովագրական ծածկույթը, որոնք հանդիսանում են Կապալառուի ռիսկերը՝ **ՊՀՊ-ով սահմանված** գումարներով և նվազեցումներով.

(ա) Աշխատանքների, Արտադրամասերի և Նյութերի կորուստ,
(բ) Սարքավորումների կորուստ կամ վնաս,
(գ) Պայմանագրի հետ կապված Գույքի կորուստ կամ վնաս (բացառությամբ Աշխատանքների, Նյութերի, Արտադրամասերի ու Սարքավորումների) և,

(դ) անձնական վնաս կամ մահ:

**13.2** Կապալառուն պետք է ներկայացնի ապահովագրական հավաստագրերն ու վկայագրերը Ծրագրի ղեկավարի հաստատմանը՝ Մեկնարկի օրվանից առաջ: Բոլոր այդ ապահովագրություններով պետք է նախատեսվի հատուցում այնպիսի արժույթներով և համամասնություններով, որոնք պահանջվում են պատճառված կորուստը կամ վնասը փոխհատուցելու համար:

**13.3** Եթե Կապալառուն չի ներկայացնում պահանջվող հավաստագրերից ու վկայականներից որևէ մեկը, ապա Պատվիրատուն կարող է ինքն իրականացնել այն ապահովագրությունը, որը պետք է իրականացվեր Կապալառուի կողմից և իր կողմից արված ապահովագրավճարները փոխհատուցեր Կապալառուին վճարվելիք այլ գումարներից, կամ՝ եթե Կապալառուին վճարվելիք գումար չկա, ապա ապահովագրավճարը կհամարվի վճարման ենթակա պարտք:

**13.4** Ապահովագրության դրույթները չեն կարող փոփոխվել առանց Ծրագրի ղեկավարի հաստատման:

**13.5** Երկու կողմերն էլ պարտավոր են պահպանել ապահովագրական վկայագրերի պայմանները:

**14. Տվյալներ Շինհրապարակի մասին**

**14.1** Կապալառուն պարտավոր է ուսումնասիրել Շինհրապարակին առնչվող ցանկացած տվյալ, որը **բերված է ՊՀՊ-ում**՝ լրացված Կապալառուին հասանելի ցանկացած տեղեկատվությամբ:

**15. Աշխատանքների կատարումը Կապալառուի կողմից**

**15.1** Կապալառուն պարտավոր է կառուցել և տեղադրել Աշխատանքները Մասնագրերի և Գծագրերի համաձայն:

**15.2** Եթե Պայմանագրով նախատեսված է, որ Կապալառուն պետք է նախագծի մշտական Աշխատանքների որևէ մաս, ապա վերջինս պետք է հաշվի առնի Պատվիրատուի պահանջները, որոնք Մասնագրերում նշված լինելու դեպքում կարող են ներառել.

(ա) Աշխատանքների կառուցվածքային տարրերի նախագծում՝ հաշվի առնելով կլիմայական փոփոխությունների գործոնը,
(բ) Համընդհանուր անցանելիության հայեցակարգի կիրառում (/համընդհանուր անցանելիության հայեցակարգ/ նշանակում է տարբեր իրավիճակներում և հանգամանքներում բոլոր տարիքների ու կարողունակության տեր մարդկանց անխոչընդոտ անցանելիությունը), ինչպես նաև
(գ) Աշխատանքային պատահարների և բնական վտանգների, ներառյալ՝ եղանակային ծայրահեղ իրավիճակների նկատմամբ հանրության պոտենցիալ զգայունության ռիսկերի գնահատում:

**16. Աշխատանքները պետք է կատարվեն Նախատեսված ավարտման ժամկետ**

**16.1** Կապալառուն կարող է սկսել Աշխատանքների կատարումը Մեկնարկի օրվանից և պարտավոր է իրականացնել դրանք իր կողմից ներկայացված Ծրագրի համաձայն, որի թարմացված տարբերակները կհաստատվեն Ծրագրի ղեկավարի կողմից, և ավարտել Նախատեսված ավարտման ժամկետին:

**16.2** Կապալառուն չպետք է շինհրապարակում մոբիլիզացնի իր աշխատուժը, քանի դեռ Ծրագրի Ղեկավարը ողջամիտ ժամկետում չի հաստատել բնապահպանական և սոցիալական ռիսկերի ու

ազդեցությունների հաղթահարմանն ուղղված Կապալառուի կողմից առաջարկվող միջոցառումները: Պատվիրատուն չի կարող չհիմնավորված կերպով հետաձգել դրանց հաստատումը: Դրանք նվազագույնը պետք է ներառեն Կառավարման ռազմավարությունների և Իրականացման պլանների (ԿՌԻՊ), Կապալառուի անձնակազմի վարքականոնների կիրառումը, որոնք ներկայացվել են որպես Հայտի մաս համաձայնեցվել որպես Պայմանագրի մաս:

Կապալառուն պետք է Ծրագրի Ղեկավարի հաստատմանը ներկայացնի լրացուցիչ ԿՌԻՊ -եր, որոնք անհրաժեշտ են ընթացիկ Աշխատանքների ԲՍ ռիսկերը և ազդեցությունները կառավարելու համար: Այս ԿՌԻՊ-երը միասին ներկայացնում են Կապալառուի Բնապահպանական և Սոցիալական Կառավարման Պլանը (Կ-ԲՍԿՊ): Կապալառուն պարբերաբար (ոչ պակաս քան վեց (6) ամիսը մեկ) պետք է վերանայի և ըստ անհրաժեշտության թարմացնի Կ-ԲՍԿՊ-ը՝ հավաստիանալու համար, որ վերջինս պարունակում է Աշխատանքներին համահունչ միջոցառումներ: Թարմացված Կ-ԲՍԿՊ-ը պետք է ներկայացվի Ծրագրի Ղեկավարի հաստատմանը:

**17. Հաստատում Ծրագրի ղեկավարի կողմից**

**17.1** Կապալառուն պետք է Ծրագրի ղեկավարի հաստատմանը ներկայացնի Մասնագրեր ու Գծագրեր՝ ցույց տալով առաջարկվող Ժամանակավոր աշխատանքները:

**17.2** Կապալառուն պատասխանատու է Ժամանակավոր աշխատանքների նախագծման համար:

**17.3** Ծրագրի ղեկավարի հաստատումը չի փոխում Կապալառուի պարտականությունները Ժամանակավոր աշխատանքների նախագծման հարցում:

**17.4** Անհրաժեշտության դեպքում, Կապալառուն Ժամանակավոր աշխատանքների նախագծի համար պետք է ստանա երրորդ կողմի հաստատումը:

**17.5** Կապալառուի կողմից՝ ժամանակավոր կամ հիմնական Աշխատանքների իրականացման համար պատրաստված բոլոր Գծագրերը, պետք է նախապես հաստատվեն Ծրագրի ղեկավարի կողմից:

**18. Առողջություն, Անվտանգություն և Շրջակա Միջավայրի Պահպանություն**

**18.1** Կապալառուն պատասխանատու է Շինհրապարակում կատարվող բոլոր գործողությունների անվտանգության համար:

**18.2** Կապալառուն պարտավոր է.

(ա) պահպանել առողջապահական և անվտանգության բոլոր կիրառելի կանոնները և օրենքները,

(բ) կատարել Պայմանագրով նախատեսված առողջապահական և անվտանգության համապատասխան պարտավորությունները,

(գ) հոգ տանել շինհրապարակում և այլ վայրերում (որտեղ իրականացվում են աշխատանքները) գտնվելու իրավունք ունեցող բոլոր անձանց առողջության և անվտանգության մասին,

(դ) շինհրապարակը և Աշխատանքները զերծ պահել անցանկալի խոչընդոտներից՝ վերոնշյալ անձանց վտանգելուց խուսափելու նպատակով,

(ե) ապահովել Աշխատանքների իրականացման վայրի ցանկապատումը, լուսավորությունը, անվտանգ մուտքը, պահպանությունը մինչև Պայմանագրով նախատեսված Ավարտական Ակտի ներկայացումը,

(զ) կատարել Ժամանակավոր Աշխատանքներ (ներառյալ՝ ժամանակավոր ճանապարհների, հետիոտնային անցուղիների, պահակակետերի և ցանկապատերի կառուցում), որոնք կարող են անհրաժեշտ լինել Աշխատանքների իրականացման ընթացքում՝ հանրության և հարակից հողամասերի սեփականատերերի և զբաղեցնողների կողմից օգտագործվելու և վերջիններիս անվտանգության համար,

(է) պատշաճորեն ապահովել Կապալառուի անձնակազմի առողջապահական և անվտանգային ուսուցումը՝ վարելով համապատասխան գրանցամատյան,

(ը) ակտիվորեն ներգրավել Կապալառուի անձնակազմին՝ առողջության և անվտանգության պահանջները հասկանալու և իրականացման մեթոդները խթանելու մեջ, ինչպես նաև ներգրավել Կապալառուի անձնակազմին տեղեկատվություն տրամադրու, աշխատանքի անվտանգության և առողջության վերաբերյալ վերապատրաստման և Կապալառուի անձնակազմին անվճար հիմունքով անձնական պաշտպանիչ միջոցների տրամադրման գործում,

(թ) Կապալառուի անձնակազմի համար գործի դնել աշխատանքային գործընթացներ, որպեսզի Կապալառուի անձնակազմը կարողանա զեկուցել այն աշխատանքային իրավիճակների մասին, որոնք, իրենց կարծիքով, անվտանգ և առողջ չեն: Ինչպես նաև գործի դնել այնպիսի աշխատանքային գործընթացներ, որոնք վերոնշյալ աշխատանքային իրավիճակից իրենց դուրս կբերեն, որի համար ողջամիտ արդարացում ունեն առ այն, որ վերջինս իրենց կյանքին կամ առողջությանը լուրջ վտանգ է ներկայացնում:

(ժ) Կապալառուի այն աշխատակիցները, որոնք դուրս կգան այդպիսի աշխատանքային իրավիճակներից, չպետք է վերադառնան աշխատանքի մինչև նշված իրավիճակի շտկման համար անհրաժեշտ վերականգնողական գործողությունների ձեռնարկումը: Նշյալ աշխատակիցների նկատմամբ չպետք է տույժեր կամ այլ պատժամիջոցներ կիրառվեն վերոհիշյալ իրավիճակի մասին զեկույցի կամ խնդրո առարկա աշխատավայրից հեռանալու համար,

(ի) Այն դեպքում, երբ Պատվիրատուի անձնակազմը, Պատվիրատուի կողմից ներգրավված այլ կապալառուներ և/կամ որևէ իրավասու գերատեսչություն և մասնավոր կոմունալ ընկերություններ կատարում են Պայմանագրով չնախատեսված աշխատանքներ շինհրապարակում կամ դրա մոտակայքում, համագործակցել առողջապահական և անվտանգության պահանջների կիրարկման գործում՝ չխախտելով համապատասխան սուբյեկտների պատասխանատվությունը սեփական անձնակազմի առողջության և անվտանգության համար, ինչպես նաև

(լ) Մշակել և իրականացնել առողջության և անվտանգության կատարողականի և աշխատանքային միջավայրի պարբերական ստուգման համակարգ (ոչ պակաս, քան վեց ամիսը մեկ անգամ):

Համաձայն ՊԸՊ 16.2 ենթակետի, Կապալառուն պետք է Ծրագրի Ղեկավարի հաստատմանը ներկայացնի առողջության և անվտանգության ձեռնարկ, որը մշակվել է հատկապես Աշխատանքների, Շինհրապարակի և այլ վայրերի (առկայության դեպքում) համար, որտեղ Կապալառուն մտադիր է իրականացնել Աշխատանքները:

Առողջության և անվտանգության ձեռնարկը կպատրաստվի ի լրումն ցանկացած այլ նմանատիպ փաստաթղթի, որը պահանջվում է կիրառելի առողջապահական և անվտանգության կանոններով ու օրենքներով:

Առողջության և անվտանգության ձեռնարկում պետք է շարադրված լինեն Պայմանագրով նախատեսված բոլոր առողջապահական և անվտանգության պահանջները,

(ա) Որոնք առնվազն պետք է ներառեն.

(i) Անվտանգ աշխատանքային միջավայր ստեղծելու և պահպանելու ընթացակարգեր՝ առանց առողջությանը վտանգելու բոլոր աշխատավայրերում, մեքենա-մեխանիզմների, սարքավորումների վրա և գործընթացներում, որոնք գտնվում են Կապալառուի վերահսկողության ներքո, ներառյալ՝ քիմիական, ֆիզիկական և կենսաբանական նյութերի նկատմամբ հսկողության միջոցառումները,

•

(ii) Իրականացվելիք ուսուցման վերաբերյալ մանրամասները, իրենց արձանագրություններով,

•

(iii) Կանխարգելման, պատրաստվածության և արձագանքման ընթացակարգեր, որոնք պետք է իրականացվեն Արտակարգ իրավիճակի ժամանակ (այսինքն՝ անսպասելի միջադեպ, որն ի հայտ է եկել ինչպես բնական, այնպես էլ մարդկային գործոնների բերումով և դրսևորվում է սովորաբար հրդեհի, պայթյունների, արտահոսքերի տեսքով, որոնք կարող են առաջանալ տարբեր պատճառներով, ներառյալ՝ նմանատիպ պատահարների կանխարգելմանն ուղղված գործառնական ընթացակարգերի չկատարման պատճառով, ծայրահեղ եղանակային պայմանների կամ նախազգուշացման բացակայության պատճառներով),

•

(iv) Բացասական հետևանքների՝ աշխատանքային վնասվածքների, մահվան, հաշմանդամության և հիվանդությունների հակազդման միջոցներ,

•

(v) Ջրի միջոցով տարածվող, ջրային հիմքով, ջրի հետ կապված և միջատների միջոցով տարածվող հիվանդությունների՝ բնակչությանը ներկայացնող պոտենցիալ վտանգից խուսափելու կամ այն նվազագույնի հասցնելուն ուղղված ձեռնարկվելիք միջոցառումներ,

•

(vi) Աշխատանքների իրականացման հետ կապված վարակիչ հիվանդությունների (ներառյալ՝ սեռական ճանապարհով տարածվող հիվանդությունները և վարակները, ինչպես օրինակ ՁԻԱՀ-ը) և ոչ-վարակիչ հիվանդությունների տարածումը կանխարգելելու և նվազագույնի հասցնելուն ուղղված ձեռնարկվելիք միջոցառումները, հաշվի առնելով խոցելի խմբերի նախատրամադրվածությունը և բարձր զգայունությունը: Սա ներառում է կանխարգելիչ կամ նվազագույնի հասցնելու միջոցառումներ այն վարակիչ հիվանդությունների տարածման համար, որոնք կարող են ի հայտ գալ Պայմանագրի իրականացման հետ կապված ժամանակավոր կամ մշտական աշխատուժի ներհոսքի բերումով,

(vii) Կեցության և ապահովության կառույցների որակի և կառավարման քաղաքականություն և ընթացակարգեր, եթե այդպիսի կեցության և ապահովության կառույցներ տրամադրվում են Կապալառուի կողմից՝ համաձայն ՊԸՊ 9.4.6 ենթակետի, ինչպես նաև

●

(b)Մասնագրերում նշված բոլոր մյուս պահանջները:

**18.3** Շրջակա միջավայրի պահպանություն

●

(ա) Կապալառուն պարտավոր է ձեռնարկել բոլոր անհրաժեշտ միջոցները՝ պահպանելու շրջակա միջավայրը (ինչպես շինհրապարակի ներսում, այնպես էլ դրսում), և

(բ) Սահմանափակել գույքին և մարդկանց պատճառած վնասը և անհանգստությունը՝ պայմանավորված աղտոտմամբ, աղմկով, ինչպես նաև Կապալառուի կողմից իրականացվող աշխատանքներով և/կամ գործողություններով:

Կապալառուն պետք է ապահովի, որպեսզի վերջինիս գործունեությունից առաջացող արտանետումները, մակերեսային հոսքերը, արտահոսքերը և ցանկացած այլ աղտոտող նյութեր չգերազանցեն ոչ Մասնագրերում նշված արժեքները, ոչ էլ կիրառելի օրենքներով սահմանվածները:

Կապալառուի գործունեության արդյունքում Շինհրապարակում կամ դրա սահմաններից դուրս գտնվող շրջակա միջավայրին, գույքին և (կամ) մարդկանց վնաս պատճառելու դեպքում Կապալառուն պետք է համաձայնեցնի Ծրագրի Ղեկավարի հետ համապատասխան վերականգնողական գործողությունները և դրանց իրականացման ժամանակացույցը `վնասված միջավայրը սահմանված կարգով նախկին վիճակին վերադարձնելու նպատակով: Կապալառուն վնասների վերականգնման գործողությունները կիրականացնի իր հաշվին՝ Ծրագրի ղեկավարին գոհացուցիչ կերպով:

**19. Հնէաբանական և երկրաբանական գտածոներ**

**19.1** Բոլոր այն բրածոները, մետաղադրամները, արժեքավոր կամ անտիկվար իրերը, կառույցները, կառույցների խմբերը և այլ մնացորդներ կամ երկրաբանական, հնագիտական, հնէաբանական, պատմական, ճարտարապետական կամ կրոնական հետաքրքրություն ներկայացնող իրեր, որոնք հայտնաբերվել են շինհրապարակում, պետք է հանձնվեն Պատվիրատուին ի պահ: Կապալառուն պարտավոր է.

•
(ա) ձեռնարկել բոլոր ողջամիտ նախազգուշական միջոցները, ներառյալ գտածոյի տարածքը կամ տեղը ցանկապատելը, հետագա ոտնձգություններից խուսափելու համար և կանխելու, որպեսզի Կապալառուի անձնակազմը կամ այլ անձինք չտեղաշարժեն կամ չվնասեն գտածոներից որևէ մեկը,
(բ) վերապատրաստել Կապալառուի համապատասխան անձնակազմին՝ գտածոներ հայտնաբերելու դեպքում պատշաճ գործողություններ կատարելու գործում, ինչպես նաև

(գ) իրականացնել Մասնագրերի պահանջներին և ոլորտը կարգավորող օրենսդրությանը համապատասխան ցանկացած այլ գործողություն:

Կապալառուն ցանկացած նման գտածո հայտնաբերելուց հետո հնարավորինս շուտ հայտնում է Ծրագրի Ղեկավարին այդ մասին և կատարում վերջինիս հանձնարարականները՝ դրանց հետ վարվելու վերաբերյալ:

**20. Շինհրապարակի տնօրինում**

**20.1** Պատվիրատուն Կապալառուի տնօրինմանը կփոխանցի Շինհրապարակի բոլոր հատվածները: Եթե որևէ հատված չի փախանցվում **ՊՀՊ-ում նշված** օրվանից, ապա համարվում է, որ Պատվիրատուն ուշացրել է համապատասխան գործողությունների սկիզբը, ինչը հանդիսանում է Փոխհատուցման դեպք:

**21. Մուտք շինհրապարակ**

**21.1** Կապալառուն պարտավոր է թույլատրել Ծրագրի Ղեկավարին (ներառյալ Բանկի անձնակազմը կամ խորհրդատուները, որոնք գործում են Բանկի անունից, շահագրգիռ կողմերը և երրորդ անձիք, ինչպիսիք են անկախ փորձագետները, տեղական համայնքները կամ հասարակական կազմակերպությունները) և վերջինիս կողմից լիազորված ցանկացած անձին, այդ թվում բնապահպանական և սոցիալական աուդիտ իրականացնելու նպատակով, եթե անհրաժեշտ է, մուտք գործել Շինհրապարակ և ցանկացած այլ տարածք, որտեղ իրականացվում կամ նախատեսվում է իրականացնել Պայմանագրի հետ կապված աշխատանքներ:

**22. Հրահանգներ, ստուգումներ և աուդիտ**

**22.1** Կապալառուն պարտավոր է կատարել Ծրագրի ղեկավարի բոլոր ցուցումները, որոնք համապատասխանում են այն կիրառվող օրենքներին, ուր տեղակայված է Շինհրապարակը:

**22.2** Կապալառուն պարտավոր է վարել, ինչպես նաև գործադրել ողջամիտ ջանքեր, որպեսզի իր ենթակապալառուները և ենթախորհրդատուները նույնպես վարեն Աշխատանքների ճշգրիտ և սիստեմատիկ հաշվետվություններ և գրանցումներ այնպիսի ձևով և մանրամասներով, որպեսզի հնարավոր լինի հստակ նույնականացնել համապատասխան ժամկետային փոփոխությունները և արժեքները:

•

**22.3** Բանկի կողմից իրականացվող ստուգումներ և աուդիտ

•

Համաձայն ՊԸՊ Հավելված Ա-ի 2.2 ե. Ենթակետի՝- Խարդախություն և կաշառակերություն, Կապալառուն պարտավոր է թույլատրել և հետևել, որպեսզի իր գործակալները (հայտարարված, կամ ոչ), ենթակապալառուները, ենթախորհրդատուները, ծառայություն մատուցողները և անձնակազմը թույլատրեն Բանկին ստուգել

Շինհրապարակը և/կամ գնման գործընթացին, հայտատուի ընտրությանը և/կամ պայմանագրի իրականացմանը վերաբերող հաշվետվությունները, գրանցումները և այլ փաստաթղթերը, ինչպես նաև տրամադրեն այդ հաշվետվությունները, գրանցումները այլ փաստաթղթերը Բանկի կողմից նշանակված աուդիտորների կողմից աուդիտ իրականացնելու համար: Կապալառուի, նրա ենթակապալառուների և ենթախորհրդատուների ուշադրությունը հրավիրվում է ՊԸՊ 25.1 ենթակետի (Խարդախություն և Կաշառակերություն) վրա, որը՝ ի թիվս այլոց, սահմանում է այն գործողությունները, որոնք ուղղված են Բանկի ստուգումների և աուդիտի իրականացման իրավունքների էական խոչընդոտմանը, կդիտարկվեն որպես արգելված գործելակերպ և հիմք կհանդիսանան պայմանագիրը դադարեցնելու համար (ինչպես նաև կսահմանվեն ոչ իրավասու՝ Բանկի պատժամիջոցների գերակշռող ընթացակարգերի համապատասխան):

**23. Վեճի Դատավորի նշանակում**

**23.1** Վեճի դատավորը նշանակվում է Պատվիրատուի և Կապալառուի կողմից երկուստեք, Պատվիրատուի կողմից Ընդունման նամակը թողարկելու պահին: Եթե Ընդունման նամակում Պատվիրատուն չի համաձայնվել Վեճի դատավորի նշանակման հետ, ապա նա պետք է խնդրի **ՊՀՊ-ում նշանակված** մարմնից՝ նշանակել Վեճի դատավոր՝ այդ խնդրանքը ստանալու պահից 14 օրվա ընթացքում:

**23.2** Վեճի դատավորի հրաժարականի կամ մահվան դեպքում, կամ եթե Պատվիրատուն կամ Կապալառուն համաձայնվեն, որ Վեճի դատավորը չի գործում համաձայն Պայմանագրի դրույթների, ապա Պատվիրատուի և Կապալառուի կողմից պետք է երկուստեք նշանակվի նոր Վեճի դատավոր: Եթե Պատվիրատուն և Կապալառուն համաձայնության չեն գալիս 30 օրվա ընթացքում, Վեճի դատավորը նշանակվում է **ՊՀՊ-ում** նշված Նշանակող մարմնի կողմից՝ կողմերից որևէ մեկի խնդրանքով, այդ խնդրանքը ստանալու պահից 14 օրվա ընթացքում:

**24. Վեճերը լուծելու ընթացակարգը**

**24.1** Եթե Կապալառուն կարծում է, որ Ծրագրի ղեկավարի կողմից ընդունված որոշումը եղել է Պայմանագրով Ծրագրի ղեկավարին տրված լիազորություններից դուրս, կամ կայացվել է սխալ որոշում, ապա այդ որոշումը պետք է ուղղվի Վեճի Դատավորին՝ Ծրագրի ղեկավարի որոշման ծանուցման պահից 14 օրվա ընթացում:

**24.2** Վեճի դատավորը պարտավոր է վեճի մասին ծանուցումը ստանալու պահից 28 օրվա ընթացքում կայացնել գրավոր որոշում:

**24.3** Վեճի դատավորը վճարվում է ժամով՝ **ՊՀՊ-ով սահմանված դրույքով**, ըստ **ՊՀՊ-ով սահմանված** փոխհատուցվող ծախսերի տեսակների: Ծախսերը պետք է հավասարապես բաժանվեն Պատվիրատուի և Կապալառուի միջև՝ անկախ Վեճի դատավորի որոշումից: Երկու կողմերն էլ կարող են Վեճի դատավորի որոշումը հանձնել արբիտրաժ՝ Վեճի դատավորի գրավոր որոշման պահից 28 օրվա ընթացքում: Եթե կողմերից և ոչ մեկը վեճը չի հանձնում արբիտրաժ վերոհիշյալ 28 օրվա ընթացքում, ապա Վեճի արբիտրի որոշումը դառնում է վերջնական և պարտադիր:

**24.4** Միջնորդ դատարանի գործունեությունը պետք է ընթանա արբիտրաժային հաստատության կողմից հրապարակված

համապատասխան արբիտրաժային ընթացակարգերի, որի տեղն ու անվանումը **սահմանված են ՊՀՊ-ում**:

**25. Կաշառակերություն և խարդախություն**

**25.1** Բանկը պահանջում է **ՊԸՊ** հավելվածում ներկայացված կաշառակերության և խարդախության դեմ պայքարի քաղաքականության պահպանում համաձայն «Համաշխարհային Բանկի Խմբի (ՀԲԽ) գերակայող պատժամիջոցների շրջանակում», ինչպես սահմանված է պայմանագրի ՊԸՊ Հավելված Ա-ում:

**25.2** Պատվիրատուն պահանջում է, որ Կապալառուն բացահայտի ցանկացած միջնորդավճար կամ վարձատրություն, որը վճարվել է կամ պետք է վճարվի գործակալներին կամ այլ կողմերին մրցութային գործընթացի կամ Պայմանագրի կատարման ընթացքում: Տեղեկատվությունը պետք է պարունակի գործակալի կամ մյուս կողմի անունը և հասցեն, գումարը և արժույթը, ինչպես նաև միջնորդավճարի, պարգևատրման կամ վարձատրության նպատակը:

**26. Շահառուների ներգրավում**

26.1 Կապալառուն պետք է պայմանագրին առնչվող տեղեկատվություն տրամադրի, որը կարող են ողջամտորեն պահանջել Պատվիրատուն և/կամ Ծրագրի Ղեկավարը Շահառուների ներգրավումը պարզելու համար: «Շահառու» հանդիսանում են այն անհատները կամ խմբերը, որոնք.

(i) Կրում են կամ հավանական է, որ կրեն Պայմանագրով նախատեսված գործողությունների ազդեցությունը,
(ii) Կարող են շահագրգռվածություն ունենալ Պայմանագրի հետ կապված:

- 

Կապալառուն կարող է նաև անմիջականորեն մասնակցել Շահառուների ներգրավման գործընթացներին, քանի որ Պատվիրատուի և/կամ Ծրագրի Ղեկավարի կարող են ողջամտորեն պահանջել:

**27. Մատակարարներ (Ենթակապալառուներից բացի)**

27.1 Բռնի աշխատուժ. Կապալառուն պետք է միջոցներ ձեռնարկի՝ պահանջելու իր մատակարարներից (Ենթակապալառուներից բացի) չվարձել կամ չներգրավել բռնի աշխատուժ, ներառյալ՝ թրաֆիքինգի զոհ դարձած անձանց, ինչպես նկարագրված է ՊԸՊ 9.4.14 ենթակետում: Բռնի աշխատուժի/թրաֆիքինգի դեպքերի արձանագրման դեպքում Կապալառուն պարտավոր է պահանջել մատակարարներից՝ իրավիճակի շտկմանն ուղղված համապատասխան միջոցներ ձեռնարկել: Մատակարարի կողմից իրավիճակը չշտկվելու դեպքում Կապալառուն ողջամիտ ժամկետում պետք է փոխարինի վերջինիս այնպիսի մատակարարով, որն ի զորու է կառավարել նման ռիսկերը:

27.2 Երեխաների շահագործում. Կապալառուն պետք է միջոցներ ձեռնարկի՝ պահանջելու իր մատակարարներից (Ենթակապալառուներից բացի) չվարձել կամ չներգրավել երեխաներին որպես աշխատուժ, ինչպես նկարագրված է ՊԸՊ 9.4.15 ենթակետում: Երեխաների շահագործման դեպքերի արձանագրման դեպքում Կապալառուն պարտավոր է պահանջել մատակարարներից՝ իրավիճակի շտկմանն ուղղված համապատասխան միջոցներ ձեռնարկել: Մատակարարի կողմից իրավիճակը չշտկվելու դեպքում Կապալառուն ողջամիտ

ժամկետում պետք է փոխարինի վերջինիս այնպիսի մատակարարով, որն ի զորու է կառավարել նման ռիսկերը:

-

27.3 Անվտանգության լուրջ խնդիրներ. Կապալառուն, այդ թվում `իր ենթակապալառուները, պետք է կատարեն անվտանգության բոլոր կիրառելի պարտավորությունները, այնպես, ինչպես նշված է ՊԸՊ- ի 18.2 ենթակետում: Կապալառուն նաև միջոցներ կձեռնարկի, որպեսզի իր մատակարարներից (ենթակապալառուներից բացի) պահանջվի իրենց անձնակազմին վերաբերող անվտանգության խնդիրները լուծելու համար համարժեք ընթացակարգեր և մեղմացնող միջոցառումներ մշակել: Եթե անվտանգության լուրջ խնդիրներ հայտնաբերվեն, Կապալառուն պետք է պահանջի, որպեսզի մատակարարները համապատասխան քայլեր ձեռնարկեն իրավիճակը շտկելու համար: Եթե մատակարարը չի շտկում իրավիճակը, Կապալառուն ողջամիտ ժամկետում վերջինիս կփոխարինի այնպիսի մատակարարով, որն ի վիճակի է կառավարել նման ռիսկերը:

27.4 Բնական ռեսուրս հանդիսացող նյութերի ձեռքբերում մատակարարների միջոցով. Կապալառուն պետք է բնական ռեսուրս հանդիսացող նյութեր ձեռք բերի այն մատակարարներից, որոնք կարող են հիմնավորել, համաձայն ստուգման և/կամ հավաստագրման պահանջներին համապատասխանելու միջոցով, որ նմանատիպ նյութերի ձեռքբերումը չի ավելացնում բնական կամ կրիտիկական կենսամիջավայրերի էական փոխակերպման կամ էական դեգրադացման ռիսկ, ինչպես օրինակ փայտանյութի անկանոն հավաքը, խճի կամ ավազի կորզումը գետերի հունից կամ լողափերից:

Եթե մատակարարն այլևս չի կարողանում ապացուցել, որ նմանատիպ նյութերի ձեռքբերումը չի ավելացնում բնական կամ կրիտիկական կենսամիջավայրերի էական փոխակերպման կամ էական դեգրադացման ռիսկ, Կապալառուն ողջամիտ ժամկետում պետք է փոխարինի վերջինիս այնպիսի մատակարարով, որն ի զորու է ապացուցելու, որ կենսամիջավայրերն էական բացասական ազդեցություն չեն կրելու մատակարարվող նյութերից:

## 28. Վարքականոններ

28.1 Կապալառուն պետք է ունենա Վարքագծի Կանոններ իր աշխատակիցների համար:

Կապալառուն պետք է ձեռնարկի բոլոր անհրաժեշտ միջոցները`ապահովելու համար, որպեսզի իր յուրաքանչյուր աշխատակից տեղեկանա Վարքագծի Կանոնների մասին` ներառյալ արգելված վարքագծերը և հասկանա նման վարքագծերի հետևանքները:

Այս միջոցառումները ներառում են Կապալառուի անձնակազմի համար հասկանալի հրահանգներ և փաստաթղթեր, ինչպես նաև համապատասխան աշխատակիցների` նշյալ հրահանգների և (կամ) փաստաթղթերի ստացումը հաստատող ստորագրությունները սահմանված կարգով ձեռք բերելը:

Կապալառուն պետք է նաև ապահովի, որպեսզի Վարքագծի Կանոնները տեսանելիորեն ցուցադրվեն Շինհրապարակի բազմաթիվ վայրերում և ցանկացած այլ վայրում, որտեղ աշխատանքները կկատարվեն, ինչպես նաև Շինհրապարակից դուրս գտնվող

տարածքներում, որոնք հասանելի են տեղական համայնքին և ծրագրի ազդակիր բնակչությանը: Ցուցադրված վարքագծի կանոնները ներկայացվում են Կապալառուի անձնակազմի, Պատվիրատուի անձնակազմի և տեղական համայնքի համար հասկանալի լեզուներով:

Կապալառուի Կառավարման Ռազմավարությունը և Իրականացման Պլանները պետք է ներառեն համապատասխան գործընթացներ՝ Կապալառուի կողմից այդ պարտավորությունների կատարման ընթացքի ստուգման համար:

**29. Շինհրապարակի անվտանգություն**

29.1 Կապալառուն պատասխանատու է Շինհրապարակի անվտանգության համար, և

(ա) չարտոնված անձանց մուտքը Շինհրապարակ թույլ չտալու համար,

(բ) արտոնված անձինք սահմանափակվում են Կապալառուի անձնակազմով, Պատվիրատուի անձնակազմով և ցանկացած այլ անձնակազմով, որը ճանաչվում է որպես լիազորված անձնակազմ (ներառյալ՝Պատվիրատուի մյուս կապալառուները Շինհրապարակում)՝ Պատվիրատուի կամ Ծրագրի Ղեկավարի կողմից Կապալառուին ուղղված ծանուցագրի հիման վրա:

ՊԸՊ 16.2 ենթակետի համաձայն՝ Կապալառուն Ծրագրի Ղեկավարի հաստատմանը պետք է ներկայացնի անվտանգության կառավարման պլան, որով սահմանվում են Շինհրապարակի անվտանգության միջոցառումները:

Կապալառուն պարտավոր է (i) համապատասխան ստուգումներ անցկացնել անվտանգության ապահովման համար վարձած ցանկացած աշխատակցի նկատմամբ, (ii) պատշաճ կերպով պատրաստել անվտանգության անձնակազմին (կամ հաստատել, որ նրանք պատշաճ կերպով պատրաստված են)՝ ուժ (և ըստ անհրաժեշտության՝ հրազեն) կիրառելու և Կապալառուի անձնակազմի, Պատվիրատուի անձնակազմի և ազդակիր համայնքների նկատմամբ համապատասխան վարքագիծ դրսևորելու գործում, (iii) անվտանգության անձնակազմից պահանջել պահպանելու գործող Օրենքները և Մասնագրերով սահմանված բոլոր պահանջները:

Կապալառուն չպետք է թույլ տա անվտանգության անձնակազմի կողմից որևէ ուժի կիրառում անվտանգության ապահովման գործում, բացառությամբ այն դեպքերի, երբ այն կիրառվում է կանխարգելիչ և պաշտպանական նպատակներով `սպառնալիքի բնույթին ու չափին համարժեք:

Անվտանգության միջոցառումներ իրականացնելիս Կապալառուն նաև պետք է կատարի Մասնագրերում նշված բոլոր լրացուցիչ պահանջները:

**Բ. Ժամանակի Կառավարում**

30.1 **ՊՀՊ-ում** նշված ժամկետի շրջանակներում, Ընդունման նամակում նշված օրվանից հետո, Կապալառուն պետք է Ծրագրի ղեկավարի

**30. Ծրագրային և առաջընթացի հաշվետվություններ**

հաստատմանը ներկայացնի Ծրագիր, որում նկարագրված լինեն Աշխատանքների գործողությունների ընդհանուր մեթոդները, նախապատրաստական միջոցառումները, կարգը և ժամկետները: Միանվագ գումարով պայմանագրի դեպքում Ծրագրի գործողությունները պետք է համապատասխանեն Գործողությունների ժամանակացույցին: Ծրագրի Ղեկավարի կողմից ծրագրի հաստատումը չի փոխում Կապալառուի պարտավորությունները: Կապալառուն կարող է ցանկացած պահի վերանայել ծրագիրը և այն կրկին ներկայացնել Ծրագրի Ղեկավարին: Վերանայված ծրագիրը պետք է արտացոլի փոփոխությունների և փոխհատուցումների արդյունքը:

30.2 Ծրագրի թարմացված/նորացված տարբերակը պետք է ցույց տա ամեն գործողությունում ձեռք բերված փաստացի առաջընթացը, ինչպես նաև ձեռք բերված առաջընթացի ազդեցությունն անավարտ աշխատանքների ժամկետների վրա՝ ներառյալ գործողությունների հաջորդականության մեջ ցանկացած փոփոխություն:

30.3 Կապալառուն պետք է վերահսկի աշխատանքների ընթացքը և ներկայացնի Ծրագրի ղեկավարին առաջընթացի հաշվետվություն և ցանկացած նորացված ծրագիր, որը կարտացոլի փաստացի առաջընթացը և դրա ազդեցությունը մնացած աշխատանքների ժամկետների պլանավորման վրա՝ ներառյալ գործողությունների հաջորդականության փոփոխությունները, այնպիսի հաճախականությամբ, որը չլինի ավելի երկար, քան **նշված է ՊՀՊ-ում**: Եթե Կապալառուն չի ներկայացնում նորացված Ծրագիր նշված ժամանակահատվածում, ապա Ծրագրի ղեկավարը կարող է պահել **ՊՀՊ-ում նշված** գումարը հաջորդ վճարման վկայականից և շարունակել պահել այն՝ մինչև ուշացված Ծրագիրը ներկայացնելու օրվանը հաջորդող վճարումը: Միանվագ գումարով Պայմանագրի դեպքում Կապալառուն պետք է Ծրագրի ղեկավարին ներկայացնի թարմացված Գործողությունների ժամանակացույց՝ վերջինիս կողմից հրահանգը ստանալուց հետո 14 օրվա ընթացքում:

30.4 Եթե Մասնագրերով այլ բան նախատեսված չէ, առաջընթացի յուրաքանչյուր զեկույց պետք է ներառի Հավելվածում Բ-ում սահմանված Բնապահպանական և սոցիալական (ԲՍ) ցուցանիշները:

30.5 Առաջընթացի հաշվետվություններից բացի, Կապալառուն Ծրագրի Ղեկավարին անհապաղ պետք է տեղեկացնի Շինհրապարակում տեղի ունեցած ցանկացած միջադեպի կամ պատահարի/վթարի մասին, որն էական բացասական ազդեցություն ունի կամ կարող է ունենալ շրջակա միջավայրի, ազդակիր համայնքների, բնակչության, Պատվիրատուի կամ Կապալառուի անձնակազմի վրա: Սա ներառում է, բայց չի սահմանափակվում որևէ միջադեպով կամ պատահարով, որը հանգեցնում է մահվան կամ լուրջ վնասվածքների, էական բացասական հետևանքների կամ մասնավոր սեփականության վնասի, կամ ՍՇՉ- ի և / կամ ՍՌ- ի որևէ դեպքի: ՍՇՉ- ի և / կամ ՍՌ- ի դեպքում, պատշաճորեն պահպանելով գաղտնիությունը, տեղեկատվության մեջ պետք է ներառվեն մեղադրանքի տեսակը (սեռական շահագործում, սեռական չարաշահում կամ սեռական ոտնձգություն), ենթադրյալ միջադեպը վերապրած անձի սեռը և տարիքը:

Կապալառուն, տեղեկանալով միջադեպի կամ պատահարի մասին, պետք է անհապաղ տեղեկացնի նաև Ծրագրի Ղեկավարին ենթակապալառուների կամ մատակարարների տարածքում կատարված աշխատանքների հետ կապված ցանկացած նման միջադեպի կամ պատահարի մասին, որոնք ունեն կամ կարող են ունենալ զգալի բացասական հետևանքներ շրջակա միջավայրի, ազդակիր համայնքների, բնակչության, Պատվիրատուի անձնակազմի կամ Կապալառուի, նրա ենթակապալառուների և մատակարարների անձնակազմի համար: Նման դեպքերի կամ դժբախտ պատահարների վերաբերյալ ծանուցումը պետք է բավարար մանրամասներ ներառի վերջիններիս վերաբերյալ: Կապալառուն Ծրագրի Ղեկավարին պետք է տրամադրի այդպիսի միջադեպերի կամ պատահարների ամբողջական մանրամասները՝Ծրագրի Ղեկավարի հետ համաձայնեցված ժամկետում:

Կապալառուն պետք է իր ենթակապալառուներից և մատակարարներից (բացի ենթակապալառուներից) պահանջի անհապաղ տեղեկացնել Կապալառուին սույն ենթակետում նշված ցանկացած պատահարի կամ վթարի մասին:

**31. Նախատեսված ավարտման ժամկետի երկարաձգում**

31.1 Ծրագրի ղեկավարը պետք է երկարաձգի Նախատեսված ավարտման ժամկետը, եթե արձանագրվում է Փոխհատուցման որևէ դեպք, կամ՝ եթե առկա են Փոփոխություններ, որոնք անհնարին են դարձնում ավարտել աշխատանքները Նախատեսված ավարտման ժամկետին՝ եթե Կապալառուն չձեռնարկի քայլեր աշխատանքներն արագացնելու ուղղությամբ, ինչը լրացուցիչ ծախսեր կառաջացնի Կապալառուի մոտ:

31.2 Եթե Կապալառուն դիմում է Ծրագրի ղեկավարին՝ խնդրելով որոշում կայացնել Փոխհատուցման դեպքի կամ փոփոխության շուրջ և ներկայացնում ամբողջական տեղեկատվություն դրա մասին, Ծրագրի ղեկավարը պետք է 21 օրվա ընթացքում որոշի, թե արդյոք պե՞տք է, և որքա՞ն ժամանակով երկարաձգել Նախատեսված ավարտման ժամկետը: Եթե Կապալառուն նախապես չի զգուշացրել ուշացման մասին, կամ չի համագործակցել հետաձգման հարցը լուծելու համար, ապա նման թերացման դեպքում ուշացումը չի դիտարկվի նոր Նախատեսված ավարտման ժամկետը գնահատելիս:

**32. Արագացում**

32.1 Եթե Պատվիրատուն ցանկանում է, որ Կապալառուն վերջացնի աշխատանքները մինչև Նախատեսված ավարտման ժամկետը, ապա Ծրագրի ղեկավարը պետք է ստանա գնային առաջարկներ՝ Կապալառուից՝ աշխատանքների անհրաժեշտ արագացմանը հասնելու համար: Եթե Պատվիրատուն ընդունում է այդ հայտերը , ապա Նախատեսված ավարտման ժամկետը ճշգրտվում է համապատասխան կերպով և հաստատվում Պատվիրատուի և Կապալառուի կողմից:

32.2 Եթե Կապալառուի կողմից ներկայացված գնային առաջարկներն աշխատանքների արագացման համար ընդունվում են Պատվիրատուի կողմից, ապա դրանք ընդգրկվում են Պայմանագրի գնի մեջ և դիտարկվում որպես Փոփոխություն:

**33. Ծրագրի ղեկավարի կողմից հրահանգված ուշացումներ**

33.1 Ծրագրի ղեկավարը կարող է հրահանգել Կապալառուին հետաձգել Աշխատանքներում ցանկացած գործողության մեկնարկը կամ ընթացքը:

**34. Հանդիպումներ ղեկավարության հետ**

34.1 Ծրագրի ղեկավարը և Կապալառուն կարող են իրարից պահանջել մասնակցել ղեկավարման ժողովներին: Ղեկավարման ժողովները նախատեսված են մնացած/չկատարված աշխատանքների պլանները վերանայելու և վաղ նախազգուշացման ընթացակարգի համաձայն բարձրացված խնդիրների լուծման համար:

34.2 Ծրագրի ղեկավարը պետք է արձանագրի ղեկավարման ժողովի ընթացքը և դրա օրինակները տրամադրի ժողովին ներկա գտնվողներին, ինչպես նաև Պատվիրատուին: Կողմերի ստանձնած գործողությունների համար պատասխանատվության որոշումը կայացվում է Ծրագրի Ղեկավարի կողմից`ղեկավարման հանդիպման ժամանակ կամ ղեկավարման ժողովից հետո, և գրավոր ներկայացվում ժողովի բոլոր մասնակիցներին:

**35. Վաղ նախազգուշացում**

35.1 Առաջին իսկ հնարավորության դեպքում, Կապալառուն պետք է Ծրագրի ղեկավարին զգուշացնի այն բոլոր հետագա կանխատեսելի իրադարձությունների և հանգամանքների մասին, որոնք կարող են բացասաբար անդրադառնալ աշխատանքի որակի վրա, բարձրացնել Պայմանագրի գինը կամ ուշացնել Աշխատանքների իրականացումը: Ծրագրի ղեկավարը կարող է Կապալառուից պահանջել, որպեսզի վերջինս ներկայացնի ապագա իրադարձությունների կամ հանգամանքների ակնկալվող ազդեցության գնահատականը Ավարտման ժամկետի և Պայմանագրի գնի վրա: Այդ գնահատականը Կապալառուն պետք է ներկայացնի ողջամտորեն շուտ:

35.2 Կապալառուն պետք է համագործակցի Ծրագրի ղեկավարի հետ նման դեպքերի և հանգամանքների ազդեցությունը նվազեցնելու ուղղությամբ առաջարկներ ներկայացնելու և դիտարկելու հարցում, որոշելու, թե աշխատանքում ներգրավված անձանցից ո՞ւմ միջոցով կարելի է խուսափել դրանցից կամ նվազեցնել դրանց ազդեցությունը, ինչպես նաև համագործակցել այդ առաջարկությունների հիման վրա Ծրագրի ղեկավարի կողմից տրված ցանկացած ցուցումի կատարման հարցում:

## Գ. Որակի վերահսկողություն

**36. Թերությունների բացահայտում**

36.1 Ծրագրի ղեկավարը պետք է ստուգի Կապալառուի աշխատանքը և Կապալառուին ծանուցի ցանկացած հայտնաբերած Թերության մասին: Այսպիսի ստուգումները չեն ազդում Կապալառուի պարտականությունների վրա: Ծրագրի ղեկավարը կարող է հրահանգել Կապալառուին փնտրել Թերություններ, բացել և փորձարկել ցանկացած ծածկած աշխատանք, որը` Ծրագրի ղեկավարի կարծիքով, կարող է Թերություն ունենալ:

**37. Փորձարկումներ**

37.1 Եթե Ծրագրի ղեկավարը հրահանգում է Կապալառուին անցկացնել փորձարկումներ, որոնք նշված չեն Մասնագրերում`ստուգելու համար արդյո՞ք ինչ-որ աշխատանք ունի Թերություն, և փորձարկման արդյունքը լինի դրական, Կապալառուն պետք է վճարի փորձարկումների և նմուշների ծախսերը: Եթե ոչ մի թերություն չի հայտնաբերվում, ապա փորձարկումը դիտարկվում է որպես Փոխհատուցվող դեպք:

**38. Թերությունների վերացում**

38.1 Ծրագրի ղեկավարը ցանկացած Թերության մասին պետք է ծանուցի Կապալառուին մինչև Թերությունների վերացման ժամանակաշրջանի

ավարտը, որը սկսվում է Ավարտման պահից և **սահմանված է ՊՀՊ-ում**: Թերությունների վերացման ժամանակաշրջանը պետք է երկարաձգվի այնքան ժամանակով, քանի դեռ Թերությունները վերացված չեն:

38.2 Ամեն Թերություն, որի մասին տրվում է ծանուցում, Կապալառուն պետք է ուղղվի Ծրագրի Ղեկավարի ծանուցման մեջ սահմանված ժամանակահատվածում:

**39. Չվերացված թերություններ**

39.1 Եթե Կապալառուն չի վերացնում Թերությունները Ծրագրի ղեկավարի ծանուցման մեջ սահմանված ժամանակահատվածում, Ծրագրի ղեկավարը գնահատում է Թերությունը վերացնելու ծախսը, և Կապալառուն էլ պետք է վճարի այդ գումարը:

**Դ. Ծախսերի վերահսկում**

**40. Պայմանագրի գին**

40.1 Աշխատանքների ծավալների ցուցակը պետք է ներառի Կապալառուի կողմից կատարվելիք Աշխատանքների գնանշված կետերը: Աշխատանքների ծավալների ցուցակն օգտագործվում է Պայմանագրի գինը հաշվարկելու համար: Կապալառուն կվճարվի ավարտված աշխատանքների ծավալների դիմաց այն արժույթով, որը նշված է Աշխատանքների ծավալների ցուցակում յուրաքանչյուր կետի համար:

**41. Պայմանագրի գնի փոփոխություններ**

41.1 Եթե կատարված աշխատանքի վերջնական ծավալը տարբերվում է Աշխատանքների ծավալների ցուցակի որևէ կոնկրետ կետի համար ավելի քան 25% տոկոսով, ապա, եթե այդ փոփոխությունը գերազանցում է Պայմանագրի սկզբնական գինը 1% տոկոսից ավել չափով, Ծրագրի ղեկավարը պետք է ճշգրտի դրույքը փոփոխությունը հաշվի առնելու համար: Ծրագրի ղեկավարը չպետք է ճշգրտի դրույքները ծավալների փոփոխության արդյունքում, եթե դրա հետևանքով Պայմանագրի սկզբնական գինը գերազանցվում է ավելի քան 15% տոկոսով, բացառությամբ այն դեպքի, եթե դա նախապես հաստատվել էր Պատվիրատուի կողմից:

41.2 Ծրագրի ղեկավարի պահանջով Կապալառուն պարտավոր է ներկայացնել Աշխատանքների ծավալների ցուցակում ցույց տրված ցանկացած դրույքի մանրամասն բացվածքը:

**42. Փոփոխություններ**

42.1 Բոլոր Փոփոխությունները պետք է ներառված լինեն Կապալառուի կողմից թարմացված Ծրագրում:

42.2 Ծրագրի ղեկավարի պահանջով Կապալառուն Ծրագրի ղեկավարին ներկայացնում է Փոփոխություններ կատարելու գնային առաջարկ: Կապալառուն պետք է նաև տրամադրի տեղեկատվություն փոփոխված պատվերների հետ կապված ԲՍ ռիսկերի և ազդեցությունների մասին: Ծրագրի ղեկավարը պետք է գնահատի գնային առաջարկը, որը պատրաստելու համար տրվում է 7 (յոթ) օր՝ պահանջը ներկայացնելու պահից, կամ Ծրագրի ղեկավարի կողմից սահմանված ավելի երկար ժամկետ, մինչև Փոփոխության հրահանգումը:

42.3 Եթե Կապալառուի գնային առաջարկը ողջամիտ չէ, Ծրագրի ղեկավարը կարող է հրահանգ տալ կատարել Փոփոխություն և փոփել Պայմանագրի գինը՝ հաշվի առնելով Պայմանագրի գնի վրա Փոփոխության ազդեցության իր սեփական կանխատեսումները:

42.4 Եթե Ծրագրի ղեկավարը որոշի, որ գնային առաջարկ ներկայացնելը կխանգարի աշխատանքների փոփոխության հրատապությանը, ապա ոչ մի գնային առաջարկ չի ներկայացվում, և Փոփոխությունը դիտարկվում է որպես Փոխհատուցվող դեպք:

42.5 Կապալառուն իրավունք չունի լրացուցիչ վճար ստանալ այն ծախսերի համար, որոնցից կարելի էր խուսափել նախապես զգուշացնելով/վաղ նախազգուշացում:

42.6 Եթե Փոփոխության մեջ ներառված աշխատանքը համապատասխանում է Աշխատանքների ծավալների ցուցակում նկարագրված կետին, և` Ծրագրի ղեկավարի կարծիքով, աշխատանքի ծավալն ավելի է, քան սահմանված է ՊԸՊ 41.1 ենթակետում նշված սահմանաչափը, կամ դրա կատարման ժամկետները չեն հանգեցնում միավոր գնի փոփոխությանը, ապա Փոփոխության արժեքը հաշվելու համար պետք է օգտագործվի Աշխատանքների ծավալների ցուցակի դրույքը: Եթե փոխվում է միավոր գինը, կամ Փոփոխության մեջ ներառված աշխատանքի բնույթը չի համապատասխանում Աշխատանքների ծավալների ցուցակի կետերին, ապա Կապալառուի կողմից ներկայացվող գնային առաջարկը պետք է լինի աշխատանքի համապատասխան կետերի համար նոր դրույքների տեսքով:

42.7 Ծախսարդյունավետ ճարտարագիտական առաջարկ. Կապալառուն կարող է իր հաշվին, պատրաստել աշխատանքների օպտիմալացման համար ծախսարդյունավետ ճարտարագիտական առաջարկ պայմանագրի կատարման ցանկացած պահին: Աշխատանքների օպտիմալացման ճարտարագիտական առաջարկը պետք է պարունակի առնվազն հետևյալը`

(ա) առաջարկվող փոփոխությունը (ները) և գոյություն ունեցող պայմանագրային պահանջների համեմատ տարբերությունների նկարագրությունը,

(բ) առաջարկվող փոփոխության (ների) ծախսի և շահույթի ամբողջական վերլուծություն, այդ թվում այն ծախսերի (ներառյալ`կյանքի ցիկլի արժեքը) հաշվարկը, որը Պատվիրատուն կարող է կրել աշխատանքների օպտիմիալացման ճարտարագիտական առաջարկն իրականացնելիս,

(գ) աշխատանքի կատարողականի/ ֆունկցիոնալության վրա փոփոխության (թյունների) որևէ ազդեցության նկարագրություն, և

(դ) կատարվելիք առաջարկվող աշխատանքի նկարագրությունը, դրա կատարման ծրագիրը և ԲՍ-ի վերաբերյալ բավարար տեղեկատվություն` ԲՍ-ի ռիսկերի և ազդեցությունների գնահատումը հնարավոր դարձնելու համար:

Պատվիրատուն կարող է ընդունել աշխատանքների օպտիմիալացման ճարտարագիտական առաջարկը, եթե այն ցույց է տալիս հետևյալ օգուտները`

(ա) արագացնում է աշխատանքների ավարտման ժամկետը, կամ

(բ) նվազեցնում է Պայմանագրի գինը կամ կյանքի ցիկլի արժեքը Պատվիրատուի համար, կամ

(գ) բարելավում է Շինությունների որակը, արդյունավետությունը, անվտանգությունը կամ երկարակեցությունը, կամ

(դ) տալիս է այլ օգուտներ Պատվիրատուին՝ առանց վտանգելու Աշխատանքների ֆունկցիոնալությունը:

Եթե աշխատանքների օպտիմիալացման ճարտարագիտական առաջարկը հաստատվում է Պատվիրատուի կողմից և դրա արդյունքում՝

(ա) Պայմանագրի գինը նվազում է, ապա Կապալառուին վճարվում է Պայմանագրի գնի նվազեցման գումարի այն տոկոսը, **որը սահմանված է ՊՀՊ-ում**, կամ

(բ) Պայմանագրի գինն ավելանում է, սակայն ստացվում է կյանքի ցիկլի արժեքի կրճատում՝ վերոնշյալ (ա)-(դ) կետերից որևէ օգուտի բերումով, ապա Կապալառուին վճարվում է Պայմանագրի գնի ավելացման ողջ գումարը:

**43. Դրամական հոսքերի կանխատեսումներ**

43.1 Ծրագիրը թարմացնելու դեպքում Կապալառուն պետք է Ծրագրի ղեկավարին ներկայացնի թարմացված դրամական հոսքերի կանխատեսումներ: Դրամական հոսքերի կանխատեսումները պետք է ներառեն Պայմանագրում սահմանված տարբեր արժույթները՝ անհրաժեշտության դեպքում օգտագործելով Պայմանագրի փոխանակման կուրսը:

**44. Վճարման վկայագրեր**

44.1 Կապալառուն պարտավոր է Ծրագրի ղեկավարին ներկայացնել կատարված աշխատանքի ծավալների ամսական հաշվետվություններ՝ հանած նախկինում վկայագրված կուտակային գումարը:

44.2 Ծրագրի ղեկավարը ստուգում է Կապալառուի կողմից ներկայացված ամսական հաշվետվությունը և վավերացնում Կապալառուին վճարվելիք գումարը:

44.3 Կատարված աշխատանքի գումարը որոշվում է Ծրագրի ղեկավարի կողմից:

44.4 Կատարված աշխատանքի գումարը պետք է կազմված լինի Աշխատանքների ծավալի ցուցակի ավարտված աշխատանքների գումարից:

44.5 Կատարված աշխատանքների գումարը պետք է ներառի Փոփոխության և Փոխհատուցվող դեպքերի գնահատումը:

44.6 Ծրագրի Ղեկավարը կարող է հանել նախորդ վկայագրով հաստատված ցանկացած կետ կամ նվազեցնել նախկինում ցանկացած վկայագրով վավերացված ցանկացած կետի մաս՝ ավելի ուշ ստացված տեղեկատվության ներքո:

44.7 Եթե Կապալառուն չի կատարում Պայմանագրով նախատեսված որևէ ԲՍ պարտավորություն կամ աշխատանք, ապա այդ աշխատանքի կամ պարտավորության արժեքը՝ համաձայն Ծրագրի Ղեկավարի որոշման, կարող է պահվել մինչև աշխատանքի կամ պարտավորության կատարումը, և/կամ շտկման կամ փոխարինման ծախսերը՝ ըստ

Ծրագրի Ղեկավարի որոշման, կարող են պահվել մինչև շտկման կամ փոխարինման ավարտը: Աշխատանքի կամ պարտավորության չկատարելը ներառում է, բայց չի սահմանափակվում հետևյալով.

(ա) Աշխատանքներին ներկայացվող պահանջներում նկարագրված ԲՍ պարտավորությունները կամ աշխատանքը չկատարելը, որը կարող է ներառել՝ շինհրապարակի սահմաններից դուրս աշխատելը, չափից շատ փոշու արտանետումը, հանրային օգտագործման ճանապարհները անվտանգ, շահագործելի վիճակում չպահելը, շինհրապարակից դուրս գտնվող բուսականությանը հասցված վնասը, ջրային հոսքերի աղտոտումը՝ յուղերով կամ նստվածքով, հողի աղտոտումը, օրինակ՝ յուղերով, կենցաղային թափոններով, հնէաբանական կամ մշակութային ժառանգությանը պատճառված վնասը, օդի աղտոտումը՝ չթույլատրված և (կամ) անարդյունավետ այրման արդյունքում,

(բ) Կ-ԲՍԿՊ-ը պարբերաբար չվերանայելը և (կամ) այն ժամանակին չթարմացնելը՝ ի հայտ եկող խնդիրներին կամ կանխատեսելի ռիսկերին կամ ազդեցություններին հետամուտ լինելու համար,

(գ) Կ-ԲՍԿՊ-ը չիրականացնելը, օրինակ՝ պահանջվող ուսուցում կամ զգայունություն չապահովելը,

(դ) նախքան Աշխատանքներին կամ դրանց հետ կապված գործողություններին ձեռնամուխ լինելը համապատասխան համաձայնություններ / թույլտվություններ չունենալը,

ե) ԲՍ հաշվետվություն (ներ) (ինչպես նկարագրված է Հավելված Բ-ում) չներկայացնելը կամ այդպիսի հաշվետվությունները ժամանակին չներկայացնելը,

(զ) նշված ժամկետում Ծրագրի Ղեկավարի հանձնարարությամբ թերությունների շտկում չիրականացնելը (օրինակ՝խախտումը (երը) չվերացնելը):

**45. Վճարումներ**

45.1 Վճարումները ճշգրտվում են՝ կանխավճարների և պահումների նվազեցումները հաշվի առնելով: Պատվիրատուն պետք է Կապալառուին վճարի Ծրագրի ղեկավարի կողմից հաստատված գումարները յուրաքանչյուր վկայագրի ամսաթվից 28 օրվա ընթացքում: Ուշացված վճարման դեպքում Պատվիրատուն հաջորդ վճարման ժամանակ Կապալառուին վճարում է նաև տոկոս՝ ուշացված վճարման համար: Տոկոսը պետք է հաշվարկվի այն օրվանից, որից պետք է կատարված լիներ վճարումը, մինչև այն օրը, երբ կատարվում է ուշացված վճարումը՝վճարման արժույթի համար գերակշռող փոխառության տոկոսադրույքով:

45.2 Եթե վկայագրված գումարն ավելացել է ավելի ուշ հանձնված վկայագրում կամ Վեճի դատավորի/Արբիտրի կողմից վճռի շնորհման հետևանքով, ապա Կապալառուին պետք է վճարել տոկոս ուշացված վճարի համար՝ սույն կետի սահմանման համապատասխան: Տոկոսը պետք է հաշվարկել այն օրվանից, երբ ավելացած գումարը կլիներ վկայագրված՝ վեճի բացակայության դեպքում:

45.3 Եթե այլ կերպ սահմանված չէ, ապա բոլոր վճարումներն ու զանձումները պետք է կատարվեն Պայմանագրի գնի մաս կազմող Պատվիրատուի երկրի արժույթով:

45.4 Աշխատանքների բոլոր այն կետերը, որոնց համար չի նշվել դրույք կամ գին, չեն վճարվի Պատվիրատուի կողմից և կհամարվի, որ դրանք ներառված են եղել Պայմանագրի այլ դրույքներում և գներում:

**46. Փոխհատուցվող դեպքեր**

46.1 Հետևյալ դեպքերը հանդիսանում են Փոխհատուցման դեպք.

(ա) Պատվիրատուն չի թույլատրում մուտք գործել Շինհրապարակ մինչև Շինհրապարակի տնօրինման ամսաթիվը` համաձայն ՊԸՊ-ի 20.1 կետի:

(բ) Պատվիրատուն փոխում է այլ կապալառուների ժամանակացույցերն այնպես, որ դա ազդում է Կապալառուի` Պայմանագրով սահմանված աշխատանքի վրա:

(գ) Ծրագրի ղեկավարը հրահանգում է հետաձգել Աշխատանքները կամ ժամանակին չի տրամադրում Աշխատանքների կատարման համար անհրաժեշտ Գծագրերը, Մասնագրեր կամ ցուցումները:

(դ) Ծրագրի ղեկավարը ցուցում է տալիս Կապալառուին բացել ծածկված աշխատանքները կամ կատարել լրացուցիչ փորձարկումներ, որոնք` ինչպես պարզվում է հետագայում, չունեին և ոչ մի Թերություն:

(ե) Ծրագրի ղեկավարն անհիմն կերպով չի հաստատում ենթակապալառուի պայմանագրի մեկնարկը:

(զ) Բնահողի պայմանները զգալիորեն ավելի անբարենպաստ են, քան կարելի էր ենթադրել Ընդունման նամակի պատրաստումից առաջ` ելնելով Հայտատուներին տրամադրված տեղեկատվությունից (ներառյալ` Շինհրապարակի ուսումնասիրության հաշվետվությունները), հրապարակայնորեն հայտնի տեղեկատվությունից, ինչպես նաև Շինհրապարակի վիզուալ զննումից:

(է) Ծրագրի ղեկավարը ցուցումներ է տալիս Պատվիրատուի պատճառած անկանխատեսելի հանգամանքներով պայմանավորված անվտանգության, կամ այլ պատճառներով պահանջվող լրացուցիչ աշխատանքների հետ կապված խնդիրները լուծելու համար:

(ը) Այլ կապալառուները, պետական մարմինները, կոմունալ ծառայություն հաստատությունները կամ Պատվիրատուն չի կատարում աշխատանքը Պայմանագրով նախատեսված ժամկետներում, կամ` եթե Պայմանագրում նշված այլ խոչընդոտները ուշացնում են Կապալառուին կամ պատճառում նրան ծախսեր:

(թ) Ուշացվում է կանխավճարը:

(ժ) Կապալառուի վրա ազդում է Պատվիրատուի ռիսկերից որևէ մեկը:

(ի) Ծրագրի ղեկավարն անհիմն ուշացնում է Ավարտման վկայագրի հանձնումը:

46.2 Եթե Փոխհատուցվող դեպքն առաջացնում է հավելյալ ծախս կամ խոչընդոտում է աշխատանքների ավարտին մինչև Նախատեսված ավարտման ժամկետը, ապա պետք է ավելացվի Պայմանագրի գինը և/կամ երկարաձգվի Նախատեսված ավարտման ժամկետը: Ծրագրի ղեկավարը պետք է որոշի՝ արդյոք պե՞տք է և որքանո՞վ բարձրացվի Պայմանագրի գինը և/կամ երկարաձգվի Նախատեսված ավարտման ժամկետը:

46.3 Հենց որ Կապալառուն ներկայացնի յուրաքանչյուր Փոխհատուցվող դեպքի ծախսերի կանխատեսում, Ծրագրի ղեկավարը պետք է գնահատի դրանք և համապատասխան կերպով ճշգրտի Պայմանագրի գինը: Եթե Կապալառուի կանխատեսումը համարվի ոչ ողջամիտ, Ծրագրի ղեկավարը կճշգրտի Պայմանագրի գինն իր սեփական կանխատեսումների հիման վրա: Ծրագրի ղեկավարը պետք է ենթադրի, որ Կապալառուն անմիջապես և իրազեկ կերպով կարձագանքի դեպքին:

46.4 Կապալառուն չի ստանա փոխհատուցում, եթե նրա՝ժամանակին չնախազգուշացնելը/ վաղ նախազգուշացում/, կամ Ծրագրի ղեկավարի հետ չհամագործակցելը բացասաբար են ազդել Պատվիրատուի շահերի վրա:

**47. Հարկեր**

47.1 Ծրագրի ղեկավարը պետք է ճշգրտի Պայմանագրի գինը, եթե հարկերը, մաքսերը և այլ տուրքերը փոխվում են Պայմանագրի համար Հայտ ներկայացնելուց 28 օր առաջվա ամսաթվից վերջին Ավարտման վկայագրի ամսաթվի միջև ընկած ժամանակահատվածում: Ճշգրտումը պետք է լինի Կապալառուի կողմից վճարման ենթակա հարկերի գումարի փոփոխության չափով, այն պայմանով, որ այդ փոփոխությունները չեն արտացոլված Պայմանագրի գնում կամ չեն հանդիսանում են **ՊԸՊ**-ի 49-րդ կետի արդյունք:

**48. Արժույթներ**

48.1 Եթե վճարումներն արվում են ոչ Պատվիրատուի երկրի արժույթով, որը **սահմանված է ՊՀՊ-ում**, վճարվելիք գումարների հաշվարկի համար կիրառվող փոխանակման կուրսերը պետք է նշված լինեն Կապալառուի Հայտում:

**49. Գնի ճշգրտում**

49.1 Նախնական արժեքի տատանումների արդյունքում, գները ճշգրտվում են միայն այն դեպքում, **եթե դա սահմանված է ՊՀՊ-ով**: Եթե ճշգրտում նախատեսված է, ապա յուրաքանչյուր վճարման վկայագրով վավերացված գումարները պետք է ճշգրտվեն՝ մինչև դրանցից Կանխավճարի մասհանումներ կատարելը, կիրառելով համապատասխան գնի ճշգրտման գործակից՝ յուրաքանչյուր արժույթի համար: Պայմանագրում յուրաքանչյուր արժույթի համար կիրառվում է ստորև բերված առանձին բանաձև.

**Pc= Ac + Bc Imc/Ioc**

որտեղ՝

Pc-ն՝ գնի ճշգրտման գործակիցն է Պայմանագրի գնի «c» արժույթով վճարվելիք մասի համար

Ac-ն`և Bc-ն` **ՊՀՊ-ով սահմանված** գործակիցներն են[15]` Պայմանագրային գնի «c» արժույթով վճարվելիք գումարի, համապատասխանաբար, չճշգրտվող և ճշգրտվող մասերի համար,

Imc-ն` վճարման ենթակա նյութերի համար գերակշռող ինդեքսն է հաշիվ ներկայացված ամսվա վերջի դրությամբ, իսկ Ioc-ն` այդ ինդեքսը Հայտերի բացումից 28 օր առաջվա դրությամբ, երկուսն էլ «c» արժույթով:

49.2 Եթե ինդեքսի արժեքը հաշվարկի մեջ օգտագործելուց հետո փոխվում է, ապա հաշվարկը պետք է ուղղել և ճշգրտումը կատարել հաջորդ վճարման վկայագրում: Ինդեքսի արժեքը պետք է ընդգրկի ծախսերի տատանումների հետ կապված արժեքի բոլոր փոփոխությունները:

●

**50. Պահում**

50.1 Պատվիրատուն պետք է պահումներ անի Կապալառուին արվող յուրաքանչյուր վճարումից` **ՊՀՊ-ով նշված** համամասնություններով` մինչև Աշխատանքների վերջնական ավարտը:

50.2 Ծրագրի ղեկավարի կողմից` **ՊԸՊ**-ի 57.1 ենթակետի համաձայն Ավարտման վկայագրի թողարկման պահից Կապալառուին պետք է վճարվի պահված ընդհանուր գումարի կեսը, իսկ մյուս կեսը կվճարվի Թերությունների վերացման ժամանակաշրջանի ավարտին, երբ Ծրագրի ղեկավարը կհավաստի, որ բոլոր այն Թերությունները, որոնց մասին նա ծանուցել է Կապալառուին, վերացվել են մինչև այս շրջանի ավարտը: Կապալառուն կարող է գումարի այդ պահումը փոխարինել ցպահանջ Բանկային երաշխիքով:

**51. Փոխհատուցված վնասներ**

51.1 Կապալառուն պետք է Պատվիրատուին վճարի վնասների փոխհատուցում **ՊՀՊ-ում նշված** դրույքով յուրաքանչյուր ուշացված օրվա դիմաց, որքանով Ավարտման ժամկետն ավելի ուշ է, քան Նախատեսված ավարտման ժամկետը: Վնասի փոխհատուցման ընդհանուր գումարը չպետք է գերազանցի **ՊԸՊ-ով սահմանված** գումարը: Պատվիրատուն կարող է վնասների փոխհատուցման գումարը հանել Կապալառուին հասանելիք վճարումներից: Վնասների փոխհատուցման վճարումը չի ազդում Կապալառուի պարտավորությունների վրա:

51.2 Եթե Նախատեսված ավարտման ժամկետը երկարաձգվել է վնասների փոխհատուցումը վճարելուց հետո, Ծրագրի ղեկավարը պետք է ուղղի Կապալառուի կողմից վերացված վնասների փոխհատուցման համար կատարված ցանկացած ավել արված վճարում` ճշգրտելով հաջորդ վճարման վկայագիրը: Կապալառուին պետք է վճարվեն կատարված հավելավճարի տոկոսները` հաշվարկված վճարման օրվանից մինչև մարման ժամկետը` **ՊԸՊ**-ի 45.1 ենթակետով սահմանված դրույքով:

**52. Պարգևավճար**

52.1 Կապալառուին պետք է վճարվի պարգևավճար այնքան օրերի համար, որքանով Ավարտման ժամկետն ավելի վաղ է Նախատեսված ավարտման ժամկետից (հանած այն օրերը, որոնց համար Կապալառուն վճարվել է աշխատանքների արագացված կատարման համար)` **ՊՀՊ-ում նշված** դրույքով, յուրաքանչյուր օրացուցային օրվա դիմաց:

---

[15] Ac և Bc գործակիցների գումարը պետք է լինի 1 (մեկ) յուրաքանչյուր արժույթի բանաձևում: Սովորաբար, երկու գործակիցներն էլ բոլոր արժույթների բանաձևերում պետք է լինեն նույնը, քանի որ վճարման չճշգրտվող մասի A գործակիցը շատ մոտավոր թիվ է (սովորաբար, 0.15), որպեսզի հաշվի առնի հաստատագրված ծախսերի տարրերը և չճշգրտվող բաղադրիչները: Յուրաքանչյուր արժույթի ճշգրտումներն ավելացվում են Պայմանագրի գնին:

Ծրագրի ղեկավարը պետք է հավաստի, որ Աշխատանքներն ավարտվել են ժամկետից շուտ:

**53. Կանխավճար**

53.1 Պատվիրատուն Կապալառուին պետք է վճարի կանխավճար **ՊՀՊ-ում նշված** գումարի չափով, մինչև **ՊՀՊ-ում նշված** օրը՝ Կապալառուի կողմից ներկայացված Անվերապահ բանկային երաշխիքի դիմաց, որը կլինի Պատվիրատուի համար ընդունելի բանկի կողմից, ընդունելի ձևով և կանխավճարին հավասար գումարի չափով և արժույթով: Երաշխիքը պետք է ուժի լինի մինչև կանխավճարի ամբողջական մարումը, սակայն երաշխիքի գումարը պետք է աճողաբար նվազեցվի Կապալառուի կողմից մարվող գումարներով: Կանխավճարի համար տոկոսներ չեն գանձվում:

53.2 Կապալառուն պարտավոր է օգտագործել կանխավճարը միայն Սարքավորումների, Արտադրամասերի, Նյութերի և մոբիլիզացման անհրաժեշտ ծախսերը հոգալու նպատակով՝ հատուկ Պայմանագրի իրականացման համար: Կապալառուն պետք է ցույց տա, որ կանխավճարն օգտագործվել է հենց այս կերպ՝ Ծրագրի ղեկավարին ներկայացնելով ապրանքագրերի կամ այլ փաստաթղթերի պատճենները:

53.3 Կանխավճարը պետք է մարվի Կապալառուին հասանելիք վճարումներից համամասնական գումարների նվազեցման միջոցով, համաձայն վճարումների հիման վրա որոշված ավարտված Աշխատանքների տոկոսների: Կանխավճարը կամ դրա մարումները հաշվի չեն առնվում կատարված աշխատանքների, Փոփոխությունների, գնի ճշգրտման, Փոխհատուցվող դեպքերի, պարգևավճարների կամ Վնասների փոխհատուցման գնահատման ժամանակ:

**54. Երաշխիքներ**

54.1 Կատարման երաշխիքը Պատվիրատուին պետք է տրամադրվի Ընդունման նամակում նշված ժամկետից ոչ ուշ, **ՊՀՊ-ում նշված** գումարի չափով, Պատվիրատուի համար ընդունելի բանկի կամ երաշխավորող ընկերության կողմից և արտահայտված լինի Պայմանագրի գնի վճարման արժույթով: Կատարման երաշխիքն ուժի մեջ պետք է լինի մինչև Ավարտման վկայագրի թողարկման ամսաթվից 28 օրվա անց՝ բանկային երաշխիքի դեպքում, և մեկ տարի՝ Ավարտման վկայագրի թողարկումից հետո՝ կատարման պարտատոմսի (performance bond) դեպքում:

**55. Օրավարձով աշխատանք**

55.1 Օրավարձով աշխատանքի դրույքները, եթե կիրառվում են, Կապալառուի Մրցութային Հայտում պետք է օգտագործվեն միայն այն դեպքերում, երբ Ծրագրի ղեկավարը նախապես գրավոր ցուցումներ է տվել, որպեսզի տվյալ լրացուցիչ աշխատանքը վարձատրվի նման կերպ:

55.2 Օրավարձով վճարվելիք բոլոր աշխատանքները Կապալառուն պետք է գրանցի Ծրագրի ղեկավարի կողմից հաստատված ձևերում: Յուրաքանչյուր լրացված ձև պետք է հաստատվի և ստորագրվի Ծրագրի ղեկավարի կողմից՝ աշխատանքը կատարելուց հետո երկու օրվա ընթացքում:

55.3 Կապալառուն կվճարվի օրավարձով աշխատանքների դիմաց օրավարձով աշխատանքների ստորագրված ձևերը հանձնելու դեպքում:

**56. Վերականգնման ծախսեր**

56.1 Աշխատանքների կամ Նյութերի կորուստը կամ վնասը, որոնք ընդգրկվում են Աշխատանքներում Մեկնարկի օրվա և Թերությունների

վերացման ժամանակաշրջանի ավարտման միջև ընկած ժամանակաշրջանում, պետք է փոխհատուցվեն Կապալառուի կողմից՝ իր հաշվին, եթե այդ կորուստը կամ վնասն առաջացել է Կապալառուի գործողությունների կամ բացթողումների հետևանքով:

**Ե. Պայմանագրի ավարտ**

**57. Ավարտ**

57.1 Կապալառուի խնդրանքով Ծրագրի ղեկավարը պետք է թողարկի Աշխատանքների ավարտման վկայագիր: Ծրագրի ղեկավարը կթողարկի վկայագիրը հենց որ որոշի, որ Աշխատանքներն ամբողջությամբ ավարտված են:

**58. Ընդունում**

58.1 Պատվիրատուն կընդունի Շինհրապարակը և Աշխատանքները՝ Ծրագրի ղեկավարի կողմից Աշխատանքների Ավարտման վկայագրի թողարկման պահից յոթ օրվա ընթացքում:

**59. Վերջնահաշվարկ**

59.1 Կապալառուն պետք է Ծրագրի ղեկավարին ներկայացնի այն ընդհանուր գումարի մանրամասն հաշվարկը, որը՝ Կապալառուի կարծիքով, համաձայն Պայմանագրի, ենթակա է վճարման մինչև Թերությունների վերացման ժամանակաշրջանի ավարտը: Ծրագրի Ղեկավարը կթողարկի Թերությունների վերացման վկայագիր և կհաստատի Կապալառուին հասանելիք ցանկացած վերջնական վճարում՝ Կապալառուի հաշվարկը ստանալու պահից 56 օրվա ընթացքում, եթե այն ճիշտ է և ամբողջական: Հակառակ դեպքում՝ Ծրագրի ղեկավարը 56 օրվա ընթացքում կթողարկի ժամանակացույց, որում կնշվի անհրաժեշտ ուղղումների և լրացումների ծավալը: Եթե Վերջնահաշվարկը կրկին ներկայացվելուց հետո դեռ գոհացուցիչ չէ, Ծրագրի ղեկավարը կորոշի Կապալառուին վճարվելիք գումարի չափը և կթողարկի վճարման վկայագիր:

**60. Շահագործման և պահպանման ձեռնարկ**

60.1 Եթե պահանջվում են կատարողական գծագրեր և/կամ շահագործման ու պահպանման ձեռնարկներ, ապա Կապալառուն պետք է ներկայացնի դրանք **ՊՀՊ-ում նշված** ժամկետներում:

60.2 Եթե Կապալառուն չի տրամադրում գծագրերը և/կամ ձեռնարկները **ՊՀՊ-ում նշված** ժամկետներում համաձայն ՊԸՊ-ի 60.1 կետի, կամ՝ եթե դրանք չեն հաստատվում Ծրագրի ղեկավարի կողմից, ապա Ծրագրի Ղեկավարը պահում է **ՊՀՊ-ում նշված** գումարը Կապալառուին հասանելիք վճարումներից:

**61. Դադարեցում**

61.1 Պատվիրատուն կամ Կապալառուն կարող են դադարեցնել Պայմանագիրը, եթե հակառակ կողմը թույլ է տալիս Պայմանագրի կոպիտ խախտում:

61.2 Պայմանագրի կոպիտ խախտումները ներառում են, սակայն չեն սահմանափակվում հետևյալով.

(ա) Կապալառուն 28 օրով ընդհատել է աշխատանքը, ինչը նախատեսված չի եղել ընթացիկ Ծրագրով, և Ծրագրի ղեկավարը հավանություն չի տվել այդ ընդհատմանը:

(բ) Ծրագրի ղեկավարը հրահանգում է Կապալառուին հետաձգել Աշխատանքները, և այդ հրահանգը չի փոխվում 28 օրվա ընթացքում:

(գ) Պատվիրատուն կամ Կապալառուն սնանկանում կամ լուծարվում են՝ ոչ վերակազմավորման կամ միավորման նպատակով:

(դ) Ծրագրի ղեկավարի հաստատված գումարը չի վճարվում Պատվիրատուի կողմից Կապալառուին՝ Ծրագրի ղեկավարի վկայագրի ամսաթվից 84 օրվա ընթացքում:

(ե) Ծրագրի Ղեկավարը ծանուցում է, որ տվյալ Թերության չվերացումը համարվում է Պայմանագրի կոպիտ խախտում, սակայն Կապալառուին չի հաջողվում վերացնել Թերությունը Ծրագրի ղեկավարի կողմից սահմանված ողջամիտ ժամանակահատվածում:

(զ) Կապալառուն չունի անհրաժեշտ պահանջվող Երաշխիք:

(է) Կապալառուն ուշացրել է Աշխատանքների ավարտն ավելի երկար ժամանակով, քան որի համար կարող էր վճարվել **ՊՀՊ-ով** սահմանված վնասների փոխհատուցումը:

(ը) Եթե, Պատվիրատուի կարծիքով՝ Պայմանագրի համար մրցելիս կամ Պայմանագիրն իրականացնելիս, Կապալառուն ներգրավված է եղել խարդախության և կաշառակերության, մեջ, ինչպես սահմանված է ՊԸՊ Հավելված Ա-ի 2.2 կետի ա. պարբերությունում, Պատվիրատուն կարող է՝ տասնչորս (14) օր առաջ գրավոր ծանուցում ուղարկելով Կապալառուին, դադարեցնել Պայմանագիրը և հեռացնել Կապալառուին Շինհրապարակից:

61.3 Անկախ վերոհիշյալից, Պատվիրատուն կարող է դադարեցնել Պայմանագիրն իր հայեցողությամբ:

61.4 Պայմանագիրը դադարեցվելու դեպքում Կապալառուն պարտավոր է անմիջապես դադարեցնել աշխատանքը, դարձնել Շինհրապարակն անվտանգ ու ապահով և թողնել Շինհրապարակը հնարավորինս շուտ:

61.5 Եթե Պայմանագրի կողմերից մեկը Ծրագրի ղեկավարին Պայմանագրի խախտման վերաբերյալ ծանուցում է տալիս այնպիսի պատճառով, որը թվարկած չէ ՊԸՊ-ի վերոնշյալ 61.2 ենթակետում, ապա Ծրագրի ղեկավարը պետք է որոշի, արդյո՞ք խախտումը կոպիտ է, թե ոչ:

**62. Վճարում դադարեցման դեպքում**

62.1 Եթե Պայմանագիրը դադարեցվում է Կապալառուի կողմից Պայմանագրի կոպիտ խախտման պատճառով, Ծրագրի ղեկավարը թողարկում է վկայագիր կատարված աշխատանքի ծավալի և պատվիրված Նյութերի համար՝ հանած մինչև վկայագրի թողարկումը ստացված կանխավճարը և այն տոկոսադրույքը, որը կիրառվում է չավարտված աշխատանքների արժեքի նկատմամբ՝ ինչպես **նշված է ՊՀՊ-ում**: Վնասների լրացուցիչ փոխհատուցում չի կիրառվում: Եթե Պատվիրատուի կողմից կատարված ընդհանուր վճարումները գերազանցում են Կապալառուին կատարված ցանկացած վճարումները, ապա տարբերությունը համարվում է Պատվիրատուին վճարվելիք պարտք:

62.2 Եթե Պայմանագիրը դադարեցվում է Պատվիրատուի հայեցողությամբ, կամ Պատվիրատուի կողմից Պայմանագրի կոպիտ խախտման պատճառով, Ծրագրի ղեկավարը վկայագիր կթողարկի կատարված

աշխատանքների արժեքի, պատվիրված Նյութերի, Սարքավորումների դուրս բերման ողջամիտ արժեքի, Կապալառուի՝ բացառապես Պայմանագրով նախատեսված Աշխատանքների համար ներգրավված աշխատակազմի վերադարձի, ինչպես նաև Կապալառուի կողմից Աշխատանքները պաշտպանելու և անվտանգությունը ապահովելու ծախսերի համար՝ հանելով մինչև վկայագրի թողարկումը ստացված կանխավճարը:

| | | |
|---|---|---|
| **63. Սեփականու-թյունը** | 63.1 | Եթե Պայմանագիրը դադարեցվում է Կապալառուի մեղքով, Շինհրապարակում գտնվող բոլոր Նյութերը, Արտադրամասերն ու Սարքավորումները, ժամանակավոր աշխատանքներն ու Աշխատանքները համարվում են Պատվիրատուի սեփականությունը: |
| **64. Ազատում կատարումից** | 64.1 | Եթե Պայմանագիրը դադարեցվում հանկարծակի սկսած պատերազմի կամ այլ իրադարձության պատճառով, որն ամբողջովին դուրս է Պատվիրատուի կամ Կապալառուի վերահսկողությունից, ապա Ծրագրի ղեկավարը պետք է վկայագրի Պայմանագրի խափանումը: Կապալառուն պետք է Շինհրապարակը դարձնի ապահով, և նշված վկայագիրը ստանալուց հետո հնարավորինս շուտ դադարեցնի աշխատանքը: Կապալառուն պետք է վճարվի վկայագիրը ստանալուց առաջ բոլոր իրականացրած աշխատանքի և դրանից հետո պարտավորությամբ իրականացրած աշխատանքի համար: |
| **65. Բանկի փոխառության կամ վարկի կասեցում** | 65.1 | Եթե Բանկը կասեցնում է Փոխառության կամ Վարկի տրամադրումը Պատվիրատուին, որից իրականացվում է Կապալառուին տրվող վճարումների մի մասը, ապա՝<br><br>(ա) Պատվիրատուն պարտավոր է այդ կասեցման մասին տեղեկացնել Կապալառուին՝ Բանկի կողմից կասեցման ծանուցումը ստանալու պահից 7 օրվա ընթացքում:<br><br>(բ) Եթե Կապալառուն չի ստանում իրեն հասանելիք գումարը ՊԸՊ 45.1 ենթակետով վճարման համար նախատեսված 28 օրվա ընթացքում, ապա Կապալառուն կարող է անմիջապես ներկայացնել 14-օրյա դադարեցման ծանուցում: |

## ՀԱՎԵԼՎԱԾ Ա

## ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ

**Խարդախություն և կաշառակերություն**
*(Սույն Հավելվածի տեքստը չի կարող ձևափոխվել)*

**1. Նպատակը**

Բանկի Կաշառակերության դեմ պայքարելու ուղեցույցները և սույն հավելվածը կիրառվում են Ներդրումային ծրագրերի ֆինանսավորման գործողությունների շրջանակում իրականացվող գնումների նկատմամբ:

**2. Պահանջները**

●

2.1 Բանկը պահանջում է, որ Փոխառուները, ներառյալ՝ Բանկի ֆինանսավորման շահառուները), մրցույթի մասնակիցները (հայտատուները, առաջարկ ներկայացնողները) խորհրդատուները, կապալառուները և մատակարարները, ենթակապալառուները, ենթախորհրդատուները, ծառայություններ մատուցողները կամ մատակարարները, նրանց գործակալները (անկախ նրանից, հայտարարված են, թե ոչ) կամ դրանց անձնակազմը պահպանեն էթիկայի բարձրագույն չափանիշներ, Բանկի կողմից ֆինանսավորվող պայմանագրերի գնումների գործընթացի, ընտրության և իրականացման ժամանակ և զերծ մնան Խարդախությունից և Կաշառակերությունից:
Այս նպատակով Բանկը՝

ա. սույն դրույթի նպատակների համար հետևյալ կերպ է սահմանում ստորև բերված տերմինները.

(i) **«կաշառակերություն»**՝ նշանակում է մյուս կողմի գործողությունների վրա անպատեհ կերպով ազդելու նպատակով ուղղակի կամ անուղղակի որևէ արժեք ներկայացնող բան առաջարկելը, տալը, ստանալը կամ միջնորդելը,

(ii) **«խարդախություն»**՝ նշանակում է որևէ գործողություն կամ բացթողում, այդ թվում սխալ ներկայացում, որը գիտակցորեն կամ անշրջահայաց կերպով շփոթեցնում է, կամ որով փորձ է արվում շփոթեցնել կողմին՝ ֆինանսական կամ այլ օգուտ ստանալու կամ պարտականություններից խուսափելու նպատակով,

(iii) **«գաղտնի պայմանավորվածություն»**՝ նշանակում է երկու կամ ավել կողմերի միջև մշակված պայմանավորվածություն՝ անպատեհ նպատակին հասնելու՝ այդ թվում մյուս կողմի գործողությունների վրա անպատեհ կերպով ազդելու համար,

(iv) **«հարկադրանք»**՝ նշանակում է ուղղակիորեն կամ անուղղակի կերպով որևէ կողմին կամ կողմի գույքին վնաս պատճառելը կամ փչացնելը, կամ, վնաս պատճառելու կամ փչացնելու սպառնալիքը՝ կողմի գործողությունների վրա ոչ պատեհ կերպով ազդելու նպատակով,

(viii) **«խոչընդոտում»** նշանակում է՝

(ա) կանխամտածված կերպով հետաքննության համար ապացույց հանդիսացող նյութի ոչնչացում, կեղծում, խախտում կամ թաքցնում, կամ սխալ հայտարարությունների ներկայացնում հետաքննողներին՝ Բանկի կողմից կաշառակերության, խարդախության, գաղտնի պայմանավորվածության, հարկադրանքի դեպքերի հետաքննությանը էապես խոչընդոտելու նպատակով, և/կամ որևէ կողմին սպառնում, հարկադրում, կամ վախեցնում՝ թույլ չտալու նրան բացահայտել հետազոտության

հետ առնչվող նրա իմացած տեղեկությունները կամ հետ պահելու նրան հետաքննությունից,

(բ) գործողություններ, որոնք նպատակ ունեն նյութապես խոչընդոտել Բանկի կողմից նախատեսված զննման և աուդիտի իրավունքները, որոնք ներկայացված են ստորև բերված 2.2ե կետում:

բ. Կմերժի հաղթող ճանաչելու առաջարկը, եթե Բանկը որոշի, որ շնորհման համար առաջարկված ընկերությունը կամ անհատը, կամ նրա անձնակազմից որևէ մեկը, կամ նրա գործակալը, ենթախորհրդատուները, ենթակապալառուները, ծառայություններ մատուցողները, մատակարարները և/կամ նրանց աշխատողները, տվյալ պայմանագրի համար մրցելիս ուղղակիորեն կամ անուղղակիորեն ներգրավված է եղել կաշառակերության, խարդախության, գաղտնի պայմանավորվածության, հարկադրանքի կամ խոչընդոտման մեջ:

գ. Ի լրումն համապատասխան Իրավական Համաձայնագրում սահմանված իրավական պաշտպանության միջոցների՝ կարող է նախաձեռնել այլ համապատասխան գործողություններ, այդ թվում գնումը հայտարարել ընթացակարգի խախտումով իրականացված, եթե Բանկը որոշի, որ փոխառուի ներկայացուցիչը կամ վարկի շահառուի ներկայացուցիչը պայմանագրի զնման, ընտրության կամ կատարման ժամանակ ներգրավված է եղել կաշառակերության, խարդախության, գաղտնի պայմանավորվածության, հարկադրանքի կամ խոչընդոտման մեջ, իսկ փոխառուն ժամանակին չի ձեռնարկել Բանկի համար գոհացուցիչ համապատասխան գործողություններ՝ նման դեպքերը տեղի ունենալու ժամանակ իրավիճակը շտկելու համար, այդ թվում ժամանակին Բանկին չի տեղեկացրել, որ գիտեր այդ դեպքերի մասին,

դ. Բանկի հակակոռուպցիոն ուղեցույցների և Բանկի գերիշխող պատժամիջոցների քաղաքականությունների և ընթացակարգերի համաձայն՝ կարող է պատժամիջոցներ կիրառել ընկերության կամ անհատի նկատմամբ որոշակի կամ անորոշ ժամկետով, այդ թվում հրապարակայնորեն հայտարարելով այդ ընկերությանը ոչ իրավասու ՝ (i) Բանկի կողմից ֆինանսավորվող պայմանագրեր շնորհվելու կամ այլ կերպ օգուտ ստանալու համար՝ ֆինանսապես կամ ցանկացած այլ ձևով[16] (ii) Բանկի ֆինանսավորմամբ ծրագրերի համար իրավասու հանդիսացող ընկերությունում որպես ենթախորհրդատու, մատակարարող կամ ծառայություններ տրամադրող նշանակվելու համար[17], (iii) Բանկի կողմից տրամադրված վարկային գումարներ ստանալու կամ այլ կերպով Բանկի կողմից ֆինանսավորվող ծրագրերի պատրաստման կամ իրականացման գործընթացում հետագայում մասնակցելու համար»:

ե. Պահանջում է, որ մրցութային փաստաթղթերում/առաջարկ ներկայացնելու հրավերում և Բանկի կողմից ֆինանսավորվող պայմանագրերում մի կետ ավելացվի, ըստ որի կպահանջվի, որ մրցույթի մասնակիցները (հայտատուները/առաջարկ ներկայացնողները), խորհրդատուները,

---

[16] Կասկածներից խուսափելու համար՝ պատժամիջոցի տակ գտնվող այն կողմը, որն իրավասու չէ պայմանագրի շնորհման համար, չի կարող նաև, առանց սահմանափակման, (i) դիմել նախաորակավորման համար, շահագրգռվածության հայտ ներկայացնել որևէ խորհրդատվության կամ մրցույթի գործընթացում՝ ուղղակի կերպով կամ որպես նշանակված ենթակապալառու, արտադրող, մատակարար կամ ծառայություններ մատուցող նման պայմանագրի առնչությամբ և (ii) ընդգրկվել որևէ լրացման կամ փոփոխության մեջ, որը ներկայացնում է ցանկացած գոյություն ունեցող պայմանագրի էական փոփոխություն:

[17] Նշանակված ենթախորհրդատու, մատակարարող կամ ծառայություններ մատուցող են համարվում նրանք, որոնք (i) ընդգրկված են խորհրդատուի կողմից իր առաջարկում, քանի որ դա ապահովում է կոնկրետ և վճռորոշ փորձ ու տեխնոլոգիական գիտելիքներ, որոնք հաշվի են առնվում հատուկ ծառայությունների մասով խորհրդատուի առաջարկի տեխնիկական գնահատման ժամանակ, (ii) նշանակվել են Փոխառուի կողմից:

կապալառուները, մատակարարները և նրանց ենթակապալառուները, Ենթախորհրդատուները, ծառայություններ մատուցողները, մատակարարները, գործակալների անձնակազմը թույլ տան Բանկին զննել[18] առաջարկի ներկայացման և պայմանագրի կատարման (շնորհման դեպքում) հետ առնչվող բոլոր հաշիվները, հաշվետվությունները և այլ փաստաթղթերը, ինչպես նաև իրականացնել դրանց աուդիտ՝ Բանկի կողմից նշանակված աուդիտորների կողմից:

[18] Այս համատեքստում զննումը սովորաբար հետաքննական (այսինքն դատական) բնույթ է կրում: Դա ներառում է Բանկի կամ Բանկի կողմից նշանակված անձանց կողմից նախաձեռնված փաստերի հավաքման գործողություններ՝ լուծելու հետազոտությունների/ աուդիտների հետ կապված կոնկրետ հարցեր, ինչպես օրինակ համապատասխան մեխանիզմների միջոցով հնարավոր Խարդախության կամ կաշառակերության մասին պնդման հավաստիությունը գնահատելը: Նման գործողությունը ներառում է, սակայն չի սահմանափակվում, ընկերության կամ անհատի ֆինանսական գրանցումները և տեղեկատվությունը ստանալը և ուսումնասիրելը, անհրաժեշտության դեպքում դրանց պատճենահանելը, ինչպես նաև հետազոտության/աուդիտի համար անհրաժեշտ ցանկացած այլ փաստաթուղթ, տվյալ և տեղեկատվություն ստանալը և ուսումնասիրելը (թղթային կամ էլեկտրոնային ձևաչափով), անհրաժեշտության դեպքում դրանց պատճենահանելը, անձնակազմի կամ այլ համապատասխան անհատների հետ հարցազրույց անցկացնելը, ֆիզիկական ստուգումներ կամ տեղամասային այցելություններ կատարելը և տեղեկատվության հավաստիացման ստանալը երրորդ կողմի կողմից:

# Բաժին IX. Պայմանագրի հատուկ պայմաններ (ՊՀՊ)

| Ա. Ընդհանուր հարցեր | |
|---|---|
| **ՊԸՊ 1.1 (4)** | Ֆինանսական հաստատությունը՝ ՀԲ (Վերակառուցման Եվ Զարգացման Միջազգային Բանկ՝ հանդես գալով որպես Գլոբալ էկոլոգիական հիմնադրամի (GEF) իրականացնող գործակալություն, եւ վերջինս Միջազգային Զարգացման Ընկերակցության հետ համատեղ հանդես գալով որպես Հայաստանի դիմակայուն լանդշաֆտների ծրագրին աջակցելու համար Բազմադոնոր տրաստային հիմնադրամի կառավարիչ) |
| **ՊԸՊ 1.1 (18)** | Պատվիրատու՝ «Բնապահպանական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկ (ԲԾԻԳ ՊՀ)<br>Հասցե՝ ՀՀ, 0005, ք. Երևան, Տիգրան Մեծի պող., 65ա շենք Լիազորված ներկայացուցչի անունը՝<br>Արմեն Եսոյան, ՇՄՆ «ԲԾԻԳ» ՊՀ-ի տնօրենի պաշտոնակատար |
| **ՊԸՊ 1.1 (22)** | Բոլոր աշխատանքների նախատեսված ավարտման ժամկետ՝ մոտ 748 օր սկսած Աշխատանքների մեկնարկից:<br><br>Աշխատանքները պետք է ավարտվեն ոչ ուշ, քան 2028 թվականի նոյեմբերի 15-ը: |
| **ՊԸՊ 1.1 (25)** | Ծրագրի ղեկավար՝ «Հայաստանի դիմակայուն լանդշաֆտներ» դրամաշնորհային ծրագրի 2-րդ բաղադրիչի համակարգող<br><br>Հասցե՝ ՀՀ, 0005, ք. Երևան, Տիգրան Մեծի պող., 65ա շենք |
| **ՊԸՊ 1.1 (ա)** | Շինհրապարակը գտնվում է ՀՀ Լոռու մարզ, ըստ Բաժին VII - Աշխատանքներին ներկայացվող պահանջներում սահմանված տարածքների |
| **ՊԸՊ 1.1 (դ)** | Մեկնարկի օր՝ կլինի նշված մեկնարկի նամակում |
| **ՊԸՊ 1.1 (ը)** | Հիմնական աշխատանքները ներառում են սակայն չեն սահմանափակվում հետևյալ աշխատանքերով (Մանրամասները տես՝ Բաժին VII - Աշխատանքներին ներկայացվող պահանջներում սահմանված տարածքների).<br><br>1. Տարածքի նախապատրաստում,<br><br>2. Դաշտային աշխատողների համար հանգստի պայմանների ապահովում այն տարածքներում, որտեղ իրականացվելու են անտառվերականգնման աշխատանքները,<br><br>3. Տնկման աշխատանքներ<br><br>4. Սերմնաբուսակների խնամքի աշխատանքներ<br><br>5. Սերմնաբուսակների կենսունակության աշնանային գնահատում<br>6. Սերմնաբուսակների կենսունակության գարնանային գնահատում |
| **ՊԸՊ 2.2** | Աշխատանքների ավարտ ըստ բաժինների **Չ/Կ** |
| **ՊԸՊ 2.3(թ)** | Հետևյալ փաստաթղթերը նույնպես կազմում են Պայմանագրի մասը՝ Բնապահպանական և սոցիալական կառավարման պլան (կցվում է) |
| **ՊԸՊ 3.1** | Պայմանագրի լեզուն՝ Հայերեն<br>Պայմանագրի նկատմամբ կիրառվում են Հայաստանի Հանրապետության օրենքները: |
| **ՊԸՊ 5.1** | Ծրագրի ղեկավարը չի կարող փոխանցել իր ցանկացած պարտականություն և պատասխանատվություն: |

| | |
|---|---|
| **ՊԸՊ 8.1** | Այլ կապալառուների ժամանակացույցեր Չ/Կ |
| **ՊԸՊ 13.1** | Ապահովագրության և չհատուցվող նվազագույն գումարներն են.<br>(ա) Աշխատանքների, Արտադրամասերի և Նյութերի կորուստ կամ վնաս՝ 110 տոկոս Պայմանագրի գումարի (առավելագույն չհատուցվող գումարը Պայմանագրի գումարի 0.3 տոկոս)<br>(բ) Սարքավորումների կորուստ կամ վնաս՝ 2,000,000 դրամ (առավելագույն չհատուցվող գումարը 100,000 դրամ)<br>(գ) Պայմանագրի հետ կապված Գույքի կորուստ կամ վնաս (բացառությամբ Աշխատանքների, Նյութերի, Արտադրամասերի ու Սարքավորումների)՝ 2,000,000 դրամ (առավելագույն չհատուցվող գումարը 100,000 դրամ)<br>(դ) անձնական վնաս կամ մահ՝<br>(i) կապալառուի աշխատողներ՝ 1,000,000 դրամ/անձ<br>(ii) այլ մարդիկ՝ 1,000,000 դրամ |
| **ՊԸՊ 14.1** | Տվյալներ Շինհրապարակի մասին նշված կլինի մեկնարկի նամակում |
| **ՊԸՊ 20.1** | Շինհրապարակի տնօրինման ամսաթվերն են՝ նշված կլինի մեկնարկի նամակում |
| **ՊԸՊ 23.1 և**<br>**ՊԸՊ 23.2** | Վեճի դատավոր նշանակող լիազոր մարմին՝ Հայաստանի Հանրապետության առևտրաարդյունաբերական պալատին կից մշտապես գործող արբիտրաժային դատարան |
| **ՊԸՊ 24.3** | Վեճի դատավորի ժամային դրույքը և փոխհատուցվող ծախսերը՝ այն հասանելի է հետևյալ կայքէջում<br>*http://www.arbitrage.am/?page=arbitration_costs* |
| **ՊԸՊ 24.4** | Հաստատություն, որի ընթացակարգերը կիրառվելու են արբիտրաժի ժամանակ՝ Տարածքային առաջին ատյանի դատարան:<br>Արբիտրաժի վայրը՝ Երևան, Հայաստան |
| **Բ. Ժամանակի վերահսկողություն** | |
| **ՊԸՊ 30.1** | Կապալառուն պարտավոր է Աշխատանքների ծրագիրը ներկայացնել հաստատմանը Ընդունման նամակը ստանալուց հետո 21 (քսանմեկ) օրվա ընթացքում: |
| **ՊԸՊ 30.3** | Ծրագրի թարմացման հաճախականությունը 90 (իննսուն) օր է:<br>Եթե Կապալառուն սահմանված ժամկետում չի ներկայացնում թարմացված Աշխատանքների ծրագիրը, Ծրագրի ղեկավարը կարող է հաջորդ միջանկյալ վճարման գումարից պահել 200,000 ՀՀ դրամ:<br><br>Առաջընթացի հաշվետվությունների ներկայացման պարբերականությունը՝ առնվազն 3 (երեք) ամիս (եռամսյակը մեկ): |
| **Գ. Որակի վերահսկողություն** | |
| **ՊԸՊ 38.1** | Թերությունների վերացման ժամանակաշրջանը **365 (երեք հարյուր վաթսունհինգ) օր է:** |
| **Դ. Ծախսերի վերահսկում** | |
| **ՊԸՊ 48.1** | Գործատու երկրի արժույթն է՝ հայկական դրամ (ՀՀ դրամ): |
| **ՊԸՊ 49.1** | Պայմանագրի գինը ենթակա չէ ճշգրտման ՊԸՊ 45 կետի համաձայն: |
| **ՊԸՊ 50.1** | Վճարումներից պահվող համամասնությունը՝ 10% (տաս) տոկոս |
| **ՊԸՊ 51.1** | Վնասների փոխհատուցումը ողջ Աշխատանքների համար՝ **Պայմանագրի վերջնական գնի 0.05%-ի չափով յուրաքանչյուր օրվա դիմաց**:<br>Վնասների փոխհատուցման առավելագույն գումարը ողջ Աշխատանքների համար՝ **Պայմանագրի վերջնական գնի 10 (տաս) %:** |
| **ՊԸՊ 52.1** | Պարգևավճարը ողջ Աշխատանքների համար՝ **ԿԻՐԱՌԵԼԻ ՉԷ** |

| | |
|---|---|
| **ՊԸՊ 53.1** | Կանխավճարի գումարը կկազմի՝ Պայմանագրի գումարի **20% (քսան) տոկոսը** և կվճարվի կանխավճարի երաշխիքը ներկայացնելուց հետո **28 (քսանութ)** օրացույցային օրվա ընթացքում: |
| **ՊԸՊ 54.1** | Պատվիրատուին «պետք չէ տրամադրել» Բնապահպանական և սոցիալական կատարման երաշխիք: |
| **ՊԸՊ 54.1** | Կատարման երաշխիք – **Բանկային երաշխիք**՝ Պայմանագրի ընդունված գումարի **5 (հինգ) տոկոսի** չափով, Պայմանագրի ընդունված գումարի արժույթով:<br><br>***Բանկային երաշխիքը պետք է լինի անվերապահ (ցպահանջ) Բանկային երաշխիք, որի ձևը ներկայացված է Բաժին X-ում (Պայմանագրի ձևեր):*** |
| **Ե. Պայմանագրի ավարտ** | |
| **ՊԸՊ 60.1** | Շահագործման ու պահպանման ձեռնարկները պահանջվում է ներկայացնել մինչև՝ **Չ/Կ**<br>Կատարողական գծագրերը պահանջվում է ներկայացնել մինչև. ՝ **Չ/Կ** |
| **ՊԸՊ 60.2** | Կատարողական գծագրերը և/կամ շահագործման ու պահպանման ձեռնարկները մինչև ՊԸՊ 60.1 ենթակետում նշված ամսաթիվը չներկայացնելու դեպքում պահվում է **Չ/Կ** |
| **ՊԸՊ 61.2 (է)** | Օրերի առավելագույն թիվը՝ **100 (հարյուր) օր** |
| **ՊԸՊ 62.1** | Տոկոսադրույք, որը կիրառվում է չավարտված ~~աշխատանքների արժեքի~~ նկատմամբ և ներկայացնում Պատվիրատուի լրացուցիչ ծախսն Աշխատանքներն ավարտելու համար՝ **10 (տաս) տոկոս:** |

# Բաժին X - Պայմանագրի ձևեր

Սույն բաժինը պարունակում է ձևեր, որոնք լրացվելուց հետո կկազմեն Պայմանագրի մաս: Կատարման երաշխիքի և կանխավճարի երաշխիքի ձևերը՝ պահանջված լինելու դեպքում, լրացվում են միայն հաղթող մասնակցի կողմից պայմանագրի շնորհումից հետո:

## ՇՆՈՐՀՄԱՆ ՄՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ

*[Սույն Շնորհման մտադրության ծանուցումը ուղարկվելու է Հայտ ներկայացրած յուրաքանչյուր Հայտատուին (Հայտատուի լիազորված ներկայացուցչին, որը նշված է Հայտի տեղեկատվական ձևում)]*

202…թ. ………….-ին

**Հայտատուի լիազորված ներկայացուցիչ**

**Անունը՝** *[նշել լիազորված ներկայացուցչի անունը]*

**Հասցե՝** *[նշել լիազորված ներկայացուցչի հասցեն]*

**Հեռ./փաքս՝** *[նշել լիազորված ներկայացուցչի հեռախոսի/փաքսի համարը]*

**Էլ. հասցե՝** *[նշել լիազորված ներկայացուցչի էլ. հասցեն]*

**ՓՈԽԱՆՑՄԱՆ ԱՄՍԱԹԻՎԸ՝** Սույն Ծանուցումը փոխանցվել է ***[էլ. փոստով/փաքսով] [ամսաթիվ] (տեղական ժամանակով)]***

**<u>Շնորհման մտադրության ծանուցում</u>**

**Պատվիրատու՝ «Բնապահպանական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկ**

**Պայմանագրի անուն՝ Լոռի մարզում անտառների վերականգնման աշխատանքներ**

**Երկիր՝ Հայաստանի Հանրապետություն**

**Ծրագիր No. P179988**

**ՀՆՀ No՝ AM-EPIU-516212-CW-RFB**

Սույն Շնորհման մտադրության ծանուցումը (Ծանուցում) տեղեկացնում է Ձեզ վերոհիշյալ պայմանագրի շնորհման վերաբերյալ մեր որոշման մասին: Սույն Ծանուցման փոխանցումից հետո սկսվում է Դադարի ժամանակաշրջանը: Դադարի ժամանակաշրջանում դուք կարող եք՝

a) Լուսաբանման խնդրանք ներկայացնել Ձեր Հայտի գնահատման առնչությամբ, և/կամ

b) Ներկայացնել Գնումներին առնչվող բողոք պայմանագրի շնորհման որոշման վերաբերյալ

1.

**1. Հաղթող Հայտատուն**

| | |
|---|---|
| **Անուն՝** | *[նշել հաղթող Հայտատուի անունը]* |
| **Հասցե՝** | *[նշել հաղթող Հայտատուի հասցեն]* |
| **Պայմանագրի գին՝** | *[նշել հաղթող Հայտատուի պայմանագրի գինը]* |

**2. Այլ Հայտատուները**

| Հայտատուի անունը | Հայտի գինը | Հայտի գնահատված գինը (եթե կիրառելի է) |
|---|---|---|
| *[ավելացնել անունը]* | *[ավելացնել հայտի գինը]* | *[ավելացնել գնահատված գինը]* |
| *[ավելացնել անունը]* | *[ավելացնել հայտի գինը]* | *[ավելացնել գնահատված գինը]* |
| *[ավելացնել անունը]* | *[ավելացնել հայտի գինը]* | *[ավելացնել գնահատված գինը]* |
| *[ավելացնել անունը]* | *[ավելացնել հայտի գինը]* | *[ավելացնել գնահատված գինը]* |
| *[ավելացնել անունը]* | *[ավելացնել հայտի գինը]* | *[ավելացնել գնահատված գինը]* |

**3. Ինչ պատճառով (ներով) չի հաղթել Ձեր հայտը**

***[Ծանուցում՝ այստեղ նշելու է տվյալ Հայտատուի Հայտի չհաղթելու պատճառը, որը չի ներառելու՝ (ա) կետ առ կետ համեմատություն այլ Հայտատուների Հայտերի հետ, (բ) տեղեկատվություն, որը Հայտատուի Հայտում նշված է՝ որպես գաղտնի:]***

**4. Ինչպե՞ս ներկայացնել լուսաբանման խնդրանք**

**ՎԵՐՋՆԱԺԱՄԿԵՏ: Լուսաբանման խնդրանք ներկայացնելու վերջնաժամկետը լրանում է կեսգիշերին *[ամսաթիվը]* (տեղական ժամանակով)**

Դուք կարող եք լուսաբանման խնդրանք ներկայացնել Ձեր առաջարկի գնահատման արդյունքների համար: Եթե որոշում եք լուսաբանման խնդրանք ներկայացնել, Ձեր գրավոր խնդրանքը պետք է ներկայացվի Շնորհման մտադրության ծանուցումը ստանալուց հետո **երեք (3) աշխատանքային օրվա** ընթացքում:

Ներկայացնել պայմանագրի անունը, համարը, Հայտատուի անունը, կոնտակտային տվյալները և լուսաբանման խնդրանքն ուղարկել հետևյալ ձևով՝

**Ում**: ----------------------------

**Պաշտոն**: ----------------------

**Գործակալություն**: **«Բնապահպանական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկ**

**Էլ. հասցե**՝ --------------------

Եթե Ձեր լուսաբանման խնդրանքը ստացվում է 3 (երեք) աշխատանքային օրվա վերջնաժամկետի ընթացքում, մենք այն կներկայացնենք Ձեր խնդրանքը ստանալուց հետո հինգ (5) աշխատանքային օրվա ընթացքում: Եթե մենք չկարողանանք լուսաբանումը ներկայացնել այս ժամանակահատվածում, Դադարի ժամանակաշրջանը կերկարացվի հինգ (5) աշխատանքային օրով լուսաբանման խնդրանքը ներկայացնելու օրվանից: Այս դեպքում մենք Ձեզ կտեղեկացնենք և կհաստատենք երկարացված Դադարի ժամանակաշրջանի ավարտման ամսաթիվը:

Լուսաբանումը կարող է լինել գրավոր, հեռախոսով, վիդեո կոնֆերանսի միջոցով կամ անձամբ: Մենք անհապաղ կտեղեկացնենք Ձեզ, թե ինչպես է լուսաբանումն իրականացվելու և կհաստատենք ամսաթիվը և ժամը:

Եթե լուսաբանման խնդրանք ներկայացնելու վերջնաժամկետը լրացել է, դուք դեռ կարող եք դիմել լուսաբանման համար: Այս դեպքում մենք լուսաբանումը կներկայացնենք հնարավորինս շուտ և սովորաբար Պայմանագրի շնորհման ծանուցման հրապարակման ամսաթվից ամենաուշը տասնհինգ (15) աշխատանքային օրվա ընթացքում:

**5. Ինչպես բողոք ներկայացնել**

**Ժամանակաշրջան Գնումներին առնչվող բողոքը, որով վիճարկվում է պայմանագրի շնորհման որոշումը, լրանում է կեսգիշերին *[նշել ամսաթիվը]* (տեղական ժամանակով).**

Ներկայացնել պայմանագրի անունը, համարը, Հայտատուի անունը, կոնտակտային տվյալները և Գնումներին առնչվող բողոքը ուղարկել հետևյալ ձևով՝

**Ում**: ------------------------------

**Պաշտոն**: ------------------------

**Գործակալություն**: **«Բնապահպանական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկ**

**Էլ. հասցե՝** ---------------------

Գնումների գործընթացի այս պահին դուք կարող եք ներկայացնել Գնումներին առնչվող բողոք, վիճարկելով պայմանագրի շնորհման որոշումը: Պարտադիր չէ, որ այս բողոքը ներկայացնելուց առաջ ներկայացրած լինեք լուսաբանման խնդրանք կամ ստացած լինեք լուսաբանում: Ձեր բողոքը պետք է ներկայացվի Դադարի ժամանակաշրջանում և մեր կողմից ստացվի մինչև Դադարի ժամանակաշրջանի ավարտը:

**Լրացուցիչ տեղեկատվություն:**

Լրացուցիչ տեղեկատվության համար տե՛ս «Գնումների կանոնակարգեր ՆԾՖ փոխառուների համար (Գնումների կանոնակարգեր)» [https://policies.worldbank.org/sites/ppf3/PPFDocuments/Forms/DispPage.aspx?docid=4005] (Հավելված III). Սույն դրույթներին պետք է ծանոթանաք մինչև Ձեր բողոքը պատրաստելը և ներկայացնելը: Բացի այդ Համաշխարհային Բանկի ուղեցույցում «Ինչպես ներկայացնել Գնումներին առնչվող բողոք» [http://www.worldbank.org/en/projects-operations/products-and-services/brief/procurement-new-framework#framework] ներկայացվում է գործընթացի վերաբերյալ օգտակար բացատրություն, ինչպես նաև բողոքի նամակի տիպային ձև:

Ամփոփագրում կան չորս էական պահանջներ ՝

1. Դուք պետք է լինեք «շահագրգռված կողմ»: Այս դեպքում դա նշանակում է այն Հայտատուն, որն ընտրության գործընթացում ներկայացրել է Հայտ և ստացել Ծնորհման մտադրության ծանուցում:
2. Բողոքը կարող է վիճարկել միայն պայմանագրի շնորհման որոշումը:
3. Բողոքը պետք է ներկայացվի վերը նշված վերջնաժամկետում:
4. Ձեր բողոքում պետք է ներառեք Գնումների կանոնակարգով պահանջվող ողջ տեղեկատվությունը (ինչպես նկարագրված է Հավելված III-ում):

**6. Դադարի ժամանակաշրջան**

**ՎԵՐՋՆԱԺԱՄԿԵՏ՝ Դադարի ժամանակաշրջանը ավարտվում է կեսգիշերին *[նշել ամսաթիվը]* (տեղական ժամանակով).**

Դադարի ժամանակաշրջանը տևում է տաս (10) աշխատանքային օր Ծնորհման մտադրության ծանուցման փոխանցման ամսաթվից:

Դադարի ժամանակաշրջանը կարող է երկարացվել վերոնշյալ 4-րդ բաժնում նշված ձևով:

Սույն Ծանուցման վերաբերյալ ցանկացած հարցի դեպքում մի՛ վարանեք կապվել մեզ հետ:

Հարգանքով՝

**Ստորագրություն՝** ______________________________________________

**Անուն՝** ______________________________________________

**Պաշտոն՝** ______________________________________________

**Հեռախոս՝** ______________________________________________

**Էլ. հասցե՝** ______________________________________________

**ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՇՆՈՐՀՄԱՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ**
**Ընդունման նամակ**

*[ամսաթիվ]*

Ում՝ *[Կապալառուի անունը և հասցեն]*
Խնդրո առարկան՝ *[Պայմանագրի շնորհման ծանուցման համարը]*

Սույնով տեղեկացնում ենք, որ Ձեր [*ամսաթիվ*] Հայտը՝ [*պայմանագրի անվանումը և նույնականացման համարը, ինչպես նշված է Հայտի ՊՀՊ-ում*] աշխատանքների իրականացման համար ընդունվում է մեր կազմակերպության կողմից [*գումարը թվերով և տառերով և արժույթը*] Պայմանագրի ընդունված գումարով՝ ուղղված և փոփոխված համաձայն «Հրահանգներ հայտատուներին» բաժնի:

Պայմանագրի դրույթների համաձայն, Դուք պետք է 28 օրվա ընթացքում ներկայացնեք Կատարման երաշխիք և Բնապահպանական և սոցիալական կատարման երաշխիք *[Ջնջել ԲՍ կատարման երաշխիքը, եթե այս պայմանագրով պետք չէ]*, օգտագործելով Կատարման երաշխիքի և ԲՍ կատարման երաշխիքների ձևերը, որոնք բերված են մրցութային փաստաթղթերի Բաժին X-ում (Պայմանագրի ձևեր):
[*Ընտրեք հետևյալ ձևակերպումներից մեկը*՝]
Մենք համաձայն ենք, որ [*Հայտատուի կողմից առաջարկված վեճերի դատավորի անունը*] նշանակվի որպես վեճերի դատավոր:
[*կամ*]

Մենք համաձայն չենք, որ [*Հայտատուի կողմից առաջարկված վեճերի դատավորի անունը*] նշանակվի որպես վեճերի դատավոր, և՝ ուղարկելով Ընդունման նամակի պատճենը [*Լիազոր մարմնի անունը*], սույնով խնդրում ենք վերջինիս նշանակել Վեճերի դատավոր՝ համաձայն ՀՀ 48.1 և ՊԸՊ 23.1 կետերի:

Լիազորված ստորագրությունը՝
Ստորագրողի անունը և պաշտոնը՝
Ընկերության անվանումը՝

Առդիր՝ Պայմանագրի համաձայնագիր

**Պայմանագրի համաձայնագիր**

**ՍՈՒՅՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐԸ** կազմվել է` --------թ…..-ին **«Բնապահպանական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի** (այսուհետ` «Պատվիրատու») մի կողմից և *[Կապալառուի անունը]* (այսուհետ` «Կապալառու») մյուս կողմից միջև:

*[Եթե Կապալառուն համատեղ ձեռնարկում է, վերոնշյալ մասը պետք է ձևափոխվի հետևյալ կերպ.* « **ՍՈՒՅՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐԸ** կազմվել է` ------------թ…..-ին մի կողմից` « **«Բնապահպանական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի** (այսուհետ` «Պատվիրատու»), մյուս կողմից` հետևյալ կազմակերպություններից կազմված Համատեղ ձեռնարկության միջև` *[կազմակերպության անունը]*, *[կազմակերպության անունը]* … (այսուհետ` «Կապալառու»), որոնք բոլորը համապարտ պատասխանատվություն են կրում Պատվիրատուի առջև սույն Պայմանագրի բոլոր պարտավորությունների համար:]

**ՆԿԱՏԻ ԱՌՆԵԼՈՎ**, որ Պատվիրատուն ցանկանում է, որ **«Լոռի մարզում անտառների վերականգնման աշխատանքներ» (** AM-EPIU-516212-CW-RFB**)** Աշխատանքներն իրականացվեն Կապալառուի կողմից և ընդունել է Կապալառուի Հայտն այդ Աշխատանքներն իրականացնելու ու ավարտելու, ինչպես նաև դրանց հետ կապված բոլոր թերությունները վերացնելու համար,

Պատվիրատուն և Կապալառուն համաձայնվում են հետևյալի շուրջ,`

1. Սույն Պայմանագրի բառերն ու արտահայտություններն ունեն նույն իմաստը, որը դրանց վերագրվել է Պայմանագրի փաստաթղթերում,
2. Հետևյալ փաստաթղթերը պետք է կազմվեն, կարդացվեն ու մեկնաբանվեն որպես սույն Պայմանագրի մաս: Պայմանագիրը գերակայում է Պայմանագրի մնացած փաստաթղթերի նկատմամբ:
   **(ա) Ընդունման նամակ**
   **(բ) Հայտի նամակ**
   **(գ) Հավելվածներ NO.--- (առկայության դեպքում)**
   **(դ) Պայմանագրի հատուկ պայմաններ**
   **(ե) Պայմանագրի ընդհանուր պայմաններ, այդ թվում հավելվածներ**
   **(զ) Մասնագրեր**
   **(է) Գծագրեր**
   **(ը) Աշխատանքների ծավալների ցուցակ, և**
   **(թ)** ՊՀՊ-ում թվարկած այլ փաստաթղթեր, ինչպես նաև ՊՀՊ թվարկված բոլոր այլ փաստաթղթերը, որոնք հանդիսանում են Պայմանագրի մաս, և ոչ միայն դրանք:
   **- Պատվիրատուի ԲՍԱԱ քաղաքականության փաստաթուղթը;**
   **- Բնապահպանական և Սոցիալական կառավարման պլան (ԲՍԿՊ);**
   **- Կապալառուի ԲՍ Վարքականոններ:**
3. Այս Պայմանագրով սահմանված ձևով Պատվիրատուի կողմից Կապալառուին արվելիք վճարումների դիմաց հետ, սույնով Կապալառուն պարտավորվում է Պատվիրատուի համար իրականացնել և ավարտել Աշխատանքները, ինչպես նաև վերացնել դրանց թերությունները` բոլոր առումներով Պայմանագրի դրույթների համաձայն:
4. Սույնով Պատվիրատուն պարտավորվում է վճարել Կապալառուին` Աշխատանքների կատարման ու ավարտման, ինչպես նաև դրանց թերությունների վերացման դիմաց, Պայմանագրի գինը կամ որևէ այլ գումար, որը ենթակա կլինի վճարման Պայմանագրի դրույթների համաձայն` Պայմանագրով սահմանված ժամկետներում և ձևով:

**Ի ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆ** դրա, Պայմանագրի կողմերը կնքում են սույն Համաձայնագիրը **Հայաստանի Հանրապետության** օրենքների համաձայն` վերոնշյալ օրը, ամսին և տարում:

| | |
|---|---|
| ***Պատվիրատուի անունից`*** | *[Կապալառուի կամ Համատեղ ձեռնարկության (ՀՁ) անունից` նշել Կապալառուի կամ ՀՁ անունը]* |
| **«Բնապահպանական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկ** | Հասցե` ........................... |
| Հասցե` | ՀՎՀՀ ............................ |
| | Հ/Հ ............................. |

| ՀՎՀՀ | Բանկի անվանումը՝ |
|---|---|
| ___________________________ | ___________________________<br>*[Կապալառուի լիազորված ներկայացուցիչ – անուն և ստորագրություն]*<br>*[ՀՁ-ի դեպքում պետք է ստորագրեն բոլոր անդամները, օրինակ՝*<br>___________________________<br>*Անդամի անունը և հասցեն*<br>___________________________<br>*Լիազորված ներկայացուցիչ]*<br>___________________________<br>*Անդամի անունը և հասցեն*<br>___________________________<br>*Լիազորված ներկայացուցիչ]* |

**Կատարման երաշխիք (ցպահանջ երաշխիք)**

**(Բանկային երաշխիք)**

*[Երաշխավորի բլանկ կամ SWIFT նույնականացման կոդ]*
**Շահառու՝** *[Պատվիրատուի անվանումը և հասցեն]*
**Ամսաթիվ՝**
**ԿԱՏԱՐՄԱՆ ԵՐԱՇԽԻՔ No.**
**Երաշխավորող.** *[թողարկողի անունը, հասցեն և վայրը՝ եթե նշված չէ բլանկի վրա]*

Մեզ տեղեկացրել են, որ ___________________ *[Կապալառուի անունը (համատեղ ձեռնարկության դեպքում պետք է լինի համատեղ ձեռնարկության անունը]* (այսուհետ՝ «Հայտատու») [*ամսաթիվ*] Շահառուի հետ կնքել է [*պայմանագրի համարը և Աշխատանքների հակիրճ նկարագրությունը*] (այսուհետ՝ «Պայմանագիր) կատարելու համար:

Բացի այդ, մենք գիտենք, որ համաձայն Պայմանագրի պայմանների, անհրաժեշտ է ներկայացնել կատարման երաշխիք:

Հայտատուի խնդրանքով մենք՝ [*Բանկի անվանումը*], հանդիսանալով երաշխավոր, սույնով պարտավորվում ենք՝ Շահառուի գրավոր պահանջը ստանալուն պես, անվերապահորեն Շահառուին վճարել [*նշել գումարը բառերով և թվերով*][191] չգերազանցող գումար այն արժույթով, որով ենթակա է վճարման Պայմանագրի գինը: Պահանջում կամ դրան ուղեկցող առանձին ստորագրված փաստաթղթում կնշվի, որ Հայտատուն խախտել է իր պայմանագրային պարտավորություն (ները): Շահառուից չի պահանջվում բերել դրա ապացույցները կամ պահանջված գումարի հիմնավորումները:

Սույն երաշխիքը վավեր է մինչև *[ամսաթիվ]* [202], և դրա շրջանակներում ցանկացած վճարման պահանջ պետք է ներկայացվի վավերության ժամկետի ավարտից ոչ ուշ:

Սույն երաշխիքը կարգավորվում է «The Uniform Rules fo Demand Guarantees (URDG), վերանայված 2010, ICC Publication No. 758»-ի դրույթների և պահանջների համաձայն, բացառությամբ 15(ա) հոդված օժանդակող հայտարարության, որը սույնով հանվում է:

[*Բանկի կնիքը և ստորագրությունները*]

***Ծանոթություն՝ շեղ տառերով գրված տեքստը (այդ թվում տողատակերը) բերվում է այս ձևի օգտագործման համար և պետք է ջնջվի վերջնական տեքստից:***

---

19[1] *Երաշխավորը պետք է նշի Պայմանագրի ընդունված գումարի այն տոկոսը, որը սահմանված է Ընդունման նամակով՝ հանած պայմանական գումարները (առկայության դեպքում)՝ Պայմանագրի արժույթով:*

20[2] *Նշեք ամսաթիվը՝ 28 օր ավարտման ակնկալվող ամսաթվից հետո ըստ ՊԸՊ 57.1 կետի: Պատվիրատուն պետք է ուշադրություն դարձնի նրա վրա, որ Պայմանագրի ավարտի այս ամսաթվի երկարացման դեպքում պետք է երաշխավորից պահանջի երաշխիքի երկարացում: Պահանջը պետք է ներկայացվի գրավոր՝ մինչև երաշխիքով սահմանված ժամկետի ավարտը: Երաշխիքը պատրաստելիս Պատվիրատուն կարող է պարբերության վերջում ավելացնել հետևյալ տեքստը՝ «Երաշխավորը համաձայն է մեկ անգամ երկարացնել սույն երաշխիքը [վեց ամիսն, մեկ տարի]՝ Շահառուի կողմից նման խնդրանք գրավոր ստանալու դեպքում: Այդ խնդրանքը կներկայացվի մինչև երաշխիքի վավերության ժամկետի ավարտը»:*

**Կանխավճարի երաշխիք**
**(ցպահանջ Բանկային երաշխիք)**

*[Երաշխավորի բլանկ կամ SWIFT նույնականացման կոդ]*
**Շահառու՝** *[Պատվիրատուի անվանումը և հասցեն]*
**Ամսաթիվ՝**
**ԿԱՆԽԱՎՃԱՐԻ ԵՐԱՇԽԻՔ No.**
**Երաշխավորող.** *[թողարկողի անունը, հասցեն և վայրը՝ եթե նշված չէ բլանկի վրա]*
Մեզ տեղեկացրել են, որ ____________________ *[Կապալառուի անունը (համատեղ ձեռնարկության դեպքում պետք է լինի համատեղ ձեռնարկության անունը]* (այսուհետ՝ «Հայտատու») *[ամսաթիվ]* Շահառուի հետ կնքել է *[պայմանագրի համարը և Աշխատանքների հակիրճ նկարագրությունը]* (այսուհետ՝ «Պայմանագիր) կատարելու համար:
Բացի այդ, մենք գիտենք, որ համաձայն Պայմանագրի պայմանների, պետք է վճարվի *[գումարը բառերով և թվերով]* կանխավճար՝ կանխավճարի երաշխիքի դիմաց:
Հայտատուի խնդրանքով մենք՝ *[Բանկի անվանումը]*, հանդիսանալով երաշխավոր, սույնով պարտավորվում ենք՝ Շահառուի գրավոր պահանջը ստանալուն պես, անվերապահորեն Շահառուին վճարել *[նշել գումարը բառերով և թվերով]*[211]: Պահանջում կամ դրան ուղեկցող առանձին ստորագրված փաստաթղթում կնշվի, որ Հայտատուն, կամ՝
(ա) օգտագործել է կանխավճարը ոչ Աշխատանքները մոբիլիզացնելու ծախսերի համար, կամ
(բ) չի մարել կանխավճարը Պայմանագրի դրույթների համաձայն՝ նշելով Հայտատուի կողմից չմարված գումարը:
Սույն երաշխիքով պահանջը կարող է
Որպես պայման՝ սույն Երաշխիքի շրջանակներում ցանկացած պահանջի կամ վճարումի համար, վերոնշյալ կանխավճարը պետք է կրեդիտագրված լինի Հայտատուի հաշվին *[բանկի անվանումը և հասցեն]* իր բանկային հաշվի վրա *[Հայտատուի բանկային հաշվի համարը]*:
Սույն երաշխիքով սահմանված առավելագույն գումարն անողաբար կնվազեցվի այն գումարի չափով, որքանով Կապալառուն կմարի կանխավճարը՝ համաձայն միջանկյալ վճարման հայտարարագրերի կամ վկայագրերի, որոնց պատճենները կներկայացվեն մեզ:
Երաշխիքը կդադարի գործել՝ ամենաուշը, կամ.

- մեր կողմից աշխատանքների ընդունման վճարման վկայագիրը ստանալուն պես, որում նշված կլինի վճարման համար վկայագրված է Պայմանագրի ընդունված գումարի իննսուն (90) տոկոսը՝ հանած պայմանական գումարները, կամ
- *[ամսաթիվը]*, [222]

որը որ լինի ավելի վաղ:
Համապատասխանաբար, սույն երաշխիքով ցանկացած վճարման պահանջ պետք է ներկայացվի վերոնշյալ ամսաթվից ոչ ուշ:

Սույն Երաշխիքը կարգավորվում է « Uniform Rules for Demand Guarantees (URDG) 2010 Revision, ICC Publication No. 758» դրույթների և պահանջների համաձայն, բացառությամբ հոդված 15(a)-ի օժանդակ հայտարարության:

*[Բանկի կնիքը և ստորագրությունններ]*

---

[21][1] *Երաշխավորը պետք է նշի Պայմանագրի ընդունված գումարը տոկոսը, որը սահմանված է Ընդունման նամակով՝ հանած պայմանական գումարները (առկայության դեպքում)՝ Պայմանագրի արժույթով:*

[22][2] *Նշեք ավարտման ակնկալվող ամսաթիվը ըստ ՊԸՊ 57.1 կետի: Պատվիրատուն պետք է ուշադրություն դարձնի նրա վրա, որ Պայմանագրի երկարացման դեպքում պետք է երաշխավորից պահանջի երաշխիքի երկարացում: Պահանջը պետք է ներկայացվի գրավոր՝ մինչև երաշխիքով սահմանված ժամկետի ավարտը: Երաշխիքը պատրաստելիս Պատվիրատուն կարող է պարբերության վերջում ավելացնել հետևյալ տեքստը՝ «Երաշխավորը համաձայն է մեկ անգամ երկարացնել սույն երաշխիքը [վեց ամիսն, մեկ տարի]՝ Շահառուի կողմից նման խնդրանք գրավոր ստանալու դեպքում: Այդ խնդրանքը կներկայացվի մինչև երաշխիքի վավերության ժամկետի ավարտը»:*

***Ծանոթություն՝ շեղ տառերով գրված տեքստը (այդ թվում տողատակերը) բերվում է այս ձևի օգտագործման համար և պետք է ջնջվի վերջնական տեքստից:***